ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՆՈՅԵՄԲԵՐ 2014

Լիահոնա

Գերագույն Համաժողովի Ելույթները

Երեցներ Գավարեթը, Գոդոյը և Մարտինեզը ելույթ ունեցան իրենց մայրենի լեզուներով

Քրիստոսը բորոտների մեջ, Ջ. Քըրք Ռիչարդս

Հիսուս Քրիստոսի միջոցով «կույրերը տեսնում են, և կաղերը գնում են, բորոտները սրբվում են, և խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, և աղքատներին ավետարան է քարոզվում» (Մատթեոս 11.5):

© Ջ. ՔԸՐՔ ՌԻՉԱՐԴՍ, ԲԱԶՄԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԱՎՈՒՄ Է

Բովանդակություն Նոյեմբեր 2014

Հատոր 15 • Համար 4

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

4 Բարի գալուստ համաժողով
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

6 Մեր հույսի պատճառը
Նախագահ Բոյդ Ք. Փաքեր

9 Ո՞ր կողմ եք դուք նայում
Երեց Լին Գ. Ռոբինս

12 Հաղորդություն՝ հոգու վերանորոգում
Շերիլ Ա. Էսպլին

14 Փրկենք միասին
Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգ

16 Ազատ հավիտյան՝ գործելու ինքնուրույն
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

20 Ստանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

ՇԱԲԱԹ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

24 Եկեղեցու պաշտոնյաների հաստատում
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

25 Սիրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ
Երեց Դալլին Հ. Օուքս

28 Ջոզեֆ Սմիթ
Երեց Նիլ Լ. Անդերսեն

32 Ծնողներ՝ ավետարանի գլխավոր ուսուցիչներ երեխաների համար Թեդ Ռ.
Թեդ Ռ. Քալիստեր

34 Վստահությամբ մոտենալով Աստծո գահին
Երեց Ջորջ Քլեբինգաթ

37 Այո, Տէր, ես քո ետեւիցը կգնամ
Երեց Էդուարդո Գավարետ

40 Մի՞թե մենք բոլորս մուրացկաններ չենք
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

43 Գտնելով հարատև խաղաղություն և կառուցելով հավերժական ընտանիքներ
Երեց Լ. Թոմ Փերի

ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

46 Կատարել իմաստուն ընտրություն
Երեց Քվենթին Լ. Քուք

50 Ես ինքս գիտեմ այս բաները
Երեց Քրեյգ Ս. Քրիչլոուն

53 Ծոմի օրենքը աղքատներին և կարիքավորներին հոգ տանելու անձնական պատասխանատվություն է
Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս

56 «Միթէ ե՞ս եմ, Տէր»
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

59 Նախապատրաստական Քահանայություն
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

67 Ապահով առաջնորդվենք տուն
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏՅԱՆ ՆԻՍՏ

70 Շարունակվող հայտնություն
Նախագահ Հենրի Բ. Այրինգ

74 Հաստատել մարգարեներին
Երեց Ռասսել Մ. Նելսոն

77 Ապրենք Մարգարեների խոսքերին համաձայն
Քերոլ Ֆ. Մակքոնկի

80 Հավիտենական կյանք. իմանալ մեր Երկնային Հորը և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին
Երեց Ռոբերտ Դ. Հեյլս

83 Հաղորդությունը և Քավությունը
Երեց Ջեյմս Ջ. Համուլա

86 Շիտակ արա քո ոտների շավիղը
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԻՐԱԿԻ ՑԵՐԵԿԱՅԻՆ ՆԻՍՏ

89 Մնացեք նավակի մեջ և ամուր բռնած պահեք
Երեց Մ. Ռասսել Բալլարդ

92 Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը
Երեց Ռիչարդ Գ. Սքոթ

96 Տերը ծրագիր ունի մեզ համար
Երեց Կարլոս Ա. Գոդոյ

99 Գիրքը
Երեց Ալլան Ֆ. Փաքեր

102 Մեր անձնական ծառայությունները
Երեց Հյուգո Բ. Մարտինեզ

104 Թեթևամտորեն մի վարվեք սրբազան բաների հետ
Երեց Լարի Ս. Քաչեր

107 Եկեք և տեսեք
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար

110 Մինչև նոր հանդիպում
Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ

111 Պատրաստված մի ձևով, որը երբեք հայտնի չէր եղել
Լինդա Ք. Բրրթն

114 Աստծո ուխտյալ դուստրերը
Ջին Ա. Սթիվենս

117 Կիսվելով ձեր լույսով
Նեյլ Ֆ. Մերիոթ

120 Ուրախությամբ ապրել ավետարանով
Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ

64 Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

124 Համաժողովի պատմությունների ցուցիչ

125 Եկեղեցու նորությունները

184-րդ կիսամյա գերագույն համաժողովի ամփոփում

ՇԱԲԱԹ ԱՌԱՎՈՏ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Բոննի Լ. Օսկարսոն
Փակման աղոթք. Երեց Բրեդլի Դ. Ֆոսթեր
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավարներ՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Ռիչարդ Էլիոթ և Էնդրյու Անսվորթ. "The Morning Breaks," *Hymns,* no. 1; "High on the Mountain Top," *Hymns,* no. 5, arr. Wilberg, unpublished; "Beautiful Zion, Built Above," *Hymns,* no. 44, arr. Wilberg, unpublished; "Guide Us, O Thou Great Jehovah," *Hymns,* no. 83; ""If I Listen with My Heart," DeFord, arr. Murphy, unpublished; "From All That Dwell below the Skies," *Hymns*, no. 90, arr. Wilberg, unpublished.

ՇԱԲԱԹ ԿԵՍՕՐ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք. Երեց Վիլֆորդ Վ. Անդերսեն
Փակման աղոթք. Երեց Էդվարդ Դյուբ
Երաժշտությունը՝ միացյալ երգչախումբ Թոել, Գրանտսվիլ և Սթենսբրրի Փարք ցցերից, Յուտա, խմբավար՝ Հոլլի Բեվան, երգեհոնահար՝ Լինդա Մարջեթս. "Arise, O God, and Shine," *Hymns,* no. 265, arr. Wilberg, pub. by Oxford; "I Know That My Redeemer Lives," *Hymns,* no. 136, arr. Huff, unpublished; "Redeemer of Israel," *Hymns,* no. 6; "Abide with Me; 'Tis Eventide," *Hymns,* no. 165, arr. Gates, pub. by Jackman.

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈ, 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014, ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Բրուս Ա. Քարլսոն
Փակման աղոթք. Երեց Ջեյմս Բ. Մարտինո
Երաժշտությունը՝ քահանայության երգչախումբ Պրովոյի Միսիոներների Պատրաստման կենտրոնից, խմբավարներ՝ Ռայան Էգեթ և Էլմո Քեք, երգեհոնահար՝ Քլեյ Քրիսչենսեն. "Rise Up, O Men of God," *Hymns,* no. 324, arr. Wilberg, unpublished; Missionary Medley: "I Hope They Call Me on a Mission," *Children's Songbook,* 169; "I Will Be Valiant," *Children's Songbook,* 162; "We'll Bring the World His Truth," *Children's Songbook,* 172; "Called to Serve," *Children's Songbook,* 174, arr. Evans and Eggett, unpublished; "We Thank Thee, O God, for a Prophet," *Hymns,* no. 19; "Ye Elders of Israel," *Hymns,* no. 319, arr. Spiel, unpublished.

ԿԻՐԱԿԻ ԱՌԱՎՈՏ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Բացման աղոթք. Երեց Դոն Ռ. Քլարկ
Փակման աղոթք. Քույր Ռոզմարի Մ. Վիքսոմ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ, երգեհոնահարներ՝ Էնդրյու Անսվորթ և Քլեյ Քրիսչենսեն. "Sing Praise to Him," *Hymns,* no. 70; "Praise the Lord with Heart and Voice," *Hymns,* no. 73; "Praise to the Man," *Hymns,* no. 27, arr. Wilberg, unpublished; "Come, Ye Children of the Lord," *Hymns,* no. 58; "Softly and Tenderly," Thompson, arr. Wilberg, unpublished; "How Firm a Foundation," *Hymns,* no. 85, arr. Wilberg, unpublished.

ԿԻՐԱԿԻ ԿԵՍՕՐ, 5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014, ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆԻՍՏ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Բացման աղոթք. Երեց Դեյվիդ Ֆ. Էվանս
Փակման աղոթք. Ջոն Ս. Թաններ
Երաժշտությունը՝ Թաբերնաքլի երգչախումբ, խմբավար՝ Մաք Վիլբերգ և Ռայան Մըրֆի, երգեհոնահարներ՝ Բոննի Գուդլիֆ և Լինդա Մարջեթս. "Lo, the Mighty God Appearing!" *Hymns,* no. 55, arr. Murphy, unpublished; "Count Your Blessings," *Hymns,* no. 241; "I Am a Child of God," *Hymns,* no. 301, arr. Murphy, unpublished; "We Ever Pray for Thee," *Hymns,* no. 23, arr. Wilberg, unpublished.

ՇԱԲԱԹ ԵՐԵԿՈ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014, ԿԱՆԱՆՑ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺՈՂՈՎ
Նախագահող. Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն
Վարող. Ռոզմարի Մ. Վիքսոմ
Բացման աղոթք. Դոռա Մքաբելա
Փակման աղոթք. Էմի Քերոլայն Ուայթ
Երեխաների Միության, Երիտասարդ Կանանց և Սփոփող Միության միացյալ երգչախումբ Մագնա, Հանթեր և Թեյլորսվիլ ցցերից, Յուտա, խմբավար. Էրին Փայլ Թոլ, երգեհոնահար. Լինդա Մարջեթս. "On This Day of Joy and Gladness," *Hymns,* no. 64, arr. Tall and Margetts, unpublished; "I Love to See the Temple," *Children's Songbook,* 95, performed by a children's choir from Seoul, Korea, arr. Zabriskie, unpublished; Medley: "I Know That My Savior Loves Me," Bell and Creamer; "I Know That My Redeemer Lives," *Hymns,* no. 136, arr. Tall and Margetts, unpublished; "I Am a Child of God," *Children's Songbook,* 2, arr. Zabriskie, unpublished; "Let Zion in Her Beauty Rise," *Hymns,* no. 41, arr. Ward, unpublished.

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ
Գերագույն համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են համացանցում՝ conference.lds.org կայքում, որտեղ կարող եք ընտրել լեզուն: Ելույթները մատչելի են նաև Gospel Library mobile app-ում: Սովորաբար համաժողովից վեց շաբաթ անց առուդիո տեսագրությունները նույնպես մատչելի են բաշխման կենտրոններում: Հաշմանդամ անդամների համար հասանելի ձևաչափերով գերագույն համաժողովի տեղեկությունը մատչելի է disability.lds.org կայքում:

ՏՆԱՅԻՆ ԵՎ ԱՅՑԵԼՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՒՂԵՐՁՆԵՐ
Տնային և այցելող ուսուցիչների ուղերձների համար խնդրում ենք ընտրեք այն ելույթը, որը լավագույնս է համապատասխանում նրանց կարիքներին, ում այցելում եք:

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Առջևում. Լուսանկարը՝ Նաթանիել Ռեյ Էդվարդսի:
Ետևում. Լուսանկարը՝ Լեսլի Նիլսոնի:

ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ
Գերագույն Համաժողովի տեսարանները լուսանկարել են Սոլթ Լեյք Սիթիում՝ Վելդեն Ս. Անդերսենը, Քոդի Բելը, Ջանե Բինգհեմը, Ռենդի Քոլիերը, Վեսթոն Քոլթոնը, Քրեյգ Դայմոնդը, Նաթանիել Ռեյ Էդվարդսը, Էշլի Լարսենը, Օգըստ Միլերը, Բրայան Նիքոլսոնը, Լեսլի Նիլսոնը, Մեթյու Ռեյերը, Քրիստինա Սմիթը և Բայրոն Վորները; Ալեքսանդրիայում, Վիրջինիա, ԱՄՆ՝ Չենս Հեմոքը; Վերոնայում, Վիսկոնսին, ԱՄՆ՝ Ջենիֆեր Էն Լին; Փիչթրի Քորներսում, Ջորջիա, ԱՄՆ՝ Դեյվիդ Վինթերսը; Սան Լորենզոյում, Պարագվայ՝ Ռեբեկա Ռիոս Բենիտեսը; Քութեմոքում, Մեքսիկա՝ Նիցա Բեատրիզ Սանտիլան Կաստիլոն; Սոբրալում, Բրազիլիա՝ Վեսլի Դայասը; Լաս Պինասում, Ֆիլիպիններ՝ Դենիել Սանչես Լաբաջո Կրտսերը; Վոթերֆորդում, Իռլանդիա՝ Էյմարդ Մարտինը; Կանոասում, Բրազիլիա՝ Մայքլ Մորիս Կրտսերը; Բարիլոքում, Արգենտինա՝ Ջոշուա Պենան; և Քեյփ Թաունում, Հարավային Աֆրիկա՝ Սամանթա Աքեյլսը:

ՆՈՅԵՄԲԵՐ 2014 ՀԱՏՈՐ 15 ՀԱՄԱՐ 4
ԼԻԱՀՈՆԱ 10991 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Թոմաս Ս. Մոնսոն, Հենրի Բ. Այրինգ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ

Տասներկու Առաքյալների Քվորում. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասսել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն

Խմբագիր. Քրեյգ Ա. Քարդոն

Խորհրդատուներ. Մերվին Բ. Առնոլդ, Քրիստոֆել Գոլդեն, Լարի Ռ. Լորենս, Ջեյմս Բ. Մարտինո, Ջոզեֆ Վ. Սիտատի

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ

Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Վինսենթ Ա. Վոգն

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ

Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար

Publications Assistant: Lisa Lopez

Գրողներ և խմբագրողներ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Մինդի Էն Լիվիթ, Մայքլ Ռ. Մորիս, Սալի Ջոնսոն Օդեքրիկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Պոլ Վանդենբերգ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն

Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Մ. Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Նեյթ Ջինս, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Մարք Վ. Ռոբինսն, Բրեդ Թիլը, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն

Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս

Հրատարակում. Քոննի Բոթորփ Բրիջ, Ջուլի Բըրդեթ, Քեթի Դանքըն, Բրայըն Վ. Գիջի, Դենիզ Քըրբի, Գիննի Ջ. Նիլսոն, Գեյլ Թեյթ Դաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Քրեյգ Կ. Սեքվիկ

Բաշխման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիչլեսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.orgstore.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորեերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամոերեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարո՛ն են բազմացվել եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սեփականության հատուկ նշում է արված: Հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada: November 2014 Vol. 15 No. 4. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address *must* be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

ԽՈՍՆԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Այրինգ, Հենրի Բ., 24, 59, 70
Անդերսեն, Նիլ Լ., 28
Բալլարդ, Մ. Ռասսել, 89
Բեդնար, Դեյվիդ Ա., 107
Բըրթըն, Լինդա Ք., 111
Գավարետ, Էդուարդո, 37
Գոդոյ, Կառլոս Ա., 96
Դեյվիս, Դին Մ., 53
Էսփլին, Չերիլ Ա., 14
Համուլա, Ջեյմս Ջ., 83
Հեյլս, Ռոբերտ Դ., 80
Հոլլանդ, Ջեֆրի Ռ., 40
Մակքոնկի, Քերոլ Ֆ., 95
Մարտինեզ, Հյուգո Ի., 102
Մերիոթ, Նիլ Ֆ., 117
Մոնսոն, Թոմաս Ս., 4, 67, 86, 110
Նելսոն, Ռասսել Մ., 74
Ուխդորֆ, Դիտեր Ֆ., 20, 56, 120
Ռոբբինս, Լին Գ., 9
Սթիվենս, Ջին Ա., 114
Սքոթ, Ռիչարդ Գ., 92
Վոնգ, Չի Հոնգ (Սեմ), 14
Փաքեր, Ալլան Ֆ., 99
Փաքեր, Բոյդ Ք., 6
Փերի, Լ. Թոմ, 43
Քալիստեր, Թեդ Ռ., 32
Քաչեր, Լարի Ս., 104
Քլեբինգաթ, Յորգ, 34
Քուք, Քվենթին Լ., 46
Քրիչենսեն, Քրեյգ Ս., 50
Քրիստոֆերսոն, Դ. Թոդ, 16
Օուքս, Դալլին Հ., 25

ԹԵՄԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ակտիվացում, 14
Ահարոնյան Քահանայություն, 53, 59
Աղոթք, 20, 39, 40, 92
Ամուսնություն, 46, 114
Աշակերտություն, 40, 46, 56, 86, 102, 110
Ապաշխարություն, 16, 34
Առաջնորդություն, 74
Արդարակեցություն, 46, 67
Արդարություն, 16
Արժանավորություն, 67
Բարություն, 25, 110
Բարօրություն, 40, 53
Գայթակղություն, 67, 86
Գերագույն համաժողով, 4, 110
Դարձ, 37, 56, 104
Եկեղեցու կազմակերպություն, 74
Ընտանեկան երեկո, 92
Ընտանեկան պատմություն, 99
Ընտանիք, 32, 43, 92, 99, 117
Ընտրություն, 16, 46, 86, 92, 96, 104
Իմաստություն, 46
Ինքնապահովում, 53
Լույս, 20, 117
Խոնարհություն, 56
Խորհուրդներ, 14
Ծառայություն, 53, 59, 102, 110, 120
Ծոմապահություն, 40, 53
Կասկած, 104
Հակառակությունը, 25
Հաղորդություն, 12, 83
Հայտնություն, 70, 77, 111
Հայր Աստված, 20, 34, 80, 120
Հայրապետական օրհնություններ, 96
Հայրություն, 43
Հասակակիցների ճնշում, 9
Հավատք, 14, 50, 77, 92
Հարգանք, 25
Հեռանկար, 56, 96
Հիսուս Քրիստոս, 6, 9, 12, 14, 16, 20, 25, 37, 43, 46, 67, 77, 80, 83, 86, 92, 102, 107, 117
Հնազանդություն, 34, 37, 86, 111
Հոգևորություն, 34
Հույս, 6
Հպարտություն, 56
Զախորդություն, 89, 110
Ճշմարտություն, 20, 25, 107
Մայրություն, 43
Մարգարեներ, 9, 70, 74, 77, 89
Միություն, 14, 80
Միսիոներական աշխատանք, 4, 44, 107
Մկրտություն, 114
Նախապատրաստվածություն, 59, 111
Ներում, 6, 12, 34
Նպատակներ, 46
Ողորմածություն, 6, 16
Ուխտեր, 114
Ուսուցանել, 32
Ուրացություն, 9, 89
Պատասխանատվություն, 16
Պատվիրաններ, 120
Ջոզեֆ Սմիթ, 6, 9, 28, 50, 53, 70, 80, 96
Սեր, 25, 80, 102, 120
Սուրբ Հոգի, 70, 80, 104
Սուրբ գրությունների ուսումնասիրություն, 20, 50, 89, 92
Վերականգնում, 28
Վկայություն, 6, 20, 28, 50, 80, 104
Տաճարային աշխատանք, 92, 99
Տաճարներ, 4, 111, 114, 117
Փոփոխություն, 34, 56
Փրկության ծրագիր, 16, 86, 96
Քահանայություն, 67
Քաջություն, 9
Քավություն, 6, 12, 16, 34, 83, 92, 107, 117
Օրինակ, 32, 67, 86, 104
Ֆիզիկական պատրաստվածություն, 34

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Բարի գալուստ համաժողով

Երբ լսենք, թող որ մեր սրտերը փափկեն և մեր հավատքը մեծանա:

Ամ եղբայրներ և քույրեր, որքան հաճելի է ողջունել ձեզ այս համաշխարհային մեծ համաժողովին: Մենք հավաքվել ենք միասին աշխարհի տարբեր վայրերում լսելու և սովորելու եղբայրներից և քույրերից, որոնց մենք հաստատել ենք որպես Եկեղեցու Բարձրագույն Իշխանություններ և գերագույն պաշտոնյաներ: Նրանք խնդրել են երկնային օգնություն իրենց ուղերձները ներկայացնելու համար, և նրանք ոգեշնչում են ստացել նրա վերաբերյալ, ինչ կասվի:

Այս համաժողովին լրանում է գերագույն համաժողովի ռադիոհեռարձակման 90-ամյակը: 1924թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ժամանակ նիստերը առաջին անգամ հաղորդվեցին ռադիոկապով՝ Եկեղեցու KSL ռադիոկայանով: Այս համաժողովին լրանում է նաև համաժողովի հեռուստատեսային հեռարձակումների 65-ամյակը: 1949թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին նիստերը առաջին անգամ ցուցադրվեցին հեռուստաէկրաններին՝ Սոլթ Լեյք Սիթիի ամբողջ տարածքում KSL հեռուստատեսային ալիքով:

Մենք երախտապարտ ենք ժամանակակից մեդիայի օրհնությունների համար, որը թույլ է տալիս Եկեղեցու միլիոնավոր անդամների դիտել և ունկնդրել գերագույն համաժողովը: Այս շաբաթ և կիրակի օրերին նիստերը կհեռարձակվեն հեռուստատեսությամբ, ռադիոյով, կաբելային, արբանյակային և համացանցային միջոցներով, ներառյալ՝ շարժական կապի սարքերով:

Վերջին վեց ամիսների ընթացքում՝ մեր վերջին հանդիպումից հետո, նվիրագործվել է ևս մեկ նոր տաճար և վերանվիրագործվել է մեկ տաճար: Մայիսին Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆը նվիրագործեց Ֆորտ Լոդերդեյլ Ֆլորիդա տաճարը: Հրաշալի երիտասարդական մշակութային տոնակատարություն անցկացվեց նվիրագործման նախօրեին: Հաջորդ օրը՝ կիրակի, մայիսի 4-ին, տաճարը նվիրագործվեց երեք նիստերով:

Միայն երկու շաբաթ առաջ ես պատիվ ունեցա վերանվիրագործելու Օգդեն Յուտա տաճարը, որը նվիրագործվել էր 1972 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից: Շքեղ մշակութային տոնակատարություն տեղի ունեցավ վերանվիրագործումից առաջ, երկու առանձին ներկայացումներին տարբեր դերասանական կազմով մասնակցում էին բազմաթիվ երիտասարդներ: Ընդհանուր առմամբ 16000 երիտասարդ մասնակցեց: Վերանվիրագործման ծառայությունները տեղի ունեցան հաջորդ օրը, որոնց մասնակցեցին բազմաթիվ Եղբայրներ, օժանդակ կազմակերպությունների ղեկավարներ և տաճարի նախագահը, նրա խորհրդականները և նրանց տիկնայք:

Մեր տաճարների կառուցման ջանքերը շարունակվում են: Հաջորդ

ամիս կնվիրագործվի Ֆենիքս Արիզոնա նոր տաճարը, իսկ հաջորդ տարի՝ 2015-ին մենք ակնկալում ենք առնվազն հինգ տաճարների նվիրագործում կամ վերանվիրագործում, կախված ավարտման աշխատանքներից:

Ինչպես ես նշեցի ապրիլին, երբ արդեն հայտարարված բոլոր տաճարները կառուցվեն և նվիրագործվեն, ամբողջ աշխարհում մենք կունենանք 170 գործող տաճար: Քանի որ մենք կենտրոնացնում ենք մեր ջանքերը արդեն հայտարարված տաճարների ավարտման վրա, այս պահին մենք չենք հայտարարում նոր տաճարների մասին: Սակայն ապագայում, երբ մենք գնահատենք կարիքները և որոշենք տարածքները, կարվեն հայտարարություններ լրացուցիչ տաճարների մասին:

Եկեղեցին շարունակում է աճել: Այժմ մենք 15 միլիոնը գերազանցող ուժ ենք և շարունակում ենք աճել մեր թվով: Մեր միսիոներական ջանքերը առանց խոչընդոտների առաջ են ընթանում: Մենք ունենք ավելի քան 88000 ծառայող միսիոներ, որոնք տարածում են ավետարանը աշխարհով մեկ: Մենք վերահաստատում ենք, որ միսիոներական աշխատանքը քահանայության պարտականություն է, և խրախուսում ենք բոլոր արժանի և ունակ երիտասարդ տղամարդկանց ծառայել: Մենք շատ երախտապարտ ենք ծառայող երիտասարդ կանանց: Նրանք նշանակալից ներդրում են կատարում, թեև չեն կրում ծառայելու նույն պարտավորությունը, որ ունեն երիտասարդ տղամարդիկ:

Այժմ ես հրավիրում եմ ձեզ ուշադրությամբ լսել եղբայրներին և քույրերի, ովքեր կմասնակցեն այսօր և վաղը մեր համաժողովի նիստերին: Բոլոր նրանք, ում խնդրել են խոսել, մեծ պատասխանատվություն են զգում: Երբ լսենք, թող որ մեր սրտերը փափկեն և մեր հավատքը մեծանա, ես խոնարհաբար աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Նախագահ Բոյդ Ք. Փաքեր
Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ

Մեր հույսի պատճառը

Հույսի և փրկագնման վկայությունը չի կարելի չափել կամ հաշվել: Հիսուս Քրիստոսը այդ հույսի աղբյուրն է:

Մի քանի տարի առաջ Քույր Փաքերը և ես գնացինք Օքսֆորդի Համալսարան: Մենք փնտրում էինք իմ յոթ սերնդի նախապապի մասին գրառումները: Օքսֆորդի Քրայսթ Քոլեջի ղեկավարը՝ Դոկտոր Փոփելվելը, շատ բարի գտնվեց, խնդրելով քոլեջի արխիվի պատասխանատուին գտնել գրառումները: Ահա այնտեղ՝ 1583թ. մենք գտանք իմ նախապապի անունը՝ Ջոն Փաքեր:

Հաջորդ տարի մենք վերադարձանք Օքսֆորդ, որպեսզի նվեր մատուցեինք ստանդարտ աշխատանքների գեղեցիկ ձևավորված փաթեթը Քրայթ Քոլեջի գրադարանին: Դա մի փոքր տարօրինակ թվաց Դոկտոր Փոփելվելին: Մի գուցե նա մտածեց, որ մենք իրական քրիստոնեաներ չենք: Նա կանչեց քոլեջի քահանային, որպեսզի նա ընդուներ գրքերը:

Սուրբ գրքերը քահանային տալուց առաջ ես բացեցի Թեմատիկ Ուղեցույցը և ցույց տվեցի նրան թեմաներից մեկը. 18 էջ, նրբագեղ տպված, մեկտող միջտողային տարածությամբ թվարկված հղումները «Հիսուս Քրիստոս» թեմայով: Դա Փրկչի թեմային առնչվող սուրբ գրությունների հղումների առավել հարուստ հավաքածուներից մեկն է, որ երբևէ կազմվել է աշխարհում՝ վկայություն Հին և Նոր Կտակարաններից, Մորմոնի Գրքից, Վարդապետություն և Ուխտերից և Մեծագին Մարգարիտից:

«Ինչպես էլ որ դուք հետևեք այս հղումներին, - ասացի ես նրան, - կողք-կողքի, վերուվար, գրքից գիրք, թեմայից թեմա, դուք կտեսնեք, որ դրանք հետևողական, ներդաշնակ վկայություն են Տեր Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության մասին՝ Նրա ծննդի, Նրա կյանքի, Նրա ուսմունքների, Նրա Խաչելիության, Նրա Հարության և Նրա Քավության մասին:

Հոգևորականի հետ Փրկչի մասին մի քանի ուսմունքներով կիսվելուց հետո մթնոլորտը փոխվեց և նա շրջայց կազմակերպեց մեզ համար քոլեջի տարածքով, այդ թվում ցույց տվեց վերջերս կատարված հռոմեական օրերի որմնանկարների պեղումները:

Թեմատիկ ուղեցույցում թվարկված հղումների շարքում կա այս մեկը՝ Մորմոնի Գրքից, որը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին. «Մենք քարոզում ենք Քրիստոսի մասին, մենք մարգարեանում ենք Քրիստոսի մասին, և մենք գրում ենք մեր մարգարեությունների համաձայն, որ մեր զավակները կարողանան իմանալ, թե ինչ աղբյուրի նրանք կարող են ապավինել իրենց մեղքերի թողության համար» (2 Նեփի 25.26):

Իր սեփական խոսքերով Փրկիչը հայտարարել է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը. Ոչ ով չի գալիս Հոր մոտ, եթե ոչ ինձանով» (Հովհաննես 14.6):

Իսկ Մորմոնի Գրքում Նա հայտարարում է. «Ահա, ես եմ նա, ով պատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր փրկագնելու իմ ժողովրդին: Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը . . . Ինձանով պիտի ողջ մարդկությունը կյանք ունենա, և դա հավերժորեն, այսինքն՝ նրանք, ովքեր կհավատան իմ անունին. և նրանք կդառնան իմ որդիներն ու իմ դուստրերը» (Եթեր 3.14):

Կան շատ ու շատ այլ հղումներ ստանդարտ գործերում, որոնք հռչակում են Քավիչ լինելու Հիսուս Քրիստոսի աստվածային դերը բոլորիս համար, ովքեր երբևէ ծնվել են կամ կծնվեն մահկանացու կյանքում:

Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք բոլորս ազատվում ենք մարդու Անկումից, որը տեղի ունեցավ, երբ Ադամն ու Եվան ճաշակեցին արգելված պտուղը Եդեմի այգում, ինչպես ասվում է Կորնթացիներում. «Քանզի ինչպես Ադամով ամենը մեռնում են, այնպես էլ Քրիստոսով ամենը կենդանանում են» (Ա Կորնթացիս 15.22):

Մորմոնի Գիրքն ուսուցանում է. «Քանզի անհրաժեշտ է, որ մի քավություն արվի . . . , այլապես, ողջ մարդկությունն անխուսափելիորեն պիտի կորչի. այո, բոլորը կարծրացած են. այո, բոլորն ընկած են և կորած, և պիտի կորչեն, եթե չլինի քավությունը, . . . մի անսահման և հավերժական զոհաբերություն» (Ալմա 34.9–10):

Մենք, հնարավոր է, չապրենք կատարյալ կյանքով, և մեր սխալների համար պատիժներ գոյություն ունեն, սակայն երկիր գալուց առաջ մենք համաձայնվել ենք ենթարկվել Նրա օրենքներին և ընդունել պատիժը՝ դրանք խախտելու դեպքում:

«Որովհետև ամենքը մեղանչեցին, և Աստծո փառքիցը պակասված են.

Զրի են արդարանում նորա շնորքովը՝ այն փրկության ձեռովը՝ որ

Հիսուս Քրիստոսն է» (Հռովմայեցիս 3.23–24)։

Փրկիչն իրականացրեց Քավությունը, որը մեզ ճանապարհ է տալիս լինելու մաքուր։ Հիսուս Քրիստոսը հարություն առած Քրիստոսն է։ Մենք երկրպագում և ընդունում ենք Նրան այն ցավի համար, որը Նա տարավ մեր բոլորի համար միասին և այն ցավի համար, որը Նա տարավ յուրաքանչյուրիս համար անհատապես, և Գեթսեմանիի Այգում, և խաչի վրա։ Նա տարավ այդ ամենը մեծ խոնարհությամբ և Իր աստվածային դերի և նպատակի մասին հավերժական հասկացողությամբ։

Նրանք, ովքեր կապաշխարեն և կթողնեն մեղքը, կգտնեն Նրա ողորմած բազուկը, որը դեռ մեկնված է։ Նրանք, ովքեր կլսեն և ուշք կդարձնեն Նրա խոսքերին և Նրա ընտրված ծառաների խոսքերին, կգտնեն խաղաղություն և հասկացողություն անգամ ցավի և վշտի մեջ։ Նրա զոհաբերության արդյունքում մենք կազատվենք մեղքի հետևանքներից, բոլորի մեղքերը կջնջվեն և բոլորը հույս կզգան։

Եթե Նա չիրականացներ Քավությունը, չէր լինի փրկագնում։ Դժվար կլիներ ապրել այս աշխարհում, եթե մենք երբեք չներվեինք մեր սխալների համար, եթե երբեք չմաքրեինք մեզ և առաջ չգնայինք։

Հիսուս Քրիստոսի ողորմածությունը և շնորհը չեն սահմանափակվում միայն նրանց համար, ովքեր մեղքեր են գործում, այլ տարածվում է հավերժական խաղաղության խոստումով բոլոր նրանց վրա, ովքեր կընդունեն և կհետևեն Նրան և Նրա ուսմունքները։ Նրա ողորմածությունը հզոր բուժիչ ուժ է, անգամ անմեղ վիրավորների համար։

Վերջերս մի նամակ ստացա մի կնոջից, ով պատմում էր իր երկարատև տառապանքների մասին, որ բաժին էին ընկել իր կյանքում։ Ահավոր մի արարք էր կատարվել նրա դեմ, որը նա չէր մանրամասնում, սակայն որի մասին միայն ակնարկում էր։ Նա խոստովանում էր, որ պայքարել էր դառնության խորը ապրումների դեմ։ Իր զայրույթի մեջ նա մտավոր աղերս էր անում. «Ինչ-որ մեկը պետք է վճարի այս ահավոր արարքի համար»։ Նա գրել էր, որ վշտի և հարցադրումների այդ ծայրահեղ պահերին սրտում ստացավ անհապաղ պատասխան. «Կա մեկը, ով արդեն վճարել է»։

Եթե մենք տեղյակ չլինենք նրանից, թե ինչ կարող է մեզ համար անել Փրկչի զոհաբերությունը, մենք կանցնենք մեր կյանքով, զղջալով նրա համար, որ արել ենք, մի բան, որը ճիշտ չէր, կամ վիրավորել ենք ինչ-որ մեկին։ Եթե մենք ձգտենք հասկանալ Նրա Քավությունը, մենք կունենանք խորը ակնածանքի զգացում Տեր Հիսուս Քրիստոսի, Նրա երկրային ծառայության և որպես մեր Փրկիչ Նրա աստվածային առաքելության հանդեպ։

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին վերականգնվել է աշխարհով մեկ Փրկչի կյանքի և ուսմունքների մասին գիտելիքն առաջ տանելու համար։ Այս նշանավոր համաժողովը արբանյակային կապով հեռարձակվում է 94 լեզուներով 102 երկիր, սակայն մատչելի է նաև համացանցում բոլոր երկրների համար, որտեղ Եկեղեցին ներկա է։ Մենք ունենք ավելի քան 3000 ցցեր։ Լիաժամկետ միսիոներների մեր բանակը գերազանցում է 88000-ը, իսկ Եկեղեցու անդամների ընդհանուր թիվը անցել է 15 միլիոնից։ Այս թվերը ապացուցում են, որ «քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը» (ՎԵՈՒ 65.2)։

Սակայն անկախ նրանից, թե որքան մեծ է Եկեղեցու կառուցվածքը կամ քանի միլիոն անդամ է միանում մեր շարքերին, քանի մայր-ցամաք և երկիր են մուտք գործում մեր միսիոներները կամ քանի տարբեր լեզուներով ենք մենք խոսում, Հիսուս Քրիստոսի ավետարանի իրական հաջողությունը կչափվի առանձին

Սայպան, Հյուսիսային Մարիանյան կղզիներ

անդամների հոգևոր զորությամբ: Մեզ պետք է համոզման ուժը, որը գտնվում է Քրիստոսի յուրաքանչյուր հավատարիմ աշակերտի սրտում:

Հույսի և փրկագնման վկայությունը չի կարելի չափել կամ հաշվել: Հիսուս Քրիստոսը այդ հույսի աղբյուրն է:

Մենք ձգտում ենք ամրացնել մեր վկայությունները՝ թե՛ երիտասարդների, թե՛ մեծերի, թե՛ ամուսնացածների, թե՛ ամուրիների: Մենք պետք է ուսուցանենք Հիսուս Քրիստոսի ավետարանը տղամարդկանց, կանանց և երեխաներին՝ բոլոր ռասաների և ազգերի, հարուստ, թե՛ աղքատ: Մենք կարիք ունենք և նորադարձների, և նրանց, ովքեր պիոներների սերունդներից են գալիս: Մենք պետք է փնտրենք նրանց, ովքեր շեղվել են, և պետք է օգնենք նրանց վերադառնալ հոտ: Մենք կարիք ունենք յուրաքանչյուրի իմաստության և հոգևոր ամրության: Այս Եկեղեցու յուրաքանչյուր անդամ որպես անհատ կենսական տարր է հանդիսանում Եկեղեցու կառուցվածքի մեջ:

«Ինչպես էլ մարմինը մեկ և անդամներ շատ ունի, և մեկ մարմնի բոլոր անդամները շատ լինելով՝ մարմինը մեկ է, այսպես էլ Քրիստոսը:

Որովհետև մենք էլ ամենքս մեկ Հոգով մկրտվեցանք . . .

Որովհետև մարմինն էլ մեկ անդամ չէ, այլ շատ» (Ա Կորնթացիս 12.12–14):

Յուրաքանչյուր անդամ Հիսուս Քրիստոսի կյանքի և ուսմունքների վկայություն է հանդիսանում: Մենք պատերազմի մեջ ենք թշնամու ուժերի դեմ, և մենք կարիք ունենք յուրաքանչյուր անձի, եթե ցանկանում ենք հաջողության հասնել այն աշխատանքում, որը Փրկիչն ունի մեզ համար:

Դուք, հնարավոր է, մտածեք. «Ի՞նչ ես կարող եմ անել: Ես մի հոգի եմ միայն»:

Անշուշտ, Ջոզեֆ Սմիթը միայնակ էր զգում որոշ պահերի: Նա դարձավ նշանավոր, սակայն սկսեց իր ուղին որպես 14-ամյա տղա, որը հարց ուներ. «Ո՞ր եկեղեցուն ես պետք է միանամ» (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.10): Փրկչի հանդեպ Ջոզեֆի հավատքը և Նրա մասին նրա վկայությունը աճեցին, ինչպես պետք է դրանք աճեն մեզ մոտ, «տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ» (2 Նեփի 28.30; տես նաև ՎևՈւ 128.21): Ջոզեֆը ծնկի իջավ աղոթելու, և ինչպիսի հրաշալի արդյունքներ ունեցան այդ աղոթքը և Առաջին Տեսիլքը:

Որպես Տասներկու Առաքյալներից մեկը ես վկայություն եմ բերում Տեր Հիսուս Քրիստոսի մասին: Նա ապրում է: Նա մեր Քավիչն է և Փրկիչը: «Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով ամբողջ մարդկությունը կարող է փրկվել» (Հավատո Հանգանակ 1.3): Նա նախագահում է այս Եկեղեցու վրա: Նա օտարական չէ Իր ծառաներին: Շարժվելով դեպի ապագան հանգիստ վստահությամբ, մենք կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Չկա սահման Նրա զորությանը՝ օրհնելու և ուղղորդելու նրանց կյանքը, ովքեր փնտրում են ճշմարտությունը և արդարակեցությունը: Ես վկայություն եմ բերում Նրա մասին Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Լին Գ. Ռոբինս
Յոթանասունի Նախագահությունից

Ո՞ր կողմ եք դուք նայում

Աստծուն գոհացնելու փոխարեն փորձելով գոհացնել մյուսներին՝ մենք երեսնիվայր շրջում ենք առաջին երկու մեծ պատվիրանները:

«Ո՞ր կողմ ես դու նայում»,- Նախագահ Բոյդ Ք. Փաքերը զարմացրեց ինձ այս շփոթեցնող հարցով, երբ մենք ճամփորդում էինք միասին որպես Յոթանասունական իմ առաջին հանձնարարության ժամանակ: Չհասկանալով հարցի էությունը ես շփոթվեցի: «Յոթանասունականը, - շարունակեց նա,- ոչ թե մարդկանց է ներկայացնում մարգարեին, այլ մարգարեին է ներկայացնում մարդկանց: Երբեք մի մոռացիր՝ որ կողմ ես դու նայում»: Դա մի զորեղ դաս էր:

Աստծուն գոհացնելու փոխարեն փորձելով գոհացնել մյուսներին՝ մենք երեսնիվայր շրջում ենք *առաջին երկու մեծ պատվիրանները* (տես Մատթեոս ԻԲ.37–39): Մենք մոռանում ենք՝ որ կողմ ենք նայում: Սակայն, մենք բոլորս էլ արել ենք այդ սխալը, մարդկանցից վախենալու պատճառով: Եսայիայում Տերը զգուշացնում է մեզ. «Մի վախենաք մարդկանց նախատինքից» (Եսայիա ԾԱ.7, տես նաև 2 Նեփի 8.7): Լեքիի երազում այս վախը սկսվում էր մեծ և ընդարձակ շենքից պարզված *արհամարհանքի մատից*, պատճառ դառնալով, որ շատերը մոռանային որ կողմ են իրենք նայում և «ամաչելով» հեռանային ծառից (տես 1 Նեփի 8.25–28):

Հասակակիցների այս *ճնշումը* փորձում է փոխել մարդու վերաբերմունքը, եթե ոչ վարքագիծը, ստիպելով նրան մեղավոր զգալ չհամաձայնելու համար: Մենք հարգալից զոյակցություն ենք փնտրում նրանց հետ, ովքեր պարզում են մատը, բայց երբ մարդկանց վախը գայթակղում է մեզ ընդունել մեղքը, ըստ Առակաց գրքի դա դառնում է «որոգայթ» (տես Առակաց ԻԹ.25): Այդ որոգայթը կարող է հմտորեն ներկայացվել, որպեսզի մեր կարեկցող բնույթից ելնելով հանդուրժենք կամ անգամ հավանության արժանացնենք այն, ինչը դատապարտվում է Աստծո կողմից: Հավատքից թույլ մարդկանց համար դա մեծ գայթակղության քար է: Օրինակ, որոշ երիտասարդ միսիոներներ մարդկանցից վախը իրենց հետ տանում են միսիայի դաշտ և թերանում են միսիայի նախագահին զեկուցել իրենց զուգընկերջ աղաղակող անհնազանդության մասին, որովհետև չեն ցանկանում վիրավորել իրենց քմահաճ ընկերոջը: Սկզբունքային որոշումները պետք է կատարվեն հիշելով առաջին և երկրորդ մեծ պատվիրանների ճիշտ հերթականությունը (տես Մատթեոս ԻԲ.37–39): Երբ այդ շփոթված միսիոներները գիտակցեն, որ իրենք հաշվետու են ոչ թե իրենց զուգընկերոջ, այլ Աստծո առաջ, քաջություն կստանան փոխելու իրենց *հայացքի ուղղությունը:*

22 տարեկանում անգամ երիտասարդ Ջոզեֆ Սմիթը մոռացավ, թե որ կողմ էր նայում, երբ անընդհատ խնդրանքներով դիմում էր Տիրոջը, որպեսզի 116 ձեռագիր էջերը Մարտին Հարրիսին տալու համար թույլտվություն ստանար: Հավանաբար, դրանով Ջոզեֆն ուզում էր իր երախտագիտությունը հայտնել



Մարտինին՝ նրա ցուցաբերած օգնության համար: Մենք գիտենք նաև, որ Ջոզեֆն անչափ մտահոգ էր այլ ականատեսներ գտնելու հարցում, ովքեր կկանգնեին իր կողքին տանջող կեղծիքների և իր դեմ տարածվող ստերի դեմ:

Ինչպիսին էլ լինեին Ջոզեֆի պատճառները, կամ որքան էլ արդարացված լինեին դրանք, միևնույն է, Տերը չներեց դա և խիստ հանդիմանեց նրան. «Որքա՜ն հաճախ ես դու զանց առել . . . և հետևել մարդկանց համոզմունքներին: Քանզի ահա դու մարդուց չպետք է ավելի շատ *վախենայիր*, քան Աստծուց» (ՎԱՈՒ 3.6–7, շեշտադրումն ավելացված է): Այդ դառը փորձն օգնեց Ջոզեֆին ընդմիշտ հիշել՝ որ կողմ պետք է նայեր:

Երբ մարդիկ փորձում են իրենց *դեմքը պահել* մարդկանց մոտ, ակամայից կարող են *դեմքը կորցնել* Աստծո մոտ: Մտածել, թե կարող ես գոհացնել Աստծուն և միևնույն ժամանակ հանդուրժել մարդկանց անհնազանդությունը, ոչ թե չեզոքություն, այլ երկերեսանիություն և *կեղծավորություն* է, կամ էլ «երկու տերերի ծառայելու» փորձ է (Մատթեոս Զ.24, 3 Նեփի 13.24):

Չնայած քաջություն է պահանջվում վտանգներին դիմակայելու համար, քաջության իրական ապացույց է հանդիսանում մարդկանցից վախը հաղթահարելը: Օրինակ, Դանիելի աղոթքներն օգնեցին նրան առյուծների դեմ կանգնել, սակայն նրա քաջությունը դրսևորվեց, երբ նա չենթարկվեց Դարեհ թագավորին (տես Դանիել 6): Նման քաջությունը որպես Հոգու պարգև տրվել է *Աստվածավախ* մարդկանց, ովքեր ասել են իրենց աղոթքները: Եսթեր թագուհու աղոթքները ևս նրան նման քաջություն պարգևեցին, երբ նա ընդդիմացավ իր ամուսնուն, Ասուերոս թագավորին, իմանալով, որ դրանով նա իր կյանքն էր վտանգում (տես Եսթեր Դ.8–16):

Քաջությունը հիմնական արժանիքներից մեկն է, և ինչպես Ք.Ս. Լյուիսն է նկատել. «Քաջությունն . . . արժանիք է, որը դրսևորվում է փորձվելու պահին: . . . Պիղատոսը ողորմած էր, մինչև որ իր համար վտանգ զգաց»:[1] Հերովդես թագավորը վշտացավ Հովհաննես Մկրտչին գլխատելու խնդրանքին ի պատասխան, բայց ցանկացավ գոհացնել «իր սեղանակիցներին» (Մատթեոս ԺԴ.9): Նոյ թագավորը պատրաստ էր ազատ արձակել Աբինադիին, բայց նենգ քահանաների ճնշման տակ ընկրկեց (տես Մոսիա 17.11–12): Սավուղ թագավորը չհնազանդվեց Տիրոջ խոսքին՝ պահելով պատերազմի ավարը, որովհետև նա «ժողովրդից վախեցավ և նրանց խոսքը լսեց» (Ա Թագ. ԺԵ.24): Սինայ սարի ստորոտին ըմբոստ Իսրայելին հանդարտեցնելու համար Ահարոնը ոսկե հորթ ձուլեց, մոռանալով, թե որ կողմ ինքը պետք է նայեր (տես Ելից ԼԲ): Նոր Կտակարանում իշխաններից շատերը «հավատացին [Տիրոջը]. սակայն Փարիսեցիների պատճառովը չէին դավանում, որ ժողովարաններիցը դուրս չգցվին. Որովհետև մարդկանց փառքն ավելի սիրեցին, քան թէ Աստուծոյ փառքը» (Հովհ. ԺԲ.42–43): Սուրբ գրությունները լի են նման օրինակներով:

Այժմ լսեք մի քանի ոգեշնչող օրինակներ.

- Առաջինը, Մորմոն. «Ահա, ես խոսում եմ համարձակորեն՝ ունենալով իշխանություն Աստծուց. և ես *չեմ վախենում՝* ինչ կարող է անել մարդը. Քանզի կատարյալ սերը հեռացնում է ամեն վախ» (Մորոնի 8.16, շեշտադրումն ավելացված է):
- Նեփի. «Ուստի ես չեմ գրում բաները, որոնք հաճելի են աշխարհին, այլ այն՝ այն բաները, որոնք հաճելի են Աստծուն և նրանց, ովքեր այս աշխարհիցը չեն» (1 Նեփի 6.5):
- Զորավար Մորոնի. «Ահա ես Մորոնին եմ՝ ձեր գլխավոր զորապետը: Ես չեմ փնտրում իշխանություն, այլ՝ տապալել այն: Ես չեմ փնտրում աշխարհի հարգանքը, այլ իմ Աստծո փառքը, և իմ երկրի ազատությունն ու բարօրությունը» (Ալմա 60.36):

Մորոնին այնքան մեծ քաջությամբ էր միշտ հիշում, թե որ կողմ պետք է նայեր, որ նրա մասին ասվեց. «Եթե բոլոր մարդիկ եղած լինեին, և մնային, և երբևէ լինեին Մորոնիի նման, ահա, նույնիսկ դժոխքի զորությունները հավիտյանս կսասանվեին. այո, դևը երբեք զորություն չէր ունենա մարդկանց զավակների սրտերի վրա» (Ալմա 48.17):

Բոլոր դարերում մարգարեները միշտ դարձել են արհամարհական մատի հարձակման թիրախ: Ինչո՞ւ: Որովհետև, ըստ սուրբ գրությունների, «մեղավորները դժվար են ընդունում ճշմարտությունը, քանի որ այն խոցում է նրանց՝ հենց կենտրոնից» (1 Նեփի 16.2), կամ ինչպես Հարոլդ Բ. Լիին է նկատել. «Խփված թռչունն է դողդողում»:[2] Իրականում, նրանց արհամարհական արձագանքը ոչ այլ ինչ է, քան մեղքի ինքնավստահեցման փորձ, ինչպես եղավ Կորիհորի դեպքում, ով ի վերջո ընդունեց. «Ես միշտ գիտեի, որ Աստված կա» (Ալմա 30.52): Կորիհորն այնքան համոզիչ էր իր խաբեության մեջ, որ նա հավատացել էր իր իսկ ստին (տես Ալմա 30.53):

Ծաղրողները հաճախ մեղադրում են մարգարեներին, որ նրանք կարծես 21-րդ դարում չեն ապրում կամ հանդուրժող չեն: Նրանք փորձում են համոզել կամ անգամ ճնշել Եկեղեցուն, որ իջեցնեն Աստծո չափանիշները հավասարեցնելով իրենց ոչ պատշաճ վարքի մակարդակին, որը Երեց Նիլ Ա. Մաքսվելի խոսքերով, «կզարգացնի ինքնաբավարարություն, չփնտրելով ինքնաբարելավում[3] և ապաշխարություն»: Տիրոջ չափանիշները

հասարակության ոչ պատշաճ վարքին համապատասխանեցնելը ուրացություն է: Փրկչի այցելությունից երկու դար անց Նեփիացիների մեջ շատ եկեղեցիներ սկսեցին «պարզեցնել» վարդապետությունը, եթե փոխ առնենք Երեց Հոլլանդի արտահայտությունը:[4]

4 Նեփիից այս հատվածը լսելիս զուգահեռներ գտեք մեր օրերից. «Եվ եղավ այնպես, որ երբ երկու հարյուր տասը տարի անցավ, եղան շատ եկեղեցիներ երկրում. այո, եղան շատ եկեղեցիներ, որոնք ձևացնում էին, թե գիտեին Քրիստոսին, և սակայն նրանք ուրացել էին նրա ավետարանի շատ մասերը, այնպես որ նրանք ընդունեցին ամեն ձևի ամբարշտություն, և սպասավորեցին այն, ինչը սրբազան էր, նրան՝ ում դա արգելված էր, անարժանիության պատճառով» (4 Նեփի 1.27):

Կրկնվող տեսիլք է վերջին օրերում: Որոշ անդամներ չեն հասկանում, որ ընկնում են նույն որոգայթը, երբ ջանքեր են գործադրում, որպեսզի ընդունվեն տեղական կամ էթնիկ «ավանդույթներն իրենց հայրերի» (ՎևՈՒ 93.39), որոնք ավետարանի մշակույթին համահունչ չեն: Մինչդեռ մյուսները, իրենք իրենց խաբելով և ուրանալով, խնդրում կամ պահանջում են, որ եպիսկոպոսներն իջեցնեն տաճարային երաշխավորագրի, կրթական հավաստագրի կամ միսիոներական դիմումի չափանիշները: Հեշտ բան չէ նման ճնշման տակ եպիսկոպոս լինելը: Ինչևէ, Փրկչի նման, ով մաքրեց տաճարը դրա սրբությունը պաշտպանելու համար (տես Հովի. Բ.15–16), եպիսկոպոսներն այսօր կանչված են համարձակորեն պաշտպանելու տաճարային չափանիշները: Փրկիչն ասաց. «Ես ողորմությամբ կհայտնվեմ իմ ժողովրդին . . . եթե իմ ժողովուրդը պահի իմ պատվիրանները և չպղծի այս սուրբ տունը» (ՎևՈՒ 110.7–8):

Փրկիչը, մեր մեծ Օրինակը, միշտ նայում էր Իր Հոր կողմը: Նա սիրեց և ծառայեց Իր ընկերներին, բայց ասաց. «Ես մարդկանցից փառք չեմ առնում» (Հովի. Ե.41): Նա ցանկացավ, որ նրանք, ում ուսուցանում էր, Իր ետևից գնային, բայց չձգտեց

արժանանալ նրանց բարեհաճությանը: Երբ նա գթասրտություն էր դրսևորում, օրինակ բժշկելով հիվանդին, ընծան հաճախ տրվում էր «ոչ մեկին չասես» խնդրանքով (Մատթ. Ը.4, Մարկոս Է.36, Ղուկաս Ե.14, Ը.56): Մասամբ, դրանով նա պետք է որ խույս տար Իրեն հետևող համբավից, չնայած որ Նա զգուշանում էր դրանից (տես Մատթեոս Դ.24): Նա մեղադրեց Փարիսեցիներին, որ բարի գործեր էին կատարում միայն մարդկանց երևալու համար (տես Մատթեոս Զ.5):

Փրկիչը, միակ կատարյալ էակը, որ երբևէ ապրել է, ամենաանվախն էր: Իր կյանքում Նա շատ մեղադրողների հանդիպեց, բայց երբեք տեղի չտվեց նրանց ծաղրող մատին: Նա միակ մարդն է, ով երբեք չմոռացավ, թե որ կողմ պետք է նայեր. «Ես *միշտ* Հորը հաճելի բաներն եմ անում» (Հովի. Ը.29, շեշտադրումն ավելացված է) և «իմ կամքը չեմ որոնում, այլ ինձ ուղարկող Հոր կամքը» (Հովի. Ե.30):

3 Նեփի 11 գլխից մինչև 3 Նեփի 28 գլուխը Փրկիչը առնվազն 150 անգամ օգտագործում է *Հայր* անունը, հստակ ցույց տալով, որ այնտեղ Նա ներկայացնում էր Իր Հորը: Իսկ Հովհաննեսի ԺԴ-ԺԷ գլուխներում Փրկիչը Հոր անունն է տալիս առնվազն 50 անգամ: Ամեն կերպ Նա Իր Հոր կատարյալ աշակերտը եղավ: Նա այնքան կատարյալ էր Իր Հորը ներկայացնելիս, որ Փրկչին ճանաչելով կարելի էր ճանաչել Հորը: Տեսնել Փրկչին նշանակում էր տեսնել Հորը (տես Հովի. Ե.36): Լսել Որդուն նշանակում էր լսել Հորը (տես Հովի. Ե.36): Նա ըստ էության չէր զանազանվում Իր Հորից: Նա և Հայրը մեկ էին (տես Հովի. ԺԷ.21–22): Նա անվարան գիտեր, որ կողմ էր նայում:

Թող որ Նրա ոգեշնչող օրինակն ամրացնի մեզ մյուսների կամ մեր ներքին շողոքորթության որոգայթների դեմ: Թող որ այն մեզ քաջություն տա երբեք չխոնարհվել կամ չքծնել նրանց, ովքեր կվախեցնեն մեզ: Թող որ այն ոգեշնչի մեզ շրջել բարիք գործելով՝ որքան հնարավոր է անանուն և «չտենչանք մարդկանց գովասանքները» (ՎևՈՒ 121.35): Եվ թող Նրա անզուգական օրինակն օգնի մեզ միշտ հիշել, *որն* է «առաջին և մեծ պատվիրանը» (Մատթեոս ԻԲ.38): Երբ մյուսները պահանջում են հաստատում ի պաշտպանություն Աստծո պատվիրանների, թող որ միշտ հիշենք ում աշակերտներն ենք մենք, և որ կողմ ենք նայում, իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. C. S. Lewis, *The Screwtape Letters,* rev. ed. (1982), 137–38.
2. Harold B. Lee, in *Mine Errand from the Lord: Selections from the Sermons and Writings of Boyd K. Packer* (2008), 356.
3. Neal A. Maxwell, “Repentance,” *Ensign,* Nov. 1991, 32.
4. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, “The Call to Be Christlike,” *Լիահոնա,* հունիս 2014, 35:

Չերիլ Ա. Էսփլին
Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության
Երկրորդ Խորհրդական

Հաղորդություն՝ հոգու վերանորոգում

Հոգին բուժում և վերանորոգում է մեր հոգիները: Հաղորդության խոստացած օրհնությունն այն է, որ մենք «նրա Հոգին միշտ [մեզ] հետ [կունենանք]»:

Երիտասարդ կանանց մի խումբ մի անգամ հարցրեց ինձ. «Ի՞նչ կցանկանայիք իմացած լինել, երբ դուք մեր տարիքում էիք»: Եթե ես այժմ պատասխանեի այդ հարցին, ես կներառեի այս միտքը. «Ես կցանկանայի ձեր տարիքում ավելի լավ հասկացած լինեի հաղորդության կարևորությունը: Երանի թե հասկանայի հաղորդությունն այնպես, ինչպես նկարագրել է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը: Նա ասել է. «Հաղորդության արարողության հատուկ հրավերներից մեկն այն է, որ այն պետք է լինի կատարելապես հոգևոր փորձառություն, սուրբ հաղորդություն, հոգու վերանորոգում»:[1]

Ինչպե՞ս կարող է հաղորդությունը ամեն շաբաթ «լինել իսկապես հոգևոր փորձառություն, սուրբ հաղորդություն, հոգու վերանորոգում»:

Հաղորդությունը դառնում է հոգևորապես ամրացնող փորձառություն, երբ մենք լսում ենք հաղորդության աղոթքները և վերանորոգում ենք մեր ուխտերը: Սա անելու համար մենք պետք է հոժար լինենք վերցնելու Հիսուս Քրիստոսի անունը մեզ վրա:[2] Խոսելով այս խոստման մասին, Նախագահ Հենրի Բ. Այրինգն ուսուցանել է. «Դա նշանակում է, որ մենք պետք է տեսնենք մեր մեջ Նրան: Մենք Նրան մեր կյանքում կդնենք առաջին տեղում: Մենք կցանկանանք այն, ինչ Նա է ցանկանում, և ոչ թե այն, ինչ մենք ենք ցանկանում, կամ այն, ինչ աշխարհն է մեզ սովորեցնում ցանկանալ»:[3]

Երբ մենք վերցնում ենք հաղորդությունը, մենք նաև ուխտում ենք «միշտ հիշել»[4] Հիսուս Քրիստոսին: Իր խաչելության նախորդ գիշերը Քրիստոսը հավաքեց Իր Առաքյալներին Իր շուրջը և հիմնեց հաղորդությունը: Նա կտրեց հացը, օրհնեց այն և ասաց. «Առէք կերէք, այս է իմ մարմինը, որը ես տալիս եմ որպես փրկագին ձեզ համար»:[5] Ապա Նա վերցրեց գինու բաժակը, գոհացավ, տվեց Իր Առաքյալներին, որ խմեն և ասաց. «Այդ է իմ արիւնը . . . , որ թափվում է շատերի համար, ովքեր կհավատան իմ անվանը»:[6]

Նեփիացիների մեջ և կրկին վերջին օրերում Իր Եկեղեցու Վերականգնման ժամանակ Նա կրկնեց, որ մենք պետք է վերցնենք հաղորդությունն ի հիշատակ Իրեն:[7]

Երբ մենք ընդունում ենք հաղորդությունը, մենք վկայում ենք Աստծուն, որ մենք կհիշենք Նրա Որդուն մշտապես, այլ ոչ թե միայն հաղորդության արարողության կարճ ընթացքում: Սա նշանակում է, որ մենք միշտ պետք է նայենք Փրկչի օրինակին և ուսմունքներին, որպեսզի դրանք առաջնորդեն մեր մտքերը, մեր ընտրությունները և մեր գործերը:[8]

Հաղորդության աղոթքը նաև հիշեցնում է մեզ, որ մենք պետք է «պահենք նրա պատվիրանները»:[9]

Հիսուսն ասել է. «Եթէ ինձ սիրում էք, իմ պատուիրանքները պահեցէք»:[10] Հաղորդությունը մեզ հնարավորություն է տալիս ինքներս մեզ քննելու և դարձնելու մեր սիրտը և կամքն առ Աստված: Երբ հնազանդվում ենք պատվիրաններին, մեր կյանքը լցվում է ավետարանի զորությամբ և ավելի մեծ խաղաղությամբ ու հոգևոր ուժով:

Հաղորդությունը ժամանակ է տրամադրում լիարժեք հոգևոր փորձառության համար, երբ մենք խորհում ենք Փրկչի Քավության միջոցով մեզ տրված փրկող և հնարավորություն տվող զորության մասին: Երիտասարդ Կանանց

ղեկավարներից մեկը վերջերս զգացել էր այն ուժը, որը մենք ստանում ենք, երբ փորձում ենք հաղորդությունը ճաշակելիս խորհել դրա նշանակության մասին: Աշխատելով կատարել Անձնական Զարգացման պահանջներից մեկը, նա նպատակ դրեց կենտրոնացնել իր ուշադրությունը հաղորդության օրհներգերի և աղոթքների վրա:

Ամեն շաբաթ նա հաղորդության ժողովի ընթացքում փորձում էր գնահատել իր արարքները: Նա վերհիշում էր իր կատարած սխալները և պարտավորվում էր ավելի լավը լինել հաջորդ շաբաթ: Նա երախտապարտ էր, որ կարող էր ուղղել իր սխալները և մաքրվել: Հետ նայելով այդ փորձառությանը, նա ասել է. «Ես աշխատում էի Քավության ապաշխարության վրա»:

Մի կիրակի իր արարքները քննելուց հետո նա սկսեց հուսահատություն և հոռետեսություն զգալ: Նա տեսնում էր, որ կատարում էր նույն սխալները կրկին ու կրկին, շաբաթը շաբաթի հետևից: Բայց հետո նա հստակ ոգեշնչում ունեցավ, որ անտեսում էր Քավության մի մեծ մաս՝ Քրիստոսի հնարավորություն տվող զորությունը: Նա մոռանում էր այն բոլոր դեպքերը, երբ Փրկիչն օգնել էր իրեն լինել այն անձնավորությունը, ով նա պետք է լիներ, և ծառայել իր սեփական կարողությունից առավել:

Խորհելով այս ամենի շուրջ, նա կրկին մտածեց նախորդ շաբաթվա մասին: Նա ասաց. «Երջանկության մի զգացում պատեց ինձ իմ տրտմության փոխարեն, երբ ես նկատեցի, որ Նա տվել էր ինձ բազում հնարավորություններ և կարողություններ: Ես երախտագիտությամբ նկատեցի իմ երեխայի կարիքը նկատելու իմ կարողությունը, երբ այն ակնհայտ չէր: Ես նկատեցի, որ այն օրը, երբ կարծում էի, որ այլևս ոչ մի բան չեմ կարող անել, ես կարողացա գոտեպնդող խոսքեր ասել իմ ընկերոջը: Ես համբերություն էի ցուցաբերել մի իրավիճակում, որը սովորաբար հակառակ արձագանք կգտներ իմ կողմից»:

Վերջում նա նշում է. «Երբ ես շնորհակալություն հայտնեցի

Աստծուն իմ կյանքում Փրկչի հնարավորություն տվող զորության համար, ես շատ ավելի լավատեսական զգացումներ ունեցա ապաշխարության գործընթացի հանդեպ, որի վրա ես աշխատում էի, և ես նայեցի դեպի հաջորդ շաբաթը վերանորոգված հույսով»:

Երեց Մելվին Ջ. Բալլարդն ուսուցանել է, թե ինչպես կարող է հաղորդությունը լինել բուժող և մաքրող փորձառություն: Նա ասել է.

«Կա՞ արդյոք մեկը մեր մեջ, ով վերք չի հասցնում իր հոգուն խոսքով, մտքով կամ գործով կիրակիից կիրակի: Մենք անում ենք բաներ, որոնց համար զղջում ենք և ցանկանում ենք ներվել: . . . Ներում ձեռք բերելու համար մենք պետք է . . . ապաշխարենք մեր մեղքերից, գնանք նրանց մոտ, ում դեմ մեղք կամ օրինազանցություն ենք գործել և ձեռք բերենք նրանց ներողամտությունը, և ապա վերադառնանք հաղորդության սեղանի մոտ, որտեղ, եթե մենք անկեղծորեն ապաշխարել ենք և պատշաճ պայմաններում ենք գտնվում, մենք կներվենք և հոգևոր բուժում կտրվի մեր հոգիներին: . . .

Ես վկայում եմ, որ հաղորդության սպասավորման ընթացքում մեզ այցելում է ոգին, որը ջերմացնում է հոգին ոտքից մինչև գլուխ. դուք զգում եք, որ հոգու վերքերը բուժվում են և բեռը վեր է առնվում: Մխիթարություն և ուրախություն է տրվում հոգուն, որն արժանի է և իսկապես ցանկանում է ճաշակել այս հոգևոր սննդից»:[11]

Մեր վիրավոր հոգիները կարող են բժշկվել և վերանորոգվել ոչ միայն այն պատճառով, որ հացն ու ջուրը հիշեցնում են մեզ, որ Փրկիչը զոհաբերեց Իր մարմինն ու արյունը, այլ քանի որ խորհրդանիշները նաև հիշեցնում են մեզ, որ Նա միշտ կլինի մեր «կյանքի հացը»[12] և «կենդանի ջուրը»:[13]

Հաղորդությունը նեփիացիներին սպասավորելուց հետո Հիսուսն ասաց.

«Նա, ով ուտում է այս հացը, ուտում է իմ մարմնից՝ իր հոգու համար. և նա, ով խմում է այս գինուց, խմում է իմ արյունից՝ իր հոգու համար. և նրա հոգին երբեք չպիտի քաղցի, ոչ էլ ծարավի, այլ պիտի հագենա:

Արդ, երբ բազմությունը՝ բոլորը, կերան և խմեցին, ահա նրանք լցվեցին Հոգով»:[14]

Այս խոսքերով Քրիստոսն ուսուցանում է մեզ, որ Հոգին բժշկում և վերանորոգում է մեր հոգիները: Հաղորդության խոստացած օրհնությունն այն է, որ մենք «նրա Հոգին միշտ [մեզ] հետ [կունենանք]»:[15]

Երբ ես ճաշակում եմ հաղորդությունը, ես երբեմն մտովի պատկերացնում եմ մի նկար, որտեղ պատկերված է հարություն առած Փրկիչը՝ Իր առաջ մեկնված ձեռքերով, կարծես թե Նա պատրաստ է Իր սիրառատ գիրկն ընդունել մեզ: Ես սիրում եմ այս նկարը: Երբ ես մտածում եմ դրա մասին հաղորդության սպասավորման ժամանակ, իմ հոգին այնքան է վեհանում, որ ես գրեթե կարողանում եմ լսել Փրկչի խոսքերը. «Ահա, իմ ողորմության բազուկը մեկնված է դեպի ձեզ, և ով որ գա, նրան ես կընդունեմ. և օրհնված են նրանք, ովքեր գալիս են ինձ մոտ»:[16]

Ահարոնյան Քահանայություն կրողները ներկայացնում են Փրկչին, երբ նախապատրաստում, օրհնում և բաժանում են հաղորդությունը: Երբ քահանայություն կրողը մեկնում է իր ձեռքը, առաջարկելով մեզ սրբազան խորհրդանիշները, կարծես, թե Փրկիչն Ինքն էր մեկնում Իր ողորմության բազուկը, հրավիրելով մեզանից յուրաքանչյուրին ճաշակել սիրո թանկարժեք պարգևներից, որոնք հնարավոր են դարձվել Նրա քավող զոհաբերության միջոցով՝ ապաշխարության, ներման, մխիթարության և հույսի պարգևները:[17]

Որքան շատ ենք մենք խորհում հաղորդության կարևորության

մասին, այնքան ավելի սրբազան ու իմաստալից է այն դառնում մեզ համար: Ահա այդպես պատասխանեց մի 96-ամյա հայր, երբ նրա որդին հարցրեց. «Հայր, ինչո՞ւ ես դու գնում եկեղեցի: Դու չես կարողանում տեսնել, դու չես կարողանում լսել, քեզ համար դժվար է տեղաշարժվելը: Ինչո՞ւ ես դու գնում եկեղեցի»: Հայրը պատասխանեց. «Հաղորդության համար: Ես գնում եմ հաղորդություն ընդունելու»:

Թող որ մեզանից յուրաքանչյուրը գա հաղորդության ժողովին նախապատրաստված `ունենալու «կատարելապես հոգևոր փորձառություն, սուրբ հաղորդություն, [մեր] հոգու վերանորոգում»:[18]

Ես գիտեմ, որ մեր Երկնային Հայրը և մեր Փրկիչը ապրում են: Ես երախտապարտ եմ հնարավորության համար, որ տալիս է հաղորդությունը զգալու Նրանց սերը և ճաշակելու Հոգին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Jeffrey R. Holland, *Christ and the New Covenant: The Messianic Message of the Book of Mormon* (1997), 283.
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.77:
3. Henry B. Eyring, "That We May Be One," *Ensign,* May 1998, 67.
4. Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79:
5. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս ԻԶ.22 (Մատթեոս ԻԶ.26, տողատակի ծանոթագրություն *գ-ում,* և Աստվածաշնչի ուղեցույցում):
6. Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս ԻԶ.24 (Աստվածաշնչի ուղեցույցում), տես նաև Մատթեոս ԻԶ.26–28, Մարկոս ԺԴ.22–24, Ղուկաս ԻԲ.15–20:
7. Տես 3 Նեփի 18.7, 11, Վարդապետություն և Ուխտեր 20.75:
8. Տես «Ինչպե՞ս եմ ես պահում Փրկչին միշտ հիշելու իմ ուխտը» *Եկ, հետևիր ինձ* Կիրակնօրյա դպրոցիի ուսումնական ծրագիր. lds.org/youth/learn/ss/ordinances-covenants/remember, *Հավատքին հավատարիմ. ավետարանական վկայակոչում* (2004), 147–48:
9. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
10. Հովհաննես ԺԴ.15:
11. Melvin J. Ballard, in Melvin R. Ballard, *Melvin J. Ballard: Crusader for Righteousness* (1966), 132–33.
12. Հովհաննես Զ.48:
13. Հովհաննես Դ.10:
14. 3 Նեփի 20.8–9:
15. Վարդապետություն և Ուխտեր 20.77:
16. 3 Նեփի 9.14:
17. Ես շնորհակալ եմ Աննա Մադսենին այս սկզբունքի վերաբերյալ նրա մտքերի համար:
18. Jeffrey R. Holland, *Christ and the New Covenant,* 283.

Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգ
Յոթանասունից

Փրկենք միասին

Փրկչին օգնելու համար մենք պետք է աշխատենք միասին միասնության և ներդաշնակության մեջ: Յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուր պաշտոն և յուրաքանչյուր կոչում կարևոր են:

Մենք հաճախ ենք լսում, ինչպես է Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասում. «Հասեք օգնության»:[1] Նոր Կտակարանի մի պատմություն է միտքս գալիս: Այն կատարյալ պատկեր է նրա, թե ինչպես կարող են անդամները և միսիոներները աշխատել միասին, միասնական, ծխի խորհուրդների միջոցով մարդկանց օգնելու համար: Պատմությունը Մարկոս 2.1–5-ում է: Ես համարում եմ, որ պատմությունները, որոնք Հիսուսն օգտագործում է մեզ որոշակի վարդապետություն կամ սկզբունք ուսուցանելու համար, միշտ ոգեշնչող են և հեշտ հասկանալի:

Այս պատմության հերոսներից մեկը անդամալույծ տղամարդ էր, որը չէր կարողանում տեղաշարժվել առանց օգնության: Այդ մարդը կարող էր միայն տանը սպասել օգնության:

Մեր օրերում կարող է պատահել նույնը: Չորս տղամարդ կատարում էին իրենց եպիսկոպոսի հանձնարարությունը՝ այցելելով մի մարդու, ով անդամալույծ էր: Ես պատկերացնում եմ, որ նրանցից մեկը Սփոփող Միությունից է, մեկը՝ երեցների քվորումից, մեկը՝ Ահարոնյան Քահանայությունից, և վերջինը, բայց որ ամենա-անկարևորը, լիաժամկետ միսիոներներից մեկը: Ծխի խորհրդի վերջին ժողովին, միասին ծխի կարիքների մասին խորհրդակցելուց հետո, եպիսկոպոսը տվեց «փրկելու» հանձնարարություններ:

Այս չորսին հանձնարարվեց օգնել անդամալուծությունից տառապող այդ տղամարդուն: Նրանք չէին կարող սպասել մինչև նա ինքնուրույն զար եկեղեցի: Նրանք պետք է գնային նրա տուն և այցելեին: Նրանք պետք է գնային նրա ետևից, և այդպես էլ արեցին: Տղամարդուն բերում են Հիսուսի մոտ.

«Եվ գալիս էին նորա մոտ և մի անդամալույծ էին բերում չորս մարդով վեր առած» (Մարկոս 2.3):

Սակայն սենյակը լի էր ամբոխով: Նրանք չկարողացան անցնել դռնով: Ես վստահ եմ, որ նրանք փորձեցին անել այն ամենը, ինչի մասին կարող էին մտածել, սակայն չկարողացան ներս մտնել: Ամեն-ինչ այնպես չէր ընթանում, ինչպես ծրագրված էր: Խոչընդոտներ առաջ եկան «փրկելու» նրանց ճանապարհին: Սակայն նրանք չհանձնվեցին: Նրանք չլքեցին անդամալույծ մարդուն դռան մոտ: Նրանք խորհրդակցեցին միասին, թե ինչ կարող էին անել, որպեսզի կարողանային բերել այդ մարդուն Հիսուս Քրիստոսի մոտ, որ նա բուժվեր: Հիսուս Քրիստոսին հոգիներ փրկելու գործում օգնելը երբեք նրանց համար չափից դուրս դժվար չի եղել: Նրանք ծրագիր կազմեցին: Ծրագիրը հեշտ չէր, սակայն նրանք գործեցին ըստ դրա:

«Եվ երբոր չկարողացան մոտենալ նորան ամբոխի պատճառով, այն տան ծածքը քանդեցին, ուր էր Հիսուսը, և ծակ բանալով իջեցրին մահիճը, որի վերայ պառկած էր անդամալույծը» (Մարկոս 2.4):

Նրանք բարձրացրեցին նրան կտուրի վրա: Ենթադրելով, որ դրսից աստիճաններ չկային, կարող ենք պատկերացնել, թե որքան ժամանակ պահանջվեց մինչև բոլորը բարձրացան կտուր: Կարծում եմ, դա տեղի է ունեցել այս ձևով. նրա ծխի երիտասարդ տղամարդն առաջինը բարձրացավ կտուր: Քանի որ նա երիտասարդ էր և եռանդով լի, նրա համար դա դժվար չէր: Երեցների քվորումից տնային ուսուցման նրա զուգընկերը և բարձրահասակ ու ամուր լիաժամկետ միսիոները ներքևից օգնում էին: Սփոփող Միության քույրը նրանց

հիշեցնում էր, որ զգույշ լինեին, և խրախուսանքի խոսքեր էր ասում: Այնուհետև տղամարդիկ քանդեցին կտուրը, մինչ քույրը շարունակում էր մխիթարել հիվանդ տղամարդուն, որը սպասում էր իր բուժմանը, որ կարողանար ինքնուրույն տեղաշարժվել և լինել ազատ:

Փրկության հանձնարարականը պահանջում է, որ բոլորը միասին աշխատեն: Որոշիչ պահին մանրազննին համակարգում է պահանջվում անդամալույծ մարդուն կտուրից իջեցնելու համար: Այդ չորսը պետք է աշխատեին միասնության և ներդաշնակության մեջ: Նրանց միջև չէր կարող լինել ոչ մի անհամաձայնություն: Նրանք պետք է անդամալույծ մարդուն իջեցնեին նույն արագությամբ: Եթե որևէ մեկը պարանը մյուս երեքից ավելի արագ թուլացներ, տղամարդը վայր կընկներ: Նա չէր կարողանա ինքնուրույն բռնվել իր թույլ վիճակի պատճառով:

Փրկչին օգնելու համար մենք պետք է աշխատենք միասին միասնության և ներդաշնակության մեջ: Յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուր պաշտոն և յուրաքանչյուր կոչում կարևոր են: Մենք պետք է միասնական լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսում:

Ի վերջո, հիվանդ, անդամալույծ տղամարդը բերվեց Հիսուսի առաջ: «Հիսուսն էլ նորանց հավատքը տեսնելով, ասեց անդամալույծին. Որդյակ, թողնված են քեզ քո մեղքերը» (Մարկոս 2.5): Հիսուսը ողորմաց և բուժեց նրան՝ ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես. «Որդյակ, թողնված են քեզ քո մեղքերը»: Արդյո՞ք դա հրաշալի չէ: Արդյո՞ք չէինք ուզենա, որ այդպես պատահեր բոլորիս հետ: Իհարկե, ես կուզեի:

Ճանաչո՞ւմ ենք մենք որևէ մեկին մեր կյանքում, ով հոգեպես անդամալույծ է, ով ինքնուրույն չի կարող վերադառնալ Եկեղեցի: Այդ անձը կարող է լինել մեր զավակներից մեկը, մեր ծնողներից մեկը, մեր ամուսինը կամ ընկերը:

Եկեղեցու յուրաքանչյուր միավորում լիաժամկետ միսիոներների այսքան մեծ թվի առկայության պայմաններում իմաստուն եպիսկոպոսները և ճյուղերի նախագահները ավելի արդյունավետ կօգտագործեն իրենց ծխերի և ճյուղերի խորհուրդները: Եպիսկոպոսը կարող է հրավիրել ծխի խորհրդի յուրաքանչյուր անդամի իր հետ բերել օգնության կարիք ունեցող մարդկանց մի ցուցակ: Ծխի խորհրդի անդամները կարող են խորհրդակցել միմյանց հետ, մանրամասն քննարկելով, թե ինչպես կարող են լավագույնս օգնել: Եպիսկոպոսները կարող են ուշադրությամբ լսել նրանց մտքերը և հանձնարարություններ տալ:

Լիաժամկետ միսիոներները մեծ ռեսուրսներ են ծխերում փրկելու այս ջանքերի համար: Նրանք ցանկանում են ունենալ մարդկանց

անուններ, որոնց հետ կարող են աշխատել: Նրանք հաճույքով աշխատում են ծխի անդամների հետ: Նրանք գիտեն, որ այդ անդամները մարդկանց գտնելու մեծ հնարավորություններ են: Նրանք նվիրված են Տիրոջ արքայությունը հիմնելու գործին: Նրանք ունեն ամուր վկայություն, որ կդառնան Քրիստոսի նման, եթե մասնակցեն փրկելու այդ ջանքերին:

Ավարտելով, թույլ տվեք կիսվել ձեզ հետ թաքնված մեկ այլ գանձով, որը գտնվում է սուրբ գրությունների այս պատմության մեջ: Դա տող 5-ում է. «Հիսուսն էլ *նորանց* հավատքը տեսնելով» (շեշտադրումն ավելացված է): Ես նախկինում սա չէի նկատել՝ *նրանց* հավատքը: Մեր միասնական հավատքը նույնպես ազդում է մյուսների բարեկեցության վրա:

Ովքե՞ր էին այն մարդիկ, ում մասին խոսում էր Հիսուսը: Նրանց թվում, իհարկե, կարող են լինել այն չորսը, ովքեր տեղափոխեցին անդամալույծ մարդուն, այդ մարդը, այն մարդիկ, ովքեր աղոթեցին նրա համար, և բոլոր նրանք, ովքեր այնտեղ լսում էին Հիսուսի քարոզները և իրենց սրտում լուռ ուրախանում սպասվելիք հրաշքով: Նրանց թվում կարող էին լինել ամուսին, ծնող, որդի կամ դուստր, միսիոներ, քվորումի նախագահ, Սփոփող Միության նախագահ, եպիսկոպոս և հեռավոր ընկեր: Մենք կարող ենք բոլորս օգնել միմյանց: Մենք միշտ պետք է պատրաստակամությամբ ներգրավվենք կարիքի մեջ գտնվողներին փրկելու աշխատանքում:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը հրաշքների Աստված է: Հիսուս Քրիստոսը սիրում է բոլորիս և ունի ֆիզիկապես և հոգեպես փրկելու և բուժելու զորություն: Երբ մենք օգնում ենք Նրան հոգիներ փրկելու Նրա առաքելության մեջ, մենք նույնպես փրկվում ենք այդ ընթացքում: Ես վկայում եմ սա Նրա՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄ

1. Օրինակի համար տես Թոմաս Ս. Մոնսոն, «Փրկելու մեր պարտականությունը», *Լիահոնա,* հոկտ. 2013, 5:

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ

Ազատ հավիտյան՝ գործելու ինքնուրույն

Աստծո կամքն է, որ մենք ազատ տղամարդիկ և կանայք լինենք՝ հնարավորություն ունենալով հասնել մեր ողջ ներուժին՝ ինչպես աշխարհիկով, այնպես էլ հոգևորով:

Վիլյամ Շեքսպիրի *«Հենրի հինգերորդ»* պիեսում նկարագրված է անգլիական զինվորների գիշերային մի զրույց, որը տեղի է ունենում Աժինկորտում, նախքան ֆրանսիական բանակի վրա հարձակվելը: Աղոտ լույսի ներքո, մասամբ ծպտված, Հենրի թագավորը առանց իր անձը բացահայտելու շրջում է իր զինվորների մեջ: Նա խոսում է նրանց հետ, փորձելով պարզել իր խիստ փոքրաթիվ բանակի մարտական ոգին և չգիտակցելով, թե ում հետ են խոսում, զինվորները շատ անկեղծ մտքեր են արտահայտում: Մի զրուցի ընթացքում նրանք իմաստաբանում են այն մասին, թե ով է պատասխանատվություն կրում, երբ պատերազմի ժամանակ մարդիկ են մահանում՝ թագավորը, թե զինվորը:

Մի պահ Հենրի թագավորը հայտարարում է. «Ըստ իս, ոչ մի վայրում մահը այնքան բաղձալի չէ ինձ համար, ինչպես թագավորի կողքին, քանի որ նրա գործը արդար է»:

Որին Վիլյամսը պատասխանում է. «Այդ ավելին է, քան թե մենք գիտենք»:

Նրա զորակիցը համաձայնվում է. «Այո՛, և ինչ կարիք կա ավելին գիտենալու ետևից ընկնել: Որովհետև եթե մենք գիտենք, որ մենք թագավորի հպատակներն ենք, այդ արդեն բավական գիտելիք է մեզ համար: Եթե նրա դատը անարդար լինի, մեր հպատակությունը թագավորին դրա հանցանքը սրբում է մեր վրայից»:

Վիլյամսն ավելացնում է. «Իսկ եթե դատն անարդար է, թագավորը ստիպված կլինի շատ մեծ տուգանք վճարել դրա համար»:

Զարմանալի չէ, որ թագավոր Հենրին առարկում է. «Ամեն հպատակի պարտականությունը թագավորին է պատկան, իսկ ամեն հպատակի հոգին՝ իրեն հպատակին»[1]:

Իր պիեսում Շեքսպիրը չի փորձում լուծել այդ բանավեճը, և նմանատիպ մի բանավեճ՝ թե ով է պատասխանատու մեր կյանքի իրադարձությունների համար, շարունակվում է մինչև մեր ժամանակները:

Երբ մարդու գործերն անհաջող են ընթանում, նա հակված է մեղադրելու ուրիշներին կամ անգամ

Աստծուն: Երբեմն արտոնված լինելու զգացում է առաջանում և անհատները կամ խմբերը փորձում են իրենց բարօրության պատասխանատվությունը դնել այլ մարդկանց կամ կառավարությունների վրա: Հոգևոր հարցերում ոմանք ենթադրում են, որ ոչ տղամարդիկ, ոչ էլ կանայք արդարակեցության ձգտելու կարիք չունեն, քանի որ Աստված սիրում է մեզ և փրկում է մեզ «այնպիսին, ինչպիսին որ կանք»:

Սակայն Աստված ցանկանում է, որ իր զավակներն իրենց կամքի բարոյական ազատությունը գործի դնեն, «որպեսզի դատաստանի օրն ամեն մարդ պատասխան տա իր իսկ մեղքերի համար»:[2] Ըստ նրա ծրագրի ու կամքի՝ մենք որոշում կայացնելու առաջնային դեր ունենք մեր կյանքի դրամայում: Աստված մեր փոխարեն չի ապրելու մեր կյանքը, ոչ էլ վարելու է մեզ որպես Իր տիկնիկներ, ինչպես որ Լյուցիֆերն էր առաջարկել մի ժամանակ: Ոչ էլ Աստծո մարգարեներն են Նրա անունից ստանձնելու «տիկնիկավարի» դերը: Բրիգամ Յանգը հայտարարել է. «Ես չեմ ցանկանում, որ որևէ Վերջին Օրերի Սուրբ այս աշխարհում կամ երկնքում բավարարվի նրանով, ինչ ես անում եմ, մինչև որ Տեր Հիսուս Քրիստոսի Հոգին՝ հայտնության ոգին, խաղաղություն չտա նրանց: Ես ցանկանում եմ, որ նրանք անձամբ գիտելիք ստանան ու անձամբ հասկանան»[3]:

Այսպիսով, Աստված մեզ չի փրկի «ինչպիսին որ կանք» վիճակում, նախ՝ որովհետև «ինչպիսին որ կանք»-ի դեպքում մենք մաքուր չենք և «ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ. քանզի Ադամի լեզվով, Սրբության Մարդ է նրա անունը, և նրա Միածնի անունն է՝ [Սրբության] Մարդու Որդի»[4]: Եվ երկրորդը՝ Աստված մեզ չի դարձնի այնպիսին, ինչպիսին մենք չենք ցանկանում մեր ազատ կամքով դառնալ: Անկասկած նա սիրում է մեզ, և քանի որ Նա սիրում է, նա մեզ ո՛չ հարկադրում է, ո՛չ էլ լքում է: Փոխարենը՝ նա առաջնորդում է մեզ: Արդարև, Աստծո սիրո

իրական դրսևորումը նրա պատվիրաններն են:

Մենք պետք է ուրախանանք (և ուրախանում ենք) Աստծո կողմից կարգված ծրագրով, որը մեզ ընտրություն կատարելու հնարավորություն է տալիս՝ ինքնուրույն գործելու և հետևանքները ճաշակելու կամ ինչպես սուրբ գրություններն են ասում՝ «դառնություն ենք ճաշակում, որպեսզի սովորենք գնահատել բարին»[5]: Մենք հավերժ երախտապարտ ենք, որ Փրկչի քավությունը հաղթեց ադամական մեղքը, այնպես որ մենք կարող ենք աշխարհ գալ և չպատժվել Ադամի օրինազանցության համար[6]: Այս կերպ, Անկումից փրկագնված, մենք անարատ կյանք ենք սկսում Աստծո առաջ, դառնալով «ազատ հավիտյան՝ տարբերելով բարին չարից. գործելու ինքնուրույն և չներգործվելու»[7]: Մենք ընտրություն ունենք՝ այնպիսի մարդ դառնալու, ինչպիսին կկամենանք, և Աստծո օգնությամբ, մենք կարող ենք դառնալ անգամ այնպիսին, ինչպիսին Նա է[8]:

Հիսուս Քրիստոսի ավետարանը բաց է անում կատարյալ դառնալու մեր ճանապարհը: Թեև հնարավոր է չկարողանանք մահկանացու կյանքում կատարելությամբ ու հետևողականորեն ապրել սելեստիալ օրենքով, Հիսուս Քրիստոսի քավությամբ ու Նրա շնորհով մեզ հնարավորություն է տրված քրիստոսանման հատկանիշներ զարգացնել: Չնայած այդ հնարավորությանը, արդարադատությունը, այնուամենայնիվ, պահանջում է, որ մենք ինքներս ցանկանանք ու ջանք թափենք այդ ուղղությամբ: Միշտ էլ այդպես է եղել: Որպես ֆիզիկական էակներ՝ երկրային մեր կյանքն ինքնին մեր Հոր ծրագրին մասնակցելու ընտրության հետևանք է[9]: Այդպիսով, փրկությունը աստվածային քմահաճույքի արդյունք չէ, ոչ էլ միայն աստվածային կամքի դրսևորմամբ իրականացող բան[10]:

Արդարադատությունը Աստծո էական հատկանիշներից մեկն է: Մենք կարող ենք հավատք ունենալ առ Աստված, քանի որ Նա արժանի է վստահության: Սուրբ գրությունները մեզ ուսուցանում են, որ «Քանզի Աստված չի քայլում ծուռ շավիղներով, նա չի թեքվում ո՛չ աջ կամ ձախ, ո՛չ էլ շեղվում է այն բանից, ինչ ասել է, ուստի նրա շավիղներն ուղիղ են, և նրա ընթացքը մեկ հավերժական շրջան է»[11], և որ «Աստուած աչառ չէ»[12]: Մենք ապավինում ենք հավատքի, վստահության և հույսի աստվածային հատկանիշներին:

Սակայն իր կատարյալ արդարության հետևանքով, կան որոշ

բաներ, որ Աստված չի կարող անել: Նա չի կարող քմահաճորեն մի քանիսին փրկել, իսկ մյուսներին վտարել: Նա «չի կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել»[13]: Նա չի կարող թույլ տալ, որ ողորմությունը կողոպտի արդարադատությանը[14]:

Ողորմության ընկերակից սկզբունքի գործադրումը Աստծո արդարության անհերքելի փաստ է: Իր արդար լինելու պատճառով Նա հնարավոր է դարձրել, որ ողորմությունն իր անփոխարինելի դերը կատարի մեր հավերժական ճակատագրում: Այդպիսով, այժմ «արդարադատությունը ներկայացնում է իր բոլոր պահանջները, և նաև ողորմությունն է հայցում այն բոլորը, ինչն իր սեփականն է»[15]:

Մենք գիտենք, որ արդարադատության պահանջները բավարարում, ողորմություն է պարգևում և փրկագնում է «տառապանքներն ու մահը նրա, ով չմեղանչեց, որին [Հայրը] հավանել է. . . . Իր Որդու արյան, որը հեղվել է»[16], որը բավարարում է արդարադատության պահանջները, ողորմություն է առաջարկում և փրկագնում է մեզ[17]: Նույն կերպ, «*ըստ արդարադատության*, փրկագնման ծրագիրը. . . . չէր կարող իրականացվել *միայն մարդկանց ապաշխարության պարմանով*» :[18] Ապաշխարության պահանջն ու հնարավորությունն է, որ թույլ է տալիս ողորմությանը կատարել իր գործը առանց արդարությունը ոտնահարելու:

Քրիստոսը մահացավ ոչ թե, որ բոլորին անխտիր փրկի, այլ որ ապաշխարություն առաջարկի: Ապաշխարելու ընթացքը ապավինելն է «նրա արժանիքներին, ով հզոր է փրկելիս»[19], բայց ապաշխարելու քայլ անելը՝ ինքնակամ փոփոխություն է: Այդպիսով, ապաշխարությունը շնորհ ստանալու նախապայման դարձնելով, Աստված մեզ հնարավորություն է տալիս պատասխանատվությունը մեզ պահել: Ապաշխարությունը հարգում և սատարում է մեր կամքի բարոյական ազատությունը. «Եվ այսպես ողորմությունը կարող է բավարարել արդարադատության պահանջները, և օղակում է նրանց ապահովության բազուկների մեջ, մինչդեռ նա, ով չի գործադրում հավատք ի ապաշխարություն, ենթակա է արդարադատության պահանջների ամբողջ օրենքին. հետևաբար, միայն նրա համար, ով ունի հավատք ապաշխարության համար, իրագործվում է փրկագնման մեծ և հավերժական ծրագիրը[20]:

Աստծո արդարադատությունը թյուր ըմբռնելը մի բան է, Աստծո գոյությունն ու գերակայությունը ժխտելը մեկ այլ բան, սակայն երկուսն էլ բերում են ավելի ցածր արդյունքի, երբեմն չափազանց ցածր, քան մեր աստվածային ներուժն է: Ոչինչ չպահանջող Աստվածը գործնականում համարժեք է գոյություն չունեցող Աստծո: Աշխարհը, որը չունի Աստված՝ կենդանի Աստված, որը բարոյական նորմեր է հաստատում՝ իր զավակներին կատարելագործելու համար, բացարձակ ճշմարտություն կամ արդարադատություն չունեցող աշխարհ է: Դա մի աշխարհ է, որտեղ գերիշխում է բարոյականության հարաբերականության տեսությունը:

Հարաբերականությունը ենթադրում է, որ ամեն մարդու սեփական գերագույն կառավարիչն ինքն է: Իհարկե, միայն աստվածամերժ մարդիկ չէ, որ հետևում են այդ իմաստասիրությանը: Կան նաև Աստծոն հավատացող մարդիկ, ովքեր համոզված են, որ ճիշտն ու սխալը կախված է իրենց անձնական կարծիքից: Մի երիտասարդ դա արտահայտել է հետևյալ կերպ. «Չեմ կարծում, որ կարող եմ ասել, թե հինդուիզմը սխալ է կամ կաթոլիկականությունը սխալ է կամ եպիսկոպոսական լինելը սխալ է. – իմ կարծիքով, դա կախված է քո հավատալուց. . . . չեմ կարծում, որ գոյություն ունի ճիշտ ու սխալ»[21]: Մեկ այլ երիտասարդ, ում հարցրել էին իր հավատքի մասին, պատասխանել էր. «Իմ անձը՝ ամեն ինչ կախված է ինձանից: Այսինքն՝ ինչպե՞ս կարող է հավատքի մեջ հավաստիություն լինել»:[22]

Ճշմարտության հարաբերականությանը հավատացող մարդու համար առարկայական, հաստատուն և համընդհանուր ճշմարտությունն ընդունելը հարկադրանք է թվում. «Մի ստիպեք ինձ հավատալ մի բանի ճշմարտությանը, ինչն ինձ դուր չի գալիս»: Սակայն դա չի փոխում իրականությունը: Դեպի անդունդը քայլ անելիս ձգողական ուժի դեմ վրդովմունքը չի փրկի վայր ընկնելուց: Նմանապես ճշմարիտ են նաև հավերժական օրենքներն ու արդարադատությունը: Ազատությունը ոչ թե օրենքին դիմակայելու, այլ օրենքը կիրառելու արդյունքն է: Աստծո զորության իսկ համար այն սկզբունքային նշանակություն ունի: Եթե չլինեին հաստատուն և անփոփոխ ճշմարտությունները, ապա կամքի ազատության պարգևն իմաստ չէր ունենա, քանի որ մենք երբեք չէինք կարողանա կանխատեսել և նախատեսել մեր գործողությունների հետևանքները: Ինչպես Լեքին է արտահայտել. «Եվ եթե դու ասես՝ չկա օրենք, դու կասես նաև չկա մեղք: Եթե դու ասես՝ չկա մեղք, դու նաև կասես՝ չկա արդարություն: Եվ եթե չլինի արդարություն, չի լինի երջանկություն: Եվ եթե չլինի արդարություն, ոչ էլ երջանկություն, չի լինի ո՛չ պատիժ, ո՛չ էլ թշվառություն: Եվ եթե այս բաները չկան, չկա Աստված: Եվ եթե չկա Աստված, չկանք մենք, ոչ էլ երկիրը, քանզի չէր կարող եղած լինել բաների արարում, ո՛չ ներգործելու, ո՛չ էլ ներգործվելու. ուստի, բոլոր բաները պիտի վերացած լինեին»[23]:

Ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ հարցերում, անձնական պատասխանատվություն ստանձնելու հնարավորությունը աստվածատուր պարգև է, առանց որի մենք չենք կարող իրականացնել մեր ողջ ներուժը, որպես Աստծո դուստրեր և որդիներ: Անձնական պատասխանատվությունը ինչպես իրավունք, այնպես էլ պարտականություն է, որը մենք պետք է անընդհատ պաշտպանենք. Արարման ժամանակաշրջանից ի վեր այն վտանգի տակ է եղել: Մենք պետք է պաշտպանենք պատասխանատվության մեր զգացումն այն անձանցից ու ծրագրերից, որոնք

(երբեմն լավագույն մտադրություններով) մեզ կախվածության մեջ են զգում: Եվ մենք պետք է պաշտպանենք այդ զգացումը մեր մեջ, որ չխուսափենք աշխատանքից և զարգացնենք մեր տաղանդները, ունակությունները և քրիստոսանման հատկանիշները:

Պատմություն կա մի մարդու մասին, ով չէր կամենում աշխատել: Նրա ցանկությունն էր, որ իր մասին ամեն օր հոգային: Ըստ իր մտածելակերպի՝ Եկեղեցին կամ կառավարությունը պարտավոր էին իր հոգսերը հոգալ, քանի որ նա ինչ-որ ժամանակ հարկեր ու տասանորդ էր վճարել: Նա ուտելու բան չուներ, բայց հրաժարվում էր աշխատել, որ իր կարիքները հոգա: Անելանելիությունից ու նողկանքից դրդված՝ նրանք, ովքեր փորձում էին իրեն օգնել, որոշում կայացրեցին, որ քանի որ ծույլ կարիքավորը մատը մատին չի կպցնում իր գոյատևման համար, ճիշտ կլինի, որ նրան տանեն գերեզման, որ այնտեղ էլ մահանա: Գերեզման տեղափոխելիս մի մարդ ասաց. «Եկեք չտանենք նրան: Ես մի քիչ եգիպտացորեն ունեմ. կտամ նրան, որ սովից չմահանա»:

Այդպիսով, նրանք բացատրեցին տղամարդուն, որին նա հարց տվեց. «Իսկ հատիկները թեփահանվա՞ծ են»:

Նրան ասացին. «Ո՛չ»:

«Այդ դեպքում, - ասաց նա, - գնացինք գերեզման»:

Աստծո կամքն է, որ մենք ազատ տղամարդիկ և կանայք լինենք՝ հնարավորություն ունենալով հասնել մեր ողջ ներուժին՝ ինչպես աշխարհիկով, այնպես էլ հոգևորով, որ մենք զերծ մնանք աղքատության և մեղքի գերության նվաստացուցիչ սահմանափակումներից, որ մենք պահպանենք ինքնահարգանքն ու անկախությունը, որ մենք պատրաստ լինենք բոլոր բաներում միանալ նրան սելեստիալ արքայությունում:

Ես պատրանք չունեմ, որ դրան կարելի է հասնել մեր իսկ ջանքերով միայն՝ առանց Նրա էական ու մշտական օգնության: «Մենք գիտենք, որ շնորհի միջոցով է, որ մենք փրկվում ենք՝ այն ամենից հետո, ինչ մենք կարող ենք անել»[24]: Եվ Աստվածային օգնությանն արժանանալու համար մենք կարիք չունենք հասնելու ինչ-որ նվազագույն աստիճանի. աստվածային օգնությունը մերը կարող է լինել ամեն ժամ, ամեն օր, անկախ նրանից, թե հնազանդության ճանապարհի որ մասում ենք գտնվում: Սակայն գիտեմ, որ նրա օգնությունը փափագելուց բացի, մենք պետք է ջանք գործադրենք, ապաշխարենք և ընտրենք Աստծուն, որպեսզի Նա կարողանա գործել մեր կյանքում համաձայն արդարության և կամքի բարոյական ազատության: Իմ խնդրանքն է պարզապես պատասխանատվություն ստանձնել և գործի անցնել, որ Աստծո օգնության համար հնարավորություն ստանանք:

Ես վկայում եմ, որ Հայր Աստված ապրում է, որ Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, մեր Քավիչն է, և որ Սուրբ Հոգին մեզ հետ է: Նրանք անտարակույս ցանկանում են օգնել մեզ, և օգնելու նրանց հնարավորություններն անսահման են: Եկեք զարթենք և վեր ելնենք փոշուց, որպեսզի «Հավերժական Հոր ուխտերը, որոնք նա արել է [մեզ] հետ, կատարվեն»[25]: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Բարիլոք, Արգենտինա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *«Հենքի հիմքերողը»*, «Շեքսպիր. Քրոնիկներ», ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն (1972), 478–479:
2. Վարդապետություն և Ուխտեր 101.78:
3. Brighan Young "Sermon," *Deseret News*, Oct. 31, 1855, 267; quoted in Terryl and Fiona Givens, *The Crucible of Doubt: Reflections on the Quest for Faith* [2014], 63):
4. Մովսես 6.57:
5. Մովսես 6.55:
6. Տես Հավատո հանգանակ 1.2, տես նաև 2 Նեփի 2.25; Մովսես 6.53–56:
7. 2 Նեփի 2.26, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 93.38:
8. Տես 3 Նեփի 12.48, 27.27, տես նաև Հռովմայեցիս Ը.16–17, Վարդապետություն և Ուխտեր 84.37–38:
9. Տես Հայտնություն ԺԲ.7–9; Վարդապետություն և Ուխտեր 29.36–38, Մովսես 4.3–4:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.29–31:
11. Վարդապետություն և Ուխտեր 3.2:
12. Գործք 10.34:
13. Վարդապետություն և Ուխտեր 1.31:
14. Տես Ալմա 42.25:
15. Ալմա 42.24:
16. Վարդապետություն և Ուխտեր 45.4:
17. Տես Մոսիա 15.9:
18. Ալմա 42.13, շեշտադրումն ավելացված է:
19. 2 Նեփի 31.19:
20. Ալմա 34.16:
21. In Christian Smith, *Souls in Transition: The Religious and Spiritual Lives of Emerging Adults* (2009), 156:
22. In Smith, *Souls in Transition,* 156.
23. 2 Նեփի 2.13:
24. 2 Նեփի 25.23:
25. Մորոնի 10.31:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ստանալ վկայություն լույսի և ճշմարտության մասին

Ձեր անձնական վկայությունը լույսի և ճշմարտության մասին ոչ միայն կօրհնեն ձեզ և ձեր սերունդներին այս մահկանացու կյանքում, այլ այն կուղեկցի ձեզ նաև ողջ հավերժության ընթացքում:

Որպես ավիաուղիների օդաչու ես շատ ժամեր թռել եմ մայրցամաքների և օվկիանոսների վրայով գիշերվա մթության մեջ: Գիշերային երկինքը իմ օդաչուի խցիկի պատուհանից դիտելը, հատկապես Ծիր Կաթինը, հաճախ ինձ ստիպել է հիանալ Աստծո արարչագործությունների մեծությամբ և խորությամբ, ինչը սուրբ գրությունները նկարագրում են որպես «անթիվ աշխարհներ»:[1]

Գիշերային երկնքին նայելը հաճախ ստիպում է ինձ հիանալ Աստծո արարչագործությունների բազմազանությամբ և խորությամբ:

Ավելի քիչ, քան մեկ դար առաջ էր, որ աստղագետներից շատերը ենթադրում էին, որ մեր Ծիր Կաթին գալակտիկան տիեզերքի միակ գալակտիկան է:[2] Նրանք կարծում էին, որ այն ամենը, ինչ գտնվում էր մեր գալակտիկայից դուրս, անսահման դատարկություն էր, կատարյալ չգոյություն՝ դատարկ, սառը և զուրկ աստղերից, լույսից և կյանքից:

Երբ հեռադիտակներն ավելի արդիական դարձան, ներառյալ այն հեռադիտակները, որոնք կարող էին արձակվել տարածության մեջ, աստղագետները սկսեցին հասկանալ գրեթե անըմբռնելի ճշմարտությունը. տիեզերքն անհրևակայելիորեն ավելի մեծ է, քան որևէ մեկը նախկինում կարծել էր, և երկինքները լի են բազմաթիվ գալակտիկաներով, մեզանից անհրևակայելիորեն հեռու գտնվող, յուրաքանչյուրը պարունակելով միլիարդավոր աստղեր:[3]

Շատ կարճ ժամանակահատվածում տիեզերքի վերաբերյալ մեր պատկերացումն ընդմիշտ փոխվեց:

Այսօր մենք կարող ենք տեսնել այս հեռավոր գալակտիկաներից մի քանիսը:[4]

Մենք գիտենք, որ դրանք այնտեղ են:

Դրանք այնտեղ են եղել շատ երկար ժամանակ:

Սակայն նախքան մարդկությունը կունենար բավականաչափ հզոր գործիքներ երկնային լույսն ի մի բերելու և այս գալակտիկաները տեսանելի դարձնելու համար, մենք չէինք հավատում, որ նման բան կարող էր հնարավոր լինել:

Տիեզերքի անսահմանությունը հանկարծակի չէր փոխվել, սակայն այս ճշմարտությունը տեսնելու և հասկանալու մեր ունակությունը կտրուկ փոխվել էր: Եվ այդ պայծառ լույսի ներքո մարդկությանը ներկայացվեցին փառահեղ տեսարաններ, որոնք նախկինում մենք երբեք չէինք կարող պատկերացնել:

Դժվար է մեզ համար հավատալ այն ամենին, ինչը մենք չենք կարող տեսնել

Պատկերացրեք, որ ձեզ հնարավորություն է տրվել հետ ճամփորդելու ժամանակի մեջ և զրուցելու մարդկանց հետ, ովքեր ապրել են հազար կամ նույնիսկ հարյուր տարի առաջ: Պատկերացրեք, որ փորձում եք նրանց համար նկարագրել ժամանակակից որոշ տեխնոլոգիաներ, որոնք այսօր դուք և ես ընդունում ենք որպես սովորական բաներ: Օրինակ, ի՞նչ կարող էին այս մարդիկ մտածել մեր մասին, եթե մենք նրանց պատմեինք մեծ ինքնաթիռների, միկրոալիքային վառարանի, ձեռքի էլեկտրական սարքավորումների մասին, որոնք ներառում են բազմաթիվ համակարգչային գրադարաններ և մեր երեխաների տեսագրությունները, որոնցով մենք հաճախ կիսվում ենք ողջ աշխարհում գտնվող միլիոնավոր մարդկանց հետ:

Ոմանք միգուցե հավատային մեզ: Շատերը կծաղրեին, կառարկեին կամ նույնիսկ կփորձեին լռեցնել կամ վնասել մեզ: Ոմանք միգուցե փորձեին գործի դնել տրամաբանությունը, դատողությունը և փաստերը, ինչպես որ նրանք գիտեին բաները, որպեսզի ցույց տային, որ մենք մոլորության մեջ ենք ընկել, խենթ ենք կամ նույնիսկ վտանգավոր: Նրանք միգուցե մեղադրեին մեզ, թե փորձում ենք թյուրիմացության մեջ գցել ուրիշներին:

Սակայն. Իհարկե, այս մարդիկ միանգամայն սխալված կլինեին: Նրանք միգուցե բարի մտադրություններ ունենային և անկեղծ լինեին: Նրանք միգուցե միանգամայն համոզված լինեին, որ իրենց տեսակետը ճիշտ է: Սակայն նրանք պարզապես չէին կարող պարզ տեսնել, քանի որ նրանք դեռևս չէին ստացել ճշմարտության ավելի լիարժեք լույս:

Լույսի խոստումը

Թվում է, թե մարդկային բնավորության գիծ է ենթադրելը, որ մենք ճիշտ ենք նույնիսկ այն ժամանակ, երբ մենք սխալ ենք: Եվ եթե դա այդպես է, ի՞նչ հույս կարող է ունենալ մեզանից որևէ մեկը: Արդյո՞ք մեզ վիճակված է աննպատակ թափառել իրար հակասող տեղեկությունների օվկիանոսում, անելանելի դրության մեջ գտնվելով լաստանավում, որը մենք անհաջող կերպով կառուցել ենք՝ իրար միացնելով մեր սեփական նախապատվությունների առանձին մասերը:

Արդյո՞ք հնարավոր է գտնել ճշմարտությունը

Իմ մեկնաբանությունների նպատակն է հայտարարելու բարի լուրը, որ Աստված Ինքը՝ Զորաց Տերը, ով գիտի ողջ ճշմարտությունը, տվել է Իր զավակներին խոստում, որ նրանք կարող են իմանալ ճշմարտությունը:

Խնդրում եմ, խորհեք այս խոստումի կարևորության մասին.

Հավերժական և Ամենակարող Աստվածը՝ այս անսահման տիեզերքի Արարիչը, կխոսի նրանց հետ, ովքեր կխնդրեն Իրեն մաքուր սրտով և անկեղծ միտումով:

Նա կխոսի նրանց հետ երազների, տեսիլքների, մտքերի և զգացմունքների միջոցով:

Նա կխոսի բացահայտ կերպով և մարդկային փորձառությանը գերազանցող եղանակով: Նա կտա նրանց աստվածային առաջնորդություն և պատասխաններ իրենց անձնական կյանքի համար:

Իհարկե կլինեն ոմանք, ովքեր կծաղրեն և կասեն, որ նման բան հնարավոր չէ, որ եթե լիներ Աստված, Նա ավելի լավ բաներ կունենար անելու՝ ամեն անհատի աղոթքները լսելու և դրանց պատասխանելու փոխարեն:

Սակայն ես ձեզ ասում եմ հետևյալը. Աստված մտահոգվում է ձեզ համար: Նա կլսի և Նա կպատասխանի ձեր անձնական հարցերին: Ձեր աղոթքների պատասխանները կգան Նրա ձևով և Նրա ժամանակին, և, ուստի, դուք պետք է սովորեք լսել Նրա ձայնը: Աստված ուզում է, որ դուք գտնեք ձեր ճանապարհը Նրա մոտ վերադառնալու համար, և այդ ճանապարհը Փրկիչն է:[5] Աստված ուզում է, որ դուք սովորեք Իր Որդուց՝ Հիսուս Քրիստոսից, և վայելեք մեծ խաղաղություն և երջանկություն, որոնք առաջ են գալիս աստվածային աշակերտության ուղուն հետևելու արդյունքում:

Իմ սիրելի ընկերներ, ահա բավականին պարզ փորձ, որտեղ առկա է Աստծո խոստումը, որը գտնվում է հնադարյան սուրբ գրություններում՝ մատչելի յուրաքանչյուր տղամարդու, կնոջ և երեխայի համար, ով կցանկանա փորձարկել այն.

Առաջինը, դուք պետք է ուսումնասիրեք Աստծո խոսքը: Դա նշանակում է կարդալ սուրբ գրությունները և ուսումնասիրել ինչպես հնադարյան, այնպես էլ ժամանակակից մարգարեների խոսքերը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վերաբերյալ, ոչ թե կասկածելու կամ քննադատելու մտադրությամբ, այլ ճշմարտությունը բացահայտելու անկեղծ ցանկությամբ: Խորհեք այն բաների մասին, ինչ դուք կզգաք և պատրաստեք ձեր մտքերը ճշմարտությունն ընդունելու համար:[6] «Նույնիսկ եթե դուք չեք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ, թույլ տվեք, որ այդ ցանկությունը գործի ձեր մեջ . . . որ դուք կարողանաք տեղ տալ իմ խոսքերի մի մասին»:[7]

Երկրորդը, դուք պատք է մտածեք, խորհեք, առանց վախի ջանաք հավատալ,[8] և երախտապարտ լինեք, թե որքան ողորմած է եղել Տերն Իր զավակների հանդեպ սկսած Ադամից մինչև մեր օրերը՝ նախապատրաստելով մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, որ առաջնորդեն Իր Եկեղեցին և օգնեն մեզ գտնելու Նրա մոտ վերադառնալու ուղին:

Երրորդը, դուք պետք է խնդրեք ձեր Երկնային Հորը Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, հայտնել ձեզ ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վերաբերյալ: Խնդրեք մաքուր սրտով և անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս:[9]

Կա նաև *չորրորդ* քայլ, տրված մեզ Փրկչի կողմից. «Եթէ մէկը կամենում է [Աստծո] կամքն անել, նա կիմանայ այս վարդապետութեան համար, թէ արդեօք Աստուածանից է, կամ եթէ ես իմ անձիցն եմ խոսում»:[10] Այլ կերպ ասած, երբ դուք փորձում եք ճշգրտել ավետարանի սկզբունքների ճշմարտացիությունը, դուք պետք է նախ ապրեք դրանցով: Ավետարանի վարդապետությունը և Եկեղեցու ուսմունքները փորձեք ձեր սեփական կյանքում: Արեք դա անկեղծ միտումով և հարատև հավատքով առ Աստված:

Եթե դուք կանեք այս բաները, դուք խոստում ունեք Աստծուց, ով կապված է Իր խոսքով[11], որ Նա հայտնի կդարձնի ձեզ ճշմարտությունը Սուրբ Հոգու զորությամբ: Նա կշորհի ձեզ ավելի մեծ լույս, որը ձեզ թույլ կտա նայելու խավարի միջով և տեսնելու աներևակայելի փառահեղ տեսարաններ, որոնք անտեսանելի են ֆիզիկական աչքի համար:

Ոմանք կարող են ասել, որ քայլերը շատ բարդ են կամ որ չարժե ջանք թափել դրանց համար: Սակայն ես երաշխավորում եմ, որ այս անձնական վկայությունը ավետարանի և Եկեղեցու մասին ամենակարևոր բանն է, որը դուք կարող եք ձեռք բերել այս կյանքում: Այն ոչ միայն կօրհնի և կառաջնորդի ձեզ այս կյանքում, այլ այն նաև իր հետևանքները կթողնի ձեր կյանքում ողջ հավերժության մեջ:

Հոգու բաները կարող են հասկացվել միայն Հոգով

Գիտնականները ջանք չէին խնայում հասկանալու համար տիեզերքի չափերը, մինչև որ գործիքները բավականաչափ կատարելագործվեցին ավելի մեծ լույս հավաքելու համար, որպեսզի նրանք կարողանային հասկանալ ավելի լիարժեք ճշմարտությունը:

Պողոս Առաքյալն ուսուցանել է համարժեք սկզբունք հոգևոր գիտելիքի վերաբերյալ: «Ճնչաւոր մարդն Աստուծոյ Հոգու բաները չէ ընդունում»,- գրել է նա Կորնթացիներին,- «որովհետեւ նորանք յիմարութիւն են նորա համար. եւ չէ կարող էլ գիտենալ՝ որովհետեւ հոգեւոր կերպով են քննվում»:[12]

Այլ կերպ ասած, եթե դուք ցանկանում եք հասկանալ հոգևոր ճշմարտությունը, դուք պետք է օգտագործեք ճիշտ գործիքներ: Դուք չեք կարող հասկացողություն ձեռք բերել հոգևոր ճշմարտության մասին գործիքների միջոցով, որոնք անկարող են բացահայտել այն:

Տերը մեզ ասել է մեր օրերում. «Այն, ինչ Աստծուց է՝ լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս. և այդ լույսն ավելի ու ավելի է պայծառանում, մինչև որ կատարյալ օր է դառնում»:[13]

Որքան շատ ենք մենք մեր սրտերն ու մտքերը դեպի Աստված դարձնում, այնքան ավելի շատ երկնային լույս է իջնում մեր հոգիների վրա: Եվ ամեն անգամ, երբ մենք հոժարությամբ ու անկեղծությամբ փնտրում ենք այդ լույսը, մենք ցույց ենք տալիս Աստծուն մեր պատրաստակամությունը ավելի շատ լույս ստանալու համար: Աստիճանաբար, բաները, որոնք նախկինում աղոտ, խավար և հեռավոր էին թվում, դառնում են պարզ, լուսավոր և ծանոթ մեզ համար:

Նույն կերպ, եթե մենք հեռացնում ենք մեզ ավետարանի լույսից, մեր սեփական լույսը սկսում է աղոտանալ, ոչ թե մեկ օրում կամ մեկ շաբաթում, այլ աստիճանաբար ժամանակի ընթացքում, մինչև որ ետ ենք նայում և չենք կարողանում հասկանալ, թե ինչու ենք մենք երբևէ հավատացել, թե ավետարանը ճշմարիտ է: Մեր նախկին գիտելիքը նույնիսկ կարող է մեզ հիմարություն թվալ, քանի որ այն, ինչը մի ժամանակ շատ պարզ էր, կրկին դառնում է ոչ պարզ, աղոտ և հեռավոր:

Ահա, թե ինչու էր Պողոսը համառորեն պնդում, որ ավետարանի ուղերձը հիմարություն է նրանց համար, ովքեր կորած են, «բայց [նրանց համար, ովքեր փրկված են], Աստուծոյ զօրութիւն է»:[14]

Չկա փորձաքար

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին մի վայր է ամեն տեսակի վկայություն ունեցող

մարդկանց համար: Կան Եկեղեցու որոշ անդամներ, ում վկայությունն ամուր է և պայծառ շողում է նրանց մեջ: Ուրիշներն էլ դեռևս ջանում են պարզել իրենց համար: Եկեղեցին տուն է, որտեղ կարող են հավաքվել բոլորը, անկախ մեր վկայության խորությունից կամ ամրությունից: Մեր հավաքատների վրա ես չեմ տեսել, որ գրված լինի. «Ձեր վկայությունը պետք է լինի այսքան ամուր, որպեսզի կարողանաք ներս մտնել»:

Եկեղեցին միայն կատարյալ մարդկանց համար չէ, այլ այն բոլորի համար է, որ «գան Քրիստոսի մոտ և կատարելագործվեն նրանում»:[15] Եկեղեցին ձեզ նման և ինձ նման մարդկանց համար է: Եկեղեցին սիրալիր ընդունելության և կրթելու վայր է, ոչ թե բաժանելու կամ քննադատելու վայր: Դա մի վայր է, որտեղ մենք օգնության ենք հասնում մեկս մյուսին քաջալերելու, բարձրացնելու և աջակցելու համար, մինչ մենք հետամուտ ենք լինում աստվածային ճշմարտության մեր անձնական որոնումներին:

Ի վերջո, մենք բոլորս էլ ուխտագնացներ ենք, ովքեր փնտրում են Աստծո լույսը, մինչ մենք ճամփորդում ենք աշակերտության արահետով: Մենք չենք դատապարտում մարդկանց լույսի այն չափի համար, որը նրանք ունեն կամ չունեն. այլ մենք սնուցում և քաջալերում ենք ամեն լույսի, մինչև այն դառնում է ավելի պարզ, պայծառ և ճշմարիտ:

Խոստում բոլորին

Եկեք ընդունենք, որ շատ հաճախ վկայություն ձեռք բերելը մեկ րոպեի, ժամի կամ օրվա խնդիր չէ: Դա տեղի չի ունենում մեկ անգամ և ավարտվում: Հոգևոր լույս փնտրելու գործընթացը ամբողջ կյանքում տևող փնտրտուք է:

Աստծո կենդանի Որդու և Նրա վերականգնված Եկեղեցու՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մասին ձեր վկայությունը միգուցե չգա այնքան արագ, որքան դուք եք ցանկանում, սակայն ես խոստանում եմ ձեզ սա. եթե դուք անեք ձեր մասը, այն կգա:

Եվ դա փառահեղ կլինի:

Ես բերում եմ ձեզ իմ անձնական վկայությունը, որ հոգևոր ճշմարտությունը կլցնի ձեր սիրտը և լույս կբերի ձեր հոգուն: Այն ձեզ կտա կատարյալ ընդունակություններ՝ հիանալի երջանկության և երկնային խաղաղության հետ միասին: Ես ինքս ունեցել եմ այս փորձառությունը Սուրբ Հոգու զորությամբ:

Ինչպես խոստանում են հնադարյան սուրբ գրությունները, Աստծո Հոգու աներևակայելի ներկայությունը կստիպի ձեզ երգել քավիչ սիրո երգը,[16] բարձրացնել ձեր աչքերը դեպի երկինք և բարձրացնել ձեր ձայնը՝ փառաբանելու Ամենաբարձրյալ Աստծուն, ձեր Ապաստանին, ձեր Հույսին, ձեր Պաշտպանին, ձեր Հորը: Փրկիչը խոստացել է, որ եթե դուք փնտրեք, դուք կգտնեք:[17]

Ես վկայում եմ, որ դա ճիշտ է: Եթե դուք փնտրեք Աստծո ճշմարտությունը, այն, ինչն այժմ աղոտ է, պարզ չի երևում և հեռվում է, աստիճանաբար հայտնի կդարձվի, պարզ կդառնա և կմոտենա ձեր սրտին Աստծո ողորմության լույսի ներքո: Փառահեղ հոգևոր տեսարաններ, որոնք աներևակայելի են մարդկային աչքի համար, կբացվեն ձեր առջև:

Ես ունեմ վկայություն, որ այս հոգևոր լույսը հասանելի է Աստծո յուրաքանչյուր զավակի համար: Այն կլուսավորի ձեր միտքը և բուժում կբերի ձեր սրտին ու ուրախություն ձեր օրերում: Իմ թանկագին ընկերներ, խնդրում եմ, մի հետաձգեք պահը փնտրելու և ամրացնելու ձեր սեփական անձնական վկայությունը Աստծո աստվածային գործի վերաբերյալ, որը լույսի և ճշմարտության գործ է:

Ձեր անձնական վկայությունը լույսի և ճշմարտության մասին ոչ միայն կօրհնեն ձեզ և ձեր սերունդներին այս մահկանացու կյանքում, այլ այն կուղեկցի ձեզ նաև ողջ հավերժության ընթացքում անվերջ աշխարհներում: Այս ամենի մասին ես վկայում եմ և թողնում ձեզ հետ իմ օրհնությունը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մովսես 1.33:
2. Տես Մարսիա Բարթուսիակ, *Այն օրը, երբ մենք գտանք տիեզերքը* (2009), xii: Ինձ միշտ զարմացնում է այն, որ մենք կարող ենք շատ վստահ լինել մեր եզրակացություններում: Երբեմն մեր վստահությունն այնքան մեծ է, որ մենք ենթադրում ենք, որ գիտենք գոյություն ունեցող ողջ ճշմարտությունը: Խնդրի էությունը կայանում է հետևյալում. «Սիմոն Նյուքոբը՝ տասնիններորդ դարի վերջին Ամերիկյան աստղագիտության հայրը, 1887թ. աստղադիտարանի նվիրագործման օրը նշել է, որ «ինչ վերաբերվում է աստղագիտության զարգացմանը . . . մենք արագ ենք մոտենում մեր գիտելիքների սահմաններին: . . . Արդյունքն այն է, որ աշխատանքը, որը, իրոք, զբաղեցնում է աստղագետի ուշադրությունը, ավելի քիչ է բացահայտում նոր բաներ, քան մշակում այն, ինչն արդեն հայտնի է»» (Բարթուսիակ, xv):
3. Հետաքրքիր է խորհել Մովսես 1.33, 35–ի շուրջ այս «վերջին» հայտնագործության լույսի ներքո: Թանկագին Մարգարիտում գտնվող Մովսեսի գիրքը Մարգարե Ջոզեֆ Սմիթին հայտնի էր դարձվել 1830թ. հունիսին, մոտ մեկ դար առաջ, նախքան Էդվին Հուբբլը կհայտարարեր հեռավոր գալակտիկաների իր հայտագործության մասին:
4. Տես, օրինակ, Hubble Heritage Image Gallery-ն heritage.stsci.edu/gallery/gallery.html կայքէջում.
5. Տես Հովհաննես ԺԴ.6:
6. Տես 3 Նեփի 17.3:
7. Ալմա 32.27:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 67.3:
9. Տես Մորոնի 10.3–5:
10. Հովհաննես Է.17, տես նաև Սաղմոս ԻԵ.14, Հովհաննես Գ.21:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 82.10:
12. Ա Կորնթացիս Բ.14:
13. Վարդապետություն և Ուխտեր 50.24:
14. Ա Կորնթացիս Ա.18:
15. Մորոնի 10.32, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 20.59:
16. Տես Ալմա 5.26:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 88.63:

Ներկայացրեց՝ Նախագահ Հենրի Բ. Այրինգը
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Եկեղեցու պաշտոնյաների հաստատում

Առաջարկվում են հաստատման Թոմաս Սպենսեր Մոնսոնը որպես մարգարե, տեսանող և հայտնող, և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահ; Հենրի Բենյոն Այրինգը որպես Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական, և Դիտեր Ֆրիդրիխ Ուխդորֆը որպես Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական:

Ովքեր կողմ են, կարող են քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Բոյդ Քեննեթ Փաքերը որպես Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ, և հետևյալ անձինք որպես այդ քվորումի անդամներ. Բոյդ Ք. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Մ. Ռասել Բալլարդ, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Հեյլս, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն և Նիլ Լ. Անդերսեն:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, նույնպես կարող են քվեարկել:

Առաջարկվում են հաստատման Առաջին Նախագահության Խորհրդականները և Տասներկու Առաքյալները որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, եթե կան, արտահայտեք նույն կերպ:

Առաջարկվում է ազատել իրենց արտակարգ ծառայության համար երախտագիտությամբ՝ Երեցներ Կառլոս Հ. Ամադոյին և Վիլյամ Ռ. Վոքերին որպես Յոթանասունի Առաջին Քվորումի անդամներ, և նշանակել նրանց որպես պատվավոր Բարձրագույն Իշխանություններ:

Ովքեր ցանկանում են միանալ մեզ և երախտագիտություն հայտնել, խնդրում ենք, քվեարկել:

Երեցներ Արայիկ Վ. Մինասյանը և Գվիդո Մենկանսը ազատվել են որպես Տարածքային Յոթանասունականներ: Առաջարկվում է նրանց հայտնել երախտագիտության քվե՝ իրենց հիանալի ծառայության համար:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Առաջարկվում են հաստատման մյուս Բարձրագույն Իշխանությունները, Տարածքային Յոթանասունականները, և գերագույն օժանդակ կազմակերպությունների նախագահությունները ներկա կազմով:

Ովքեր կողմ են, խնդրում ենք քվեարկել:

Ովքեր դեմ են, կարող են քվեարկել:

Եղբայրներ և քույրեր, շնորհակալություն ձեր ձեր հավատքի և մեզ համար ասված աղոթքների համար: ■

Երեց Դալլին Հ. Օուքս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Սիրել ուրիշներին և ապրել տարբերություններով հանդերձ

Որպես Քրիստոսի հետևորդներ մենք պետք է խաղաղ ապրենք ուրիշների հետ, ովքեր չեն կիսում մեր արժեքները կամ ընդունում ուսմունքները, որոնց վրա դրանք հիմնված են:

I.

Իր մահկանացու ծառայության վերջին օրերին Հիսուսն Իր աշակերտներին տվեց, ինչպես Ինքն էր կոչում, «նոր պատուիրանք» (Հովհաննես ԺԳ.34): Կրկնվելով երեք անգամ՝ այդ պատվիրանը պարզ էր, սակայն դժվար. «Իրար սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի» (Հովհաննես ԺԵ.12, տես նաև հատված 17): Իրար սիրելու ուսմունքը եղել է Փրկչի ծառայության առանցքային ուսմունքը: Երկրորդ մեծ պատվիրանն է եղել՝ «սիրիր քո ընկերին քո անձի պէս» (Մատթեոս ԻԲ.39): Հիսուսը նույնիսկ սովորեցրել է. «Սիրեցէք ձեր թշնամիներին» (Մատթեոս Ե.44): Եվ *ուրիշներին սիրել այնպես, ինչպես Նա սիրեց Իր հուրին* պատվիրանը ուղղված էր Իր աշակերտներին և մեզ, մարտահրավեր, որն առանձնահատուկ էր: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը սովորեցրել է մեզ անցած ապրիլին. «Փաստորեն, սերը ավետարանի հենց էությունն է, և Հիսուս Քրիստոսը մեր Օրինակն է: Նրա կյանքը սիրո ժառանգություն է»:[1]

Ինչո՞ւ է այդքան դժվար Քրիստոսանման սեր ունենալ իրար հանդեպ: Դա դժվար է, որովհետև մենք պետք է ապրենք նրանց մեջ, ովքեր չեն կիսում մեր համոզմունքները և արժեքները և ուխտի հետ կապված պարտավորությունները: Իր աշակերտների համար ասված հիանալի աղոթքում, որն ասվեց Նրա Խաչելությունից անմիջապես առաջ, Հիսուսն աղոթեց Իր հետևորդների համար. «Եւ քո խօսքը նորանց տուի, եւ աշխարհքը նորանց ատեց, որովհետեւ աշխարհքիցը չեն, ինչպէս ես էլ աշխարհքիցը չեմ» (Հովհաննես ԺԷ.14): Ապա Նա աղերսեց Հորը. «Ես չեմ աղաչում, որ աշխարհքիցը վեր առնես նորանց. այլ որ նորանց պահես չարիցը» (հատված 15):

Մենք պետք է ապրենք *աշխարհում*, սակայն չլինենք *աշխարհից*: Մենք պետք է ապրենք աշխարհում, քանի որ, ինչպես Հիսուսն է սովորեցրել առակում, Իր արքայությունը «նման է խմորի», որի դերը կայանում է իր ներգործությամբ ողջ զանգվածը բարձրացնելու մեջ (տես Ղուկաս ԺԳ.21, Մատթեոս ԺԳ.33, տես նաև Ա Կորնթացիս Ե.6–8): Նրա հետևորդները չեն կարողանա դա անել, եթե շփվեն միայն նրանց հետ, ովքեր կիսում են իրենց համոզմունքները և սովորությունները: Սակայն Փրկիչը նաև ուսուցանել է, որ եթե մենք սիրում ենք Նրան, մենք կպահենք Նրա պատվիրանները (տես Հովհաննես ԺԴ.15):

II.

Ավետարանն ունի բազում ուսմունքներ պատվիրանները պահելու վերաբերյալ՝ ապրելով տարբեր համոզմունքներ և սովորություններ ունեցող մարդկանց մեջ: Հակառակության մասին ուսմունքներն ամենակարևորներից են: Երբ հարություն առած Քրիստոսը տեսավ նեփիացիներին, որոնք մկրտության ձևի մասին էին վիճաբանում, Նա պարզ ցուցումներ տվեց, թե ինչպես պետք է կատարվեր այս արարողությունը: Ապա Նա սովորեցրեց այս մեծ սկզբունքը.

«Ձեր մեջ չպիտի լինեն վիճաբանություններ, ինչպես մինչև այժմ է եղել. ոչ էլ պիտի վիճաբանություններ լինեն ձեր մեջ՝ իմ վարդապետության կետերի վերաբերյալ, ինչպես մինչև այժմ է եղել:

Քանզի ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, *նա, որ ունի հակառակության ոգին, ինձանից չէ, այլ դևից է, որը հակառակության հայրն է, և նա դրդում է մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու մեկը մյուսի հետ:*

Ահա, . . . այս է իմ վարդապետությունը, որ այսպիսի բաները պետք է վերացվեն» (3 Նեփի 11.28–30, շեղագրերն ավելացված են):

Փրկիչը չէր սահմանափակում Իր նախազգուշացումը

հակառակության դեմ նրանց հանդեպ, ովքեր չէին պահում մկրտվելու վերաբերյալ պատվիրանը: Նա արգելեց հակառակությունը ցանկացած մարդու հետ: Նույնիսկ նրանք, ովքեր պահում են պատվիրանները, չպետք է դրդեն մարդկանց սրտերը՝ բարկությամբ վիճելու: «Հակառակության հայրը» դևն է, Փրկիչը Խաղաղության Իշխանն է:

Նմանապես, Աստվածաշունչը սովորեցնում է, որ «իմաստունները բարկութիւնը կհանգստացնեն» (Առակաց ԻԹ.8): Առաջին Առաքյալներն ուսուցանել են, որ մենք պետք է «խաղաղութեան բաների ետեւից գնանք» (Հռովմայեցիս ԺԴ.19) և «[խոսենք] ճշմարիտ լինելով սէրի մեջ» (Եփեսացիս Դ.15), «որովհետեւ մարդի բարկութիւնն Աստուծոյ արդարութիւնը չէ գործում» (Հակոբոս Ա.20): Մեր օրերի հայտություններում Տերը պատվիրել է, որ վերականգնված ավետարանի բարի լուրը պետք է հայտարարի «ամեն մարդ իր մերձավորին, մեղմությամբ ու հեզությամբ» (ՎԿՈՒ 38.41), «ողջ խոնարհությամբ, . . . չանարգելով անարգողներին» (ՎԿՈՒ 19.30):

III.

Նույնիսկ երբ մենք փորձում ենք հեզ լինել և խուսափել հակառակությունից, մենք չպետք է փոխզիջման գնանք կամ նվազեցնենք մեր հավատարմությունն այն ճշմարտությունների հանդեպ, որոնք մենք հասկանում ենք: Մենք չպետք է հանձնենք մեր դիրքերը կամ մեր արժեքները: Հիսուս Քրիստոսի ավետարանը և մեր կապած ուխտերը անխուսափելիորեն պահանջում են, որ մենք պատերազմենք ճշմարտության և սխալի միջև առկա հավերժական պայքարում: Այդ պայքարում չկա չեզոք գոտի:

Փրկիչը ցույց տվեց ուղին, երբ, Նրան փորձելով, հակառակորդները Նրա մոտ բերեցին մի կնոջ, ով «բռնուել էր յայտնապէս շնանալիս» (Հովհաննես Ը.4): Իրենց իսկ կեղծավորության պատճառով ամաչելով՝ դատապարտողները հեռացան և Հիսուսին մենակ թողեցին կնոջ հետ: Նա բարի վերաբերմունք ցուցաբերեց նրա հանդեպ՝ հրաժարվելով դատապարտել նրան այդ պահին: Սակայն Նա նաև հաստատակամորեն կարգադրեց նրան՝ «այսուհետեւ մեղք մի գործիր» (Հովհաննես Ը.11): Պահանջվում է ողորմածություն, սակայն Քրիստոսի հետևորդը, ճիշտ ինչպես Ուսուցիչը, հաստատակամ կմնա ճշմարտության մեջ:

IV.

Ինչպես Փրկիչը, Նրա հետևորդները երբեմն փորձվում են մեղսալի վարքի միջոցով, և այսօր, երբ նրանք պաշտպանում են ճիշտն ու սխալն այնպես, ինչպես հասկանում են իրենք, նրանց երբեմն կոչում են «մոլեռանդներ»: Բազմաթիվ աշխարհիկ արժեքներ և սովորություններ նման մարտահրավերներ են նետում Վերջին Օրերի Սրբերին: Սրանց մեջ այսօր աչքի է ընկնում նույնասեռ ամուսնությունը, որը մեծ օժանդակության է արժանանում Միացյալ Նահանգների ու Կանադայի շատ նահանգներում ու մարզերում և աշխարհի շատ այլ երկրներում: Մենք նաև ապրում ենք ոմանց շրջապատում, ովքեր ընդհանրապես չեն հավատում ամուսնության կարևորությանը: Ոմանք չեն հավատում երեխաներ ունենալու կարևորությանը: Ոմանք առարկում են որևէ արգելքը մերկագրության կամ վտանգավոր թմրադեղերի դեմ: Մեկ այլ մարտահրավերի օրինակ, որը ծանոթ է հավատացյալներից շատերին, անհավատ ամուսնու կամ ընտանիքի անդամի հետ ապրելն է կամ անհավատ աշխատակիցների հետ շփվելը:

Նվիրագործված վայրերում, ինչպիսին են տաճարները, երկրպագության տները և մեր սեփական տները, մենք պետք է ուսուցանենք ճշմարտությունը և պատվիրանները պարզ և լիարժեք ձևով, ինչպես մենք հասկանում ենք դրանք փրկության ծրագրից, որը հայտնի է դարձվել վերականգնված ավետարանում: Դա անելու մեր իրավունքը պաշտպանվում է սահմանադրության միջոցով, որը երաշխավորում է խոսքի և կրոնի ազատություն, ինչպես նաև գաղտնիությամբ, որը հարգվում է նույնիսկ այն երկրներում, որոնք չունեն օրինական սահմանադրական երաշխիքներ:

Հասարակության մեջ կրոնավորների ասածը և արածը ներառում է այլ նկատառումներ: Կրոնի ազատ կիրառումը վերաբերվում է գրեթե բոլոր հասարակական գործողություններին, սակայն այն ենթակա է որակավորումների, որոնք անհրաժեշտ են ուրիշների համոզմունքները և սովորությունները հարմարեցնելու համար: Օրենքները կարող են արգելել այն դրսևորումները, որոնք ընդհանուր առմամբ ճանաչվել են որպես սխալ

կամ անընդունելի, ինչպես սեռական շահագործումը, բռնությունը կամ ահաբեկչական գործողությունը, նույնիսկ երբ այն կատարվել է ծայրահեղականների կողմից կրոնի անվան տակ: Ավելի քիչ կարևորություն ունեցող դրսևորումները, նույնիսկ եթե անընդունելի են որոշ հավատացյալների համար, պարզապես պետք է տանելի համարվեն, եթե օրինականացված են, ինչպես Մորմոնի Գրքի մարգարեն է կոչում, «ժողովրդի ձայնով» (Մոսիա 29.26):

Ինչ վերաբերվում է հասարակական ճառերին, մենք պետք է հետևենք ավետարանի ուսմունքներին՝ սիրելու մեր մերձավորներին և խուսափելու հակառակություններից: Քրիստոսի հետևորդները պետք է լինեն քաղաքավարության օրինակներ: Մենք պետք է սիրենք բոլոր մարդկանց, լինենք լավ լսողներ և ցուցաբերենք մտահոգություն նրանց անկեղծ համոզմունքների հանդեպ: Չնայած որ մենք կարող ենք չհամաձայնվել, մենք չպետք է լինենք անբարյացակամ: Մեր դիրքորոշումները և հաղորդակցությունը վիճահարույց թեմաների շուրջ չպետք է հակառակություն առաջ բերեն: Մենք պետք է իմաստուն լինենք մեր դիրքորոշումները բացատրելիս և դրանց հետևելիս և մեր ազդեցությունը գործադրելիս: Դա անելիս մենք խնդրում ենք, որ ուրիշները չվիրավորվեն մեր անկեղծ կրոնական համոզմունքներից և մեր կրոնի ազատ գործադրումից: Մենք խրախուսում ենք մեզ բոլորիս կիրառել Փրկչի Ոսկե Կանոնը. «Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց» (Մատթեոս Է.12):

Երբ մեր դիրքորոշումները չեն ընդունվում, մենք պետք է ընդունենք ոչ դրական արդյունքները բարեհոգաբար և քաղաքակիրթ վերաբերմունք ցուցաբերենք մեր հակառակորդների հանդեպ: Ցանկացած իրավիճակում մենք պետք է լինենք բոլորի հանդեպ բարյացակամ անձնավորություններ, մերժելով ցանկացած տեսակի հալածանքը, ներառյալ հալածանքը հիմնված ազգային, էթնիկական պատկանելության, կրոնական համոզմունքների կամ անհավատության և սեռական կողմնորոշման վրա:

V.

Ես խոսեցի ընդհանուր սկզբունքների մասին: Այժմ ես կխոսեմ, թե ինչպես պետք է այդ սկզբունքները կիրառվեն զանազան ծանոթ իրավիճակներում, որտեղ Փրկչի ուսմունքներին պետք է ավելի հավատարմորեն հետևենք:

Ես սկսում եմ նրանից, թե ինչ են մեր փոքրիկները սովորում իրենց խաղերի ժամանակ: Շատ հաճախ ոչ մորմոններն այստեղ Յուտայում վիրավորվում են և իրենց մեկուսացված են զգում մեր որոշ անդամների կողմից, ովքեր թույլ չեն տալիս իրենց երեխաներին ընկերանալ այլ հավատքի երեխաների հետ: Իհարկե, մենք կարող ենք ուսուցանել մեր երեխաներին արժեքներ և վարքագծի չափանիշներ առանց իրենց հեռու պահելու անհրաժեշտության կամ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու որևէ մեկի հանդեպ, ով տարբերվում է մեզանից:

Շատ ուսուցիչների եկեղեցում և դպրոցում վշտացրել է իրար հանդեպ պատանիների՝ ներառյալ ՎՕՍ երիտասարդների ցուցաբերած վերաբերմունքը: Իրար սիրելու պատվիրանը անկասկած ներառում է սեր և հարգանք՝ անկախ կրոնական և նաև ազգային, մշակութային տարբերություններից և տնտեսական տարբեր իրավիճակներից: Մենք խրախուսում ենք բոլոր երիտասարդներին խուսափել կռվարար լինելուց, վիրավորանքներ հասցնելուց կամ այնպիսի խոսքերից ու արարքներից, որոնք միտումնավոր կերպով ցավ են պատճառում ուրիշներին: Այս ամենը ոտնահարում են իրար սիրելու Փրկչի պատվիրանը:

Փրկիչն ուսուցանել է, որ հակառակությունը դևի գործիքն է: Դա անկասկած ուսուցում է ներկայիս որոշ խոսելաձևերի և քաղաքականությունների դեմ: Տարբեր քաղաքականություններով ապրելն անհրաժեշտ է քաղաքական կյանքում, սակայն տարբեր քաղաքականությունները չպետք է ներառեն անձնական քննադատություններ, որոնք թունավորում են ղեկավարման գործընթացը և վնասում են մասնակիցներին: Մենք բոլորս էլ պետք է ազատվենք ատելություն սերմանող հաղորդակցություններից և քաղաքավարություն կիրառենք տարբեր կարծիքների դեպքում:

Հակառակությանը դիմակայելու և տարբերությունների հանդեպ հարգանք ցուցաբերելու համար ամենակարևոր միջավայրը մեր տներն են և ընտանեկան հարաբերությունները: Տարբերություններն անխուսափելի են, դրանցից ոմանք փոքր են, մյուսները՝ մեծ: Ինչ վերաբերվում է մեծ տարբերություններին, ենթադրենք, որ ընտանիքի անդամն առանց օրինական ամուսնության ապրում է մեկի հետ: Դա հակասության մեջ է դնում երկու կարևոր արժեքներ՝ մեր սերը ընտանիքի անդամի հանդեպ և պատվիրանների հանդեպ մեր պարտավորությունը: Հետևելով Փրկչի օրինակին, մենք կարող ենք սեր ցուցաբերել և շարունակել հավատարիմ մնալ ճշմարտությանը, դիմակայելով արարքներին, որոնք թեթևացնում կամ, թվում է, թե արդարացնում են այն, ինչը մենք գիտենք, որ սխալ է:

Վերջում ես ուզում եմ բերել ևս մեկ օրինակ ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ: Մոտավորապես 10 տարի առաջ հյուսիս-կենտրոնական շրջանում ցցի համաժողովի ժամանակ ես հանդիպեցի մի քրոջ, ով ասաց ինձ, որ իր ոչ անդամ ամուսինը իր հետ եկեղեցի էր գալիս 12 տարի, սակայն դեռևս չէր միացել Եկեղեցուն: Նա հարցրեց, թե ինչ պետք է ինքն աներ: Ես խորհուրդ տվեցի նրան շարունակել անել բոլոր ճիշտ բաները և համբերատար ու սիրալիր լինել իր ամուսնու հանդեպ:

Մոտ մեկ ամիս անց նա գրեց ինձ հետևյալը. «Ես կարծում էի, որ 12 տարիներն իմ համբերության վառ ապացույցն էին հանդիսանում, սակայն ես վստահ չէի, որ շատ բարի էի զտնվում այդ պայմաններում: Ուստի, ես մեծ ջանասիրություն

գործադրեցի մոտ մեկ ամիս և նա մկրտվեց»:

Բարությունը զորեղ է, հատկապես ընտանիքում: Նրա նամակը շարունակվում էր. «Ես փորձում եմ նույնիսկ ավելի բարի լինել այժմ, քանի որ մենք այս տարի աշխատում ենք կնքվել տաճարում»:

Վեց տարի անց նա գրեց ինձ մեկ այլ նամակ. «Իմ ամուսինը [նոր] կանչվեց և կարգվեց որպես [մեր ծխի] եպիսկոպոս»:[2]

VI.

Կյանքում շատ հարաբերություններում և պայմաններում մենք պետք է շփվենք մարդկանց հետ, ովքեր տարբերվում են մեզանից: Կարևոր է, որ մեր կողմից այս տարբերությունները չմերժվեն կամ անտեսվեն, սակայն որպես Քրիստոսի հետևորդներ մենք պետք է սովորենք խաղաղ ապրել ուրիշների հետ, ովքեր չեն կիսում մեր արժեքները կամ ընդունում ուսմունքները, որոնց վրա դրանք հիմնված են: Հոր փրկության ծրագիրը, որի մասին մենք գիտենք մարգարեական հայտնությամբ, դնում է մեզ մահկանացու պայմաններում, որտեղ մենք պետք է պահենք Նրա պատվիրանները: Դա ներառում է տարբեր մշակույթներ և համոզմունքներ ունեցող մեր մերձավորներին այնպես սիրելը, ինչպես Նա սիրեց մեզ: Ինչպես ուսուցանել է Մորմոնի Գրքի մի մարգարե, մենք պետք է առաջ մղվենք՝ ունենալով «սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ» (2 Նեփի 31.20):

Որքան էլ դժվար լինի ապրելը մեզ շրջապատող աղմուկի մեջ, հավանաբար մեր ամենամեծ մարտահրավերն է մեր Փրկչի պատվիրանը՝ իրար սիրելը, ինչպես Նա է սիրում մեզ: Ես աղոթում եմ, որ մենք կարողանանք հասկանալ սա և ջանանք ապրել այդ պատվիրանով մեր բոլոր հարաբերություններում և արարքներում, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Մեր՝ ավետարանի էությունը», *Լիահոնա,* մայիս 2014, 91:
2. Նամակներ Դալլին Հ. Օուքսին, հուն. 23, 2006 և հոկտ. 30, 2012:

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

Ջոզեֆ Սմիթ

Հիսուս Քրիստոսը ընտրեց մի սուրբ ու արդար մարդ, որպեսզի առաջնորդի Իր ավետարանի լրիվության Վերականգնումը: Նա ընտրեց Ջոզեֆ Սմիթին:

17-ամյա Մարգարե Ջոզեֆ Սմիթին առաջին անգամ այցելելով հրեշտակը դիմեց Ջոզեֆին անունով և ասաց, որ ինքը Մորոնին է, Աստծո ներկայությունից ուղարկված սուրհանդակ և որ Աստված աշխատանք ուներ նրա համար՝ կատարելու: Պատկերացրեք, ինչ կարող էր մտածել Ջոզեֆը, երբ այդ ժամանակ հրեշտակն ասաց, որ իր անունը որպես բարի և չար կիմացվի բոլոր ազգերի, ցեղերի և լեզուների մեջ:[1] Հավանաբար, Ջոզեֆի աչքերում զարմանք նկատելով, Մորոնին կրկնեց, որ բոլոր ժողովուրդների մեջ նրա մասին կխոսվի և բարի, և չար:[2]

Ջոզեֆ Սմիթի մասին բարի խոսելը դանդաղ եկավ, բայց չարախոսությունը անմիջապես սկսվեց: Ջոզեֆը գրեց. «Որքան տարօրինակ էր, որ չճանաչված մի պատանու մասին . . . մտածում էին, որպես մի կարևոր անձնավորության, որն . . . առաջացրել էր դաժան հետապնդում»:[3]

Ջոզեֆի հանդեպ սերն աճելու հետ մեկտեղ աճում էր նաև թշնամությունը: 38 տարեկանում նա սպանվեց 150 հոգուց բաղկացած ներկված երեսներով ամբոխի կողմից:[4] Թեպետ Մարգարեի կյանքը կտրուկ ընդհատվեց, Ջոզեֆի մասին լավ և վատ խոսակցությունները նոր էին սկսվում:

Արդյո՞ք պետք է զարմանանք նրա դեմ հնչող չարախոսությունների համար: Պողոս Առաքյալին խելագար և մոլորված էին անվանում:[5] Մեր սիրելի Փրկչին՝ Աստծո Որդուն, պիտակեցին որպես որկրամոլ, գինեմոլ և դևից բռնված:[6]

Տերը հայտնեց Ջոզեֆին իր ճակատագրի մասին.

«Աշխարհի ծայրերը գիտելիք կփնտրեն քո անվան մասին, և հիմարները կծաղրեն քեզ, և դժոխքը կմոլեգնի քո դեմ.

Մինչդեռ սրտով մաքուրները, . . . իմաստունները, . . . և առաքինիները, շարունակ օրհնություններ պիտի փնտրեն քո ձեռքի տակ»:[7]

Ինչո՞ւ Տերը թույլ տվեց, որ չարախոսությունը հալածի բարուն: Պատճառներից մեկն այն է, որ Աստծո բաների հանդեպ ընդդիմությունը ճշմարտություն փնտրողներին ստիպում է աղոթքով ծնկի իջնել՝ պատասխան ստանալու համար:[8]

Ջոզեֆ Սմիթը Վերականգնման Մարգարեն է: Նրա հոգևոր աշխատանքը սկսվեց Հոր և Որդու հայտնությամբ, որին հետևեցին բազմաթիվ երկնային այցելություններ: Նա գործիք էր Աստծո ձեռքերում՝ ի հայտ բերելու սուրբ

գրություններ, կորսված վարդապետություն և կատարելու քահանայության վերականգնում: Ջոզեֆի աշխատանքի կարևորությունը պահանջում է ավելի քան բանական քննում, այն պահանջում է, որ մենք Ջոզեֆի պես «խնդրենք Աստծուն»:[9] Հոգևոր հարցերն արժանի են հոգևոր պատասխանների՝ Աստծո կողմից:

Շատերը, ովքեր հերքում են Վերականգնման աշխատանքը, պարզապես չեն հավատում, որ երկնային էակները խոսում են մարդկանց հետ երկրի վրա: Նրանք ասում են՝ հնարավոր չէ, որ հրեշտակի կողմից ոսկե թիթեղները տրվեին և Աստծո զորությամբ թարգմանվեին: Այդ անհավատության պատճառով նրանք անմիջապես մերժում են Ջոզեֆի վկայությունը, իսկ ոմանք էլ, ցավոք, վարկաբեկում են Մարգարեի կյանքը և զրպարտում նրա բնավորությունը:

Մեզ հատկապես վշտացնում է այն փաստը, որ երբ ինչ-որ մեկը ժամանակին հարգել է Ջոզեֆին, այնուհետև հեռանալով իր համոզմունքից սկսել է զրպարտել Մարգարեին:[10]

Երեց Նիլ Ա. Մաքսվելը մի անգամ ասել է. «Ուսումնասիրել Եկեղեցին . . . իր ուխտադուրժ մարդկանց աչքերով, նման է Հիսուսին հասկանալու համար հարցազրույց անցկացնել Հուդայի հետ: Ուխտադուրժ մարդիկ միշտ մեզ հետ խոսում են ավելի շատ իրենք իրենց, քան եկեղեցուց հեռանալու պատճառի մասին»:[11]

Հիսուսն ասել է. «Օրհնեցեք ձեզ անիծողներին. . . . և աղոթք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար»:[12] Եկեք բարյացակամորեն վերաբերվենք Ջոզեֆ Սմիթի քննադատներին, մեր սրտում իմանալով, որ նա Աստծո մարգարե էր և սփոփվելով, որ այս ամենը վաղուց կանխագուշակվել էր Մորոնիի կողմից:

Ինչպե՞ս մենք պետք է պատասխանենք անկեղծ հետաքրքրվողին, ով մտահոգված է Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին լսած կամ կարդացած բացասական կարծիքներից:

Իհարկե, մենք միշտ ողջունում ենք ազնիվ և անկեղծ հարցերը:

Ջոզեֆի բնավորության մասին հարցերին ի պատասխան կարող ենք ներկայացնել հազարավոր մարդկանց խոսքերը, ովքեր անձնապես ճանաչել են նրան, և ովքեր իրենց կյանքն են տվել այն գործի համար, որ նա օգնում էր հաստատել: Ջոն Թեյլորը, ում վրա չորս անգամ կրակեց այն նույն ամբոխը, որը սպանեց Ջոզեֆին, հետագայում հայտարարել է. «Ես վկայում եմ Աստծո, հրեշտակների և մարդկանց առաջ, որ [Ջոզեֆը] բարի, պատվարժան, [և] առաքինի մարդ էր— . . . [և] իր բնավորությամբ որպես մասնավոր և հանրային մարդ նա անբասիր էր—և որ նա ապրեց և մահացավ որպես Աստծո մարդ»:[13]

Կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ ինտերնետային տեղեկությունը չունի «ճշմարտության» ֆիլտր: Որոշ տեղեկություններ, անկախ նրանից, թե որքան համոզիչ են, պարզապես ճիշտ չեն:

Տարիներ առաջ *Time* ամսագրում մի հոդված կարդացի, որտեղ ներկայացվում էր իբր Մարտին Հարրիսի կողմից գրված մի նամակ, որը հակասում էր Մորմոնի Գրքի թիթեղները գտնելու մասին Ջոզեֆ Սմիթի պատմությանը:[14]

Այդ փաստաթղթի պատճառով մի քանի անդամներ հեռացան Եկեղեցուց:[15]

Ցավոք, նրանք շատ արագ հեռացան: Մի քանի ամիս անց փորձագետները հայտնաբերեցին (և մոռացան խոստովանել), որ այդ նամակն ամբողջովին սուտ էր:[16] Իհարկե, դուք կարող եք կասկածի ենթարկել այն, ինչ լսում եք լուրերով, բայց երբեք չպետք է կասկածի ենթարկեք Աստծո մարգարեների վկայությունը:

Մենք կարող ենք հիշեցնել հետաքրքրվողներին, որ Ջոզեֆի մասին որոշ տեղեկություն՝ լինելով ճշմարիտ, կարող է ներկայացվել իր օրերից և իրավիճակից դուրս լիովին այլ ենթատեքստում:

Երեց Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է այդ կետը: Նա ասել է. «Ես ծառայում էի որպես խորհրդական Միացյալ Նահանգների կառավարությունում, Հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնում, Ատլանտայում, Ջորջիա: Մի օր մեր ժողովներից հետո, երբ օդակայան գնալու համար տաքսի էի սպասում, ես պառկեցի խոտածածկի վրա, որպեսզի նախքան Յուտայի ձմեռային եղանակին վերադառնալը մի փոքր կլանեի արևի ճառագայթների ջերմությունը: . . . Ավելի ուշ ես փոստով ստացա խոտածածկի վրա պառկած իմ լուսանկարը, որը լուսանկարիչը նկարել էր հեռաօբյեկտիվով: Նկարի տակ գրված էր. «Կառավարության խորհրդականը Ազգային Կենտրոնում»: Լուսանկարը ճիշտ էր, վերնագիրը ճիշտ էր, բայց ճշմարտությունն օգտագործվել էր սխալ տպավորություն ստեղծելու համար»:[17] Մենք չենք հրաժարվում այն բանից, ինչը գիտենք, որ ճիշտ է, մեկ այլ բանի պատճառով, ինչը դեռևս չենք հասկանում:

Մենք կարող ենք հետաքրքրվողներին հիշեցնել, որ Ջոզեֆը միայնակ չէր հրեշտակների այցելության ժամանակ:

Մորմոնի Գրքի վկաները գրել են. «Մենք հայտարարում ենք զգաստամիտ խոսքերով, որ Աստծո մի հրեշտակ երկնքից իջավ ներքև, և . . . մենք նայեցինք ու տեսանք թիթեղները»:[18] Մենք կարող ենք մեջբերում անել նաև շատ ուրիշներից:[19]

Անկեղծ հետաքրքրվողը պետք է վերականգնված ավետարանի տարածվելը տեսնի որպես Մարգարեի միջոցով կատարված Տիրոջ աշխատանքի պտուղ:

Այժմ ողջ աշխարհում կան ավելի քան 29000 ժողովատներ և ավետարանն ուսուցանող 88000 միսիոներներ: Միլիոնավոր Վերջին



Հարմարեցրեք հոգևոր թթվածնի ձեր սեփական դիմակը, որպեսզի պատրաստ լինեք օգնելու ուրիշներին, ովքեր փնտրում են ճշմարտությունը:

Օրերի Սրբեր ձգտում են հետևել Հիսուս Քրիստոսին, բարեխիղճ կյանք վարել, հոգ տանել աղքատների համար և իրենց ժամանակն ու տաղանդները նվիրաբերել՝ օգնելով մյուսներին:

Հիսուսն ասաց.

«Չի կարող բարի ծառը չար պտուղ բերել, ոչ էլ չար ծառը բարի պտուղ բերել: . . .

Իրանց պտուղներիցը ճանաչեցեք նորանց»:[20]

Այս բացատրությունները համոզիչ են, սակայն իր ճշմարտության որոնումներում անկեղծ հետաքրքրվողը չպետք է բացառապես ապավինի դրանց:

Յուրաքանչյուր հավատացյալ՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության և էության վերաբերյալ հոգևոր հաստատման կարիքն ունի: Սա ճիշտ է բոլոր սերունդների համար: Հոգևոր հարցերը արժանի են Աստծուց տրված հոգևոր պատասխանների:

Վերջերս զնացել էի Միացյալ Նահանգների Արևելյան ափ և մի վերադարձած միսիոներ պատմեց ինձ իր ընկերոջ մասին, ով հիասթափություն էր ապրել Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին ստացած տեղեկության արդյունքում: Նրանք զրուցել էին մի քանի անգամ, և քննարկումների արդյունքում այդ վերադարձած միսիոները կարծես ինքն էլ որոշ կասկածներ ուներ:

Թեպետ հույս ունեի, որ նա կամրացներ իր ընկերոջը, բայց մտահոգվեցի նրա անձնական վկայության համար: Եղբայրներ և քույրեր, ուզում եմ իմ զգուշացնող խոսքն ուղղել ձեզ՝ չեք կարող օգնել մյուսներին, եթե ձեր հավատքը բավականաչափ ամուր չէ:

Մի քանի շաբաթ առաջ ես նստեցի Հարավային Աֆրիկա թռչող ինքնաթիռը: Բորտուղեկցորդուհին մեր ուշադրությունը հրավիրեց անվտանգության վերաբերյալ տեսանյութի վրա: «Քիչ հավանական է,- զգուշացվեցինք մենք,- բայց եթե սրահում ճնշումը փոփոխվի, ձեր նստատեղերի վերևում գտնվող վահանակները կբացվեն և դուրս կգան թթվածնային դիմակներ: Այդ պահին, ձգվեք և դիմակը մոտեցրեք ձեզ: Դիմակը հագեք ձեր քթի և բերանի վրա: Ռեզինե ժապավենը հագցրեք ձեր գլխի վրա և անհրաժեշտության դեպքում ուղղեք դիմակը»: Ապա տրվեց այս զգուշացումը. «Նախքան մյուսներին օգնելը, հավաստիացեք, որ ճիշտ եք հագել ձեր դիմակը»:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ բացասական կարծիքները կշատանան, որքան մոտենանք Փրկչի Երկրորդ Գալստին: Կես ճշմարտությունները և խորամանկ ստերը չեն պակասի: Կլինեն ընտանիքի անդամներ և ընկերներ, ովքեր ձեր օգնության կարիքը կունենան: Այժմ է ձեր հոգևոր թթվածնի դիմակը հագնելու ժամանակը, որպեսզի պատրաստ լինեք օգնելու ճշմարտությունը որոնողներին:[21]

Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին վկայությունը մեզանից յուրաքանչյուրը կարող է տարբեր կերպ ստանալ: Այն կարող է գալ, երբ ծնկի իջած աղոթեք և խնդրեք Աստծուն, որ հաստատի, որ նա ճշմարիտ մարգարե էր: Այն կարող է գալ, երբ դուք կարդաք Մարգարեի Առաջին Տեսիլքի մասին պատմությունը: Վկայությունը կարող է կաթիլ առ կաթիլ նստել ձեր հոգու վրա, երբ կրկին ու կրկին կարդաք Մորմոնի Գիրքը: Այն կարող է գալ, երբ դուք ձեր վկայությունը բերեք Մարգարեի մասին կամ երբ կանգնեք տաճարում և հասկանաք, որ Ջոզեֆ Սմիթի շնորհիվ սուրբ կնքման զորությունը վերականգնվեց երկրի վրա:[22] Հավատքով և անկեղծ միտումով ձեր վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին կզորանա: Կողքից ձեզ վրա անընդհատ ընկնող ջրային փուչիկներից դուք կարող եք երբեմն թրջվել, բայց դրանք երբեք, երբեք չպետք է հանգցնեն ձեր հավատքի բոցկլտացող կրակը:

Երիտասարդներին, ովքեր լսում են ինձ այսօր կամ հետագայում կկարդան այս խոսքերը, ես հատուկ կոչ եմ անում՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին անձնական վկայություն ձեռք բերեք: Թող որ ձեր ձայնն օգնի իրագործել Մարգարեի մասին բարի խոսելու վերաբերյալ Մորոնիի մարգարեական խոսքերը: Ահա երկու գաղափար. Առաջինը, Մորմոնի գրքում գտեք սուրբ գրության հատվածներ, որոնք զգում

Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը *այժմ 158 լեզուներով:*



եք և գիտեք, որ բացարձակապես ճիշտ են: Այնուհետև կիսվեք դրանով ընտանիքի և ընկերների հետ՝ ընտանեկան երեկոյի, սեմինարիայի և Երիտասարդ տղամարդկանց և Երիտասարդ կանանց ձեր դասարաններում, հաստատելով, որ Ջոզեֆը գործիք էր Աստծո ձեռքում: Հաջորդը, կարդացեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի վկայությունը Թանկագին Մարգարիտում կամ այժմ 158 լեզուներով թարգմանված այս բրոշյուրում: Կարող եք այն գտնել առցանց LDS.org-ում կամ խնդրել միսիոներներից: Դա Ջոզեֆի վկայությունն է այն մասին, ինչ իրականում տեղի է ունեցել: Հաճախ կարդացեք այն: Կարող եք ձեր ձայնով ձայնագրել Ջոզեֆ Սմիթի վկայությունը, պարբերաբար լսել այն և կիսվել դրանով ընկերների հետ: Մարգարեի վկայությունը ձեր ձայնով լսելը կօգնի բերել վկայությունը, որ դուք փնտրում եք:

Առջևում հրաշալի օրեր են: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Այս մեծ աշխատանքը . . . կշարունակի առաջ գնալ՝ կյանքեր փոխելով և օրհնելով: . . . Ողջ աշխարհում ոչ մի ուժ չի կարող կանգնեցնել Աստծո աշխատանքը: Անկախ նրանից ինչ կլինի, այս հրաշալի գործն առաջ կգնա»:[23]

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Հիսուսը Քրիստոսն է՝ մեր Փրկիչն ու Քավիչը: Նա ընտրեց մի սուրբ ու արդար մարդ, որպեսզի առաջնորդի Իր ավետարանի լրիվության Վերականգնումը: Նա ընտրեց Ջոզեֆ Սմիթին:

Ես վկայում եմ, որ Ջոզեֆ Սմիթն ազնիվ և առաքինի մարդ էր, Տեր Հիսուս Քրիստոսի աշակերտ: Հայր Աստվածը և Նրա Որդին, Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին նրան: Աստծո պարգևով և զորությամբ նա թարգմանեց Մորմոնի Գիրքը:

Մեր հասարակության մեջ մահվան վարագույրից այն կողմ մենք հստակ կհասկանանք Մարգարե Ջոզեֆ Սմիթի սուրբ կոչումը և աստվածային առաքելությունը: Այդ ոչ այնքան էլ հեռու օրը, դուք, ես և «միլիոնավոր մարդիկ կրկին պիտի ճանաչեն Եղբայր Ջոզեֆին»:[24] Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33
2. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.29–46:
3. Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.23
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 135.1:
5. Տես Գործք ԻԶ.24:
6. Տես Մատթեոս ԺԱ.19, Հովհ. Ժ.20:
7. Վարդապետություն և Ուխտեր 122.1–2
8. Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆն ասել է. «Առաջին հերթին ձեր կասկածները կասկածի տակ դրեք, հետո նոր ձեր հավատքը: Մենք երբեք չպետք է թույլ տանք, որ կասկածը մեզ զերի դարձնի և մեզ ետ պահի աստվածային սիրուց, խաղաղությունից և պարգևներից, որոնք ստանում ենք Տեր Հիսուս Քրիստոսի հավատքով» («Եկեք, միացեք մեզ», *Լիահոնա,* նոյ. 2013, 23): Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Մա աստվածային աշխատանք է՝ ընթացքի մեջ, որի նշաններն ու օրհնությունները առատորեն դրսևորվում են ամեն ուղղությամբ, ուստի, խնդրում եմ, պետք չէ չափազանց անհանգստանալ, երբ ժամանակ առ ժամանակ առաջանում են խնդիրներ, որոնք պետք է ուսումնասիրել, հասկանալ և լուծել: Խնդիրներ կան և կլինեն: *Այս եկեղեցում, այն, ինչ մենք գիտենք, միշտ ավելի կարևոր է նրանից, ինչ մենք չգիտենք*» («Հավատում եմ, Տեր», *Լիահոնա,* մայիս 2013, 94):
9. Հակոբոս Ա.5, տես նաև Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.11–13:
10. Դանիել Թայլերը հիշում էր. «Եղբայր Իսահակ Բեհունինը և ես [այցելեցինք Մարգարեին] իր տանը: Զրուցում էինք նրա հալածանքների մասին: Նա կրկնում էր ուխտադրժների կողմից ասված կեղծ, անհամատեղելի և հակասական խոսքերը: . . . Նա նաև ասաց, թե ինչպես էին պաշտոնյաներից շատերը, ովքեր . . . պատրաստ էին իրեն կյանքից զրկել, երբ ինքը բանտարկված էր, իր հանդեպ վերաբերմունքը փոխել [իրեն ավելի լավ ճանաչելուց հետո] . . .

    . . . Եղբայր Բեհունինը նշեց. «Եթե ես այս Եկեղեցուց հեռանայի, այդ մարդկանց պես չէի վարվի. Ես կգնայի մի հեռավոր վայր, որտեղ մորմոնիզմի մասին երբեք չէին լսել, այնտեղ բնակություն կհաստատեի, և ոչ ոք երբեք չէր իմանա, որ ես ինչ-որ բան գիտեի այդ մասին»:

    [Ջոզեֆն] անմիջապես պատասխանեց. «Եղբայր Բեհունին, դուք չգիտեք, թե ինչ կանեիք: Անկասկած, այդ մարդիկ ձեզ նման են մտածել: Նախքան այս Եկեղեցուն միանալը դուք գտնվում էիք չեզոք գոտում: . . . Այս Եկեղեցուն միանալով դուք հաշվառվեցիք ծառայելու Աստծուն: Այդպիսով, դուք հեռացաք չեզոք գոտուց և այլևս չեք կարող վերադառնալ այնտեղ: Եթե լքեք Տիրոջը, որին համաձայնել եք ծառայել, դա կլինի չարի դրդմամբ, և դուք կշարժվեք նրա թելադրանքով և կդառնաք նրա ծառան» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 324):
11. Neal A. Maxwell, “All Hell Is Moved” (Brigham Young University devotional, Nov. 8, 1977), 3; speeches.byu.edu.
12. Մատթեոս Ե.44:
13. *Teachings of Presidents of the Church: John Taylor* (2001), 83, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 135.3:
14. Տես Richard N. Ostling, “Challenging Mormonism’s Roots,” *Time,* May 20, 1985, 44.
15. Տես Ostling, “Challenging Mormonism’s Roots,” 44, տես նաև Gordon B. Hinckley, “Lord, Increase Our Faith,” *Ensign,* Nov. 1987, 52, Նիլ Լ. Անդերսեն, «Ձեր հավատքի փորձությունը», *Լիահոնա,* նոյ. 2012, 41:
16. Տես Richard E. Turley Jr., *Victims: The LDS Church and the Mark Hofmann Case* (1992):
17. Russell M. Nelson, “Truth—*and More,” Ensign,* Jan. 1986, 71.
18. «Երեք Վկաների Վկայությունը», Մորմոնի Գիրք:
19. Տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.71, ծանոթագրություն. տես նաև Վարդապետություն և Ուխտեր 76.23:
20. Մատթեոս Է.18, 20:
21. Նախագահ Հենրի Բ. Այրինգը, կասկածներ ունեցող մարդկանց մասին խոսելիս ասել է. «Նրանց հանդեպ ձեր սիրո շնորհիվ դուք գուցե որոշեք փորձել նրանց տալ այն, ինչ խնդրում են: Գուցե գայթակղվեք նրանց հետ գնալ իրենց կասկածների միջով, հույս ունենալով, որ կարող եք ապացույց կամ պատճառաբանություն գտնել նրանց կասկածները փարատելու համար: Կասկածամիտ մարդիկ հաճախ ցանկանում են խոսել կասկածի տեղիք տված փաստերի կամ ապացույցների մասին, և թե որքան ցավ է այն պատճառում: . . .

    Ձեր և ինձ համար ավելի լավ կլինի, եթե երկար չկենտրոնանանք այն ամենի վրա, ինչը մեր ուսանողները համարում են իրենց կասկածների աղբյուր: . . . Նրանց խնդիրը կայանում է ոչ թե նրանում, ինչն, իրենց կարծիքով, տեսնում են, այլ նրանում, ինչն իրենք չեն կարողանում տեսնել: . . . Լավ կլինի, եթե զրույցի նյութը որքան հնարավոր է շուտ փոխենք այն ամենին, ինչը վերաբերում է սրտին, սրտի փոփոխությանը, որը բացում է հոգևոր աչքերը» (“‘And Thus We See’: Helping a Student in a Moment of Doubt” [address to Church Educational System religious educators, Feb. 5, 1993], 3, 4; si.lds.org):
22. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Տարիներ առաջ, երբ ես տասներկու տարեկանում կարգվեցի սարկավագ, հայրս, ով մեր ցցի նախագահն էր, ինձ առաջին անգամ տարավ ցցի քահանայության ժողովին: . . . [Բացման օրհներգն էր «Գովք մարդուն»:] Նրանք երգում էին Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին, և այդ պահին սիրտս պարուրվեց սիրով և հավատքով այս ժամանակաշրջանի այդ հզոր Մարգարեի հանդեպ: . . . Այդ ժամանակ, Սուրբ Հոգու զորությամբ ես իմացա, որ Ջոզեֆ Սմիթը իրոք Աստծո մարգարե էր» (“Praise to the Man,” *Tambuli,* Jan. 1984, 1, 2):
23. Թոմաս Ս. Մոնսոն, «Կրկին հավաքվելով», *Լիահոնա,* մայիս 2012, 4:
24. «Փառք տանք մարգարեին», *Hymns,* no. 27:

Թեդ Ռ. Քալիսթեր
Կիրակնօրյա Դպրոցի գերագույն նախագահ

Ծնողներ՝ ավետարանի գլխավոր ուսուցիչներ երեխաների համար

Ինչ էլ որ ասվի ու արվի, Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսուցման համար կատարյալ հավաքավայրը տունն է:

Բեն Քարսոնը պատմել է իր մասին. «Հինգերորդ դասարանում ես ամենավատ առաջադիմությամբ աշակերտն էի»: Մի օր Բենը մաթեմատիկայի ստուգողական էր գրում, որտեղ 30 խնդիր կար: Ետևի նստած աշակերտը ստուգեց նրա աշխատանքը և վերադարձրեց տետրը: Ուսուցիչը՝ տիկին Վիլյամսոնը, սկսեց տեղեկանալ, թե որ աշակերտը քանի խնդիր է լուծել: Ի վերջո հերթը հասավ Բենին: Ամաչելով՝ Բենը կցկտուր ասաց «none» (ոչ մեկը): Տիկին Վիլյամսոնը լսեց «nine» (ինը) և ասաց. «Քո համար՝ Բեն, 30-ից 9-ը լավ առաջընթաց է: Ետևի աշակերտը շտապեց ուղղել. «Ոչ թե nine. . . այլ. . . none, այսինքն՝ ոչ մեկը»: Բենի պատմելով՝ նա ցանկանում էր գլխակորույս փախչել:

Միևնույն ժամանակ Բենի մայրը՝ Սոնյան, աշխատում էր սեփական խնդիրների վրա: Նա եղել էր իր ծնողների 24 զավակներից մեկը, ստացել էր ընդամենը եռամյա կրթություն և կարդալ չգիտեր: Նա ամուսնացել էր 13 տարեկանում, հետո բաժանվել էր, ուներ երկու որդի և նրանց մեծացնում էր Դետրոյդի խարխուլ մի թաղամասում: Չնայած այդ ամենին, նա սաստիկ ինքնավստահ էր և ամուր հավատք ուներ, որ Աստված կօգնի իրեն և իր որդիներին, եթե նրանք անեն իրենց մասը:

Մի օր շրջադարձային պահ եղավ նրա և նրա որդիների կյանքում: Սոնյան գլխի ընկավ, որ հաջողակ մարդիկ, ում տանը նա հավաքարար էր, գիրք են կարդում: Աշխատանքից հետո նա գնաց տուն և անջատեց հեռուստացույցը, որ Բենն ու իր եղբայրը դիտում էին: Նա ասաց, ըստ էության. «Տղաներ, դուք շատ եք հեռուստացույց դիտում: Այսուհետ դուք կարող եք դիտել շաբաթը երեք ծրագիր: Ձեր ազատ ժամանակ դուք կգնաք գրադարան, շաբաթը երկու գիրք կկարդաք ու ինձ կզեկուցեք:

Տղաները ցնցվեցին: Բենն ասում է, որ դպրոցի պարտադիր ծրագրից բացի նա իր ողջ կյանքում երբևէ գիրք չէր կարդացել: Նրանք առարկեցից, նրանք դժգոհեցին, նրանք վիճաբանեցին, բայց մայրիկն անսասան էր: Դրանից հետո, հիշում է Բենը. «Մայրս օրենք սահմանեց: Ես կանոններ չէի սիրում, սակայն մեր զարգանալու նրա վճռական ակնկալիքը փոխեց իմ կյանքի ողջ ընթացքը»:

Փոփոխությունը շատ մեծ էր: Յոթերորդ դասարանում Բենն իր դասարանի ամենալավ առաջադիմությամբ աշակերտն էր: Դպրոցից հետո նա ընդունվեց Յեյլ համալսարանի անվճար բաժինը, այնուհետև Ջոն Հոպկինսի անվան բժշկական ակադեմիան, որտեղ նա 33 տարեկանում դարձավ մանկական ջղավիրաբուժության բաժանմունքի վարիչ և, ի վերջո, աշխարհահռչակ վիրաբույժ: Ինչպե՞ս դա հնարավոր դարձավ: Մեծամասամբ իր մոր շնորհիվ, ով, չունենալով կյանքի շատ առավելություններ, մեծարեց ծնողական իր կոչումը:[1]

Սուրբ գրությունները խոսում են ծնողների դերի մասին, որ նրանք պարտականություն ունեն իրենց երեխաներին ուսուցանելու «վարդապետությունն ապաշխարության, հավատքի՝ առ Քրիստոսը՝ կենդանի Աստծո Որդին, և մկրտության ու ձեռնադրմամբ Սուրբ Հոգու պարգևի» (ՎԵՈՒ 68.25:

Ավետարանի գլխավոր ուսուցիչները մեր երեխաների համար պետք է լինենք մենք՝ ծնողներս. ո՛չ եպիսկոպոսը, ո՛չ Կիրակնօրյա դպրոցը, ո՛չ Երիտասարդ կանանց, ո՛չ էլ Երիտասարդ տղամարդկանց կազմակերպությունը, այլ ծնողները: Որպես ավետարանի գլխավոր ուսուցիչներ՝ մենք կարող ենք նրանց ուսուցանել Քավության զորությունն ու իրականությունը, իրենց ինքնությունն ու աստվածային ճակատագիրը, և այդպես, տալ նրանց այն վեմը, որի վրա նրանք կարող են կառուցել: Ինչ էլ որ ասվի ու արվի, Հիսուս Քրիստոսի ավետարանի ուսուցման համար կատարյալ հավաքավայրը տունն է:

Երեք տարի առաջ ես հանձնարարությամբ գտնվում էի Բեյրութում՝ Լիբանան: Այնտեղ ես լսեցի 12-ամյա մի աղջնակի՝ Սարայի մասին: Նրա ընտանիքը դարձի էր եկել Եկեղեցի Ռումինիայում, որից հետո նրանք ստիպված էին եղել վերադառնալ հայրենիք, երբ Սարան 7 տարեկան էր: Եկեղեցին չկար նրանց հայրենիքում և չկային ոչ կազմավորված միավորներ, ոչ Կիարկնօրյա դպրոց, ոչ էլ Երիտասարդ կանանց կազմակերպություն: Հինգ տարի անց այս ընտանիքը լսեց, որ Բեյրութում Եկեղեցու ճյուղ կա և իմ գալուց առաջ իրենց 12-ամյա դստերն իր եղբայրների ու քույրերի հետ ուղարկել էր, որ մկրտվի: Այնտեղ ես ուսուցում անցկացրեցի անդամների հետ փրկության ծրագրի մասին: Որոշ ընդհատումներով՝ Սարան ձեռք էր բարձրացնում և պատասխանում հարցերի:

Ուսուցումից հետո, իմանալով, որ նա Եկեղեցուց հեռու է մեծացել, ես մոտեցա և հարցրեցի նրան. «Սարա, ինչպե՞ս ես իմացել այդ հարցերի պատասխանները»: Նա իսկույն պատասխանեց. «Մայրս է սովորեցրել»: Նրանք իրենց համայնքում չեն ունեցել եկեղեցին, բայց նրանք ունեցել են ավետարանն իրենց տանը: Նրա մայրն ավետարանի իր գլխավոր ուսուցիչն էր:

Ենովսն ասել է. «Խոսքերը, որոնք ես հաճախ լսել էի իմ հորն ասելիս, հավերժական կյանքի և սրբերի ուրախության մասին, խորը ընկղմվել էին իմ սրտում» Ենովս 1.3): Կասկած չի մնում, թե ով է եղել ավետարանի գլխավոր ուսուցիչը Ենովսի համար:

Հիշում եմ, ինչպես էր հայրս բուխարու մոտ պառկած կարդում սուրբ գրություններն ու ուրիշ լավ գրքեր. ես նույնպես պառկում էի նրա կողքին: Հիշում եմ քարտերը, որ նա պահում էր վերնաշապիկի գրպանում՝ սուրբ գրությունների հատվածներով ու Շեքսպիրի խոսքերով և նոր բառերով, որ նա անգիր էր անում ու սովորում: Հիշում եմ ավետարանի հարցերն ու քննարկումները ճաշի սեղանի շուրջ: Ես հիշում եմ, որ շատ անգամ հայրս ինձ տանում էր տարեց մարդկանց

այցելելու, թե ինչպես էինք մենք կանգ առնում ու պաղպաղակ վերցնում մեկի համար կամ հավի ճաշ մյուսի համար կամ ինչպես էր նա հրաժեշտ տալիս ձեռք սեղմում ու որոշ գումար թողնում նրանց: Ես հիշում եմ լավ զգացումներն ու ցանկությունը՝ նմանվելու նրան:

Հիշում եմ մայրիկիս, թե ինչպես էր 90 տարեկանում իր խոհանոցում ճաշ պատրաստում և ապա դուրս տանում: Ես հարցրեցի նրան, թե ուր է գնում: Նա պատասխանեց. «Օ՜, ես ուտելիք եմ տանում տարեց մարդկանց»: Երբեք չեմ կարող բավականաչափ երախտագիտություն հայտնել իմ ծնողներին, որոնք ավետարանի իմ գլխավոր ուսուցիչներն էին:

Առավել իմաստալից բաներից մեկը, որ կարող ենք անել որպես ծնողներ՝ մեր երեխաներին աղոթքի զորությունը սովորեցնելն է՝ ոչ թե միայն ռեժիմով աղոթք ասելը: 17 տարեկանում՝ մի երեկո ծնկի էի իջել անկողնուս մոտ, ասելով իմ երեկոյան աղոթքը: Ինձ համար հանկարծակի մայրս կանգնած էր դռան մոտ: Երբ ավարտեցի, նա ասաց, «Թեդ, դու խնդրո՞ւմ ես Տիրոջը, որ օգնի քեզ լավ կին գտնել»:

Նրա հարցը շատ անսպասելի էր: Իմ մտքով առհասարակ նման բան չէր անցել: Ես մտածում էի բասկետբոլի և ուսման մասին: Ուստի, ես պատասխանեցի՝ ո՛չ, որին

ի պատասխան նա ասաց. «Դե՜, ժամանակն է տղաս. դա լինելու է քո ամենակարևոր որոշումը»: Նրա խոսքերը մխրճվեցին իմ սրտում, այնպես որ հաջորդ վեց տարիների ընթացքում ես աղոթում էի, որ Աստված օգնի ինձ լավ կին գտնել: Եվ խոսքերը բավական չեն նկարագրելու, թե ինչ հրաշալի եղավ աղոթքիս պատասխանը:

Որպես ծնող՝ մենք կարող ենք սովորեցնել մեր երեխաներին աղոթել հավերժական նշանակություն ունեցող բաների մասին, աղոթել, որ ուժ ստանան բարոյապես մաքուր լինելու չափազանց դժվար աշխարհում, որ լինեն հնազանդ և քաջություն ունենան ճիշտը պաշտպանելու:

Մեր երիտասարդներից շատերն անկասկած ասում են երեկոյան աղոթքներ, բայց հավանաբար, մոռանում են առավոտյան աղոթքները: Որպես ծնողներ՝ որպես ավետարանի գլխավոր ուսուցիչներ, մենք կարող ենք օգնել նրանց ձեռք բերել այդ սովորությունը: Ո՞ր ծնողը Մորմոնի գրքում թույլ կտար, որ իր որդին պատերազմի գնար առանց զրահի ու առանց վահանի ու առանց սրի, որ պաշտպանված լինի թշնամու մահկանացու հարվածներից: Բայց մեզանից շատերը թույլ են տալիս, որ մեր երեխաներն ամեն առավոտ դռնից դուրս գան դեպի ամենավտանգավոր դաշտը՝ դիմակայելու Սատանային ու նրա անհամար գայթակղություններին, առանց հոգևոր զրահի ու վահանի ու սրի, որ գալիս է աղոթքի պաշտպանիչ զորությունից: Տերն ասել է. «Միշտ աղոթիր. . . . որ կարողանաս հաղթել Սատանային» (ՎԿՈՒ 10.5): Որպես ծնողներ՝ մենք կարող ենք օգնել մեր զավակներին ձեռք բերել առավոտյան աղոթքի սովորությունն ու զորությունը:

Մենք կարող ենք նաև ուսուցանել մեր երեխաներին իրենց ժամանակը իմաստուն օգտագործել: Երբեմն, ինչպես Սոնյա Քարսոնը, մենք պետք է սիրով, բայց հաստատուն ամուր կանգնենք և սահմանափակենք հեռուստատեսությամբ և այլ էլեկտրոնային սարքերով զբաղվելու մեր երեխաների

ժամանակը, որոնք շատ դեպքերում իրենց մենաշնորհին են դարձնում նրանց կյանքը: Փոխարենը, մենք հնարավոր է ուղղենք նրանց ժամանակը դեպի ավելի արդյունավետ ավետարանին ուղղված ջանքերի: Հնարավոր է սկզբում դիմադրություն լինի, բողոք լինի, սակայն, Սոնյա Քարսոնի պես, մենք պետք է ունենանք հաստատուն մնալու տեսլականն ու կամքը: Մի օր մեր երեխաները կհասկանան ու կգնահատեն, թե ինչ ենք մենք արել: Եթե մենք չենք անում դա, ապա ո՞վ պիտի անի:

Բոլորս կարող ենք ինքներս մեզ հարց տալ. արդյոք մեր երեխաները ստանո՞ւմ են մեր լավագույն հոգևոր, մտավոր և ստեղծագործական ջանքերը կամ արդյոք նրանք ստանո՞ւմ են մեր ազատ ժամանակն ու տաղանդներն այն բանից հետո, երբ մենք մեր ողջ ուժերը նվիրել ենք մեր Եկեղեցական կոչմանը կամ մասնագիտական նպատակներին: Հանդերձյալ կյանքում, չեմ կարծում, որ եպիսկոպոսի կամ Սփոփող Միության նախագահի կոչումները կմնան, սակայն գիտեմ, որ ամուսնու և կնոջ, հոր և մոր կոչումները կշարունակվեն ու հարգի կլինեն մշտնջենական աշխարհներում: Դա է պատճառներից մեկը, թե որքան կարևոր է պատվել ծնողի մեր պարտականություններն այստեղ՝ երկրի վրա, որպեսզի հանդերձյալ կյանքում մենք պատրաստ լինենք նմանատիպ, բայց ավելի մեծ պատասխանատվությունների:

Որպես ծնողներ՝ մենք կարող ենք շարունակել համոզվածությամբ, որ Աստված երբեք մեզ միայնակ չի թողնի: Աստված երբեք չի տալիս պատասխանատվություն առանց աստվածային օգնություն առաջարկելու. այդ մասին ես կարող եմ վկայել: Թող որ մենք ծնողի մեր աստվածային դերը կատարելիս ու Աստծո հետ համագործակցելիս դառնանք ավետարանի գլխավոր ուսուցիչն ու օրինակը մեր երեխաների համար. սա իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով՝ ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ben Carson, *Gifted Hands: The Ben Carson Story* (1990):

Երեց Ջորջ Քլեբինգաթ
Յոթանասունից

Վստահությամբ մոտենալով Աստծո գահին

Կիրառելով Հիսուս Քրիստոսի Քավությունը, դուք կարող եք սկսել մեծացնել ձեր հոգևոր վստահությունն այսօր, եթե դուք հոժարակամ եք լսելու և գործելու:

1-ից 10 սանդղակի վրա, ինչպե՞ս կգնահատեիք ձեր հոգևոր վստահությունը Աստծո առջև: Դուք արդյոք ունե՞ք անձնական ապացույց, որ ձեր ներկա ներդրումը որպես Վերջին Օրերի Սուրբ բավարար է հավերժական կյանքը ժառանգելու համար: Կարո՞ղ եք ասել ինքներդ ձեզ՝ ձեր մտքում, որ Երկնային Հայրը գոհ է ձեզանից: Ի՞նչ մտքեր են գալիս ձեր գլուխը, եթե դուք ունենայիք անձնական հարցազրույց ձեր Փրկչի հետ այս պահից մեկ րոպե առաջ: Արդյո՞ք մեղքերը, զղջումները և թերությունները կգերիշխեին ձեր ինքնապատկերացման մեջ, թե դուք ուղղակի կզգայիք ուրախ ակնկալիք: Դուք կդիմանայի՞ք, թե՞ կխուսափեիք Նրա հայացքից: Դուք կհապաղեի՞ք դռան մոտ, թե վստահորեն կուղղեիք ձեր քայլերը դեպի Նա:

Երբ հակառակորդը չի կարողանում համոզել անկատար, բայց դեռ պայքարող Սրբերին, ինչպիսիք դուք եք, լքել ձեր հավատքը անհատական և սիրառատ Աստծո հանդեպ, նա գործադրում է մի նենգ արշավ՝ դնելու որքան հնարավոր է մեծ տարածություն ձեր և Աստծո միջև: Հակառակորդը գիտի, որ հավատքն առ Քրիստոս, այնպիսի հավատքը, որն առաջացնում է գորովագութ ողորմությունների և նույնիսկ հզոր հրաշքների կայուն հոսք, ձեռք ձեռքի տված է գնում անձնական վստահության հետ, որ դուք ձգտում եք ընտրել ճիշտը: Այդ պատճառով նա կձգտի մուտք գործել ձեր սիրտը՝ ասելու ձեզ ստեր՝ ստեր, որ Երկնային Հայրը հիասթափված է ձեզանից, որ Քավությունը ձեր հասանելիությունից դուրս է, որ նույնիսկ միտք չունի փորձել, բոլոր մյուսներն ավելի լավն են, քան դուք, որ դուք անարժան եք և այդ նույն չարաղետ թեմայի հազարավոր տարբերակներ:

Քանի դեռ դուք թույլ եք տալիս այս ձայները սղոցեն ձեր հոգին, դուք չեք կարող մոտենալ Աստծո գահին իսկական վստահությամբ:

Ինչ էլ որ անեք, ինչ էլ որ աղոթեք, հրաշքի ինչպիսի հույսեր էլ որ ունենաք, միշտ էլ կլինի բավականաչափ ինքնակասկածանք դանդաղորեն կործանելով ձեր հավատքը, ոչ միայն ձեր հավատքն առ Աստված, այլ նաև ձեր ինքնավստահությունը: Այս ձևով ավետարանով ապրելը զվարճություն չէ, ոչ էլ այն շատ առողջարար է: Բացի ամեն ինչից, այն լիովին անտեղի է: Փոխվելու որոշումը ձերն է և միմիայն ձերը:

Ես կկամենայի կիսվել վեց գործնական առաջարկներով, որոնց, եթե ականջ դնեք, այս չարաղետ ձայները կցրվեն և կվերականգնվի ձեզ համար այնպիսի խաղաղ համոզվածություն և հոգևոր վստահություն, որը ձերը կլինի, եթե դուք միայն կամենաք դա: Անկախ 1-ից 10 սանդղակի վրա ձեր կատարած գնահատումից, կիրառելով Հիսուս Քրիստոսի Քավությունը, դուք կարող եք մեծացնել ձեր հոգևոր վստահությունն այսօր, եթե դուք կամենաք լսել և գործել: Ես կխոսեմ համարձակորեն, հույս ունենալով խրատել և ոչ թե վիրավորել:

1. Պատասխանատվություն վերցրեք ձեր իսկ հոգևոր բարօրության համար: Դադարեք մեղադրել ուրիշներին կամ ձեր հանգամանքները, դադարեք արդարանալ և դադարեք պատճառաբանել, թե ինչու չեք կարող լիովին ձգտել հնազանդ լինել: Ընդունեք, որ դուք «ազատ ե[ք] ըստ մարմնի» և «ազատ ե[ք] ընտրելու ազատություն և հավերժական կյանք» (2 Նեփի 2.27): Տերը կատարելապես գիտի ձեր հանգամանքները, բայց Նա նաև հիանալի գիտի, թե դուք արդյոք ընտրում եք պարզապես ոչ լիարժեք ապրել ավետարանով: Եթե հարցը սրանում է, եղեք բավականաչափ ազնիվ ընդունելու դա, ձգտեք կատարյալ լինել ձեր իսկ հանգամանքների ոլորտում: *Հոգևոր վստահությունն աճում է, երբ դուք պատասխանատվություն եք վերցնում ձեր իսկ բարօրության համար՝ կիրառելով ամեն օր Հիսուս Քրիստոսի Քավությունը:*

2. Պատասխանատվություն վերցրեք ձեր իսկ ֆիզիկական բարօրության համար: Ձեր հոգին բաղկացած է ձեր ոգուց և մարմնից (տես ՎԵՈՒ 88.15): Ոգին սնելը, երբ անտեսվում է մարմինը, որը տաճար է, սովորաբար տանում է դեպի հոգևոր աններդաշնակության և ինքնարժեքի ցածրացման: Եթե դուք ֆիզիկապես լավ վիճակում չեք, եթե դուք անհարմարավետ եք զգում ձեր իսկ մարմնում և կարող եք անել ինչ որ բան, ապա արեք դա: Երեց Ռասել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ մենք պետք է «համարենք մեր մարմինը որպես հենց իսկ մեր տաճարը» և որ պետք է «վերահսկենք մեր սննդակարգը և վարժություններ անենք մեր ֆիզիկական լավ վիճակի համար» (“We Are Children of God,” *Liahona,* Jan. 1999, 103):

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ուսուցանել է, որ «մեր ոգին և մեր մարմինն այնպես են միավորված, որ մեր մարմինը դառնում է մեր մտքի միջոցը և մեր բնավորության հիմքը» [Church Educational System fireside, Feb. 2, 2003], 2; speeches.byu.edu): Ուստի, խնդրում ենք օգտագործեք առողջ դատողություն, թե ինչ և որքան եք ուտում և կանոնավորապես ձեր մարմինները մարզեք, այն կարիք ունի և արժանի է դրան:Եթե ֆիզիկապես կարողունակ եք, այսօր որոշեք լինել ձեր իսկ տան տերը և սկսեք կանոնավոր, երկարատև վարժությունների ծրագիր, հարմարեցնելով ձեր ունակություններին, համակցելով ավելի առողջարար սննդակարգ: *Հոգևոր վստահությունն աճում է, երբ ձեր ոգին Փրկչի օգնությամբ իսկապես վերահսկում է ձեր բնական տղամարդուն կամ կնոջը:*

3. Ընդունեք կամավոր, անկեղծ հնազանդությունը, որպես ձեր կյանքի մի մաս: Գիտակցեք, որ դուք չեք կարող սիրել Աստծուն առանց սիրելու նաև Նրա պատվիրանները: Փրկչի չափանիշը հստակ է և պարզ. «Եթե սիրում եք ինձ, պահեք իմ պատվիրանները» (Հովհ. ԺԴ.15):

Ընտրողական հնազանդությունը բերում է ընտրողական օրհնություններ և ինչ որ վատ բան ընտրելը ինչ որ առավել վատ բանից, այնուամենայնիվ սխալ ընտրություն է: Դուք չեք կարող մի վատ կինոֆիլմ դիտել և ակնկալել առաքինի զգալ, որովհետև դուք չեք դիտել *շատ* ավելի վատը: Որոշ պատվիրաններ հավատարմորեն պահելը չի արդարացնում մյուսների անտեսումը: Ճիշտ է ասել Աբրահամ Լինկոլնը. «Երբ լավ բան եմ անում, լավ եմ զգում: Երբ վատ բան եմ անում, վատ եմ զգում» (in William H. Herndon and Jesse William Weik, *Herndon's Lincoln. The True Story of a Great Live,* 3 vols. [1889], 3:439):

Բացի այդ, արեք ճիշտ բաներ ճիշտ դրդապատճառներով: Տերը, ով «պահանջում է սիրտը և պատրաստակամ միտքը» (ՎԿՈւ 64.34) և ով «սրտի խորհուրդներն ու մտադրությունները զանազանող» է (ՎԿՈւ 33.1), գիտի թե ինչու եք գնում եկեղեցի, արդյոք ներկա եք միայն մարմնով, թե իսկապես երկրպագում եք: Դուք չեք կարող երգել կիրակի օրը «Օ Բաբելոն, Բաբելոն, [Ես] մաղթում եմ քեզ մնաս բարով» և հետո կրկին ձգտեք կամ հանդուրժեք դրա ընկերակցությանը բոպեներ անց ("Ye Elders of Israel," *Hymns,* no. 319): Հիշեք, որ անփութությունը հոգևոր բաներում, երբեք երջանկություն չի եղել: Դարձրեք Եկեղեցին և վերականգնված ավետարանը ձեր ողջ կյանքը, ոչ թե հենց միայն ձեր արտաքուստ կամ հասարակական կյանքի մի մասը: Այս օրն ընտրելը, թե ում պետք է ծառայեք, շրթունքներով ծառայություն է ընդամենը, մինչև դուք իրականում համապատասխան ձևով չապրեք (տես Յեսու ԻԴ.15): *Հոգևոր վստահությունն աճում է, երբ դուք իսկապես ձգտում եք ճիշտ դրդապատճառներով ապրել նվիրաբերված կյանքով, չնայած ձեր անկատարություններին:*

4. Դարձեք իսկապես, իսկապես լավ՝ խորապես և արագ ապաշխարելիս: Քանի որ Հիսուս Քրիստոսի Քավությունը շատ գործնական է, դուք պետք է կիրառեք այն առատորեն 24 ժամ օրեկան և 7 օր



շաբաթական, քանի որ այն երբեք չի սպառվում: Ընդունեք Հիսուս Քրիստոսի Քավությունը և ապաշխարությունը որպես բաներ, որոնք պիտի ողջունելի լինեն և՝ կիրառվեն ամեն օր համաձայն Մեծ Բժշկի հրամանների: Հիմնադրեք երջանիկ, ուրախ շարունակական ապաշխարության տրամադրվածություն՝ դարձնելով այն ձեր ընտրած ապրելակերպը: Այդ անելիս զգուշ եղեք հետաձգման գայթակղությունից և մի սպասեք, որ աշխարհը ձեզ կողջունի: Պահելով ձեր աչքերը Փրկչի վրա, հոգ տարեք ավելի շատ, թե ինչ է Նա մտածում ձեր մասին, և հետևանքները չեն ուշանա: *Հոգևոր վստահությունն աճում է, երբ դուք կամավոր և ուրախ ապաշխարում եք ձեր մեղքերից, ինչպես փոքր այնպես էլ մեծ՝ իսկական ժամանակին կիրառելով Հիսուս Քրիստոսի Քավությունը:*

*5. Դարձեք իսկապես,*իսկապես լավ՝ ներելիս: «Ես Տերս կներեմ, ում որ կներեմ, բայց ձեզանից պահանջվում է ներել բոլոր մարդկանց» (ՎԿՈւ 64.10): Ներեք ամեն մեկին, ամեն ինչ, ողջ ժամանակ, կամ առնվազն ձգտեք անել այդպես, թույլ տալով ներումը գա ձեր իսկ կյանք: Ոխ մի պահեք, հեշտորեն մի վիրավորվեք, ներեք և մոռացեք արագ և երբեք մի մտածեք, որ դուք ազատված եք այդ պատվիրանից: *Հոգևոր վստահությունն աճում է, երբ դուք իմանում եք, որ Տերը գիտի, որ դուք վատ զգացումներ չունեք մեկ ուրիշի հանդեպ:*

6. Ընդունեք փորձությունները, անհաջողությունները, և «անակնկալները» որպես ձեր մակամացու կյանքի փորձառությունների մի մաս: Հիշեք, որ դուք այստեղ եք ապացուցելու և ստուգվելու համար «տեսնելու, թե արդյոք [դուք] կանեք այն ամենը, ինչ Տերը [ձեր] Աստվածը կպատվիրի [ձեզ]» (Աբրահամ 3.25)—և կարո՞ղ եմ ուղղակի ավելացնել «բոլոր հանգամանքներում»: Ձեր միլիոնավոր եղբայրներն ու քույրերը ստուգվել են կամ ստուգվում են այդպես, այսպիսով ինչո՞ւ դուք պիտի ազատվեք: Որոշ փորձություններ գալիս են ձեր իսկ անհնազանդության կամ անփութության պատճառով: Այլ փորձություններ գալիս են ուրիշների անփութության պատճառով կամ պարզապես այն պատճառով, որ սա անկում ապրած աշխարհ է: Երբ այս փորձությունները գալիս են, հակառակորդի ծառաները սկսում են հեռարձակել, որ դուք ինչ որ բան սխալ եք արել, որ սա պատիժ է, մի նշան, որ Երկնային Հայրը ձեզ չի սիրում: Անտեսեք դա: Փոխարենը, փորձեք ստիպել ձեզ ժպտալ, հայացքն ուղղեք դեպի երկինք և ասացեք. «Ես հասկանում եմ Տեր: Ես գիտեմ թե սա ինչ է: Ինձ ապացուցելու մի ժամանակ, այնպես չէ՞»: Այնուհետև ընկերակցեք Նրա հետ՝ լավ համբերելու մինչև վերջ: Հոգևոր վստահությունը մեծանում է, երբ դուք ընդունում եք դա «հաճախ փորձություններն ու դժբախտությունները թույլատրվում են գալ [ձեր կյանք] այն պատճառով, ինչ [դուք] ճիշտ եք անում» (Glenn L. Pace, "Crying with the Saints" [Brigham Young University devotional, Dec. 13, 1987], 2; speeches.byu.edu):

Երբ նախագահում էի Ուկրաինայի Կիևի Միսիայում, ես մի անգամ հարցրեցի իմ ամենահավատարիմ քույրերից մեկին, թե ինչու էր նա միշտ այդքան խիստ իր հանդեպ, ինչո՞ւ էր նա միշտ իրեն քննադատում ամենափոքր բաների համար: Նրա պատասխանը մեկի դասական օրինակն էր, ով լսում էր սխալ ձայնի, երբ նա պատասխանեց. «Որպեսզի ոչ ոք չկարողանա հաղթել ինձ դրանով»:

Եղբայրներ և քույրեր, իմ խորհուրդը այս միսիոներ քրոջը, խորհուրդ է ձեզ. գիտակցեք և դիմակայեք ձեր թուլություններին, բայց մի կաշկանդվեք դրանցով, որովհետև դրանցից մի քանիսը կլինեն ձեր ուղեկիցները մինչև դուք հեռանաք այս երկրային կյանքից: Անկախ նրանից, թե ինչպիսին է ձեր ներկա իրավիճակը, հենց այն պահին, երբ դուք կամավոր որոշում եք ազնվորեն, ուրախությամբ ամեն օր ապաշխարել՝ ձգտելով ուղղակի անել և լինել ձեր լավագույնը, Փրկչի Քավությունը, կարծես պարուրում է և հետևում ձեզ, ուր էլ որ գնաք: Ապրելով այս ձևով, դուք իսկապես կարող եք «միշտ պահպանել ձեր մեղքերին թողություն» (Մոսիա 4.12) ամեն օր ամեն ժամ, ամեն րոպե ամեն վայրկյան և այսպիսով լինել լիովին մաքուր և ընդունելի Աստծո առջև *ամբողջ ժամանակ:*

Ձերն է արտոնությունը, եթե ուզում եք դա, իմանալ ձեզ համար այսօր կամ շուտով, թե դուք արդյոք գոհացնում եք Աստծուն չնայած ձեր թերություններին: Ես վկայում եմ սիրառատ Փրկչի մասին, ով սպասում է մեզ, որ ապրենք պատվիրաններով: Ես վկայում եմ սիրառատ Փրկչի մասին, ով այնքան անհամբեր է՝ տալու իր շնորհը և ողորմածությունը: Ես վկայում եմ սիրառատ Փրկչի մասին, ով ցնծում է, երբ մենք կիրառում ենք Իր Քավությունն ամեն օր հանգիստ և երջանիկ համոզվածությամբ, որ մենք շարժվում ենք ճիշտ ուղղությանբ: Ես վկայում եմ սիրառատ Փրկչի մասին, ով մտահոգվում է, որ ձեր վստահությունը զորանա Աստծո ներկայության մեջ: (տես ՎևՈւ 121.45): Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Էդուարդո Գավարեթ
Յոթանասունից

Այո, Տէր, ես քո ետեւիցը կգամ

Տերը հրավիրում է մեզ՝ օգտագործելով տարբեր բայեր. «Ինձ մոտ եկեք», «Ինձ հետևիր», «Քայլիր ինձ հետ»: Յուրաքանչյուր դեպքում դա գործելու հրավեր է:

«Քանզի, ահա, Տերը շնորհում է բոլոր ազգերին, իրենց սեփական ազգից և լեզվից, սովորեցնելու իր խոսքը»:[1] Այսօր այս սուրբ գրությունը իրականացել է ևս մեկ անգամ, քանի որ ինձ տրվել է հնարավորություն արտահայտելու իմ զգացմունքները իմ մայրենի լեզվով:

1975 թվականն էր, և ես ծառայում էի Ուրուգվայի Պարագվայ Միսիայում որպես երիտասարդ միսիոներ: Միսիայում առաջին ամսվա ընթացքում տարածքային առաջնորդները մի միջոցառում կազմակերպեցին ցուցադրելու համար ավետարանական մի սկզբունք: Յուրաքանչյուր տարածքային միսիոների աչքերը կապեցին և մեզ ասվեց, որ մենք պետք է հետևենք մի արահետի, որը տանում էր դեպի սպորտային դահլիճ: Մենք պետք է հետևեինք որոշակի ղեկավարի ձայնին, մի ձայնի, որը լսել էինք նախքան քայլել սկսելը: Սակայն, մենք նախազգուշացվեցինք, որ ճանապարհորդության ընթացքում մենք կլսեինք մի քանի ձայներ, որոնք կփորձեին շփոթեցնել մեզ և ստիպել շեղվել ուղուց:

Մի քանի րոպե աղմկոտ ձայներ, խոսակցություն լսելուց հետո և այդ ամբողջի մեջտեղում, մի ձայն ասաց. «Ինձ հետևիր», ես վստահություն զգացի, որ հետևում էի ճիշտ ձայնին: Երբ մենք հասանք աղոթատան սպորտային դահլիճը, մեզ խնդրվեց հանել մեր աչքերի կապերը: Երբ ես դա արեցի, ես հասկացա, որ կար երկու խումբ և որ ես այն խմբում էի, որը հետևել էր սխալ ձայնին: «Դա այնքան նման էր հնչում ճիշտ ձայնին»,- մտածեցի ես:

39 տարի առաջ տեղի ունեցած այդ փորձառությունը երկարատև ազդեցություն ունեցավ ինձ վրա: Ես ասացի ինքս ինձ.«Երբեք, ոչ մի դեպքում երբևէ չհետևել սխալ ձայնին»: Ապա ասացի ինքս ինձ. «Այո, Տէր, ես քո ետևիցը կգամ»:

Ես ցանկանում եմ այս փորձառությունը կապել մեզ ուղղված Փրկչի նրբանկատ հրավերի հետ.

«Ես եմ բարի հովիւը, եւ ես իմիններին ճանաչում եմ: . . .

Իմ [ոչխարները] իմ ձայնին կլսեն և [ես ճանաչում եմ նրանց և նրանք իմ ետևից են գալիս]:»[2]

«Նրան հետևելու» հրավերը ամենապարզ, ամենաուղղակի

և ամենահզոր հրավերն է, որ մենք կարող ենք ստանալ: Այն գալիս է հստակ մի ձայնից, որը չի կարելի շփոթել:

Տերը հրավիրում է մեզ օգտագործելով տարբեր բայեր. «Ինձ մոտ եկեք», «Ինձ հետևիր», «Քայլիր ինձ հետ»: Ամեն դեպքում այն պասսիվ հրավեր չէ, դա գործելու հրավեր է: Այն ուղղված է ողջ մարդկությանը Մեկի կողմից, ով մարգարեների Մարգարեն է, ուսուցիչների Ուսուցիչը, Աստծո Որդին՝ Մեսիան:

«Ինձ մոտ եկեք» հրավերը

«Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ եւ բեռնաւորուածներ. եւ ես հանգիստ կտամ ձեզ»:[3]

Դուք, ովքեր դեռ Եկեղեցու անդամ չեք, կստանաք այս հրավերը միսիոներների ձայնի միջոցով այս խոսքերով. «Կկարդա՞ք Մորմոնի Գիրքը: Կաղոթե՞ք: Կհաճախե՞ք եկեղեցի: Կհետևե՞ք Հիսուս Քրիստոսի օրինակին և կմկրտվե՞ք նրանց կողմից, ովքեր իշխանություն ունեն»:[4] Ինչպե՞ս կպատասխանեք այս հրավերին այսօր:[5]

Ես հրավիրում եմ ձեզ լսել և ընդունել ուղերձը՝ ասելով. «Այո, Տէր, ես Քո ետեւիցը կգամ»:

Կառլոս Բաղիոլան և նրա ընտանիքը Մինասից, Ուրուգվայ, հանդիպում էին միսիոներների հետ: Քանի որ երեցները շատ հարցեր էին տալիս դասերի ընթացքում, նրանք որոշեցին հրավիրել ոչ անդամ հարևանուհուն՝ մի գեղեցիկ 14 -ամյա Նորմա անունով աղջկա, օգնելու իրենց պատասխանել: Նորման նվիրված ավագ դպրոցի ուսանող էր, ով ուսումնասիրում էր Աստվածաշունչը դպրոցում այդ տարի: Այսպիսով, երբ միսիոներները հարց էին ուղղում, Նորման պատասխանում էր: Նա «ոսկի ունկնդիր էր»: Դասը, որն ուսուցանվում էր այդ օրը, Իմաստության Խոսքի մասին էր:

Երբ նա տուն վերադարձավ միսիոներների հետ այդ դասից հետո, Նորման գիտեր, թե ինչ պետք է աներ: Նա ասաց իր մայրիկին. «Մամ, այժմվանից ինձ համար ոչ մի սուրճ կաթի հետ: Ուղղակի կաթ»: Այդ արձագանքը Քրիստոսին

հետևելու հրավերն ընդունելու ցանկության տեսանելի դրսևորումն էր, երբ այն ներկայացվեց միսիոներների կողմից:

Եվ Կառլոս Բաղիոլան և Նորման մկրտվեցին: Հետագայում հետևելով Նորմայի օրինակին, նրա մայրը, հայրը և քույրերն ու եղբայրները նույնպես մկրտվեցին: Ես և Նորման միասին ենք մեծացել այդ փոքրիկ, բայց հզոր ճյուղում: Հետագայում, երբ ես վերադարձա միսիայում ծառայելուց, մենք ամուսնացանք: Ես միշտ գիտեի, որ ավելի հեշտ կլիներ հետևել Փրկչին՝ նրան ունենալով իմ կողքին:

Նա, ով Եկեղեցու անդամ է և ընդունել է այս հրավերը, նորոգում է այդ պարտավորությունը ամեն շաբաթ, ճաշակելով հաղորդությունը:[6] Այդ պարտավորությունը ներառում է՝ պատվիրանները պահելը, այդ անելիս դուք ասում եք. «Այո, Տէր, ես Քո ետեւիցը կգամ»:[7]

«Ինձ հետևիր» հրավերը

Տիրոջ հրավերն էր հարուստ երիտասարդ կառավարչին. «Ինձ հետևիր»: Այդ հարուստ մարդը պահել էր պատվիրանները իր ողջ կյանքի ընթացքում: Երբ նա հարցրեց, թե էլ ի՞նչ կարող էր անել, նա ստացավ պատասխանը հստակ հրավերով. «Եկ ինձ հետեւիր»:[8] Այնուամենայնիվ, չնայած հրավերը պարզ էր, այն առանց զոհաբերության չէր: Որոշման և գործի հետ մեկտեղ այն ջանք էր պահանջում:

Նեփի մարգարեն հրավիրեց ինքնազննում կատարել, երբ նա հարցրեց. «Եվ [Հիսուսն] ասել է մարդկանց զավակներին. Հետևիր ինձ: Ուստի իմ սիրելի եղբայրներ, կարո՞ղ ենք մենք հետևել Հիսուսին, եթե մենք հոժար չլինենք պահելու Հոր պատվիրանները»:[9]

«Նրա մոտ գալու», Նրա ձայնը լսելու և հետևելու հրավերը եղել է միսիոներների ուղերձը ի սկզբանե, օգնելով շատերին փոխել իրենց կյանքը ի բարին:

Հիսուն տարի առաջ միսիոներները մտան իմ հոր ժամացույցի վերանորոգման արհեստանոց, թողնելու մի ժամացույց վերանորգելու համար: Ինչպես լավ միսիոներներն են անում, նրանք օգտվեցին առիթից՝ խոսելով հորս և մորս հետ ավետարանի մասին: Հայրս ընդունեց միսիոներներին, իսկ մայրս ընդունեց ուղերձը և Քրիստոսին հետևելու հրավերը: Այդ օրվանից մինչև այսօր նա ակտիվ է մնացել Եկեղեցում: Նա ասաց. «Այո, Տէր, ես քո ետևիցը կգամ»:

Երբ դուք ձգտում եք գալ դեպի Նա, դուք զորություն ձեռք կբերեք թեթևացնելու կյանքի բեռները, լինի դա ֆիզիկական թե հոգևոր *և զգալու մի դրական ներքին փոփոխություն, որը կօգնի ձեզ ավելի երջանիկ լինել:*

«Քայլիր ինձ հետ» հրավերը

Ենովքը կանչվեց քարոզելու ավետարանը մի դժվար, կարծրասիրտ ժողովրդի: Նա իրեն որակավորված չէր զգում: Նա կասկածներ ուներ, թե արդյոք կկարողանար անել դա: Տերը հանգստացրեց նրա կասկածները և զորացրեց նրա հավատքը «Քայլիր ինձ հետ» հրավերի միջոցով, մի հրավեր, որը կույր մարդու ձեռնափայտի կամ ընկերոջ թևի պես, կարող է առաջնորդել մեկի քայլերը, ում քայլվածքը հաստատուն չէ: Մտնելով Փրկչի թևը և

քայլելով Նրա հետ, Ենովքը զգաց, որ իր քայլվածքը հաստատուն դարձավ և նա դարձավ մեծ միսիոներ և մարգարե:[10]

«Ինձ մոտ եկեք» և «հետևեք ինձ» որոշումը անձնական է: Երբ մենք ընդունում ենք այս հրավերը, մեր պարտավորության մակարդակը բարձրանում է, և այդ ժամանակ է, որ մենք կարող ենք «քայլել Նրա հետ»: Այս մակարդակը հաստատում է ավելի սերտ հարաբերություն Փրկչի հետ՝ առաջին հրավերն ընդունելու մեր պտուղը:

Նորման և ես անձնապես ընդունեցինք «ինձ մոտ եկեք» և « ինձ հետևեք» հրավերը: Հետո միասին, աջակցելով միմյանց, մենք սովորեցինք քայլել Նրա հետ:

Նրան որոնելու և Նրան հետևելու ջանքն ու վճռականությունը կպարգևատրվի օրհնություններով, որոնց կարիքը մենք ունենք:

Այդպիսին էր այն կնոջ դեպքում, ով մեծ ջանասիրությամբ հասցրեց հպվել Փրկչի հագուստին[11] և Բարտիմէոս կույրի դեպքում, որի վճռականությունը կարևոր գործոն էր այն հրաշքում, որը տեղի ունեցավ նրա կյանքում:[12] Երկու դեպքում էլ մարմնի և հոգու բժշկություն շնորհվեց:

Պարզիր ձեռքդ, հպվիր Նրա հագուստին, ընդունիր Նրա հրավերը, և ասա՝ «Այո, Տէր, ես քո ետեւիցը կգամ» և քայլիր Նրա հետ:

«Ինձ մոտ եկեք», «Ինձ հետևեք» և «Քայլեք ինձ հետ»-ը հրավերներ են, որոնք պարունակում են հատուկ զորություն նրանց համար, ովքեր ընդունում են դրանք՝ վերափոխելու ձեր կյանքը և առաջացնելու *փոփոխություն ձեր մեջ*, որը կառաջնորդի ձեզ ասել. «[Ես] այլևս հակված չեմ գործելու չարիք, այլ շարունակ գործելու բարիք»:[13]

Որպես այդ փոփոխության արտաքին դրսևորում, դուք կզգաք ուժեղ ցանկություն՝ «սատարել թույլերին, բարձրացնել ընկած ձեռքերը և ամրացնել տկար ծնկները»:[14]

Ի՞նչ քայլեր կարող ենք անել այսօր «Նրա հետ քայլելու» համար:

1. *Սնուցեք ցանկությունը* Քրիստոսի ավելի լավ հետևորդ լինելու համար:[15]
2. *Աղոթեք* այս ցանկության համար, որպեսզի ձեր հավատքը Նրա հանդեպ կարողանա աճել:[16]
3. *Ձեռք բերեք գիտելիք* սուրբ գրություններից, որը կլուսավորի ուղին և կզորացնի փոխվելու ձեր ցանկությունը:[17]
4. *Որոշում ընդունեք այսօր* գործելու և ասելու, «Այո, Տէր, ես քո ետեւիցը կգամ»: Պարզապես ճշմարտությունն իմանալը չի փոխի ձեր ներաշխարհը, մինչև դուք գիտելիքը չփոխեք *գործի:*[18]
5. *Հաստատակամ եղեք* այն որոշման մեջ, որ դուք ընդունել եք՝ ամեն օր գործադրելով այդ սկզբունքները:[19]

Թող որ մեր սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերը դրդեն մեզ գործի՝ մեր ցանկությամբ ընդունելու Փրկչի հրավերը: Նախագահ Մոնսոնն ասել է. «Ո՞վ է փառքի Թագավորը, այս զորաց Տերը: Նա մեր Տերն է: Նա մեր Փրկիչն է: Նա Աստծո Որդին է: Նա է մեր փրկության Հեղինակը: Նա կանչում է. «Ինձ հետևիր»: Նա հրահանգում է.«Գնա, դու էլ այնպես արա»: Նա աղերսում է.«Պահիր իմ պատվիրանները»:[20]

Թող որ մենք որոշում ընդունենք այսօր՝ մեծացնելու մեր երկրպագության և Աստծո հանդեպ պարտավորվածության մակարդակը և թող մեր պատասխանը Նրա հրավերին լավի բարձրաձայն և հստակ. «Այո, Տէր, ես քո ետեւիցը կգամ»:[21] Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

Բարիլոք, Արգենտինա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ալմա 29.8:
2. Հովհաննես Ժ.14, 27:
3. Մատթեոս ԺԱ.28, տես նաև Եսայիա ԾԵ.3:
4. Տես *Քարոզիր Իմ ավետարանը՝ Միսիոներական Ծառայության Ուղեցույց* (2004), 31, 195–202:
5. Տես Գործք Բ.37–38:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.77–79:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 42.29:
8. Մարկոս Ժ.21:
9. 2 Նեփի 31.10:
10. Տես Մովսես 6.33–35:
11. Տես Ղուկաս Ը.3–48:
12. Տես Մարկոս Ժ.46–52:
13. Մոսիա 5.2:
14. Վարդապետություն և Ուխտեր 81.5, տես նաև Եսայիա ԼԵ.3:
15. Տես Ալմա 22.15–16, Դալլին Հ. Օուքս, «Ցանկություն», *Լիահոնա,* մայիս 2011, 42–45:
16. Տես Ալմա 34.17–27, 37.37:
17. Տես Սաղմոս ՃԺԹ.105, Հելաման 3.29:
18. Տես Մոսիա 5.5:
19. Ռալֆ Վալդո Էմերսոնն ասել է.«Այն, ինչ մենք հետևողական ենք անելիս, հեշտ է դառնում անել, ոչ թե այն պատճառով, որ այդ բանի բնույթն է փոխվում, այլ որովհետև այդ անելու մեր զորությունն է մեծանում» (in Heber J. Grant *Gospel Standards,* comp. G. Homer Durham [1941], 355):
20. Թոմաս Ս. Մոնսոն, «Գտնել ուրախություն ճանապարհորդության ընթացքում», *Լիահոնա,* նոյ. 2008, 88:
21. Տես “Lord, I Would Follow Thee,” *Hymns,* no. 220:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մի՞թե մենք բոլորս մուրացկաններ չենք

Լինենք հարուստ, թե աղքատ, մենք պետք է «անենք, ինչ կարող ենք», երբ մյուսները կարիքի մեջ են:

Ինչ հրաշալի նորամուծություն է կատարվել մեր գերագույն համաժողովի ձևաչափում: Հրաշալի էր, Էդուարդո:

Իր վաղ ծառայության գուցե հիշարժան պահին Հիսուսը կանգնեց Իր հայրենի քաղաք Նազարեթի ժողովարանում և կարդաց Եսայիայի կողմից մարգարեացած և Ղուկասի ավետարանում գրված այս խոսքերը. «Տիրոջ Հոգին ինձ վրա է. որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին թողություն քարոզելու, . . . և խոցվածներին արձակելու՝ ազատելով»:[1]

Այսպիսով, Փրկիչը կատարեց Իր մեսայական ծառայության առաջին հանրային հայտարարությունը: Բայց այս հատվածը հստակեցնում է, որ Իր վերջնական քավող զոհաբերության և Հարության ճանապարհին Հիսուսի առաջին և ամենագլխավոր մեսայական պարտականությունն էր՝ օրհնել աղքատներին, ներառյալ՝ հոգով աղքատներին:

Իր ծառայության սկզբից ի վեր Հիսուսը մի արտասովոր ձևով էր սիրում աղքատներին և խեղճերին: Նա ծնվել և մեծացել էր նման միջավայրում: Մենք Նրա կյանքի բոլոր մանրամասներից տեղյակ չենք, բայց մի անգամ Նա ասել է. «Աղվեսները որջեր ունին, և . . . թռչունները՝ բույներ. բայց մարդի Որդին տեղ չունի որ իր գլուխը դնե»:[2] Ըստ երևույթին, Արարիչը երկնքի և երկրի «և բոլոր բաների, որ դրանցում են»,[3] Իր չափահաս տարիքում անտուն էր:

Պատմության ընթացքում աղքատությունը համարվել է մարդկության մեծագույն և առավել տարածված խնդիրներից մեկը: Այն հիմնականում արտահայտվում է ֆիզիկական ձևով, բայց դրա հոգևոր և էմոցիոնալ վնասը կարող է անգամ ավելի կեղեքիչ լինել: Ամեն դեպքում, մեծ Քավչի մեզ ուղղված առավել համառ կոչերն են՝ միանալ Իրեն՝ մարդկանց ուսերից բարձրացնելով այդ բեռը: Որպես Եհովա, Նա ասաց, որ խստորեն կդատի Իսրայելի տունը, քանի որ «աղքատից կողոպտուածը ձեր տներումն է:

Ի՞նչ է եղել ձեզ,- բացականչում է Նա,- որ փշրում եք իմ ժողովրդին, և տնանկների երեսը ջարդում»:[4]

Առակաց հեղինակը հստակ է ներկայացնում. «Աղքատին նեղողը նրա Արարչին է անարգում. [և] . . . ով որ խցկե աղքատի աղաղակի դեմ իր ականջը, . . . ինքն էլ կկանչէ և պատասխան չի գտնիլ»:[5]

Մեր օրերում, Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին դեռևս իր մեկամյակը չէր նշել, երբ Տերը պատվիրեց, որ անդամները «հոգ տանեն աղքատների ու կարիքավորների համար, և ծառայեն՝ ի սփոփանք նրանց, որ նրանք չտառապեն»:[6] Ուշադրություն դարձրեք այդ հատվածի ազդեցիկ տոնի վրա.- «նրանք չ տառապեն»: Այդ լեզուն է Աստված օգտագործում, երբ խոսքն Իր գործին է վերաբերվում:

Հաշվի առնելով աշխարհում անհավասարությունը հաղթահարելու հսկայական դժվարությունը, ի՞նչ կարող է տղամարդը կամ կինն անել: Վարդապետն Ինքն է տալիս պատասխանը: Երբ Իրեն դավաճանելուց և խաչելուց առաջ Մարիամը թանկ յուղով օծեց Հիսուսի գլուխը, Հուդա Իսկարիովտացին բողոքեց այդ շռայլության համար և «տրտնջացին նրա դեմ»:[7]

«Հիսուսն էլ ասեց.

Ինչո՞ւ եք նեղություն տալիս դորան. Դա մի բարի բան գործեց: . . .

Դա ինչ որ ուներ, արավ»:[8]

Նա ինչ որ ուներ արավ: Ի՜նչ սեղմ բանաձև: Մի անգամ լրագրողը հարցրեց Մայր Թերեզային Կալկուտայի անտունների համար ձեռնարկված, հույսեր չներշնչող նրա փրկարար ջանքերի մասին, նշելով, որ ըստ վիճակագրական թվերի նա բացարձակապես ոչինչ չէր անում: Այդ զարմանահրաշ փոքրամարմին կինը հակադարձեց, որ իր աշխատանքի իմաստը կայանում էր ոչ թե թվերի, այլ սիրո մեջ: Թեպետ նրա համար հասանելի *չէին* շատ-շատերը, բայց նա ասաց, որ կարողանում էր պահել Աստծուն և մերձավորին սիրելու պատվիրանը՝ *իր ձեռքի տակ ունեցած* բոլոր միջոցներով ծառայելով նրանց, ովքեր հասանելի էին իրեն: «Այն, ինչ անում ենք մենք, մեկ կաթիլ է օվկիանոսում,- ասել է նա մեկ այլ առիթով,- բայց եթե մենք չանենք դա, օվկիանոսից մեկ կաթիլ կպակասի»:[9] Լրագրողը

խելամտորեն եզրակացրեց, որ Քրիստոնեությունն ակնհայտորեն թվերով արտահայտված վիճակագրություն չէ: Նա հիմնավորեց, որ եթե համեմատենք երկնքում որքան շատ ավելի ցնծություն կլինի ապաշխարող մեկ մեղավորի համար, քան ապաշխարության կարիք չունեցող իննսունինի համար, այդ դեպքում թերևս Աստծուն այդքան էլ չհետաքրքրեն տոկոսները:[10]

Ուրեմն, ինչ կարող ենք մենք անել:

Մեկ բան, որ կարող ենք անել, ինչպես Բենիամին թագավորն էր ուսուցանում, դադարենք պահել մեր միջոցները՝ համարելով, որ աղքատն իր թշվառությունն ինքն է իր վրա բերել: Գուցե ոմանք իրենք *են* իրենց համար խնդիրներ ստեղծել, բայց արդյո՞ք մեզանից մյուսները նույն բանը չեն անում: Այդ պատճառով չէ՞ արդյոք այդ գթառատ կառավարիչը հարցնում. «Մի՞թե մենք բոլորս մուրացկաններ չենք»:[11] Արդյո՞ք մենք բոլորս չենք աղերսում օգնություն, հույս և աղոթքների պատասխաններ: Արդյո՞ք մենք բոլորս ներում չենք աղերսում մեր գործած սխալների և պատճառած անախորժությունների համար: Արդյո՞ք մենք չենք աղերսում, որ շնորհը փոխհատուցի մեր թուլությունների համար, որ ողորմածությունը հաղթի արդարությանը, առնվազն մեր դեպքում: Այդ դեպքում, զարմանալի չէ, որ Բենիամին թագավորը ասում է, մենք *ձեռք ենք բերում* մեր մեղքերին թողություն, աղերսելով Աստծուն, ով կարեկցանքով պատասխանում է, բայց մենք *պահպանում ենք* մեր մեղքերին թողություն, կարեկցանքով մոտենալով աղքատին, ով խնդրում է մեզ:[12]

Նրանց հանդեպ ողորմած վերաբերմունք ցուցաբերելուց բացի, մենք նաև պետք է աղոթենք կարիքավորների համար: Զորամացիների մի խումբ ժողովարանների մյուս անդամների կողմից համարվելով «կեղտոտ» և «անարժան», դուրս էին գցվել աղոթքի տներից «իրենց խղճուկ [մաշված] հանդերձների պատճառով»: Մորմոնն ասում է, նրանք «աղքատ

էին, ինչ վերաբերում էր աշխարհի բաներին, և նաև . . . աղքատ էին սրտով»[13]—երկու վիճակներ, որոնք գրեթե միշտ համատեղվում են: Ալմա և Ամուղեկ միսիոներական զույգը հակազդեց այդ դատապարտելի մերժմանը, ցնցոտիներ հագած մարդկանց ասելով, որ ինչ արտոնություններից էլ որ մյուսները զրկեն իրենց, իրենք կարող են միշտ աղոթել՝ իրենց դաշտերում և իրենց տներում, իրենց ընտանիքներում և իրենց սրտերում:[14]

Այնուհետև, այդ նույն խմբին, որոնցից մյուսները երես էին դարձրել, Ամուղեկն ասում է. «Աղոթելուց հետո . . . եթե *դուք* երես դարձնեք կարիքավորից ու մերկից, և չայցելեք հիվանդին ու չարչարվածին, և բաժին չհանեք ձեր ստացվածքից, *եթե դուք ունեք,* նրանց համար, ովքեր կարիքի մեջ են, ես ասում եմ *ձեզ,* . . . ձեր աղոթքը զուր է, և ձեզ ոչնչով օգտակար չէ, և դուք նման եք կեղծավորների, որոնք ուրանում են հավատքը»:[15] Ինչպիսի՜ հրաշալի հիշեցում, լինենք հարուստ, *թե* աղքատ, մենք պետք է «անենք, ինչ կարող ենք», երբ մյուսները կարիքի մեջ են:

Այժմ, չլինի թե ինձ մեղադրեն արտասովոր, համընդհանուր սոցիալական ծրագրեր առաջարկելու կամ փողոցում ողորմություն խնդրելուն հավանություն տալու մեջ, ես ձեզ հավաստիացնում եմ, որ իմ հարգանքը հանդեպ աշխատասիրությունը, տնտեսումը, ինքնապահովումն ու ձգտումը նույնքան ամուր է, որքան ցանկացած ապրող տղամարդու կամ կնոջ մեջ: Մենք միշտ պետք է օգնենք ինքներս մեզ, նախքան մյուսներից օգնություն խնդրելը: Ավելին, ես չգիտեմ, հատկապես ինչպես պետք է ձեզանից յուրաքանչյուրը կատարի իր պարտականությունը նրանց հանդեպ, ովքեր չեն կարողանում օգնել իրենք իրենց: Բայց ես գիտեմ, որ Աստված գիտի, և Նա կօգնի և կուղղորդի ձեզ աշակերտին հատուկ գթասիրտ գործերում, եթե դուք բարեխղճորեն ցանկանաք, աղոթեք և ուղիներ փնտրեք պահելու պատվիրանը, որ Նա բազմիցս տվել է մեզ:

Դուք հասկանում եք, որ ես խոսում եմ ծանր սոցիալական կարիքների մասին, որոնք տարածվում են ոչ միայն Եկեղեցու անդամների վրա: Բարեբախտաբար, մեր անդամներին աջակցելու Տիրոջ ուղին դյուրին է. ովքեր ֆիզիկապես ի վիճակի են, պետք է պահեն ծոմի օրենքը: Եսայիան գրել է.

«Ահա սա է ծոմը, որին ես հավանում եմ . . .

Այո, հացդ կտրիր տուր սովածին, և թափառական խեղճերին տար տունդ, երբոր մի մերկ տեսնես, նորան հագցրու, . . . [որ դու] բաց անես լուծի կոշկոռները. և . . . ջարդվածներին ազատես»:[16]

Ես վկայություն եմ բերում հոգևոր և նյութական հրաշքների մասին, որոնք գալիս են նրանց, ովքեր ապրում են ծոմի օրենքով: Ես վկայություն եմ բերում իմ կյանք եկած հրաշքների մասին: Իրոք որ, ինչպես Եսայիան է գրել, ես ավելի քան մեկ անգամ աղաղակել

եմ ծոմի մեջ և իսկապես Աստված պատասխանել է. «Ահա ես»:[17] Պահեք այդ սուրբ արտոնությունն առնվազն ամիսը մեկ անգամ, և եղեք առատաձեռն, որքան հանգամանքները թույլ են տալիս, ձեր ծոմի և մարդասիրական, կրթական և միսիոներական այլ նվիրատվություններում: Ես խոստանում եմ, որ Աստված կլինի առատաձեռն ձեր հանդեպ, և նրանք, ովքեր սփոփանք են գտնում ձեր շնորհիվ, ձեզ օրհնյալ կհամարեն: Անցյալ տարի Եկեղեցու ավելի քան յոթ հարյուր հազար անդամներ օգնություն են ստացել ծոմի նվիրատվություններից, որոնք սպասավորվել են նվիրված եպիսկոպոսների և Սփոփող Միության նախագահների կողմից: Դա բազմաթիվ երախտապարտ Վերջին Օրերի Սրբեր են:

Եղբայրներ և քույրեր, նման քարոզը պահանջում է, որ ես բացահայտորեն ընդունեմ թե հոգևոր և թե նյութական չվաստակած, չարժանացած, անվերջանալի օրհնություններն իմ կյանքում: Ձեզ նման, երբեմն ես էլ անհանգստացել եմ ֆինանսների համար, բայց երբեք աղքատ չեմ եղել, անգամ չեմ իմացել ինչ է աղքատը զգում: Ավելին, ես չգիտեմ բոլոր պատճառները, թե ինչու են ծննդյան, առողջության, կրթական և տնտեսական հնարավորություններն այդքան շատ տարբեր այստեղ մահկանացու կյանքում, բայց երբ այդքան շատ կարիքավորներ եմ տեսնում, ես գիտեմ, որ «կլինեի նրանց թվում, եթե չլիներ Աստծո շնորհը»:[18] Ես նաև գիտեմ, որ գուցե իմ եղբոր պահապանը չեմ, բայց իմ եղբոր եղբայրն եմ, և «քանի որ ինձ շատ է տրված, ես ևս պետք է տամ»:[19]

Այդ առումով, ես իմ հարգանքի տուրքն եմ մատուցում Նախագահ Թոմաս Սպենսեր Մոնսոնին: Ես օրհնվել եմ ճանաչելու այս մարդուն 47 տարի, և մինչև մահ իմ մեջ կփայփայեմ նրա այն կերպարը, երբ նա այն ժամանակ տնտեսապես քայքայված Արևելյան Գերմանիայից տուն էր թռչում իր տնային հողաթափերով, որովհետև նվիրել էր ոչ միայն իր փոխնորդ պիջակն ու տաբատները, այլ իր հագի կոշիկները: «Ի՞նչ զեղեցիկ են սարերի վրա [և օդանավակայանի տերմինալներում քստքստալով քայլող] ոտքերը նրա, որ բարիք է ավետում, որ խաղաղություն է քարոզում»:[20] Ավելի քան որևէ մեկը, որին ես ճանաչում եմ, Նախագահ Մոնսոնը միշտ «արել է, ինչ կարողացել է», այրիների և որբերի, աղքատների և ընկճվածների համար:

1831թ. Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերն ասաց, որ մի օր աղքատները կտեսնեն արքայությունն Աստծո, որը կգա զորությամբ և մեծ փառքով ազատելու իրենց:[21] Թող որ մենք օգնենք այդ մարգարեության իրականացմանը, գալով Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու մեր անդամության զորությամբ և փառքով, անելով այն, ինչ կարող ենք, որպեսզի ազատենք նրանց, ում կարող ենք, գերության մեջ պահող և բոլոր երազանքները խորտակող աղքատությունից, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի ողորմած անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Ղուկաս Դ.18:
2. Մատթեոս Ը.20:
3. 2 Նեփի 2.14, 3 Նեփի 9.15:
4. Եսայիա Գ.14–15:
5. Առակաց ԺԴ.31, 21.13:
6. Վարդապետություն և Ուխտեր 38.35:
8. Տես Մարկոս ԺԴ.4–5. տես նաև Մատթեոս ԻԶ.6–9. Հովհաննես ԺԲ.3–5:
8. Մարկոս ԺԴ.6, 8, շեշտադրումն ավելացված է:
9. Mother Teresa of Calcutta, *My Life for the Poor,* ed. José Luis González-Balado and Janet N. Playfoot (1985), 20.
10. Տես Malcolm Muggeridge, *Something Beautiful for God* (1986), 28–29, 118–19. տես նաև Ղուկաս ԺԵ.7:
11. Մոսիա Դ.19:
12. Տես Մոսիա 4.11–12, 20, 26:
13. Ալմա 32.2–3:
14. Տես Ալմա 34.17–27:
15. Ալմա 34.28, շեշտադրումն ավելացված է:
16. Եսայիա ԾԸ.6–7:
17. Եսայիա ԾԸ.9:
18. Attributed to John Bradford; see *The Writings of John Bradford,* ed. Aubrey Townsend (1853), xliii.
19. “Because I Have Been Given Much,” *Hymns,* no. 219. © Harper San Francisco.
20. Եսայիա ԾԲ.7:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 56.18–19, տես նաև հատված 19:

Երեց Լ. Թոմ Փերի
Տասներկու Առաքյալների Քվորումից

Գտնելով հարատև խաղաղություն և կառուցելով հավերժական ընտանիքներ

Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որ ապահովում է հիմքը, որի վրա մենք կարող ենք գտնել հարատև խաղաղություն և կառուցել հավերժական ընտանեկան միավորներ:

Մեր ճանապարհորդությունը կյանքով ունի ինչպես լավ ժամանակահատվածներ, այնպես էլ վատ: Յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր մարտահրավերներ: Ինչպես ենք սովորում հարմարվել փոփոխություններին, որոնք գալիս են այդ ընթացքում, կախված է նրանից, թե ինչ հիմքի վրա ենք կառուցում: Մեր Տիրոջ և Փրկչի ավետարանը ապահովում է անխախտ և ամուր հիմք: Այն կառուցվում է մաս առ մաս, երբ մենք ձեռք ենք բերում Իր զավակների համար Տիրոջ հավերժական ծրագրի մասին գիտելիք: Փրկիչը Վարպետ Ուսուցիչ է: Մենք հետևում ենք Նրան:

Սուրբ գրությունները վկայում են Նրա մասին և տալիս կատարյալ արդարակեցության մի օրինակ մեզ համար, որպեսզի հետևենք: Ես կիսվել եմ նախորդ համաժողովներից մեկում Եկեղեցու անդամների հետ, որ ես մի քանի տետրեր ունեմ, որոնցում մայրս արձանագրել է նյութեր, որոնք նա օգտագործում էր պատրաստելու իր Սփոփող Միության դասերը: Նշումները նույնքան արդիական են այսօր, որքան դրանք արդիական էին այն ժամանակ: Դրանցից մեկը մի մեջբերում է գրված 1908 թվականին Չարլզ Էդուարդ Ջեֆերսոնի կողմից Հիսուս Քրիստոսի բնավորության մասին: Այն ասում է.

«Լինել Քրիստոնյա նշանակում է հիանալ Հիսուսով այնպես անկեղծորեն և այնպես ջերմեռանդորեն, որ ամբողջ կյանքն անցնում է Նրա հետ՝ ձգտելով նմանվել Նրան:

Մենք կարող է սկսենք ճանաչել Նրան այն խոսքերից, որ Նա խոսել է, այն գործերից, որ Նա գործել է և նաև Նրա լռություններից: Մենք կարող ենք ճանաչել Նրան նաև այն տպավորությունից, որը Նա գործեց առաջինը՝ Իր ընկերների վրա և երկրորդը՝ Իր թշնամիների վրա և երրորդը՝ ընդհանրապես Իր ժամանակակից մարդկանց վրա:

Քսաներորդ դարի կյանքի բնորոշ գծերից մեկը դժգոհությունն է և [անհանգստությունը]: . . .

Աշխարհն աղաղակում է ինչ որ բանի համար, առանց իմանալու, թե ինչ է դա: Հարստությունը եկավ, աշխարհը լի է մարդու վարպետության և հանճարի գյուտերով, բայց մենք [այնուամենայնիվ] անհանգիստ ենք, չբավարարված [և] տարակուսանքների մեջ: [Եթե բացում ենք] Նոր Կտակարանը [մեզ ողջունում են այս խոսքերը]. «Եկեք ինձ մոտ և ես կտամ ձեզ հանգիստ, ես եմ կյանքի հացը, ես եմ աշխարհի լույսը, եթե որևէ մարդ ծարավ է, թող գա ինձ մոտ և խմի: Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ: Դուք կստանաք զորություն: Դուք կուրախանաք» (*The Character of Jesus*, [1908] 1, 7, 11, 15–16):

Տղամարդիկ և կանայք մասնավորապես ձևավորվում են նրանց կողմից, որոնց մեջ նրանք ընտրում են ապրել: Նրանց, ում նրանք նայում են և փորձում ընդօրինակել, նույնպես ձևավորում են նրանց: Հիսուսը մեծ Օրինակն է: Հարատև խաղաղություն գտնելու միակ ուղին Նրան նայելն է և ապրելը:

Ի՞նչն է Հիսուսի մասին կարևոր՝ մեր ուսումնասիրության համար:

«Նոր Կտակարանը գրողները . . . ոչ մի հոգ չեն տարել [Հիսուսի] հասակի, նրա կրած հագուստի կամ նրա ապրած տների մասին: . . . Նա ծնվել է մարագում, աշխատել է հյուսնի արհեստանոցում, ուսուցանել է երեք տարի և հետո մահացել խաչի վրա: . . . Նոր Կտակարանը գրվել է մարդկանց կողմից, ովքեր իրենց մտքում դրել էին, որ մենք . . . մեր աչքերը սևեռենք [Նրա] վրա», (*The Character of Jesus*, 21–22) այն

համոզմունքով, որ Նա իսկապես Աստծո Որդին էր և է, աշխարհի Փրկիչն ու Քավիչը:

Փրկչի առակներից մեկը, հավատում եմ, հատկապես վերաբերում է մեր ներկայիս օրերին:

Այն պարունակվում է Մատթեոսի ԺԳ գլխում, որտեղ կարդում ենք.

«Եւ մարդիկը քնելիս, նորա թշնամին եկաւ եւ ցորենի մէջ որոմներ ցանեց և գնաց:

Եւ երբոր խոտը բուսաւ եւ պտուղ տուաւ, այն ժամանակ որոմներն էլ երեւեցան:

Եւ տան Տիրոջ ծառաները մոտ գալով ասեցին նորան. Տէր, մի՞թե դու քո արտումը բարի սերմ չսերմեցիր, ապա ի՞նչ տեղից են որոմները:

Նա էլ ասեց նորանց. Թշնամի մարդ է արել այդ: Ծառաներն էլ ասեցին նորան. Հիմա կամենո՞ւմ ես որ գնանք քաղենք նորանց դուրս հանենք:

Նա էլ ասեց, Ոչ. Մի գուցէ որոմները քաղելիս, ցորենն էլ նորանց հետ պոկէք:

Թող տուէք որ երկուսը միասին մեծանան մինչեւ հունձքը, եւ հնձի ժամանակին հնձողներին կասեմ. առաջ որոմները քաղեցէք եւ նորանց խուրձ խուրձ կապեցէք այրելու, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ» (հատվածներ 25–30):

Ողջ մարդկության այդ հին թշնամին գտել է այնքան շատ միջոցներ, որքան կարողացել է մտածել՝ ամենուրեք որոմներ տարածելու համար: Նա ուղիներ է գտել, որ դրանք ներթափանցեն նույնիսկ մեր սեփական տների սրբության մեջ: Ամբարիշտ և աշխարհիկ ուղիներն այնպես են տարածվել, որ կարծես ոչ մի իրական ուղի չկա դրանք քաղհանելու համար: Դրանք գալիս են լարերով և օդի միջով, հենց այն սարքերի միջոցով, որոնք մենք ստեղծել ենք մեզ կրթելու և զվարճացնելու համար: Ցորենն ու որոմներն աճել են սերտ միմյանց հետ: Դաշտը ղեկավարող տնտեսը պետք է ողջ իր ուժով սնուցի այն, ինչ բարի է և դարձնի դա այնքան ուժեղ և գեղեցիկ, որ որոմները չունենան գրավչություն՝ ոչ աչքի, ոչ էլ ականջի համար: Որքան օրհնված ենք մենք, որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ՝ ունենալով մեր Տիրոջ և Փրկչի թանկարժեք ավետարանը որպես հիմք, որի վրա, մենք կարող ենք կառուցել մեր կյանքը:

Մորմոնի Գրքից 2 Նեփիում մենք կարդում ենք. «Քանզի ահա, ես կրկին ասում եմ ձեզ, որ եթե դուք մտնեք այդ ճանապարհով և ստանաք Սուրբ Հոգին, այն ձեզ ցույց կտա բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.5):

Մենք երբեք չպետք է թույլ տանք, որ աշխարհը գերիշխի և խլացնի այդ մեղմ ու բարակ ձայնը:

Մենք իհարկե նախազգուշացվել ենք այն իրադարձությունների մասին, որոնց պետք է դիմակայենք մեր օրերում: Մեր մարտահրավերը կլինի թե ինչպես ենք մենք պատրաստվում այն իրադարձություններին, որոնք Տերն ասել է անկասկած դեռ գալու են:

Մեր մտահոգված հասարակությունում շատերն են հասկանում, որ ընտանիքի փլուզումը կբերի միայն վիշտ և հուսահատություն անհանգիստ աշխարհում: Որպես Եկեղեցու անդամներ մենք պատասխանատվություն ունենք պահպանել և պաշտպանել ընտանիքը որպես հասարակության և հավերժության հիմնական միավոր: Մարգարեները զգուշացրել են և նախազգուշացրել ընտանեկան արժեքների այլասերման կործանարար հետևանքների մասին:

Երբ աշխարհը շարունակում է հետևել մեզ, եկեք համոզված լինենք, որ մեր օրինակը կհաստատի և կաջակցի Տիրոջ ծրագրին, որը Նա նախագծել է Իր զավակների համար՝ այստեղ մահկանացու կյանքում: Ամենից մեծագույն ուսուցումը պետք է տարվի արդարակյաց օրինակի միջոցով: Մեր տները պետք է լինեն սուրբ վայրեր, որպեսզի դեմ կանգնեն աշխարհի ճնշումներին: Հիշեք, որ Տիրոջ ամենից մեծագույն օրհնությունները գալիս են և տրվում են արդարակյաց ընտանիքներին:

Մենք պետք է զգուշորեն շարունակենք գնահատել մեր աշխատանքը որպես ծնողներ: Ամենազորավոր ուսուցումը, որը երեխան կարող է երբևէ ստանալ, կգա հոգատար և արդարակյաց հայրերից և մայրերից: Առաջինը եկեք նայենք մոր դերին: Լսեք այս մեջբերումը Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի կողմից.

«Կանայք, ովքեր դարձնում են տունը օջախ, ավելի մեծ ներդրում են կատարում հասարակության համար, քան նրանք, ովքեր ղեկավարում են մեծաթիվ բանակներ կամ գլխավորում նշանավոր ընկերություններ: Ո՞վ կարող է գնապիտակ դնել այն ազդեցության վրա, որ մայրն ունի իր երեխաների, տատիկը իր հետնորդների, կամ հորաքույրները և քույրերը իրենց ընտանիքի անդամների վրա:

Մենք չենք կարող սկսել չափել կամ հաշվարկել կանանց ազդեցությունը, ովքեր իրենց իսկ ուղիներով կառուցում են կայուն ընտանեկան կյանք և դաստիարակում

հավիտենական բարու համար ապագա սերունդներին: Այս սերնդի կանանց ընտրությունները կլինեն հավերժական իրենց հետևանքներով: Կարո՞ղ եմ առաջարկել, որ այսօրվա մայրերն ավելի մեծ հնարավորություն և ավելի լուրջ մարտահրավեր չունենան, բացի այն ամենն անելը, ինչ իրենք կարող են, [օջախը] զորացնելու համար» (*Standing for Something: 10 Neglected Virtues That Will Heal Our Hearts and Homes* [2000], 152):

Այժմ եկեք տեսնենք, թե ինչ դեր է խաղում հայրը մեր կյանքում.

Հայրերը տալիս են օրհնություններ և կատարում սրբազան արարողություններ իրենց երեխաների համար: Սրանք կդառնան հոգևոր իրադարձություններ նրանց կյանքում:

Հայրերն անձնապես ներգրավված են ընտանեկան աղոթքները, ամենօրյա սուրբ գրությունների ընթերցանությունը և ամենշաբաթյա ընտանեկան տնային երեկոները ղեկավարելում:

Հայրերն են ստեղծում ընտանեկան ավանդույթներ ներգրավված լինելով օգնելու արձակուրդային ուղևորություններ և քաղաքից դուրս զբոսանքներ ծրագրավորելու, որը կընդգրկի ողջ ընտանիքի անդամներին: Այս հատուկ ժամանակը միասին անցկացնելը երբեք չի մոռացվի նրանց երեխաների կողմից:

Հայրերը մեկ առ մեկ հանդիպում են ունենում իրենց երեխաների հետ և ուսուցանում նրանց ավետարանի սկզբունքներ:

Հայրերն ուսուցանում են որդիներին և դուստրերին աշխատանքի կարևորությունը և օգնում նրանց հաստատել արժանավոր նպատակներ իրենց սեփական կյանքում:

Հայրերը հավատարիմ ավետարանական ծառայության օրինակ են հանդիսանում:

Խնդրում ենք, հիշեք եղբայրներ, ձեր սրբազան կոչումը որպես հայր Իսրայելում՝ ձեր ամենակարևոր կոչումը ժամանակի և հավերժության մեջ, մի կոչում, որից դուք երբեք չեք ազատվելու:

Շատ տարիներ առաջ ցցի համաժողովում, մենք սովորաբար

ցույց էինք տալիս մի կինոֆիլմ, որպեսզի լուսաբանեինք ներկայացվող ուղերձի թեման: Մեկ տարվա ընթացքում, երբ մենք ճանապարհորդում էինք ողջ Եկեղեցով մեկ՝ այցելելով մեզ հանձնարարված ցցի համաժողովներին, մենք շատ լավ ծանոթացանք այդ կինոնկարի բովանդակությանը: Մենք կարողանում էինք գրեթե անգիր մեջբերել այն: Այդ ուղերձը մնացել է իմ մտքում բոլոր այս տարիների ընթացքում: Կինոնկարում խոսողը Նախագահ Հարոլդ Բ. Լին էր և մի պատմություն էր պատմում, որը տեղի էր ունեցել իր դստեր տանը: Դա մոտավորապես այսպես է ներկայացվում.

Մի երեկո տան մայրը ջանասիրաբար փորձում էր ավարտել մրգի պահածոյացումը: Ի վերջո երեխաները պատրաստ էին քնելու և ամեն ինչ կարգավորված էր: Այժմ ժամանակն էր անցնել մրգի գործին: Երբ նա սկսեց կլպել միրգը և կորիզները հանել, երկու փոքրիկ տղաները հայտնվեցին խոհանոցում և հայտարարեցին, որ իրենք պատրաստ էին իրենց գիշերային աղոթքներին:

Չցանկանալով ընդհատել, մայրը շատ արագ ասաց տղաներին. «Գուցե այսօր մենակ ասեք ձեր աղոթքներն այս գիշեր, իսկ մայրիկը ուղղակի կշարունակի մրգի հետ կապված գործը»:

Երկու որդիներից մեծը անշարժ կանգնեց իր տեղում և հարցրեց. «Ո՞րն է ամենակարևորը, աղոթքները, թե՞ միրգը»: (Տես *Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 143–44.)

Երբեմն այնպիսի իրավիճակում ենք հայտնվում, երբ հնարավորություն ենք ունենում ուսուցանել երեխաներին մի դաս, որը կունենա հարատև ազդեցություն նրանց մատղաշ կյանքի վրա: Իհարկե, աղոթքները ավելի կարևոր են, քան միրգը: Հաջողված ծնողը երբեք չպետք է խիստ զբաղված լինի, որպեսզի պահը որսա, երբ կարևոր դաս կարող է ուսուցանվել:

Իմ խորին համոզմունքն է, որ երբեք չի եղել մի ժամանակահատված իմ կյանքի երկար տարիների ընթացքում, երբ մեր Երկնային Հոր զավակներն ավելի հավատարիմ, նվիրված ծնողների առաջնորդող ձեռքի կարիքն ունեցած լինեն: Մենք ունենք ծնողների մեծ և ազնվազարմ ժառանգություն, ովքեր հրաժարվում են գրեթե ամեն ինչից, որ ունեն՝ գտնելու մի տեղ, որտեղ նրանք կկարողանային մեծացնել իրենց ընտանիքները հավատքով և քաջությամբ, որպեսզի հաջորդ սերունդն ունենա ավելի մեծ հնարավորություններ, քան իրենք են ունեցել: Մենք պետք է գտնենք մեր մեջ այդ նույն վճռականության ոգին և հաղթահարենք մարտահրավերները, որոնց առճակատում ենք նույն զոհաբերության ոգով: Մենք պետք է պատվաստենք ապագա սերունդների մեջ շատ ավելի ուժեղ ապավինում մեր Տեր ու Փրկչի ուսմունքներին:

«Եվ, այժմ, իմ որդիներ, հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը. որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո երբ նրա ողջ կարկուտը և զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն զորություն չի ունենա ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը, այն վեմի շնորհիվ, որի վրա դուք կառուցված եք, որը հաստատուն հիմք է, հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի» (Հելաման 5.12):

Հիսուս Քրիստոսի ավետարանն է, որ ապահովում է հիմքը, որի վրա մենք կարող ենք գտնել հարատև խաղաղություն և կառուցել հավերժական ընտանիքներ: Սրա մասին ես վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Քվենթին Լ. Քուք
Տասներկու Առաքյալների Քվորումից

Կատարել իմաստուն ընտրություն

«Չարը մերժել եւ լաւը ընտրել» (Եսայիա Է.15):

Իմ սիրելի եղբայրներ, այս երեկո ես ցանկանում եմ կիսել ձեզ հետ որոշ խորհուրդներ որոշումների և ընտրությունների մասին:

Երբ ես երիտասարդ իրավաբան էի Սան Ֆրանցիսկո Բեյ տարածաշրջանում, մեր ընկերությունը որոշ իրավաբանական աշխատանք էր կատարում մի կազմակերպության համար, որը հանգստյան օրերին հեռուստատեսությամբ ներկայացնում էր Չարլի Բրաուն հատուկ թողարկումը:[1] Ես դարձա Չարլզ Շուլսի և նրա հերոսների՝ *Փինաթսի,* Չարլի Բրաունի, Լյուսիի, Մնուփիի և այլ հիանալի հերոսների երկրպագուն:

Իմ սիրած զավեշտներից մեկը ներգրավում էր Լյուսիին: Հիշում եմ, Չարլի Բրաունի բեյսբոլի թիմը կարևոր խաղ էր խաղում: Լյուսին խաղում էր աջ դաշտում և բարձր թռչող գնդակն ուղղվել էր նրան: Դա գնդակի ինը հերթական նետումներից վերջինն էր: Եթե Լյուսին բռներ գնդակը, նրա թիմը կհաղթեր: Եթե Լյուսին չբռներ գնդակը, մյուս թիմը կհաղթեր:

Ինչպես կարող է պատահել միայն զավեշտալի տեսարանում, ողջ թիմը շրջապատել էր Լյուսիին, երբ գնդակը ցած իջավ: Լյուսին մտածում էր. «Եթե ես բռնեմ գնդակը, ես հերոս կդառնամ, եթե ոչ, ես կդառնամ քավության նոխազ»:

Գնդակը ցած իջավ, և մինչ նրա թիմակիցներն անհամբերությամբ դիտում էին, Լյուսին չբռնեց գնդակը: Չարլի Բրաունը վրդովված ցած նետեց իր ձեռնոցը: Ապա Լյուսին նայեց իր թիմակիցներին, ձեռքերը դրեց կոնքերին և ասաց. «Ինչպե՞ս էիք ակնկալում, որ ես բռնեի գնդակը, երբ ինձ անհանգստացնում է մեր երկրի արտաքին քաղաքականությունը»:

Սա բազմաթիվ թռչող գնդակներից մեկն էր, որ տարիների ընթացքում Լյուսին չէր կարողացել բռնել, և նա նոր արդարացումներ ուներ ամեն անգամ:[2] Մինչդեռ դրանք միշտ զավեշտալի էին, Լյուսիի արդարացումները պատճառաբանություններ էին. դրանք անիմն պատճառներ էին նրա գնդակը չբռնելու համար:

Իր ծառայության ընթացքում Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հաճախ է ուսուցանել, որ որոշումներից է կախված ճակատագիրը:[3] Այդ ոգով իմ խորհուրդն է այս երեկո վեր կանգնել ցանկացած պատճառաբանություններից, որոնք խոչընդոտ են հանդիսանում մեզ համար կայացնելու արդար որոշումներ, հատկապես Հիսուս Քրիստոսին ծառայելու հարցում: Եսայիայի գրքում մենք սովորում ենք, որ պետք է «չարը մերժել եւ լաւը ընտրել»:[4]

Ես կարծում եմ, որ հատկապես կարևոր է մեր օրերում, երբ Սատանան մոլեգնում է մարդկանց սրտերում բազմաթիվ նոր և աննկատ եղանակներով, որ մեր ընտրությունները և որոշումները զգուշությամբ կատարվեն, համատեղելի լինելով նպատակների հետ, որոնցով մենք հայտարարում ենք, թե ապրում ենք: Մենք պետք է մեծ վճռականությամբ պահենք պատվիրանները և խիստ նվիրվածություն ցուցաբերենք սրբազան ուխտերի հանդեպ: Երբ մենք թույլ ենք տալիս, որ պատճառաբանությունները խոչընդոտեն մեր տաճարային օժտմանը, արժանի միսիաներին և տաճարային ամուսնությանը, դրանք խիստ վնասակար են դառնում: Ցավալի է, երբ մենք հայտարարում ենք, թե հավատում ենք այս նպատակներին, սակայն ուշադրություն չենք դարձնում ամենօրյա վարքագծին, որն անհրաժեշտ է դրանց հասնելու համար:[5]

Որոշ երիտասարդներ հայտարարում են, որ իրենց նպատակն է ամուսնանալ տաճարում, սակայն չեն ժամադրվում տաճարին արժանի անհատների հետ: Եթե անկեղծ լինենք, ոմանք նույնիսկ չեն էլ ժամադրվում: Դուք, երիտասար տղամարդիկ, որքան երկար ամուրի մնաք համապատասխան տարիքից և հասունացումից հետո, այնքան ավելի ու ավելի կհարմարվեք դրան: Սակայն դա ձեզ համար ավելի *անհարմարպետք է* դառնա: Ջերմեռանդորեն ներգրավվեք[6] հոգևոր և հասարակական միջոցառումներում, որոնք համապատասխանում են տաճարային ամուսնության ձեր նպատակներին:

Ոմանք հետաձգում են ամուսնությունը մինչև ուսումն ավարտելը և աշխատանք գտնելը: Մինչդեռ սա մեծապես ընդունված է աշխարհում,

այս պատճառաբանությունը հավատք չի ցուցաբերում, չի համապատասխանում ժամանակակից մարգարեների խորհրդին և համահունչ չէ վարդապետության հետ:

Ես վերջերս հանդիպեցի մի լավ պատանու: Նրա նպատակներն էին՝ միսիա գնալը, կրթություն ստանալը, տաճարում ամուսնանալը և հավատարիմ ու երջանիկ ընտանիք ունենալը: Ինձ շատ դուր եկան նրա նպատակները: Սակայն հետագա խոսակցության ընթացքում ակնհայտ դարձավ, որ նրա վարքը և կատարած ընտրությունները չէին համապատասխանում նրա նպատակներին: Ես զգացի, որ նա իսկապես ուզում էր գնալ միսիա և խուսափում էր լուրջ օրինազանցություններից, որոնք արգելք կհանդիսանային միսիայի համար, սակայն նրա ամենօրյա վարքը չէր նախապատրաստում նրան ֆիզիկական, էմոցիոնալ, հասարակական, ինտելեկտուալ և հոգևոր մարտահրավերներին, որոնց նա կհանդիպեր:[7] Նա չէր սովորել ջանասիրաբար աշխատել: Նա լուրջ չէր վերաբերվում ուսմանը և սեմինարիային: Նա հաճախում էր եկեղեցի, սակայն չէր կարդացել Մորմոնի Գիրքը: Նա շատ ժամանակ էր ծախսում վիդեո խաղերի և հասարակական լրատվամիջոցների վրա: Կարծես թե նա մտածում էր, որ բավական կլիներ պարզապես միսիա գնալը: Երիտասարդ տղամարդիկ, խնդրում ենք, պարտավորվեք արժանի վարք դրսևորել և լրջորեն նախապատրաստվեք լինելու մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի ներկայացուցիչները:

Ինձ անհանգստացնում են ոչ միայն կարևորագույն որոշումները, այլ նաև ոչ այնքան կարևոր թվացողները, ամենօրյա կյանքը և հասարակ թվացող որոշումները, որոնց վրա մենք ծախսում ենք մեր ժամանակի մեծ մասը: Այս ոլորտներում մենք պետք է ցուցաբերենք զսպվածություն, հավասարակշռություն և հատկապես իմաստություն: Կարևոր է վեր կանգնել պատճառաբանություններից և կատարել լավագույն ընտրությունները:

Զսպվածության, հավասարակշռության և իմաստության անհրաժեշտության հրաշալի օրինակ է հանդիսանում համացանցից օգտվելը: Այն կարող է օգտագործվել միսիոներական աշխատանք կատարելու համար, քահանայության պարտականություններ կատարելու համար, տաճարային սուրբ արարողությունները կատարելու համար թանկագին նախնիներին գտնելու և շատ այլ բաների համար: Բարիք գործելու հնարավորությունները շատ մեծ են: Մենք նաև գիտենք, որ այն կարող է հաղորդել շատ բաներ, որոնք չարիք են, ներառյալ մերկագրությունը, բռնությունը[8] և անանուն շատախոսելը: Այն կարող է նաև անընդհատ առաջ բերել հիմար մտքեր ու արարքներ: Ինչպես Եղբայր Ռանդալ Լ. Ռիդն ուսուցանեց զորեղ կերպով վերջին գերագույն համաժողովի ժամանակ, խոսելով համացանցի մասին. «Դուք կարող եք ընկնել անվերջ թվով անկարևոր բաների թակարդը, որոնք կվատնեն ձեր ժամանակը և կպակասեցնեն ձեր ներուժը»:[9]

Արդարությունից շեղող և արդարությանն ընդդիմացող երևույթներն առկա են ոչ միայն համացանցում. դրանք ամենուր են: Դրանք ազդում են ոչ միայն երիտասարդների վրա, այլ նաև բոլորիս վրա: Մենք ապրում ենք մի աշխարհում, որը բառիս բուն իմաստով խառնաշփոթի մեջ է:[10] Մենք շրջապատված ենք «զվարճության և խաղերի» հետապնդող պատկերներով և բարոյազուրկ և անգործունյա կյանքով: Սրանք ներկայացված են որպես նորմալ վարք լրատվամիջոցներից շատերում:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը վերջերս զգուշացրեց անդամներին օգտվել հավաստի հասարակական լրատվամիջոցներից:[11] Արթուր Ս. Բրուքսը, ով հայտնի է իր մտքերով, շեշտել է այս կետը: Նա նշում է, որ երբ օգտվում ենք հասարակական լրատվամիջոցներից, մենք հակված ենք հաղորդելու մեր կյանքի դրական մանրամասները, բայց ոչ դպրոցի կամ աշխատավայրի բարդությունները: Մենք նկարագրում ենք ոչ ամբողջական կյանքը, երբեմն ներկայացնելով մեզ հաճելի բաներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Մենք կիսվում ենք այս կյանքով և ապա հետաքրքրվում «հասարակական լրատվամիջոցներում գտնվող [մեր] «ընկերների» գրեթե բացառապես . . . կեղծ կյանքերով»: Բրուքսը հիմնավորում է. «Ինչպես դուք կարող եք ավելի վատ չզգալ ձեզ, երբ ձեր ժամանակի մի մասը ծախսում եք երևակայելով, թե ավելի երջանիկ եք, քան իրականում կաք, և ձեր ժամանակի մյուս մասը տեսնելով, թե որքան ավելի երջանիկ են թվում ուրիշները, քան դուք»:[12]

Երբեմն թվում է, թե մենք ընկղմվում ենք արժեզուրկ բաների, անզգայացնող աղմուկի և անվերջ շարունակվող վիճաբանությունների մեջ: Երբ մենք հեռացնում ենք այդ ձայները և քննում դրանց էությունը, շատ քիչ բան կա, ինչը կաջակցի մեզ արդար նպատակներին հետամուտ լինելու մեր հավերժական որոնումներում: Մի հայր

իմաստությամբ պատասխանել է ուշադրությունը շեղող այս բաներին մասնակցելու իր զավակների բազմաթիվ խնդրանքներին. «Մա կդարձնի՞ ձեզ ավելի լավ մարդ»:

Երբ մենք պատճառաբանություններ ենք գտնում սխալ ընտրությունների համար, լինեն դրանք մեծ թե փոքր, որոնք հակասում են վերականգնված ավետարանին, մենք կորցնում ենք օրհնությունները և պաշտպանությունները, որոնց կարիքը մենք ունենք, և հաճախ ընկնում ենք մեղքի ծուղակը կամ պարզապես կորցնում մեր ճանապարհը:

Ինձ հատկապես մտահոգում է անզգամությունը[13] և «ամեն նոր բանով» համակված լինելը: Եկեղեցում մենք խրախուսում և գովերգում ենք ճշմարտությունը և ամեն տեսակի գիտելիքը: Սակայն երբ մշակույթը, գիտելիքը և հասարակական այլ բաները առանձնանում են Աստծո երջանկության ծրագրից և Հիսուս Քրիստոսի առանցքային դերից, հասարակության քայքայումն անխուսափելի է դառնում:[14] Մեր օրերում, չնայած շատ ոլորտներում ունեցած աննախադեպ ձեռքբերումներին, հատկապես գիտության և կապի միջոցների ոլորտում, հիմնական կարևորագույն արժեքները արժեքազրկվել են և երջանկությունն ու բարեկեցությունն ընդհանուր առմամբ նվազել են:

Երբ Պողոս Առաքյալը Աթենքում հրավիրվել էր խոսելու Արիսպագոսում, նա ոմանց մոտ նկատեց նույն կեղծ մտածելակերպը և ճշմարիտ իմաստության բացակայությունը, որը գոյություն ունի այսօր:[15] Գործք Առաքելոցում մենք կարդում ենք հետևյալը. «Որովհետեւ բոլոր Աթենացիք եւ այն տեղ կենող օտարները՝ ուրիշ ոչ մի բանի չէին պարապում, բայց միայն որ նոր բան ասեն կամ լսեն»:[16] Պողոսը շեշտում էր Հիսուս Քրիստոսի Հարությունը: Երբ ամբոխը հասկացավ նրա ուղերձի կրոնական էությունը, ոմանք ծաղրեցին նրան, ուրիշներն էլ հիմնականում չընդունեցին նրան, ասելով. «Այդ բանի համար քեզանից դարձեալ կլսենք»:[17] Պողոսը հեռացավ Աթենքից *առանց որևէ հաջողության հասնելու:* Դին Ֆրեդերիկ Ֆարրարը գրել է այս այցելության մասին. «Աթենքում նա եկեղեցի չհիմնեց, աթենացիներին նա ոչ մի թուղթ չգրեց, և Աթենք նա երբեք այլևս ոտք չդրեց, չնայած որ հաճախ էր լինում հարևան երկրներում»:[18]

Ես կարծում եմ, որ Երեց Դալլին Հ. Օուքսի ոգեշնչված ուղերձը, որը զանազանում էր «լավ, ավելի լավ, ամենալավ» գաղափարներն իրարից, արդյունավետ եղանակ է ապահովում ընտրություններն ու առաջնահերթությունները գնահատելու համար:[19] Շատ ընտրություններ չար չեն իրենց էությամբ, սակայն եթե դրանք կլանում են մեր ողջ ժամանակը և մեզ հեռու են պահում լավագույն ընտրություններից, ապա դրանք դառնում են աննկատելի մոտեցող վտանգներ:

Նույնիսկ արժանի ջանքերը գնահատման կարիք ունեն, որպեսզի որոշենք, թե արդյոք դրանք շեղում են մեզ լավագույն նպատակներից: Ես ունեցել եմ հիշարժան զրույց իմ հոր հետ, երբ ես պատանի էի: Նա չէր կարծում, որ բավականաչափ երիտասարդներ կենտրոնացած էին տևական կարևոր նպատակների վրա կամ պատրաստվում էին դրանց համար, ինչպես օրինակ աշխատանքը և ընտանիքներին ապահովելը:

Իմաստալից ուսումնասիրությունը և նախապատրաստական աշխատանքային փորձառությունը միշտ եղել են իմ հոր խորհուրդ տված առաջնահերթությունների սկզբում: Նա գնահատում էր այդ արտաուսումնական միջոցառումները, ինչպես օրինակ բանավիճելը, և ուսանողական խորհուրդը կարող էր ուղիղ կապ ունենալ իմ որոշ կարևոր նպատակների հետ: Նա կարծում էր, որ ես չափից ավելի շատ ժամանակ էի տրամադրում ֆուտբոլ, բասկետբոլ, բեյսբոլ խաղալու և վազքով զբաղվելու համար: Նա ընդունում էր, որ սպորտի միջոցով մարդը կարող է ուժ, տոկունություն և համատեղ աշխատելու ունակություն ձեռք բերել, սակայն պնդում էր, որ հավանաբար մեկ սպորտի վրա կենտրոնանալը կարճ ժամանակով ավելի լավ կլիներ: Նրա կարծիքով սպորտը լավ բան էր, սակայն ոչ լավագույնը *ինձ համար:* Նա մտահոգվում էր, որ որոշ սպորտաձևեր սկսում էին առաջ բերել համբավ ավելի կարևոր տևական նպատակների փոխարեն:

Ելնելով իմ ունեցած փորձառությունից, պատճառներից մեկը, որ ես սիրում եմ բեյսբոլ խաղալու Լյուսիի պատմությունը, այն է, որ հայրս կարծում էր, որ ես պետք է ուսումնասիրեի արտաքին քաղաքականություն և չմտահոգվեի, թե արդյոք կարողանալու էի բռնել գնդակը: Ես պետք է նշեմ նաև, որ մայրս սիրում էր սպորտը: Եթե նա ներկա չէր գտնվում իմ խաղերից որևէ մեկին, պատճառը կարող էր լինել միայն հիվանդանոցում լինելը:

Ես որոշեցի հետևել իմ հոր խորհրդին և չմասնակցել քոլեջի սպորտային խաղերին: Ապա մեր ավագ դպրոցի ֆուտբոլի մարզիչը տեղեկացրեց ինձ, որ Ստանֆորդի ֆուտբոլի մարզիչը ցանկանում էր ճաշել Մերլին Օլսենի և իմ հետ: Ձեզանից նրանք, ովքեր ավելի երիտասարդ են, միգուցե չճանաչեն Մերլինին: Նա մրցակցից գնդակը խլողներից լավագույններից էր ողջ Ամերիկայում, ով խաղում էր Լոգանի ավագ դպրոցի ֆուտբոլի

թիմում, որտեղ ես խաղում էի որպես գնդակ նետող ու պաշտպան, և գնդակը բռնելով վազում էի դեպի նպատակակետը: Ավագ դպրոցի տարիներին ֆուտբոլի լավագույն թիմերից շատերը համոզում էին Մերլինին խաղալ իրենց թիմում ողջ երկրով մեկ: Քոլեջում նա արժանացավ Աութլենդ մրցանակի որպես ազգային լավագույն խաղացող: Ի վերջո, Մերլինը երրորդն էր, ում ընտրեցին Ֆուտբոլի Ազգային Լիգայում խաղալու համար և կատարեց 14 հաջորդական հրաշալի նետումներ: 1982թ. նա դարձավ ֆուտբոլի պրոֆեսիոնալ խաղացողների թիմի անդամ:[20]

Ստենֆորդի մարզչի հետ ճաշը տեղի ունեցավ Բլուբրդ ռեստորանում Լոգանում, Յուտա: Ձեռքսեղմումից հետո նա այլևս ոչ մի անգամ չնայեց ինձ վրա: Նա խոսում էր միայն Մերլինի հետ և ուշադրություն չէր դարձնում ինձ վրա: Ճաշի վերջում առաջին անգամ նա շրջվեց իմ կողմը, սակայն նա չէր կարողանում հիշել իմ անունը: Ապա նա տեղեկացրեց Մերլինին. «Եթե դու ընտրես Ստանֆորդը և ցանկանաս քո ընկերոջն էլ բերել, նա ունի բավականաչափ լավ գնահատականներ և հավանաբար կարող ենք ընդունել նրան»: Այս փորձառությունը հաստատեց այն փաստը, որ ես պետք է հետևեի իմ հոր իմաստուն խորհրդին:

Իմ նպատակը չի կայանում նրանում, որ համոզեմ չզբաղվել սպորտով կամ չօգտվել համացանցից կամ չմասնակցել այլ պատշաճ միջոցառումների, որոնք երիտասարդները վայելում են: Դրանք այնպիսի միջոցառումներ են, որոնք պահանջում են չափավորություն, հավասարակշռություն և իմաստություն: Երբ իմաստությամբ են կիրառվում, դրանք հարստացնում են մեր կյանքը:

Այնուամենայնիվ, ես խրախուսում եմ յուրաքանչյուրին, երիտասարդ թե ծեր, վերանայել նպատակները և ձգտել կիրառել ավելի մեծ կարգապահություն: Մեր ամենօրյա վարքը և ընտրությունները պետք է համապատասխանեն մեր նպատակներին: Մենք պետք է վեր կանգնենք պատճառաբանություններից և ուշադրությունը շեղող բաներից: Հատկապես կարևոր է կատարել ընտրություններ, որոնք համապատասխանում են Հիսուս Քրիստոսին արդարությամբ ծառայելու մեր ուխտերին:[21] Մենք չպետք է շեղենք մեր աչքերը նպատակակետից կամ չբռնենք այդ գնդակը որևէ պատճառով:

Այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն:[22] Մենք երջանիկ, ուրախ մարդիկ ենք: Մենք գնահատում ենք լավ հումորի զգացումը և ընկերների և ընտանիքի հետ անցկացրած ժամանակը: Սակայն մենք պետք է հասկանանք նպատակի լրջությունը, որը պետք է լինի մեր ապրելակերպի և բոլոր ընտրությունների հիմքը: Նպատակակետից շեղվելը և պատճառաբանությունները, որոնք սահմանափակում են առաջընթացը, բավականին վնասակար են, սակայն երբ դրանք պակասեցնում են հավատքն առ Հիսուս Քրիստոսը և Նրա Եկեղեցին, դրանք ողբերգական են դառնում:

Իմ աղոթքն է, որ որպես քահանայություն կրողներ մեր վարքը համապատասխանի վեհ նպատակներին, որոնք պահանջվում են նրանցից, ովքեր ծառայում են Ուսուցչին: Բոլոր բաներում մենք պետք է հիշենք, որ «Հիսուս Քրիստոսի վկայության մեջ» անվեհեր լինելը մեծ փորձությունն է, որից բխելու է բաժանումը սելեստիալ և թերեստրիալ արքայությունների միջև[23]: Մենք ցանկանում ենք այդ բաժանումից հետո գտնվել սելեստիալ կողմում: Որպես Նրա Առաքյալներից մեկը, ես ջերմեռանդորեն բերում եմ իմ վկայությունը Քավության իրական լինելու մասին և Հիսուս Քրիստոսի՝ մեր Փրկչի աստվածային էության մասին: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լի Մենդելսոն-Բիլ Մելենդեզ հեռուստատեսային ծրագիր:
2. Սատուրնի արբանյակների շեղումներով, իր ձեռնոցների վրա գտնվող հնարավոր թունավոր նյութերով էր Լյուսին միշտ պատճառաբանում, թե ինչու նա չէր բռնում գնդակը:
3. Տես «Որոշումներից է կախված ճակատագիրը», գլուխ 8 *Կատարելագործվելու ուղին. Թոմաս Ս. Մոնսոնի քննարկումները* (1973), 57–65:
4. Եսայիա Է.15:
5. «Եթե անելը նույնքան դյուրին լիներ, որքան ուսուցանելը, թէ ի՛նչ պետք է անել, մատուռները եկեղեցի եղած կլինեին, և խեղճ մարդկանց խրճիթները՝ իշխանական պալատներ» (Վիլյամ Շեքսպիր, *Վենետիկի վաճառականը* գործողություն 1, տեսարան 2, 12–14 տող):
6. Վարդապետություն և Ուխտեր 58.27:
7. Տես *Հարմարվել միսիոներական կյանքին* (գրքույկ), 23–49:
8. Տես Stephanie Rosenbloom, "Dealing with Digital Cruelty," *New York Times,* Aug. 24, 2014, SR1:
9. Ռանդալ Լ. Ռիդ, «Ընտրություն ունեցող սերունդ», *Լիահոնա,* մայիս 2014, 56:
10. Տես Վարդապետություն և Ուխտեր 45.26:
11. Տես Դեյվիդ Ա. Բեդնար, "To Sweep the Earth as with a Flood" (speech delivered at BYU Campus Education Week, Aug. 19, 2014), lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/to-sweep-the-earth-as-with-a-flood:
12. Arthur C. Brooks, "Love People, Not Pleasure," *New York Times,* July 20, 2014, SR1.
13. Ցավոք, ուշադրությունը շեղող բաներից մեկը, որ տարածված է մեր օրերում, անզգամությունն է: Երբ Փրկիչը թվարկում էր որոշ բաներ, որոնք կարող են պղծել մարդուն, Նա նշեց նաև անզգամությունը (տես Մարկոս Է.22):
14. Սա պատահել է ինչպես Հունաստանում և Հռոմում, այնպես էլ Մորմոնի Գրքի քաղաքակրթություններում:
15. Տես Ֆրեդերիկ Վ. Ֆարրար, *Սուրբ Պողոսի կյանքը և գործը* (1898), 302: Կային ամեն տեսակի փիլիսոփաներ, ներառյալ էպիկուրյաններ և ստոյիկներ, հակառակորդ խմբեր, որոնց ոմանք նկարագրել են որպես փարիսեցիներ և սադուկեցիներ հեթանոսական աշխարհում: Տես նաև Քվենթին Լ. Քուք, «Նայելով նշանակետից այն կողմ», *Լիահոնա,* մարտ 2003, 21–24:
16. Գործք Առաքելոց ԺԷ.21:
17. Գործք Առաքելոց ԺԷ.32:
18. Ֆարրար, *Սուրբ Պողոսի կյանքը և գործը,* 312:
19. Տես Դալլին Հ. Օուքս, «Լավ, ավելի լավ, ամենալավ», *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 104–8:
20. Մերլին Օլսենը եղել է համալսարանի ուսանողների շրջանում հանրաճանաչ ֆուտբոլ խաղացող, դերասան և ԱՖԼ-ի մեկնաբան NBC-ում: Նա արժանացել է Outland մրցանակի՝ ֆուտբոլ խաղալով Յուտա Նահանգի Համալսարանի թիմում: Նա խաղացել է պրոֆեսիոնալ ֆուտբոլ Լոս Անջելեսի Ռեյմս թիմում: Հեռուստատեսությամբ նա խաղացել է Ջոնաթան Գարվին Մայքլ Լանդոնի դեմ *Little House on the Prairie*-ում և ուներ իր սեփական հեռուստատեսային ծրագիրը՝ *Հայդ Մլդֆի:* Մերլինը մահացել է (մարտ 11, 2010թ.), և մենք շատ ենք կարոտում նրան:
21. Տես Վարդապետություն և Ուխտեր 76.5:
22. Տես Ալմա 34.32:
23. Վարդապետություն և Ուխտեր 76.79:

Երեց Քրեյգ Ք. Քրիսչենսեն
Յոթանասունի նախագահությունից

Ես ինքս գիտեմ այս բաները

Իմանալով, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ճշմարիտ է, մեզ համար կարող է լինել ամենամեծ և ամենաուրախալի փորձառություններից մեկը:

Իմ սիրելի եղբայրներ, մենք շարունակաբար ոգեշնչվում ենք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի անձնական օրինակով և քահանայության ծառայությունով: Վերջերս մի քանի սարկավագների հարց էր տրվել. «Ամենից շատ Նախագահ Մոնսոնի մեջ ի՞նչն եք սիրում»: Մի սարկավագ վերհիշեց, թե ինչպես մանուկ ժամանակ Նախագահ Մոնսոնը իր խաղալիքները տվել է կարիքավոր ընկերներին: Մյուսը նշեց, թե ինչպես է Նախագահ Մոնսոնը հոգ տարել իր ծխի այրիների մասին: Երրորդը նկատեց, որ նա առաքյալ է կանչվել շատ վաղ հասակում և օրհնել ամբողջ աշխարհի մարդկանց: Այնուհետև մի պատանի ասաց. «Այն, ինչ ամենից շատ սիրում եմ Նախագահ Մոնսոնի մեջ, դա իր վկայությունն է»:

Իրոք, մենք բոլորս զգացել ենք Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր մարգարեի հատուկ վկայությունը և մշտապես հոգու հուշումներին հետևելու նրա հավատարմությունը: Իր ներկայացրած յուրաքանչյուր փորձառությամբ Նախագահ Մոնսոնը մեզ հրավիրում է ավելի լիարժեք ձևով ապրել ավետարանով և փնտրել ու ամրապնդել մեր անձնական վկայությունները: Հիշեք, թե ինչ ասաց նա այս բեմից ընդամենը մի քանի համաժողով առաջ. «Որպեսզի լինենք ուժեղ և դիմակայենք սխալ ուղղությամբ մեզ քաշող ուժերին . . . , մենք պետք է ունենանք մեր անձնական վկայությունը: Լինեք 12 թե 112 տարեկան, դուք կարող եք ինքներդ իմանալ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է»:[1]

Չնայած որ իմ ուղերձն ուղղված է նրանց, ովքեր մոտ են 12-ին, ոչ թե 112-ին, սկզբունքները, որոնցով կիսվելու եմ, վերաբերվում է բոլորին: Նախագահ Մոնսոնի ասածին ի պատասխան, ես կհարցնեի. Արդյո՞ք մեզանից յուրաքանչյուրը գիտի, որ ավետարանը ճշմարիտ է: Կարո՞ղ ենք վստահորեն ասել, որ մեր վկայություններն իսկապես մերն են: Կրկին անգամ մեջբերում անեմ Նախագահ Մոնսոնից. «Ես պնդում եմ, որ մեր Փրկչի և Նրա ավետարանի մասին ուժեղ վկայությունը կպահպանի ձեզ շրջապատող մեղքից և չարից: . . . Եթե դուք դեռևս չունեք վկայություն այդ բաների վերաբերյալ, արեք ամեն անհրաժեշտը այն ձեռք բերելու համար: Կարևոր է ձեզ համար, որ դուք ունենաք ձեր անձնական վկայությունը, քանի որ ուրիշների վկայությունները ձեզ կհանգեցնեն մի որոշակի սահմանագծի»:[2]

Ես ինքս գիտեմ այս բաները

Ինքներս մեզ համար իմանալով, որ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ճշմարիտ է, կարող է լինել կյանքի ամենամեծ և ամենաուրախալի փորձառություններից մեկը: Մենք կարող ենք սկսել դա հիմնվելով այլոց վկայությունների վրա, ինչպես արեցին քաջարի մարտիկները. «Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա»:[3] Սկսելու համար դա լավ է, սակայն մենք պետք է կառուցենք դրա վրա: Որպեսզի ուժեղ լինենք ավետարանով ապրելու համար, չկա ավելի կարևոր բան, քան մեր անձնական վկայություն ստանալն ու ամրապնդելն է: Մենք պետք է կարողանանք ասել այն ինչ Ալման ասեց. «Ես . . . ինքս գիտեմ այս բաները»:[4]

«Եվ ի՞նչ եք դուք կարծում, ինչպե՞ս ես գիտեմ դրանց հավաստիության մասին»: Ալման շարունակում է: «Ահա ես ասում եմ ձեզ՝ դրանք հայտնի են դարձվել ինձ Աստծո Սուրբ Հոգու կողմից: Ահա, ես ծոմ եմ պահել ու աղոթել շատ օրեր, որ ես ինքս կարողանայի իմանալ այս բաները: Եվ այժմ, ես ինքս գիտեմ, որ դրանք ճշմարիտ են»:[5]

Ես փափագում եմ տեսնել այն բաները, որոնք տեսել է հայրս

Ալմայի նման Նեփին նույնպես ճշմարտությունն իր համար իմացավ: Իր հոր բազմաթիվ հոգևոր փորձառությունների մասին լսելուց հետո, Նեփին ցանկանում էր իմանալ այն բաները, որոնք իր հայրը գիտեր: Դա սոսկ պարզ հետաքրքասիրություն չէր, այլ մի բան, որը հետագայում նա շատ էր փափագում: Թեպետ նա «չափազանց երիտասարդ էր», նա ուներ «մեծ իղձեր՝ իմանալու Աստծո խորհուրդները»:[6] Նա փափագում էր «տեսնել և լսել, և

իմանալ այս բաների մասին Սուրբ Հոգու զորությամբ»:[7]

Երբ Նեփին «նստած խորհում [էր իր] սրտում», նա տարվեց «Տիրոջ Հոգով հեռու, . . . մի չափազանց բարձր լեռ», որտեղ նրան հարց տրվեց՝ «Ի՞նչ ես փափագում դու»: Նրա պատասխանը պարզ էր՝ «Ես փափագում եմ տեսնել այն բաները, որոնք տեսել է հայրս»:[8] Իր հավատացող սրտի և իր ջանասեր ջանքերի շնորհիվ Նեփին օրհնվեց մի հրաշալի փորձառությամբ: Նա վկայություն ստացավ Փրկիչ Հիսուս Քրիստոսի գալիք ծննդյան, կյանքի և խաչելիության վերաբերյալ: Նա տեսավ Մորմոնի Գրքի ի հայտ գալը և վերջին օրերում ավետարանի վերականգնումը, բոլոր այդ բաները՝ ինքնուրույն իմանալու նրա անկեղծ ցանկության արդյունք էին:[9]

Տիրոջ հետ Նեփիի այդ անձնական փորձառությունը Նեփիին նախապատրաստեց այն չարիքի ու դժվարություններիհամար, որոնց նա շուտով բախվելու էր: Դրանք նրան թույլ տվեցին ամուր կանգնել նույնիսկ այն ժամանակ, երբ իր ընտանիքի մյուս անդամները մաքառում էին: Նա կարողացավ դա անել, քանի որ ինքն էր *սովորել* և *իմացել* դա: Նա օրհնվել էր իր անձնական վկայությամբ:

Թող խնդրե Աստուածանից

Նեփիի նման Մարգարե Ջոզեֆ Սմիթը նույնպես «չափազանց երիտասարդ էր», երբ նրա «միտքը համակված էր լուրջ մտախոհությամբ» հոգևոր ճշմարտությունների վերաբերյալ: Ջոզեֆի համար դա «ծայրագույն դժվար կացության» պահ էր՝ շրջապատված լինելով կրոնի վերաբերյալ իրար հակասող և շփոթեցնող ուղերձներով: Նա ցանկանում էր իմանալ, թե որ եկեղեցին է ճշմարիտ:[10] Աստվածաշնչյան այս խոսքերով ոգևորված լինելով. «Բայց եթէ մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի, թող խնդրէ Աստուածանից»[11], նա գործեց ինքնուրույն պատասխանը գտնելու համար: 1820թ. գարնանային մի գեղեցիկ առավոտ, նա առանձնացավ պուրակում և ծնկի իջավ աղոթելու: Նրա հավատքի շնորհիվ և շնորհիվ նրա, որ Աստված հատուկ գործ ուներ նրա համար պատրաստած, Ջոզեֆը տեսավ Հայր Աստծո և Նրա Որդի, Հիսուս Քրիստոսի մի փառահեղ տեսիլք և իմացավ, թե ինչ պետք է աներ:

Տեսնո՞ւմ եք արդյոք Ջոզեֆի փորձառության մեջ այն օրինակը, որին դուք կարող եք հետևել՝ ստանալու կամ ամրապնդելու համար ձեր վկայությունը: Ջոզեֆը թույլ տվեց, որպեսզի սուրբ գրությունները թափանցեն նրա սիրտը: Նա խորապես խորհեց դրանց մասին և կիրառեց դրանք իր անձնական իրավիճակում: Այնուհետև նա գործեց ըստ իր սովորածի: Արդյունքը՝ փառահեղ առաջին տեսիլքն էր և այն ամենը, ինչը հետևեց դրան: Այս Եկեղեցին բառացիորեն հիմնադրվել է այն սկզբունքի վրա, որ յուրաքանչյուր ոք, այդ թվում 14 տարեկան գյուղացի տղան, կարող է «հարցնել Աստծուն» և ստանալ իր աղոթքների պատասխանը:

Այսպիսով՝ ի՞նչ է վկայությունը:

Մենք հաճախ ենք լսում Եկեղեցու անդամներից այն, որ իրենց վկայությունն ավետարանի հանդեպ իրենց ամենագնահատված սեփականությունն է: Դա Աստծո կողմից տրված սրբազան ընծա է, որը մեզ է հասնում Սուրբ Հոգու զորության շնորհիվ: Այն հանդարտ, անսասան վստահություն է, որը մենք ստանում ենք, երբ ուսումնասիրում, աղոթում և ապրում ենք ավետարանով: Այն մի զգացում է, որը Սուրբ Հոգին վկայում է մեր հոգիներին, որ այն ամենն ինչ իմանում և անում ենք ճշմարիտ է:

Որոշ մարդիկ վկայության մասին խոսում են կարծես թե այն լույսի անջատիչ է՝ կամ միացված է կամ էլ անջատված: Դուք կամ ունեք վկայություն կամ չունեք այն: Իրականում վկայությունը կարծես ծառ լինի, որն անցնում է աճի և զարգացման տարբեր փուլերով: Երկրի վրա գոյություն ունեցող ամենաերկար ծառերն աճում են Ռեդվուդ Ազգային պարկում, արևմտյան Միացյալ Նահանգներում: Երբ կանգնում եք այդ հսկա ծառերի տակ, զարմանալի է մտածել, որ դրանցից յուրաքանչյուրն աճել է մի փոքրիկ սերմից: Դա նույնն է մեր վկայությունների դեպքում: Չնայած որ նրանք կարող են սկիզբ առնել մեկ հոգևոր փորձառությունից, նրանք ժամանակի ընթացքում աճում և զարգանում են հաստատուն սնուցման և հաճախակի հոգևոր փորձառությունների շնորհիվ:

Այդուհանդերձ զարմանալի չէ, որ երբ մարգարե Ալման բացատրեց, թե ինչպես զարգացնել վկայությունը, նա խոսեց այն մասին, թե ինչպես է սերմն աճում դառնալով ծառ: «Եթե դուք տեղ տաք». նա ասաց, «որ մի սերմ սերմանվի ձեր սրտում, ահա, եթե այն լինի մի ճշմարիտ սերմ կամ մի լավ սերմ, եթե դուք դուրս չգցեք այն ձեր անհավատությամբ, . . . այն կսկսի ուռչել ձեր կրծքում. և երբ դուք զգաք այդ ուռչելու շարժումները, դուք կսկսեք ասել ինքներդ ձեր մեջ.

Քեյփթաուն, Հարավային Աֆրիկա

Պետք է որ անպայման սա լավ սերմ լինի կամ խոսքը լավն է, քանզի այն սկսում է մեծացնել իմ հոգին. այո, այն սկսում է լուսավորել իմ հասկացողությունը, այո, այն սկսում է հրաշալի լինել ինձ համար»:[12]

Սովորաբար, այսպես են վկայությունները սկիզբ առնում. սրբազան, պայծառացնող, հավաստիացնող զգացումներ, որոնք մեզ ապացուցում են, որ Աստծո խոսքը ճշմարիտ է: Այնուամենայնիվ, որքան էլ որ հիանալի լինեն այս զգացումները, դրանք միայն սկիզբն են: Ձեր վկայությունը մեծացնելու աշխատանքն ավարտված չէ, մինչև որ ռեդվուդ ծառի մեծացնելու աշխատանքն ավարտվի, երբ առաջին փոքրիկ բողբոջը ծլարձակի հողի մեջ: Եթե մենք անտեսենք ու մերժենք այս վաղ հոգևոր հուշումները, եթե մենք չսնուցենք նրանց շարունակաբար ուսումնասիրելով սուրբ գրությունները և աղոթենք և փնտրենք ավելի շատ հոգևոր փորձություններ, մեր զգացումները կխամրեն և մեր վկայությունները կնվազեն:

Ինչպես Ալման է ասել. «Բայց, եթե դուք անտեսեք ծառը, և չմտածեք այն սնուցելու մասին, ահա, այն արմատ չի զցի. և երբ արևի տապը գա և խանձի այն, քանի որ այն արմատ չունի՝ այն կչորանա, և դուք կպոկեք այն ու դուրս կգցեք»:[13]

Շատ դեպքերում մեր վկայությունները կաճեն նույն կերպ, ինչպես ծառն է աճում. աստիճանաբար, գրեթե աննկատ որպես արդյունք մեր անդադար խնամքի և տքնաջան ջանքերի: «Բայց, եթե դուք կամենաք սնուցել խոսքը»,- Ալման խոստանում է,- «այո, սնուցել ծառը, երբ այն սկսում է աճել, ձեր հավատքով, մեծ ջանասիրությամբ և համբերությամբ, սպասելով դրա պտղին, որ այն արմատ կգցի. և ահա այն կլինի դեպի հավիտենական կյանք վեր խոյացող մի ծառ»:[14]

Այժմ է պահը, Այսօր է օրը

Իմ անձնական վկայությունը սկիզբ է առել, երբ ես ուսումնասիրեցի Մորմոնի Գրքի ուսմունքները և խորհեցի դրանց շուրջ: Երբ ես խոնարհ աղոթքով ծնկի իջա Աստծո առաջ, Սուրբ Հոգին վկայեց իմ հոգուն, որ այն ամենն ինչ ես կարդում էի ճշմարիտ էր: Այդ վաղ վկայությունը խթան հանդիսացավ բազմաթիվ այլ ավետարանի ճշմարտությունների մասին վկայության համար, քանի որ ինչպես Նախագահ Մոնսոնն է ուսուցանել. «Երբ իմանում ենք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, դրանից հետևում է, որ Ջոզեֆ Սմիթը իսկապես մարգարե էր, և նա տեսել է Աստծուն՝ Երկնային Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին: Ուրեմն դա նշանակում է, որ ավետարանը վերականգնվել է այս վերջին օրերին Ջոզեֆ Սմիթի միջոցով, ներառյալ Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների վերականգնումը»:[15] Այդ օրից ի վեր, ես ունեցել եմ բազմաթիվ սրբազան փորձառություններ Սուրբ Հոգու հետ, որոնք վերահաստատել են, որ Հիսուս Քրիստոսն աշխարհի փրկիչն է, և որ Նրա վերականգնված ավետարանը ճշմարիտ է: Ալմայի հետ միասին ես համոզված կարող եմ ասել, որ ես ինքս գիտեմ այս բաները:

Իմ երիտասարդ ընկերներ, այժմ է պահը և այսօր է այն օրը իմանալու և վերահաստատելու ինքներս մեզ համար, որ ավետարանը ճշմարիտ է: Մեզանից յուրաքանչյուրը կարևոր աշխատանք ունի անելու: Այդ աշխատանքն իրագործելու համար և աշխարհիկ ներգործությունից պաշտպանվելու համար, որը կարծես անընդհատ մշուշոտ է երևում, մենք պետք է ունենանք՝ Ալմայի, Նեփիի և պատանի Ջոզեֆ Սմիթի հավատքը, որպեսզի ստանանք և զարգացնենք մեր անձնական վկայությունը:

Ինչպես պատանի սարկավագը, որի մասին այսօր ավելի վաղ խոսեցի, ես սիրում եմ Նախագահ Մոնսոնին նրա վկայության համար: Այն կարծես նման է շատ բարձր ռեդվուդ ծառի, բայց նույնիսկ Նախագահ Մոնսոնի վկայությունը պետք է աճի և մեծանա ժամանակի ընթացքում: Մենք ինքներս կարող ենք իմանալ, ինչպես Նախագահ Մոնսոնը արեց, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն ու աշխարհի Քավիչն է, որ Ջոզեֆ Սմիթը վերականգնման մարգարեն է, այդ թվում նաև՝ Աստծո քահանայության վերականգնման մարգարեն: Մենք կրում ենք այդ սուրբ քահանայությունը: Թող որ մենք սովորենք և ինքներս իմանանք այդ ամենը, այս է իմ խոնարհ աղոթքը Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀԴՈՒՄՆԵՐ

1. Թոմաս Ս. Մոնսոն, «Խիզախություն ունեցիր կանգնելու միայնակ» *Լիահոնա,* նոյ. 2011, 62:
2. Thomas S. Monson, “Priesthood Power,” *Liahona,* May 2011, 66.
3. Ալմա 56.48:
4. Ալմա 5.46:
5. Ալմա 5.45–46:
6. 1 Նեփի 2.16:
7. 1 Նեփի 10.17:
8. 1 Նեփի 11.1–3:
9. Տես 1 Նեփի 11–14:
10. Տես Ջոզեֆ Սմիթ Պատմություն 1.8–10:
11. Հակոբոս 1.5:
12. Ալմա 32.28:
13. Ալմա 32.38:
14. Ալմա 32.41:
15. Թոմաս Ս. Մոնսոն, *Լիահոնա,* նոյ. 2011, 67:

Եպիսկոպոս Դին Մ. Դեյվիս
Նախագահող Եպիսկոպոսության Երկրորդ Խորհրդական

Ծոմի օրենքը աղքատներին և կարիքավորներին հոգ տանելու անձնական պատասխանատվություն է

Որպես Փրկչի հետևորդներ մենք անձնական պարտավորություն ունենք հոգ տանելու աղքատներին և կարիքավորներին:

Իմ սիրելի եղբայրներ, ես սիրում եմ քահանայությունը, և ես սիրում եմ լինել ձեզ հետ: Ես այնքան խորապես երախտապարտ եմ, որ մենք կարող ենք ծառայել միասին այս հիանալի գործում:

Մենք ապրում ենք նշանավոր ժամանակներում: Բժշկության, գիտության և տեխնոլոգիայի զարմանահրաշ առաջընթացը բարելավել է շատերի կյանքի որակը: Սակայն կան նաև մարդկային տառապանքի և դժբախտության փաստեր: Բացի պատերազմներից և պատերազմների համբավներից, բնական աղետների աճը, ներառյալ ջրհեղեղները, հրդեհները, երկրաշարժերը և հիվանդությունը, ազդում են ողջ աշխարհում միլիոնավոր մարդկանց կյանքի վրա:

Եկեղեցու ղեկավարությունը տեղյակ է և ուշադիր Աստծո զավակների բարօրության վերաբերյալ ամենուրեք: Երբ և որտեղ որ հնարավոր է Եկեղեցու շտապ օգնության ռեսուրսները տրվում են՝ արձագանքելու նրանց, ովքեր կարիքի մեջ են: Օրինակ՝ անցած նոյեմբերին Հայիյան թայֆունը զարկեց Ֆիլիպպինների կղզիաբնակներին:

Հայիյան 5-րդ կարգի թայֆունը վիթխարի ավերումներ առաջացրեց և տառապանք: Ամբողջական քաղաքներ կործանվեցին, շատ կյանքեր կորան, միլիոնավոր տներ խիստ վնասվեցին կամ ավերվեցին, և հիմնական ծառայությունները, ինչպես օրինակ՝ ջրի մատակարարումը, կոյուղին և էլեկտրականությունը դադարեցին գործել:

Եկեղեցու ռեսուրսները մատչելի դարձվեցին այս աղետին հաջորդող առաջին ժամերից: Ֆիլիպպիններում ապրող Եկեղեցու անդամները շտապեցին՝ փրկելու իրենց եղբայրներին և քույրերին՝ ապահովելով ուտելիքով, ջրով, հագուստով և հիգիենայի պարագաների պայուսակներով անդամներին և ոչ անդամներին ևս:

Եկեղեցու ժողովատները դարձան ապաստանավայրեր հազարավոր անտունների համար: Տարածքային Նախագահության և տեղական քահանության առաջնորդների ղեկավարության ներքո, որոնցից շատերը կորցրել էին այն ամենը ինչ ունեին, հետազոտություններ կատարվեցին բոլոր անդամների վիճակի և անվտանգության վերաբերյալ: Ոգեշնչված ծրագրեր սկսեցին ձևավորվել՝ օգնելու անդամներին վերականգնել բավարար ապրելու պայմաններ և ինքնապահովում:

Համեստ ռեսուրսներ տրամադրվեցին Եկեղեցու անդամներին՝

Երբ և որտեղ հնարավոր է, Եկեղեցու ծայրահեղ իրավիճակների համար նախատեսված միջոցները տրամադրվում են օգնելու նրանց, ովքեր կարիքի մեջ են:

օգնելու վերակառուցել իրենց փայտյա օթևաններն ու տները: Սա ուղղակի ձրի նվիրատվություն չէր: Անդամները ստացել էին ուսուցում և կատարում էին անհրաժեշտ աշխատանքը իրենց համար և հետո՝ մյուսների:

Մի օրինություն, որը եկավ, երբ անդամները զարգացնում էին ատաղձագործության, սանտեխնիկայի և այլ շինարարական հմտություններ, նրանք կարողացան ապահովել իմաստալի աշխատանքային հնարավորություններ, երբ մոտակա քաղաքներն ու համայնքները սկսեցին վերակառուցումը:

Աղքատներին ու կարիքավորներին հոգ տանելը ավետարանական հիմնական վարդապետություն է և փրկության հավերժական ծրագրում կարևոր մաս:

Իր մահկանացու ծառայությունից առաջ Եհովան հայտարարեց Իր մարգարեի միջոցով. «Որովհետեւ երկրի միջից աղքատ պակաս չի լինիլ, նորա համար քեզ պատուիրում եմ ու ասում. Ձեռքդ բաց քո երկրումն եղած աղքատ եւ չքավոր եղբօրդ»:[1]

Մեր օրերում աղքատներին և կարիքավորներին հոգ տանելը աստվածայնորեն նշանակված Եկեղեցու չորս պարտականություններից մեկն է, որն օգնում է անհատներին և ընտանիքներին արժանի դառնալ վեհացման համար:[2]

Աղքատներին և կարիքավորներին հոգ տանելը համարվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր փրկություն: Այն ներառում է Եկեղեցու անդամների անձնական ծառայությունը, երբ նրանք անձնապես հոգ են տանում աղքատին և կարիքավորին, ինչպես նաև Եկեղեցու պաշտոնական բարօրությանը, որը սպասավորվում է քահանայության իշխանության միջոցով:

Տիրոջ ծրագրում կենտրոնական տեղ է գրավում աղքատներին և կարիքավորներին հոգ տանելը *ծոմի օրենքի միջոցով:* «Տերը հաստատել է ծոմի օրենքը և ծոմի զոհաբերությունները՝ օրինելու Իր ժողովրդին և ապահովելու նրանց համար մի ուղի ծառայելու նրանց, ովքեր կարիքի մեջ են»:[3]

Որպես Փրկչի հետևորդներ, մենք ունենք անձնական պատասխանատվություն հոգ տանելու աղքատներին և կարիքավորներին: Եկեղեցու հավատարիմ անդամներն ամենուրեք օգնում են ամեն ամիս ծոմ պահելով՝ 24 ժամ հրաժարվելով ուտելիքից և ջրից, իսկ հետո տալով Եկեղեցուն ֆինանսական ծոմի զոհաբերություն, որը հավասար է այն ուտելիքի արժեքին, որը նրանք կծախսեին ուտելու համար:

Եսայիայի խոսքերը պետք է աղոթքով մտածել և ուսուցանել ամեն տանը.

«Ահա սա է ծոմը, որին ես հավանում եմ. Լուծիր անիրաւութեան կապանքները, բաց արա լուծի կոշկոռները, և ջարդուածներին ազատ թող տուր. Եւ ամեն տեսակ լուծ կոտրեցէք:

Այո, հացդ կտրիր տուր սովածի, եւ թափառական խեղճերին տար տունդ, երբոր մի մերկ տեսնես, նորան հագցրու, եւ քեզ պէս մարմին ունեցողից քեզ մի ծածկիր»:[4]

Ապա Եսայիան շարունակում է թվել այն սքանչելի օրհնությունները, որոնք խոստացված են Տիրոջ կողմից նրանց, ովքեր հնազանդվում են ծոմի օրենքին: Նա ասում է.

«Այն ժամանակ քո լոյսը արշալոյսի պէս պիտի ծագի, եւ քո բժշկությունը շուտով պիտի բուսնի, եւ քո արդարութիւնը պիտի գնայ քո առաջից, Տիրոջ փառքը պիտի պահէ քեզ ետեւից:

Այն ժամանակ դու կկանչես, եւ Տէրը կպատասխանէ, դու կաղաղակես, եւ նա կասէ. Ահա ես: . . .

Եւ կերակրես սովածին ախորժանոքդ, եւ կարոտի հոգին կշտացնես, այն ժամանակ քո լոյսը կծագի խաւարումը, եւ քո խաւարը կլինի կէս օրուայ պէս:

Եւ Տէրը քեզ միշտ կառաջնորդէ, եւ կշատացնէ քո անձը երաշտներումը»:[5]

Այս սուրբ գրության վերաբերյալ Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է հետևյալը. «Այն սքանչելի օրհնությունները, որոնք գալիս են [ծոմապահությունից] հստակեցվել են ամեն տնտեսությունում և այստեղ Տերն ասում է մեզ այս մեծ մարգարեի միջոցով, թե ինչու կա ծոմ և կան օրհնություններ, որոնք գալիս են ծոմից: . . . Եթե վերլուծեք . . . Եսայիայի գրքի ԾԸ գլուխը, ապա դուք կգտնեք պատճառը, թե ինչու է Տերը կամենում, որ մենք ծոմի զոհաբերություններ վճարենք, ինչու է նա ուզում, որ մենք ծոմ պահենք: Դա այն պատճառով է, որ մենք այսպես որակորվելով կարողանանք կանչել և Տերը կարողանա պատասխանել: Մենք կարողանանք աղաղակել և Տերը ասի. «Ահա Ես»:

Նախագահ Լին ավելացնում է. «Մի՞թե մենք երբևէ ուզում ենք լինել մի վիճակում, երբ մենք կարող է կանչենք և Նա չպատասխանի: Մենք աղաղակենք մեր դժբախտության մեջ և Նա մեզ հետ չլինի: Կարծում եմ ժամանակն է, որ մենք մտածենք այս հիմնադրույթների մասին, որովհետև սրանք այն օրերն են, որոնք առջևում են, երբ մենք ավելի ու ավելի շատ ենք ունենալու Տիրոջ օրհնությունների կարիքը, երբ դատաստանները դուրս կթափվեն անխառն ողջ երկրագնդի վրա»:[6]

Մեր սիրելի մարգարե Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը կիսվել է իր վկայությամբ այս սկզբունքների վերաբերյալ՝ մի վկայությամբ, որը առաջացել է անձնական փորձառությունից: Նա ասել է. «Ոչ մի Եկեղեցու անդամ, ով օգնել է ապահովել նրանց, ովքեր կարիքի մեջ են, երբևէ չի մոռանում կամ զղջում այդ փորձառության համար: Աշխատասիրությունը, խնայողությունը, ինքնապահովումը և ուրիշների հետ կիսվելը նոր բան չեն մեզ համար»:[7]

Եղբայրներ, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները ուխտ կապող, պատվիրանները պահող ժողովուրդ են: Ես չեմ կարողանում մտածել մի որևէ օրենքի, որևէ պատվիրանի մասին, որը եթե հավատարմորեն պահվի, ավելի հեշտ լինի պահել և որը բերի ավելի մեծ օրհնություններ, քան ծոմի օրենքը: Երբ մենք ծոմ ենք պահում և տալիս ենք ազնիվ ծոմի զոհաբերություն, մենք ներդրում ենք անում Տիրոջ պահեստում,

որը ծախսվելու էր ուտելիք գնելու համար: Դա չի պահանջում չափից ավելի փողային զոհաբերություն, նրանից ավելի ինչ սովորաբար կծախսվեր: Միևնույն ժամանակ, մեզ խոստացվում են արտասովոր օրհնություններ, ինչպես նախկինում նշվել է:

Ծոմի օրենքը վերաբերվում է Եկեղեցու բոլոր անդամներին: Նույնիսկ փոքր երեխաները կարող են ուսուցանվել ծոմ պահել, սկսելով մեկ ճաշից, իսկ հետ երկու, երբ նրանք կարողանան հասկանալ և ֆիզիկապես պահեն ծոմի օրենքը: Ամուսիններն ու կանայք, միայնակ անդամները, երիտասարդները և երեխաները պետք է սկսեն ծոմը աղոթքով, երախտագիտություն հայտնելով օրհնությունների համար իրենց կյանքում, մինչ որոնում են Տիրոջ օրհնությունները և ուժը ծոմի ժամանակահատվածում: Ծոմի օրենքի լիակատար կատարում է տեղի ունենում, երբ ծոմի զոհաբերություն է տրվում Տիրոջ գործակալին՝ եպիսկոպոսին:

Եպիսկոպոսներ, դուք ուղղորդեք բարօրությունը ծխում: Դուք ունեք աստվածային լիազորություն՝ հայտնաբերելու և հոգ տանելու աղքատներին: Ստիպող Միության նախագահի և Մելքիսեդեկյան քահանայության ղեկավարների օգնությամբ, ձեր նպատակն է օգնել անդամներին իրենք իրենց օգնելու և դառնալու ինքնապահովող: Դուք եք սպասավորում անդամների ֆիզիկական և հոգևոր կարիքները՝ խնամքով օգտագործելով ծոմի զոհաբերությունները որպես ժամանակավոր աջակցություն և որպես լրացում ընտանիքի անդամների և համայնքի ռեսուրսներին: Երբ դուք աղոթքով գործադրեք քահանայության բանալիները և զանազանելու պարգևը՝ օգնելով աղքատներին և կարիքավորներին, դուք կսկսեք հասկանալ, որ ծոմի զոհաբերությունների ճիշտ օգտագործումը նախատեսված է՝ կյանքի և ոչ թե կենսառճի պահպանման համար:

Ահարոնյան քահանայության նախագահներ, դուք եք կրում բանալիները և զորությունը սպասավորելու արտաքին

արարողությունները: Դուք աշխատում եք եպիսկոպոսի հետ և հրահանգում քահանայության քվորումի անդամներին իրենց պարտականությունների վերաբերյալ, և գտնելով Եկեղեցու անդամներին, նրանց հնարավորություն ընձեռում ծոմի համար նվիրաբերություն կատարել: Երբ դուք, Ահարոնյան Քահանայություն կրողներդ մեծարում եք ձեր քահանյության պարտականությունները և տարածում այդ հնարավորությունը Եկեղեցու բոլոր անդամների վրա, դուք հաճախակիորեն հեշտացնում եք ծոմի խոստացված օրհնությունները նրանց համար, ովքեր գուցե դրանց կարիքն ամենաշատն ունեն: Դուք վկա կլինեք, որ աղքատների և կարիքավորների համար հոգատարության ոգին ունի զորություն ինչ որ ձևով փափկացնելու կարծրացած սրտերը և օրհնում է նրանց կյանքը, ովքեր գուցե ոչ հաճախ են այցելում Եկեղեցի:

Նախագահ Մոնսոնն ասել է. «Այն եպիսկոպոսները, ովքեր կազմակերպում են իրենց Ահարոնյան Քահանայության քվորումները՝ մասնակցելու ծոմի նվիրատվություններ հավաքելուն, կգտնեն աճող հաջողություն այս սրբազան պարտականության մեջ»:[8]

Եպիսկոպոսներ, հիշեք, որ հանգամանքները մեծապես տարբերվում են տարածքից տարածք և երկրից երկիր: Դոնեդուռ շփումը Ահարոնյան Քահանալության քվորումի անդամների կողմից գուցե գործնական չլինի այն տարածաշրջանում, որտեղ դուք եք ապրում: Այնուամենայնիվ, մենք հրավիրում ենք ձեզ աղոթքով մտածել մարգարեի խորհրդի մասին և որոնել ոգեշնչում պատշաճ ուղիների վերաբերյալ, որոնցով Ահարոնյան Քահանայության կրողները ձեր ծխում կարող են մեծարել իրենց քահանայությունը՝ մասնակցելով ծոմի զոհաբերություններ հավաքելուն:

3 Նեփի 27 գլխում, հարություն առած Տերը հարցրեց. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել:» Նա պատասխանեց. «Ճիշտ ինչպես ես եմ»:[9] Երբ մենք վերցնում ենք մեզ վրա Քրիստոսի անունը և ձգտում հետևել Նրան, մենք կստանանք Նրա պատկերը մեր դեմքին և ավելի շատ կդառնանք Նրա նման: Աղքատների և կարիքավորների համար հոգ տանելը անբաժանելիորեն կապված է Փրկչի ծառայության հետ: Դա այն բոլոր բաներում է, ինչ Նա անում է: Նա հասնում է բոլորին և բարձրացնում մեզ: Նրա լուծը հեշտ է և նրա բեռը թեթև: Ես կոչ եմ անում մեզանից յուրաքանչյուրին էլ ավելի նմանվել Փրկչին՝ հոգ տանելով աղքատների և կարիքավորների համար, հավատարմորեն պահելով ծոմի օրենքը և նվիրաբերելով առատ ծոմի զոհաբերություն: Ես խոնարհաբար վկայում եմ, որ հավատարմորեն աղքատներին և կարիքավորներին հոգ տանելը հոգևոր հասունության արտացոլումն է և կօրհնի ինչպես տվողին, այնպես էլ ստացողին: Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Երկրորդ Օրինաց ԺԵ.11:
2. Տես *Handbook 2: Administering the Church* (2010), 2.2:
3. *Handbook 2, 6.1.2*:
4. Եսայիա ԾԸ.6–7:
5. Եսայիա ԾԸ.8–11:
6. Harold B. Lee, “Listen, and Obey” (Welfare Agricultural Meeting, Apr. 3, 1971), copy of typescript, 14, Church History Library, Salt Lake City.
7. Թոմաս Ս. Մոնսոն, «Արդյոք մենք պատրաստվա՞ծ ենք», *Լիահոնա,* սեպ. 2014, 4:
8. Թոմաս Ս. Մոնսոնը Նախագահող Եպիսկոպոսության հետ մի ժողովում,Փետ. 28, 2014:
9. 3 Նեփի 27.27:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

«Միթէ ե՞ս եմ, Տէր»

Մենք պետք է մի կողմ դնենք մեր ամբարտավանությունը, նայենք մեր ունայնությունից անդին ու խոնարհությամբ հարցնենք. «Միթէ ե՞ս եմ, Տէր»

Ուեր սիրելի Փրկչի մահկանացու վերջին գիշերն էր՝ երեկոն, որից հետո նա իրեն որպես փրկագին զոհաբերելու էր ողջ մարդկության համար: Իր աշակերտների հետ հաց կտրելիս նա ասաց մի բան, որը պետք է որ մեծ տագնապով ու խորը տխրությամբ լցրած լիներ նրանց սրտերը: «Ձեզանից մէկը կ'մատնէ ինձ»,- ասաց Նա նրանց:

Աշակերտները կասկածի տակ չառան նրա ասած ճշմարտությունը: Ոչ էլ նայեցին շուրջը, մեկ ուրիշին ցույց տալով ու հարցնելով. «Մի՞թե նա է»:

Փոխարենը, նրանք ամեն մեկը «շատ տրտմած՝ սկսեցին նորան ասել. *Միթէ ե՞ս եմՏէր*»:[1]

Հետաքրքիր է, թե ինչ կանեինք յուրաքանչյուրս, եթե Փրկիչը մեզ տար այդ հարցը: Մի՞թե մենք կնայեինք մեր շուրջը և մեր սրտում կասեինք «Նա, հավանաբար, խոսում է եղբայր Ջոնսոնի մասին: Ես միշտ զարմացած եմ նրա վրա» կամ «Ուրախ եմ, որ եղբայր Բրաունն այստեղ է: Նա, իրոք, պետք է լսի այս ուղերձը»: Թե՞ մենք, հին աշակերտների նման, կնայեինք մեր ներսը և կտայինք այդ խորաթափանց հարցը. «Մի՞թե ես եմ»:

Այս պարզ խոսքերում՝ *«Միթէ ե՞ս եմ, Տէր»,* թաքնված է իմաստության սկիզբը և անձնական դարձի ու հարատև փոփոխության ուղին:

Խտուտիկների առակը

Մի մարդ կար, ով սիրում էր երեկոյան զբոսնել իր տան հարևանությամբ: Նա մասնավորապես անհամբեր սպասում էր քայլել իր հարևանի տան մոտով: Այդ հարևանն իր սիզամարգը կատարելապես ձեռնահարդարված էր պահում, ծաղիկները միշտ ծաղկած էին, ծառերը առողջ էին ու փարթամ: Ակնհայտ էր, որ հարևանը ջանք չէր խնայում զեղեցիկ մարգագետին ունենալ:

Բայց մի օր, երբ տղամարդն անցնում էր իր հարևանի տան մոտով, նա այս զեղեցիկ սիզամարգի մեջտեղում նկատեց մի հսկայական դեղին խտուտիկի մոլախոտ:

Այն շատ անտեղի երևաց ու զարմացրեց նրան. Ինչո՞ւ չէր իր հարևանն այն քաղհանում: Մի՞թե նա չէր տեսնում այն: Արդյոք նա չգիտի՞, որ խտուտիկը կարող է սերմերը թափել և տասնյակ լրացուցիչ մոլախոտեր կծլեն:

Այդ լքված խտուտիկը նկարագրությունից վեր անհանգստացրել էր նրան, և նա ուզում էր ինչ-որ բան արած լիներ: Գուցե պարզապես մաքրե՞լ այն: Կամ սրսկել մոլախոտերի թունաքիմիկատով: Եթե նա գիշերվա քողի տակ գար, ապա կարող էր այն գաղտնի քաղհանել:

Այս մտքերով համակված՝ նա քայլեց դեպի իր տուն: Նա ներս մտավ տուն առանց իր առջևի բակի վրա ուշադրություն դարձնելու, որը ծածկված էր հարյուրավոր դեղին խտուտիկներով:

Գերանն ու շյուղը

Այս պատմությունը մեզ հիշեցնո՞ւմ է Փրկչի խոսքերը:

«Եվ ինչո՞ւ եք տեսնում շյուղը, որը ձեր եղբոր աչքում է, բայց չեք նկատում գերանը, որ ձեր սեփական աչքում է . . . .

Դո՛ւ, կեղծավոր, նախ հանիր գերանը քո սեփական աչքից. և ապա հստակ կտեսնես շյուղը՝ քո եղբոր աչքից հանելու համար»:[2]

Գերանի ու շյուղի այդ գործը կարծես թե սերտորեն կապված է մեզ պարզորոշ դիտելու անկարողության հետ: Չգիտեմ, որն է պատճառը, որ ուրիշների հիվանդություններն ախտորոշելիս ու բուժում առաջարկելիս մենք շատ ունակ ենք, մինչդեռ մեր հիվանդությունները հաճախ դժվարությամբ ենք տեսնում:

Տարիներ առաջ նորությունների հաղորդում կար մի մարդու մասին, ով հավատացել էր, որ եթե կիտրոնի հյութ քսի իր դեմքին, ապա տեսախցիկների համար անտեսանելի կլինի: Այդպես, նա դեմքն ամբողջությամբ կիտրոնի հյութ էր քսել և գնացել ու երկու բանկ էր թալանել: Ոչ շատ անց, երբ նրա դեմքը

երեկոյան նորություններում հեռարձակվել էր, նրան ձերբակալել էին: Երբ ոստիկանությունը նրա դեմքը ցույց էր տվել անվտանգության տեսախցիկների տեսանյութերում, նա չէր հավատացել իր աչքերին և բողոքել էր. «Բայց ես կիտրոնի հյութ էի քսել դեմքիս»:[3]

Երբ Քորնելի համալսարանի մի գիտնական լսել էր այդ պատմությունը, նա զարմացել էր, որ մարդ կարող է այդ աստիճանի անիրազեկ լինել իր անկարողության վերաբերյալ: Որպեսզի պարզաբանի, թե արդյոք դա համընդհանուր խնդիր է, երկու հետազոտողներ հրավիրեցին քոլեջի ուսանողների՝ մասնակցելու կյանքի տարբեր հմտությունների վերաբերյալ մի շարք թեստերի և խնդրեցին գնահատել իրենց արդյունքները: Այն ուսանողները, ովքեր վատ էին կատարել աշխատանքը, առավելապես թերի էին գնահատել իրենց հմտությունները, ոմանք իրենց գնահատելով իրենց իրական հմտություններից հինգ անգամ ավելի բարձր:[4]

Այս ուսումնասիրությունը կրկնօրինակվել էին բազմաթիվ եղանակներով՝ կրկին ու կրկին հանգելով նույն եզրակացության, որ մեզանից շատերը դժվարանում են իրենց տեսնել այնպիսին, ինչպիսին իրականում կան, և նույնիսկ հաջողակ մարդիկ գերագնահատում են իրենց կատարած ներդրումը և թերագնահատում ուրիշների ներդրումները:[5]

Հնարավոր է այդքան էական չլինի մեզ գերագնահատելը ավտոմեքենա վարելու կամ գոլֆի գնդակը հեռու գցելու հարցում: Բայց երբ մենք սկսում ենք հավատալ, որ տանը, աշխատանքի վայրում կամ եկեղեցում կատարած մեր ներդրումն իրականից ավելին է, մենք կուրորեն մեզ զրկում ենք կարևոր ու նշանակալից ձևերով մեզ բարելավելու օրհնություններից ու հնարավորություններից:

Հոգևոր անտեսանելի կետերը

Ծանոթներիցս մեկը նախկինում ապրում էր մի ծխում, որը վիճակագրության ամենաբարձր տվյալներն ուներ եկեղեցում՝ հաճախելիությունը բարձր էր, տնային ուսուցման թվերը բարձր էին, երեխաներն իրենց միշտ լավ էին պահում, ծխի ճաշկերույթներին աներևակայելի սնունդ կար, որն անդամները հազվադեպ էին ժողովատան հատակին թափում, և կարծում եմ, եկեղեցական պարահանդեսների ժամանակ երբեք վիճաբանություններ չէր լինում:

Ընկերս իր կնոջ հետ կանչվեց միսիայում ծառայելու: Երեք տարի անց, երբ վերադարձավ, այս զույգը ապշած էր իմանալու, որ իրենց ծառայության տարիներին ծխի ընտանիքներից 11-ն ամուսնալուծվել էին:

Չնայած նրան, որ ծուխն ուներ հավատարմության և ուժի բոլոր արտաքին ցուցումները, ինչ-որ ցավալի բան էր կատարվում անդամների սրտում ու կյանքում: Եվ մտահոգիչն այն է, որ այս իրավիճակը եզակի չէ: Նման սարսափելի և հաճախ անհարկի բաներ են լինում այն ժամանակ, երբ Եկեղեցու անդամները հեռանում են ավետարանի սկզբունքներից: Արտաքուստ նրանք կարող են Հիսուս Քրիստոսի աշակերտների տպավորություն թողնել, բայց ներքուստ նրանց սրտերը հեռացած են իրենց Փրկչից և Նրա ուսմունքներից: Նրանք աստիճանաբար հեռանում են Հոգու բաներից և մոտենում են աշխարհիկ բաներին:

Ժամանակին արժանի համարվող քահանայություն կրողները սկսում են իրենց ասել, որ եկեղեցին լավ բան է կանանց ու երեխաների համար, բայց ոչ իրենց համար: Կամ ոմանք համոզված են, որ իրենց զբաղված աշխատանքային գրաֆիկը կամ եզակի իրավիճակը իրենց ազատում է երկրպագության ու ծառայության ամենօրյա գործողություններից, որոնք իրենց մոտ կպահեն Հոգու ներգործությանը: Ինքնարդարացման ու ինքնասիրահարության այս դարաշրջանում հեշտ է ստեղծագործել ու արդարացնել Աստծոն հաճախ աղոթքով չդիմելու, սուրբ գրությունների ուսումնասիրությունը հետաձգելու, եկեղեցական ժողովներից ու ընտանեկան երեկոներից խուսափելու կամ էլ ազնիվ տասանորդ ու նվիրատվություններ չվճարելու մեր քայլերը:

Իմ սիրելի՛ եղբայրներ, խնդրում եմ, նայեք ներս՝ ձեր սրտին, և տվեք այս հասարակ հարցը. *«Միթէ ե՞ս եմ, Տէր»*:

Դուք հեռացե՞լ եք, անգամ փոքր չափով, «Երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանից, որը [ձեզ] է վստահվել».[6] Մի՞թե դուք թույլ եք տվել, որ «այս աշխարհի աստվածը» կուրացնի ձեր միտքը, «որ Քրիստոսի փառաւոր աւետարանի լուսաւորութիւնը չ՚ծագէ [ձեր] վերայ»:[7]

Իմ սիրելի՛ ընկերներ, իմ սիրելի՛ եղբայրներ, հարցրեք ձեզ. «Որտե՞ղ է իմ գանձը»:

Արդյոք ձեր սիրտն այս աշխարհի հեշտասեր բաների վրա է, թե՞ ջանասեր Հիսուս Քրիստոսի ուսմունքների վրա: «Որովհետև ինչ տեղ որ ձեր գանձն է, այնտեղ կլինի և ձեր սիրտը»:[8]

Արդյոք Աստծո Հոգին բնակվո՞ւմ է ձեր սրտում. դուք «արմատացած և հիմնավորվա՞ծ եք» Աստծո և ձեր մերձավորի սիրո մեջ: Դուք բավարար ժամանակ և ստեղծագործական ձիրք նվիրո՞ւմ եք ձեր ամուսնությունն ու ընտանիքը երջանկացնելու համար: Դուք բավական կենսուժ հատկացնո՞ւմ եք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի «լայնությունը և երկայնությունը և խորությունը և բարձրությունը»[9] հասկանալու և ապրելու վսեմ նպատակի համար:

Եղբայրնե՛ր, եթե ձեր մեծ ցանկությունը լինի զարգացնել Քրիստոսանման հատկանիշներ՝ «հավատք, առաքինություն, գիտություն, ժուժկալություն, համբերություն, եղբայրասիրություն, աստվածայնություն, գթություն, խոնարհություն [և ծառայություն]»,[10] Երկնային Հայրը ձեզ գործիք կդարձնի Իր ձեռքում՝ փրկության բերելով բազմաթիվ հոգիների:[11]

Քննություն անցած կյանքը

Եղբայրնե՛ր, մեզանից ոչ ոք չի սիրում ընդունել, որ շեղվել է ճիշտ ուղուց: Հաճախ մենք փորձում ենք խուսափել խորապես մեր հոգուն նայել և դիմակայել մեր թուլություններին, սահմանափակումներին

և մտավախություններին: Ուստի, երբ իսկապես խորաքննում ենք մեր կյանքը, մենք այն դիտում ենք զտիչով, որն անցնում է կողմնակալության, արդարացումների և անարժան մտքերն ու գործողություններն արդարացնելու համար մեզ պատմած պատմությունների միջով:

Բայց մեր իրականությունը հստակ տեսնելու կարողությունը կարևոր է մեր հոգևոր աճի և բարեկեցության համար: Եթե մեր թուլություններն ու թերությունները թաքնված են մնում ստվերում, ապա Փրկչի փրկագնող զորությունը չի կարող բուժել և ուժեղ դարձնել դրանք:[12] Ճակատագրի հեգնանքով, մարդկային թուլությունների հանդեպ մեր կուրությունը մեզ կկուրացնի, որ չտեսնենք աստվածային ներուժը, որ մեր Հայրը փափագում է դաստիարակել յուրաքանչյուրիս մեջ:

Այսպիսով, ինչպես կարող ենք Աստծո ճշմարտության մաքուր լույսով լուսավորել մեր հոգին և տեսնենք մեզ այնպես, ինչպես նա է մեզ տեսնում:

Թույլ տվեք ասել, որ սուրբ գրությունները և գերագույն համաժողովի ելույթները արդյունավետ հայելի են, որոնց օգնությամբ կարող ենք քննել մեզ:

Երբ լսում կամ կարդում եք հին և ժամանակակից մարգարեների խոսքերը, մի մտածեք, թե այդ խոսքերն ինչպես են վերաբերում մեկ ուրիշին, այլ տվեք այս պարզ հարցը. *«Միթէ ե՞ս եմ, Տէր»*:

Մենք պետք է մոտենանք մեր Երկնային Հորը կոտրված սրտով և դյուրակիրթ մտքով: Մենք պետք է պատրաստ լինենք սովորել և փոխվել: Եվ օ՜, որքան ենք մենք ձեռք բերում, պարտավորվելով ապրել այն կյանքով, որ մեր Երկնային Հայրը ծրագրել է մեզ համար:

Նրանք, ովքեր *չեն* ցանկանում սովորել և փոխվել, հավանաբար, *չեն էլ* սովորի և ամենայն հավանականությամբ, կսկսեն կասկածել, թե արդյոք Եկեղեցին ինչ-որ բան ունի իրենց առաջարկելու:

Բայց նրանք, ովքեր ցանկանում են զարգանալ ու առաջադիմել, նրանք, ովքեր սովորում են Փրկչի մասին և ցանկանում են նմանվել Նրան, ովքեր իրենց խոնարհեցնում են ինչպես փոքր երեխա, և ձգտում են Երկնային Հոր հետ ներդաշնակ դարձնել իրենց մտքերն ու գործողությունները, – նրանք կզգան Փրկչի Քավության հրաշքը: Նրանք, անշուշտ, կզգան Աստծո լուսափայլ Հոգին: Նրանք կհամտեսեն անկարագրելի ուրախություն, որը հեզ ու խոնարհ սրտի պտուղն է: Նրանք օրհնված կլինեն ցանկությամբ և կարգապահությամբ՝ դառնալու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ:

Բարության ուժը

Իմ կյանքի ընթացքում ես հնարավորություն եմ ունեցել շփվել այս աշխարհի առավել բանիմաց և խելացի տղամարդկանցից ու կանանցից մի քանիսի հետ: Երբ երիտասարդ էի, ես տպավորված էի նրանցով, ովքեր կիրթ, կայացած, հաջողակ և ճանաչված էին աշխարհում: Սակայն տարիների ընթացքում, ես եկա այն համոզման, որ ես շատ ավելի տպավորված եմ այն հրաշալի և երանելի հոգիներով, ովքեր իսկապես լավն են ու նենգությունից զուրկ:

Մի՞թե դա չէ ավետարանն ուսուցանում և այդպիսին դարձնում մեզ: Այն բարի լուր է և օգնում է մեզ բարին դառնալ:

Հակոբոս առաքյալի խոսքերն այսօր վերաբերում են մեզ.

«Աստուած ամբարտաւաններին հակառակ է կենում, բայց խոնարհներին շնորհք է տալիս. . . .

Խոնարհեցէք Տիրոջ առաջին, և նա կ՚բարձրացնէ ձեզ»:[13]

Եղբայրներ, Մենք պետք է մի կողմ դնենք մեր ամբարտավանությունը, նայենք մեր ունայնությունից անդին ու խոնարհությամբ հարցնենք. *«Միթէ ե՞ս եմ, Տէր»*

Իսկ եթե Տիրոջ պատասխանը լինի «Այո՛, որդիս, կան բաներ, որ քեզ պետք է բարելավել, բաներ, որ ես կարող եմ օգնել քեզ հաղթահարել», ապա իմ աղոթքն է, որ մենք ընդունենք այդ պատասխանը, խոնարհաբար ընդունենք մեր մեղքերն ու թերությունները և ապա փոխենք մեր ուղին, դառնալով ավելի լավ ամուսիններ, ավելի լավ հայրեր և

ավելի լավ որդիներ: Թող որ մենք այս պահից ի վեր առաջադիմենք մեր ողջ զորությամբ՝ քայլելու հաստատակամորեն Փրկչի օրհնած ճանապարհով, քանի որ ինքներս մեզ պարզորոշ տեսնելը իմաստության սկիզբն է:

Եթե այդպես վարվենք, մեր լիառատ Աստված ձեռքը բռնած կառաջնորդի մեզ. մենք կզորանանք ու կօրհնվենք բարձրից:[14]

Իմ սիրելի՛ ընկերներ, աշակերտության սքանչելի ու իմաստալից ուղու առաջին քայլն սկսվում է նրանից, երբ մենք տալիս ենք այս պարզ հարցը.

«Միթէ ե՞ս եմ, Տէր»:

Այդ մասին ես բերում եմ իմ վկայությունը և թողնում եմ ձեզ իմ օրհնությունը՝ Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մատթեոս 26.21–22. շեշտադրումն ավելացված է:
2. Մատթեոս Է.3, 5:
3. Տես Errol Morris, "The Anosognosic's Dilemma: Something's Wrong but You'll Never Know What It Is," *New York Times,* June 20, 2010, http://opinionator.blogs.nytimes.com/2010/06/20/the-anosognosics-dilemma-1.
4. Տես Justin Kruger and David Dunning, "Unskilled and Unaware of It: How Difficulties in Recognizing One's Own Incompetence Lead to Inflated Self-Assessments," *Journal of Personality and Social Psychology,* Dec. 1999, 1121–34. «4 ուսումնասիրությունների ընթացքում հետազոտողները հայտնաբերել են, որ հումորի, քերականության և տրամաբանության թեստերի միավորների մեկ քառորդից ցածր գնահատական ստացած մասնակիցները չափազանց գերագնահատել են իրենց թեստերի արդյունքներն ու իրենց ունակությունները: Չնայած որ նրանց թեստերը արժեր 12 տոկոս, նրանք իրենք իրենց գնահատում էին 62 տոկոս» (from the abstract at psycnet.apa.org/?&fa=main.doiLanding&doi=10.1037/0022–3514.77.6.1121).
5. Տես Marshall Goldsmith, *What Got You Here Won't Get You There* (2007), section one, chapter 3. Հետազոտողը երեք գործընկերի խնդրել էր գնահատել իրենց անձնական ներդրումը կազմակերպության հաջողության գործում: Նրանց ներդրումի ինքնագնահատականը իրական գնահատականից 150 տոկոսով ավելին էր:
6. Ա Տիմոթեոս Ա.11:
7. Բ Կորնթացիս Դ.4:
8. Ղուկաս ԺԲ.34:
9. Եփեսացիս Գ.18:
10. Վարդապետություն և Ուխտեր Գ.6:
11. Տես Ալմա 17.11:
12. Տես Եթեր 12.27:
12. Հակոբոս Դ.6, 10:
14. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.28:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Նախապատրաստական Քահանայություն

Քահանայության նախապատրաստության մեջ «ցույց տուր ինձ» սկզբունքը ավելի կարևոր է, քան «ասա ինձ»:

Ես երախտապարտ եմ, որ հավաքվել ենք Աստծո քահանայությամբ, տարածվելով ողջ աշխարհով: Ես շնորհակալ եմ ձեր հավատքի, ձեր ծառայության և ձեր աղոթքների համար:

Այս երեկո իմ ուղերձը Ահարոնյան Քահանայության մասին է: Այն ուղղված է նաև բոլորիս, ովքեր օգնում են իրականացնել Տիրոջ խոստումները նրանց, ովքեր կրում են «փոքրագույն քահանայությունը», ինչպես նկարագրվում է սուրբ գրություններում:[1] Այն նաև կոչվում է նախապատրաստական քահանայություն: Այդ փառավոր նախապատրաստության մասին եմ ես խոսելու այս երեկո:

Տիրոջ ծրագիրը լի է նախապատրաստությամբ: Նա պատրաստել է երկիրը մեզ համար, որպեսզի փորձվենք և մահականցու հնարավորություններ ունենանք: Մինչ մենք այստեղ ենք, մենք գտնվում ենք «նախապատրաստական վիճակում», ինչպես ասվում է սուրբ գրքերում:[2]

Ալմա մարգարեն նկարագրել է այդ նախապատրաստության կենսական կարևորությունը հավերժական կյանքի համար, որում մենք կարող ենք ընդմիշտ ապրել ընտանիքներով Հայր Աստծո կամ Հիսուս Քրիստոսի հետ:

Նախապատրաստության կարիքը նա այսպես է բացատրել. «Եվ մենք տեսնում ենք, որ մահ է գալիս մարդկության վրա, այո, մահը, որի մասին խոսեց Ամուղեկը, որը ժամանակավոր մահն է. այնուամենայնիվ, կար մի ժամանակահատված՝

շնորհված մարդուն, որի ընթացքում նա կարողանար ապաշխարել. հետևաբար, այս կյանքը դարձավ մի փորձնական վիճակ. մի ժամանակ՝ պատրաստվելու համար հանդիպելու Աստծուն. մի ժամանակ՝ պատրաստվելու այն անվերջ վիճակին, որի մասին խոսեցինք մենք, որը մեռելների հարությունից հետո է»:[3]

Ինչպես այն ժամանակը, որը մեզ տրվել է մահկանացու կյանքում, Աստծուն հանդիպելուն նախապատրաստվելու համար, այնպես էլ ժամանակը, որը տրվել է մեզ ծառայելու Ահարոնյան Քահանայության մեջ, հնարավորություն է՝ պատրաստվել սովորելու կարևորագույն օգնություն տալ ուրիշներին: Ինչպես Տերը մեզ օգնություն է տալիս մեր մահկանացու կյանքի ստուգարքներն անցնելու համար, այնպես էլ Նա օգնում է մեզ մեր քահանայության նախապատրաստության մեջ:

Իմ ուղերձը ուղղված է նրանց, ում Տերն ուղարկում է օգնելու պատրաստել Ահարոնյան Քահանայության կրողներին, ինչպես և նրանց, ովքեր կրում են Ահարոնյան Քահանայություն: Ես խոսում եմ հայրերի հետ: Ես խոսում եմ եպիսկոպոսների հետ: Ես խոսում եմ Մելքիսեդեկյան Քահանայության այն կրողների հետ, ում վստահվել է լինել քահանայությանը նախապատրաստվող երիտասարդ տղամարդկանց զուգընկերները և ուսուցիչները:

Ես խոսում եմ գոհունակության և երախտագիտության ոգով ձեզ հետ՝ աշխարհի տարբեր ծայրերում և ժամանակի միջով:

Ես անհոգ կվարվեմ, եթե չխոսեմ իմ երիտասարդության տարիների ճյուղի նախագահի և եպիսկոպոսի մասին: Ես դարձա սարկավագ 12 տարեկանում մի փոքր ճյուղում Միացյալ Նահանգների արևելյան մասում: Ճյուղը այն փոքր էր, որ իմ ավագ եղբայրը և ես Ահարոնյան Քահանայության միակ կրողներն էինք, մինչև որ հայրս, ով ճյուղի նախագահն էր, հրավիրեց միջին տարիքի մի տղամարդու միանալ Եկեղեցուն:

Նորադարձը ստացավ Ահարոնյան Քահանայություն և դրա հետ միասին Ահարոնյան Քահանայությունը հսկելու կոչում: Ես մինչ օրս հիշում եմ, կարծես, երեկ լիներ: Ես հիշում եմ աշնան սքանչելի տերևները, երբ այդ նոր մկրտված տղամարդն ուղեկցում էր ինձ և եղբորս մի այրի կնոջ համար ինչ-բան անելու: Ես չեմ հիշում ծրագիրը, բայց հիշում եմ զգացումը, որ քահանայության զորությունը միացել էր անելու այն, ինչը, ինչպես ես հետագայում իմացա, Տերն ասել էր, որ մենք բոլորս պետք է անեինք, որպեսզի մեր մեղքերը ներվեին և մենք պատրաստված լինեինք տեսնելու Նրան:

Ետադարձ հայացք գցելով ես երախտագիտություն եմ զգում ճյուղի նախագահի համար, ով կանչեց նորադարձին օգնելու Տիրոջը պատրաստել երկու տղաների, ովքեր իրենց հերթին մի օր եպիսկոպոսներ կլինեին՝ պատասխանատու աղքատներին և կարիքավորներին օգնելու, նաև նախապատրաստական քայլանայությունը նախագահելու համար:

Ես դեռ սարկավագ էի, երբ մեր ընտանիքը տեղափոխվեց մի մեծ ծուխ Յուտայում: Առաջին անգամ ես զգացի Ահարոնյան Քահանայության լիարժեք քվորումի զորությունը: Իրականում, ես առաջին անգամ էի տեսնում դա: Ավելի ուշ, առաջին անգամ ես զգացի քահանաների քվորումը նախագահող եպիսկոպոսի զորությունը և օրհնությունը:

Եպիսկոպոսը ինձ կանչեց լինելու քահանաների քվորումում իր առաջին օգնականը: Ես հիշում եմ, որ նա ինքն էր ուսուցանում քվորումին, լինելով զբաղված, ինչպես կարող է լինել եպիսկոպոսը, նաև այլ ընդունակ տղամարդկանց հետ, որոնց նա կարող էր կանչել մեզ ուսուցանելու: Նա դասավորել էր աթոռները դասարանում շրջանաձև: Նա ինձ նստեցնում էր իր կողքին՝ աջ կողմում:

Ես կարողանում էի նայել նրա ուսի վրայով, երբ նա ուսուցանում էր: Նա երբեմն նայում էր ներքև՝ խնամքով պատրաստված և տպված գրառումներին փոքր կաշվե բլոկնոտում, որ դրված էր իր ծնկներին, և լավ մաշված և նշումներով լի սուրբ գրքերին, որ բացված էին և դրված մյուս ծնկին: Ես հիշում եմ ոգևորվածությունը, որը նա ուներ, երբ պատմում էր քաջության պատմությունները Դանիելի գրքից և Փրկչի՝ Տեր Հիսուս Քրիստոսի մասին իր վկայությունը:

Ես միշտ կհիշեմ, թե ինչպես է Տերը կանչում զուգընկերներին, խնամքով ընտրելով նախապատրաստության մեջ գտնվող իր քահանայությունը կրողների համար:

Իմ եպիսկոպոսը զորեղ խորհրդականներ ուներ, և, թեև այդ ժամանակ ես չէի հասկանում պատճառները, նա ինձ մի քանի անգամ զանգահարել էր տուն և ասել. «Հալ, ուզում եմ, որ ինձ հետ

որպես զուգընկեր գաս մի քանի այցերի»: Մի անգամ նա ինձ իր հետ տարավ մի այրի կնոջ տուն, ով միայնակ էր ապրում և ուտելիք չուներ: Տան ճանապարհին նա կանգնեցրեց իր մեքենան, բացեց իր սուրբ գրությունները և ասաց ինձ, թե ինչու այնպիսի վերաբերմունք ցուցաբերեց այդ այրու հանդեպ, կարծես, նա զորություն ունի ոչ միայն հոգ տանելու իր մասին, այլ, ապագայում, կկարողանա օգնել ուրիշներին:

Մեկ այլ այց կատարեցինք մի տղամարդու, որն երկար ժամանակ բացակայել էր Եկեղեցում: Իմ եպիսկոպոսը հրավիրեց նրան վերադառնալ և լինել Սրբերի հետ: Ես զգացի իմ եպիսկոպոսի սերը նրա հանդեպ, ով ինձ թվում էր չսիրված և ըմբոստ թշնամի:

Մեկ այլ առիթով մենք այցելեցինք մի տուն, որտեղ երկու փոքր աղջիկների ալկոհոլից տառապող ծնողները ուղարկեցին դիմավորելու մեզ: Դռան ցանցի ետևից փոքրիկ աղջիկները մեզ ասացին, որ իրենց մայրն ու հայրը քնած էին: Եպիսկոպոսը շարունակեց խոսել նրանց հետ, ժպտալով և գովելով նրանց բարի և քաջ լինելու համար, ինձ թվաց, մոտ տաս րոպե: Հեռանալիս ես քայլում էի նրա կողքով, և նա ցածր ձայնով ինձ ասաց. «Սա լավ այցելություն էր: Այդ փոքրիկ աղջիկները երբեք չեն մոռանա, որ մենք եկանք»:

Երկու օրինություն, որ ավագ զուգընկերները կարող են տալ, դա վստահությունն է և հոգատարության օրինակը: Ես դրա ականատեսը եղա, երբ իմ որդուն կցեցին տնային ուսուցման մի զուգընկերոջ, որը քահանայության շատ ավելի մեծ փորձ ուներ: Նրա ավագ զուգընկերը երկու անգամ եղել էր միսիայի նախագահ և ծառայել էր ղեկավար այլ պաշտոններում:

Իրենց նշանակված ընտանիքներին այցելելուց առաջ այդ փորձառու քահանայության ղեկավարը խնդրեց թույլտվություն նախ այցելելու որդուս մեր տանը: Նրանք թույլ տվեցին ինձ լսել: Ավագ զուգընկերը բացեց աղոթքով, խնդրելով օգնություն: Հետո նա որդուս այսպիսի մի բան ասաց. «Կարծում եմ, մենք պետք է ուսուցանենք մի դաս, որն այդ ընտանիքի համար կհնչի որպես ապաշխարության կանչ: Կարծում եմ, այս ուղերձը նրանք ավելի լավ քեզանից կընդունեն, քան եթե դա գա ինձանից: Ի՞նչ ես կարծում»:

Հիշում եմ որդուս աչքերի սարսափը: Ես մինչ այժմ կարող եմ զգալ այդ պահի երջանկությունը, երբ որդիս ընդունեց այդ վստահությունը:

Պատահական չէր, որ եպիսկոպոսը կցեց իրար այդ զուգընկերներին: Դա արվեց լուրջ նախապատրաստությամբ, որով ավագ զուգընկերը սովորեց այդ ընտանիքի զգացմունքների մասին: Դա արվեց ոգեշնչմամբ, որով նա մի քայլ ետ կանգնեց, վստահելով անփորձ երիտասարդին ապաշխարության և ապահովության կոչ անել Աստծո տարեց զավակներին:

Ես չգիտեմ, ինչով ավարտվեց նրանց այցելությունը, սակայն գիտեմ, որ եպիսկոպոսը, Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը և Տերը պատրաստում էին տղային դառնալ քահանայության տղամարդ և մի օր էլ՝ եպիսկոպոս:

Քահանայության նախապատրաստության նման պատմություններ ծանոթ են ձեզ. դուք ականատես եք եղել դրանց ձեր կյանքում կամ իքներդ եք ունեցել նման փորձառություն: Դուք ճանաչել եք կամ եղել եք այդպիսի եպիսկոպոսներ, զուգընկերներ և ծնողներ: Դուք տեսել եք Տիրոջ ձեռքը քահանայության ձեր պարտականություններին պատրաստվելիս, որոնք, Նա գիտեր, ձեր առջևում են:

Քահանայության մեջ մենք բոլորս պարտավոր ենք օգնելու Տիրոջը պատրաստել մյուսներին: Կան բաներ, որոնք մենք կարող ենք անել, որ առավել կարևոր են: Վարդապետությունն ուսուցանելիս մեր խոսքերից շատ ավելի զորեղ է վարդապետությամբ ապրելու մեր օրինակը:

Քահանայության մեր ծառայության մեջ կարևորագույն նշանակություն ունի մարդկանց հրավիրելը գալ դեպի Քրիստոսը հավատքով, ապաշխարությամբ, մկրտությամբ և Սուրբ Հոգին ստանալով: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը, օրինակ, քարոզներ է կարդում այդ բոլոր վարդապետությունները մարդկանց սրտերին մոտեցնելու համար: Բայց այն, ինչ ես գիտեմ, որ նա արել է Եկեղեցու մարդկանց, միսիոներների և ընկերների հետ, երբ նախագահում էր Տորոնտոյի միսիայում, առավել շատ է ինձ ոգեշնչում գործել:

Քահանայության նախապատրաստության մեջ «ցույց տուր ինձ սկզբունքը ավելի կարևոր է, քան «ասա ինձ»:

Ահա թե ինչու են սուրբ գրություններն այդքան կարևոր քահանայության մեջ մեզ պատսարտելու հարցում: Դրանք լի են

օրինակներով: Ես զգում եմ, կարծես, կարող եմ տեսնել Ալմային, որը հետևում է հրեշտակի հրամանին և շտապում վերադառնալ՝ իրեն մերժած Ամմոնիայի ամբարիշտ ժողովրդին ուսուցանելու համար:[4] Ես զգում եմ բանտախցի ցուրտը, երբ Աստված Մարգարե Ջոզեֆին ասաց քաջ լինել և որ նրա մասին հոգ են տանում:[5] Մտքում ունենալով այդ պատկերները, մենք կարող ենք պատրաստ լինել դիմանալու մեր ծառայության դժվարություններին, երբ դրանք ծանր թվան:

Հայրը կամ եպիսկոպոսը կամ տնային ուսուցման ավագ զուգընկերը, ով վստահություն է ցուցաբերում երիտասարդ քահանայություն կրողի հանդեպ, կարող է փոխել նրա կյանքը: Մի անգամ իմ հորը Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներից մեկը խնդրեց համառոտ աշխատություն գրել գիտության և կրոնի մասին: Հայրս ճանաչված գիտնական էր և հավատարիմ քահանայություն կրող: Սակայն ես հիշում եմ այն պահը, երբ նա տվեց ինձ այդ աշխատությունը և ասաց. «Տասներկուսին սա ուղարկելուց առաջ ուզում եմ, որ դու կարդաս սա: Դու կիմանաս, թե արդյոք այն ճշմարիտ է»: Նա ինձանից 32 տարի մեծ էր և շատ ավելի իմաստուն և խելացի:

Ես դեռևս ամրություն եմ ստանում այդ վստահությունից, որ դրսևորեց հրաշալի հայր և քահանայության տղամարդ հանդիսացող այդ մարդը: Ես գիտեմ, որ նրա վստահությունը ոչ թե իմ, այլ Աստծո հանդեպ էր, որը կասեր ինձ, թե արդյոք դա ճշմարիտ էր: Դուք՝ փորձառու զուգընկերներ, կարող եք օրհնել երիտասարդ քահանայություն կրողին նախապատրաստության մեջ, երբ էլ որ նման բարի վստահություն ցուցաբերեք: Դա կօգնի նրան ճանաչել ոգեշնչման մեղմ զգացումը, երբ ինքը մի օր իր ձեռքերը դնի կնքելու համար հիվանդ երեխային, որից բժիշկները հրաժարվել են: Այդ վստահությունը ինձ օգնել է բազմաթիվ անգամներ:

Քահանայության մեջ ուրիշներին օգնելու մեր հաջողությունը կախված է նրանից, թե որքան ենք մենք սիրում նրանց: Դա հատկապես ճշմարիտ է, երբ մենք կարիք ունենք ուղղելու նրանց: Մտածեք մի պահ այն մասին, երբ Ահարոնյան Քահանայություն կրողը, գուցե հաղորդության սեղանի մոտ, սխալ է գործում որևէ արարողություն կատարելիս: Սա լուրջ խնդիր է: Երբեմն սխալն ուղղում է պահանջում հանրության առջև, առաջացնելով զայրույթի, նվաստացման կամ անգամ մերժման զգացում:

Դուք կհիշեք Տիրոջ խորհուրդը. «Ժամանակին խստությամբ հանդիմանելով, երբ ներշնչվում ես Սուրբ Հոգով. և ապա, դրանից հետո, ավելի մեծ սեր ցույց տալով նրա հանդեպ, ում հանդիմանել ես, չլինի թե նա քեզ իր թշնամին համարի»:[6]

Ավելի մեծ բառերը հատուկ իմաստ են կրում քահանայություն կրողներին պատրաստելիս, երբ նրանք ուղղում ստանալու կարիք ունեն: Այդ բառերը նշանակում են ավելի մեծ սեր: «Ցույց տալով» արտահայտությունը խոսում է այդ ավելի մեծ սիրո մասին: Նրանք, ովքեր պատրաստում են քահանայություն կրողներին, անշուշտ սխալներ կտեսնեն նրանց կողմից: Ձեր կողմից ուղղում ստանալուց առաջ նրանք պետք է զգան ձեր սերը՝ արագ և հաստատուն: Նրանք պետք է զգան ձեր անկեղծ գովասանքը՝ ձեր ուղղումը ընդունելուց առաջ:

Տերն Ինքն է պահել փոքրագույն քահանայություն կրողների, ընդունելով նրանց ներուժը և արժեքը Իր համար: Լսեք այս խոսքերը, որոնք արտասանում է Հովհաննես Մկրտիչը, երբ վերականգնվեց Ահարոնյան Քահանայությունը. «Իմ ընկերակից ծառաներ, Մեսիայի անունով ես շնորհում եմ ձեզ Ահարոնի Քահանայությունը, որը կրում է հրեշտակների սպասավորության, ապաշխարության ավետարանի և մեղքերի թողության համար ընկղմամբ մկրտության բանալիները. և այն այլևս երբեք չի վերցվի երկրի վրայից, մինչև որ Ղևիի որդիները կրկին արդարությամբ ընծա մատուցեն Տիրոջը»:[7]

Ահարոնյան Քահանայությունը ավելի բարձր՝ Մելքիսեդեկյան Քահանայության հավելումն է:[8] Որպես ամբողջ քահանայության նախագահ՝ Եկեղեցու նախագահը նախագահում է նաև նախապատրաստական քահանայության վրա: Օգնության հասնելու տարիների Նրա ուղերձները կատարելապես համապատասխանում են ապաշխարության և մկրտության ավետարանը մարդկանց կյանք բերելու պատգամին:

Մարկավագների, ուսուցիչների և քահանաների քվորումները կանոնավոր խորհրդակցում են, որպեսզի յուրաքանչյուր անդամի մոտեցնեն Տիրոջ քվորումին: Նախագահությունները հանձնարարում են անդամներին օգնության ձեռք մեկնել հավատքով և սիրով: Մարկավագները բաժանում են հաղորդությունը ակնածանքով և հավատքով, որպեսզի անդամները զգան Քավության ազդեցությունը և վճռեն պահել պատվիրանները, ճաշակելով այդ սրբազան խորհրդանիշները:

Ուսուցիչները և քահանաները աղոթում են իրենց զուգընկերների հետ, որպեսզի կատարեն Եկեղեցին հսկելու պարտականությունը, անձ առ անձ: Եվ այդ միությունները աղոթում են միասին, սովորելով ընտանիքների կարիքների և հույսերի մասին: Այդ անելով նրանք պատրաստվում են մեծ օրվան, երբ հավատքով կնախագահեն որպես հայր իրենց իսկ ընտանիքում:

Ես վկայում եմ, որ բոլորը, ովքեր միասին ծառայում են քահանայության մեջ, պատրաստում են մարդկանց Տիրոջ գալստին Իր Եկեղեցի: Հայր Աստվածն ապրում է: Ես գիտեմ, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Նա սիրում է մեզ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Տիրոջ ապրող մարգարեն է: Ես սա վկայում եմ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 84.26, 30; 107.14:
2. Ալմա 42.10, 13:
3. Ալմա 12.24:
4. Տես Ալմա 8.14–18:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 122.9:
6. Վարդապետություն և Ուխտեր 121.43:
7. Վարդապետություն և Ուխտեր 13.1:
8. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.14:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Բարձրագույն Իշխանությունները և Բարձրագույն Պաշտոնյաները

ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Հենրի Բ. Այրինգ
Առաջին Խորհրդական

Թոմաս Ս. Մոնսոն
Նախագահ

Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Երկրորդ Խորհրդական

ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՔՎՈՐՈՒՄ

Բոյդ Ք. Փաքեր

Լ. Թոմ Փերի

Ռասսել Մ. Նելսոն

Դալլին Հ. Օքս

Մ. Ռասսել Բալլարդ

Ռիչարդ Գ. Սքոթ

Ռոբերտ Դ. Հեյլս

Ջեֆրի Ռ. Հոլլանդ

Դեյվիդ Ա. Բեդնար

Քվենթին Լ. Քուք

Դ. Թոդ Քրիստոֆերսոն

Նիլ Լ. Անդերսեն

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Ռոնալդ Ա. Ռաբենդ

Լ. Ուիթնի Քլեյթոն

Դոնալդ Լ. Հոլստրոմ

Ռիչարդ Ջ. Մեյնզ

Քրեյգ Ս. Քրիչենսեն

Ուլիսես Սոարես

Լին Գ. Ռոբինս

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՎՈՐՈՒՄ

Մարկոս Ա. Այորկայտիս
Հոսե Լ. Այոնսո
Յան Ս. Մրդեն
Մերվին Բ. Առնոլդ
Դեյվիդ Ս. Բաքատեր
Շեյն Մ. Բոուեն
Քրեյգ Ա. Քարդոն
Յուն Հվան Չոյ
Դոն Ռ. Քլարկ
Քարլ Բ. Քուք
Լորենս Ե. Քորբրիջ
Կլաուդիո Ռ. Մ. Կոստա
Լեգոան Ռ. Քըրտիզ Կրուս.
Բենջամին դե Հոյս
Էդվարդ Դյուբ
Քեվին Ռ. Դանքըն
Լարի Ջ. Էքո Հոք
Սթենլի Գ. Էլիս
Դեյվիդ Ֆ. Էվանս
Էնրիկե Ռ. Ֆալաբելլա
Էդուարդո Գավարետ
Ռոբերտ Ս. Գայ
Կարլոս Ա. Գոդոյ
Քրիստոֆել Գոլդեն
Ջերիթ Վ. Գոնգ
Վոլթեր Ֆ. Գոնզալես
Ս. Սքոթ Գրոու
Ջեյմս Ջ. Համուլա
Դանիել Լ. Ջոնսոն
Փոլ Վ. Ջոնսոն
Պատրիկ Քիրոն
Երեց Յորգ Ալբերինգաբ
Էրիկ Վ. Կոպիչկե
Մարկուս Բ. Նաշ
Ս. Գիֆորդ Նիլսեն
Բրենտ Հ. Նիլսոն
Ալլան Ֆ. Փաքեր
Քեվին Վ. Փիրսոն
Էնթոնի Դ. Փերքինս
Փոլ Բ. Փիփեր
Ռաֆայել Ի.Փինո
Բրուս Դ. Փորթեր
Դեյլ Գ. Ռենլանդ
Մայքլ Տ. Ռինգվուդ
Ջոզեֆ Վ. Սիտատի
Սթիվեն Ե. Մնոու
Մայքլ Ջոն Ու. Թեի
Հոսե Ա. Թեքսեյրա
Խուան Ա. Ուսեդա
Անտոնիո Վալենզուելա
Ֆրանսիսկո Ջ. Վինաա
Վ. Քրիստոֆեր Վադել
Սքոթ Դ. Վայթինգ
Չի Հոնգ (Մեմ) Վոնգ
Կազուհիկո Յամաշիտա
Ջորջ Ֆ. Զեբալոս
Կլաուդիո Դ. Զիվիկ
Վ. Քրեյգ Ցվիք

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՎՈՐՈՒՄ

Վիլֆորդ Վ. Մնդերսեն
Կոիչի Սոյագի
Ռանդալ Կ. Բենեթ
Բրուս Ա. Քարլսոն
Ջ. Դեվն Քորնիշ
Տիմոթի Ջ. Դայքես
Բրեդլի Դ. Ֆոսթեր
Ռենդի Դ. Ֆանկ
Օ. Վինսենթ Հալեք
Քեվին Ս. Համիլտոն
Լարի Ս. Քեյչեր
Լարի Ռ. Լորենս
Փեր Գ. Մայմ
Հյուգո Ի. Մարտինեզ
Ջեյմս Բ. Մարտինո
Ջայրո Մազագարդի
Սորիան Օչոա
Քենտ Ֆ. Ռիչարդս
Գրեգորի Ա. Շվիցեր
Տերենս Մ. Վինսոն
Լարի Յ. Վիլսոն

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ



Ջեռալդ Կոսե
Առաջին Խորհրդական

Գարի Ի. Սթիվենսոն
Նախագահող Եպիսկոպոս

Դին Մ. Դեյվիս
Երկրորդ Խորհրդական

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ



Ջոն Ս. Թանները
Առաջին Խորհրդական

Թեդ Ռ. Քաիստեր
Նախագահ

Դեվին Գ. Դյուրան
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՅՔ



Քերոլ Ֆ. Մակքոնկի
Առաջին Խորհրդական

Բոննի Լ. Օսկարսոն
Նախագահ

Նեյլ Ֆ. Մերիոթ
Երկրորդ Խորհրդական

ՍԳՈՓՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Քերոլ Մ. Սթեֆենս
Առաջին Խորհրդական

Լինդա Ք. Բըրթն
Նախագահ

Լինդա Շ. Ռիվս
Երկրորդ Խորհրդական

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



Ջին Ա. Սթիվենս
Առաջին Խորհրդական

Ռոզմարի Մ. Վիքսոմ
Նախագահ

Շերիլ Ա. Էսփին
Երկրորդ Խորհրդական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՏՂԱՄԱՐԴԻԿ



Լարի Մ. Գիբսոն
Առաջին Խորհրդական

Դեյվիդ Լ. Բեք
Նախագահ

Ռանդալ Լ. Ռիդ
Երկրորդ Խորհրդական

Հոկտեմբեր 2014

Ժամացույցի սլաքի ուղղությամբ վերին ձախից պատկերված են անդամները և միսիոներները Ալեքսանդրիայում, Վիրջինիա, ԱՄՆ, Յոհանեսբուրգում, Հարավային Աֆրիկա, Կուաթեմոքում, Մեքսիկա, Սայպանում, Հյուսիսային Մարիանյան կղզիներ, Փիչթրի Քորներսում, Ջորջիա, ԱՄՆ, Կանոասում, Բրազիլիա, Սան Լորենցոյում, Պարագվայ, Վերոնայում, Վիսքոնսին, ԱՄՆ, և Ուոթերֆորդում, Իռլանդիա:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Ապահով առաջնորդվենք տուն

Մենք նայում ենք երկինք՝ վստահելի ուղղորդում ստանալու համար, որ կարողանանք գծել և հետևել իմաստուն և ճիշտ ընթացքին:

Եղբայրներ, մենք հավաքվել ենք որպես քահանայության մի հզոր մարմին, այստեղ Համաժողովների Կենտրոնում և աշխարհի տարբեր վայրերում: Ինձ համար մեծ պատիվ և նաև խոնարհեցնող է՝ խոսքս ձեզ ուղղելու իմ պատասխանատվությունը: Ես աղոթում եմ, որ այս ընթացքում Տիրոջ Հոգին լինի ինձ հետ:

Յոթանասունհինգ տարի առաջ, 1939թ. փետրվարի 14-ին Համբուրգում, Գերմանիա, ուրախ տոնական օր էր: Ջերմեռանդ ելույթներ, ցնծացող մարդկանց բազմություններ, հայրենասիրական օրհներգեր. այդ մթնոլորտում նոր *Բիսմարկ* ռազմանավը ծով հանվեց Էլբա [գետով]: Այդ ամենահզոր նավը ռազմական զրահատեխնիկայի և մեքենաշինության մի հրապուրիչ տեսարան էր: Նավի կառուցման համար պահանջվել էր ավելի քան 57 000 գծագիր՝ 380 միլիմետրանոց ռադարային վերահսկվող երկփողանի հրանոթներով զրահաշտարակների համար: Նավի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ այն ուներ 28 000 մղոն (45000 կմ) երկայնքով էլեկտրական շղթաներ: Այն կշռում էր ավելի քան 35 000 տոննա և զրահաթիթեղը ապահովում էր առավելագույն անվտանգություն: Շքեղ տեսքով, հսկայական չափերով, ապշեցուցիչ հրազենով այդ հզոր հսկան անխորտակելի էր թվում:

Բիսմարկի հանդիպումը ճակատագրի հետ եղավ ավելի քան երկու տարի անց, երբ 1941թ. մայիսի 24-ին Բրիտանական

Նավատորմի երկու հզոր *Ռեկսի արքայազն* և *Հուդ* ռազմանավերը ճակատամարտ տվեցին *Բիսմարկի* և գերմանական *Արքայազն Յուջին* հածանավի հետ: Հինգ րոպեում *Բիսմարկը* Ատլանտյան օվկիանոսում խորտակեց *Հուդ* ռազմանավը, որի ավելի քան 1,400 հոգանոց անձնակազմից փրկվեցին միայն երեքը: Բրիտանական մյուս *Ռեկսի արքայազն* ռազմանավը ծանր վնասներ կրելով հեռացավ:

Հաջորդող երեք օրերի ընթացքում *Բիսմարկը* կրկին ու կրկին ճակատամարտ տվեց Բրիտանական ռազմանավերի և օդուժի հետ: Ընդհանուր առմամբ, բրիտանացիները կենտրոնացրել էին իրենց ողջ ուժը՝ հինգ ռազմանավեր, երկու ավիակիրներ, 11 հածանավեր և 21 կործանիչներ, որպեսզի գտնեին և խորտակեին հզոր *Բիսմարկը:*

Այդ ճակատամարտերի ընթացքում արկերի տեղատարափի տակ *Բիսմարկը* միայն մակերեսային վնասներ կրեց: Արդյո՞ք անխորտակելի էր այն: Այնուհետև ականակիրը մի ճշգրիտ հարված հասցրեց, որի արդյունքում խափանվեց *Բիսմարկի* ղեկը: Վերականգնողական ջանքերն ապարդյուն էին: Թեպետ հրանոթները պատրաստ էին կրակելու, ողջ անձնակազմը պատրաստ էր մարտի, բայց *Բիսմարկը* կարողանում էր միայն դանդաղ պտտվել: Ուղղակի այդ պահին անհասանելի էր գերմանական հզոր օդուժը: Բիսմարկը չէր կարող հասնել ապահով հայրենի նավահանգիստ: Ոչ մեկը չէին կարող ապահովել նրա անվտանգությունը, քանի որ *Բիսմարկը* կորցրել էր իր նշված ուղով շարժվելու կարողությունը: Չէր աշխատում ղեկը, չէր գալիս օգնություն, չէր կարող հասնել նավահանգիստ: Վախճանը մոտ էր: Բրիտանական անդադար կրակահերթերի ներքո գերմանական անձնակազմը խուճապի մեջ էր և ջրի տակ սուզվեց մի ժամանակ անխորտակելի թվացող նավը: Ատլանտյան օվկիանոսի պապակ ալիքները նախ լափեցին կողքերից և ապա կուլ տվեցին Գերմանական նավատորմի հպարտությունը: *Բիսմարկն* այլևս չկար:[1]

Բիսմարկի պես մեզանից յուրաքանչյուրը հրաշք տեխնիկա է: Ինչևէ, մեր ստեղծումը չի սահմանափակվել մարդկային հանճարով: Մարդը կարող է նախագծել ամենաբարդ մեքենաները, բայց չի կարող դրանց կյանք տալ կամ շնորհել գիտակցության և դատողության զորությունները: Դրանք աստվածային պարգևներ են, որ շնորհվում են միայն Աստծո կողմից:

Եղբայրներ, նավի համար կենսական կարևորություն ունեցող ղեկի պես, մեզ միջոց է տրվել որոշելու՝ որ ուղղությամբ պետք է ճամփորդենք: Տիրոջ փարոսը լուսավորում է մեզ բոլորիս, որ նավարկում ենք կյանքի ծովերով: Մեր նպատակն է՝ անշեղորեն ընթանալ դեպի մեր ցանկալի նպատակը, այսինքն՝ Աստծո սելեստիալ թագավորությունը: Աննպատակ մարդը նման է առանց ղեկ նավի, ով գուցե երբեք չհասնի իր հարազատ նավահանգիստ: Մենք ազդանշան ենք ստանում՝ գծել ձեր ուղին, բարձրացնել առագաստները, ուղղել ղեկը և ընթանալ առաջ:

Մարդն էլ է հզոր *Բիսմարկի* պես: Տուրբինների հրումը և պտուտակների ուժը ապարդյուն է՝ առանց այդ ղեկավարման զգացմունքի,



այդ էներգիայի օգտագործման, այդ ուժն ուղղորդող ղեկի, որն իր համեմատաբար փոքր չափերով աչքի չի ընկնում, սակայն անչափ կարևոր նշանակություն ունի:

Մեր Հայրը ստեղծել է արևը, լուսինը և աստղերը, երկնային գալակտիկաները, որպեսզի ուղղորդի ծովերում նավարկող ծովագնացներին: Մեզ համար, երբ քայլում ենք կյանքի ճանապարհով, Նա տալիս է մաքուր քարտեզ և գծանշում դեպի մեր ցանկալի ճակատագիրը տանող ուղին: Նա զգուշացնում է՝ զգուշացեք շեղող ուղիներից, որոգայթներից և թակարդներից: Մենք չենք կարող խաբվել նրանց կողմից, ովքեր մեզ կփորձեն մոլորեցնել, այդ խելացի մեղքի գայթակղիչները, որոնք ամենուր են: Փոխարենը, մենք դադար ենք առնում, որպեսզի աղոթենք, մենք լսում ենք այն մեղմ, հանգիստ ձայնը, որը մեր հոգու խորքից հնչեցնում է Վարդապետի մեղմ հրավերը. «Եկ հետևիր ինձ»:[2]

Դեռևս կան մարդիկ, ովքեր չեն լսում, չեն հնազանդվում, նախընտրում են քայլել իրենց իսկ ստեղծած ուղով: Շատ հաճախ են նրանք անձնատուր լինում մեզ բոլորիս շրջապատող գայթակղություններին, որոնք կարող են շատ հրապուրիչ տեսք ունենալ:

Որպես քահանայության կրողներ մենք երկիր ենք ուղարկվել անհանգիստ ժամանակներում: Մենք ապրում ենք բարդ աշխարհում, որտեղ ամենուր հակամարտություններ են: Քաղաքական սխեմաները խաթարում են պետությունների կայունությունը, բռնակալները զավթում են իշխանությունը և հասարակության որոշ հատվածներ թվում է ընդմիշտ հարստահարված են, հնարավորությունից զրկված և ձախողման զգացումով պարուրված: Մարդկանց ստերը զրնգում են մեր ականջներում, և մեղքը շրջապատում է մեզ:

Մենք պարտավոր ենք արժանի լինել մեր Երկնային Հոր բոլոր փառահեղ օրհնություններին, որ Նա պահել է մեզ համար: Ուր էլ գնանք, մեր քահանայությունը մեզ հետ է լինելու: Արդյո՞ք մենք կանգնում ենք սուրբ վայրերում: Խնդրում եմ, նախքան ձեզ և ձեր քահանայությունը կվտանգեք գնալով այնպիսի վայրեր կամ մասնակցելով այնպիսի միջոցառումների, որոնք արժանի չեն ձեզ կամ այդ քահանայությանը, մի պահ կանգ առեք և մտածեք հետևանքների մասին:

Մենք, որ կարգվել ենք Աստծո քահանայությանը, կարող ենք շատ բան փոխել: Երբ պահում ենք մեր անձնական մաքրությունը և պատվում մեր քահանայությունը, մենք դառնում ենք արդար օրինակներ մյուսների համար: Պողոս Առաքյալը հորդորել է. «Օրինակ եղիր հավատացյալներին խոսքով, վարքով, սիրով, հավատքով, սրբությունով»:[3] Նա նաև գրեց, որ Քրիստոսի հետևորդները պետք է «լույս լինեն աշխարհքի համար»:[4] Արդարակեցության օրինակ ծառայելով կարող ենք լույս սփռել մթագնող աշխարհում:

Ձեզանից շատերը կհիշեն Նախագահ Ն. Էլդոն Թաններին, ով ծառայել է որպես խորհրդական Եկեղեցու չորս Նախագահների համար: Նա եղել է արդարակեցության անխոտոր օրինակ՝ արդյունաբերության մեջ ծավալած իր ողջ կարիերայի ընթացքում, Կանադայի կառավարությունում իր ծառայության մեջ և լինելով Հիսուս Քրիստոսի Առաքյալ: Նա մեզ տվել է այս ոգեշնչված խորհուրդը. «Ոչինչ այնքան մեծ ուրախություն և հաջողություն չի բերում, որքան ավետարանի ուսմունքների համաձայն ապրելը: Եղեք օրինակ, բարերար ազդեցություն թողեք»:

Նա շարունակել է. «Մեզանից յուրաքանչյուրը մի գործի համար է նախատեսվել որպես [Աստծո] ծառա, ում նա հարմար է գտել շնորհելու քահանայությունը և Իր անունով գործելու զորությունը: Միշտ հիշեք, որ մարդիկ նայում են ձեզ՝ առաջնորդության ակնկալիքով, և դուք լավ կամ վատ ձևով ազդում եք անհատների կյանքի վրա, որն իր ազդեցությունը կթողնի գալիք սերունդների վրա»:[5]

Մենք ամրանում ենք այն ճշմարտությամբ, որ այսօր աշխարհում մեծագույն ուժը մարդու միջոցով գործող Աստծո զորությունն է:

Մահկանացու կյանքի ծովով նավարկելու համար մեզ անհրաժեշտ է Հավերժական Ծովայինի, այսինքն՝ մեծ Եհովայի առաջնորդությունը: Մենք նայում ենք երկնքին և խնդրում՝ երկնային օգնություն:

Ադամի և Եվայի որդի Կայենը հայտնի օրինակ է, ով չձգտեց դեպի վեր: Էությամբ զորեղ, բայց թուլակամ Կայենը թույլ տվեց, որ ագահությունը, նախանձը, անհնազանդությունը և անգամ մարդասպանությունը, խափանեին այն անձնական ղեկը, որը կառաջնորդեր իրեն դեպի ապահովություն և վեհացում: Նրա հայացքը ուղղված էր ոչ թե դեպի վերև, այլ դեպի ներքև, և Կայենն ընկավ:

Մեկ այլ ժամանակաշրջանում, ամբարիշտ թագավորի կողմից Աստծո մի ծառա փորձվեց: Երկնային ոգեշնչման օգնությամբ Դանիելը թագավորի համար մեկնաբանեց պատի վրայի գրվածքները: Որպես վարձք առաջարկվեց թագավորական թիկնոց, ոսկե վզնոց և քաղաքական իշխանություն, սակայն Դանիելն ասաց. «Պարգևներդ քեզ լինեն, և ընծաներդ ուրիշին տուր»:[6] Մեծ հարստություն և իշխանություն առաջարկվեց Դանիելին՝ ոչ թե Աստծո, այլ աշխարհիկ ունեցվածքի տեսքով: Դանիելն ընդդիմացավ և հավատարիմ մնաց:

Հետագայում, երբ Դանիելը երկրպագում էր Աստծուն, որը չէր թույլատրվում ըստ հռչակված հրամանագրի, նրան զցեցին առյուծների գուբը: Աստվածաշնչյան պատմությունն ասում է, որ հաջորդ առավոտյան «Դանիելը դուրս բերվեցավ գուբիցը և նորա վրա ոչ մի վնաս չգտնուեցավ, որովհետև հավատացել էր . . . Աստուծուն»:[7] Ծայրահեղ կարիքի պահին հավատարիմ մնալու Դանիելի վճռականությունը պարգևեց աստվածային պաշտպանություն և ապահով ապաստան: Մենք ևս պաշտպանված և ապահով կլինենք, եթե այդ նույն հաստատուն ուղով շարժվենք դեպի մեր հավերժական տուն:

Պատմության ժամացույցը, ավազի ժամացույցի ավազի պես ցույց է տալիս ժամանակի ընթացքը: Նոր խաղացողներ են գալիս զբաղեցնելու կյանքի բեմահարթակը: Մեր օրերի խնդիրները չարագուշակ հառնում են մեր առջև: Աշխարհի պատմության ընթացքում սատանան անխոնջ աշխատել է Փրկչի հետևորդներին կործանելու համար: Եթե տեղի տանք նրա գայթակղություններին, մենք հզոր *Բիսմարկի* պես կկորցնենք ղեկը, որը կարող է մեզ դեպի անվտանգություն առաջնորդել: Փոխարենը, շրջապատված լինելով ժամանակակից կյանքի զերզարգացած հնարավորություններով, մենք նայում ենք երկինք՝ վստահելի ուղղորդում ստանալու համար, որ կարողանանք գծել և հետևել իմաստուն և ճիշտ ընթացքին: Մեր Երկնային Հայրն անպատասխան չի թողնի մեր անկեղծ խնդրանքը: Երբ երկնային օգնություն փնտրենք, մեր ղեկը, ի տարբերություն *Բիսմարկի,* չի խափանվի:

Մենք մեր անհատական ճանապարհին անցնելիս, թող որ ապահով նավարկենք կյանքի ծովերում: Թող որ մենք ունենանք Դանիելի քաջությունը, որ մնանք ճշմարիտ ու հավատարիմ, չնայած մեզ շրջապատող մեղքին ու գայթակղությանը: Թող որ մեր վկայությունները լինեն այնքան խորը և ամուր, ինչպես Նեփիի եղբայր Հակոբինը, ով ընդիմանալով նրան, ով ամեն կերպ ձգտում էր կործանել իր հավատը, հայտարարեց. «Ես չէի կարող սասանվել»:[8]

Եղբայրներ, մեր ընթացքն ուղղորդող հավատքի ղեկով մենք ևս կգտնենք մեր ուղին, որն ապահով տանում է դեպի տուն, տուն՝ Աստծո մոտ, հավերժ Նրա հետ բնակվելու: Որ այդպես լինի մեզանից յուրաքանչյուրի համար, ես աղոթում եմ մեր Փրկիչ և Քավիչ՝ Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Ludovic Kennedy, *Pursuit: The Chase and Sinking of the Bismarck* (1974):
2. Ղուկաս ԺԸ.22:
3. Ա Տիմոթեոս Դ.12:
4. Փիլիպպեցիս Բ.15:
5. N. Eldon Tanner, “For They Loved the Praise of Men More Than the Praise of God,” *Ensign*, Nov. 1975, 74.
6. Դանիել Ե.17:
7. Դանիել Զ.23:
8. Հակոբ Է.5:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության Առաջին Խորհրդական

Շարունակվող հայտնություն

Մարդկային դատողությունն ու տրամաբանությունը բավական չեն կյանքում կարևոր հարցերի պատասխանները ստանալու համար: Մենք Աստծուց եկող հայտնության կարիքն ունենք:

Այսօր ես հույս եմ տածում, որ մենք բոլորս կզգանք Աստծո սերն ու լույսը: Այսօր ունկնդիրներից շատերը մեր սիրելի Երկնային Հորից եկող անձնական հայտնության օրհնության հրատապ կարիքն ունեն:

Միսիայի նախագահների համար դա կարող է աղերսող աղոթքը լինել, որպեսզի իմանան ինչպես քաջալերել մաքառող միսիոներին: Աշխարհում պատերազմից ավերված վայրում ապրող հոր կամ մոր համար դա կլինի ընտանիքը ապահով վայր տեղափոխելու կամ իրենց բնակավայրում գոյատևելու հուսահատ կարիքը: Հարյուրավոր ցցերի նախագահները և եպիսկոպոսները աղոթում են այսօր իմանալու համար՝ ինչպես կարող են օգնել Տիրոջը՝ կորած ոչխարին փրկելու համար: Իսկ մարգարեն կուզենա իմանալ, ինչ է Տերը ցանկանում, որ ինքը խոսքի Եկեղեցու և անհանգիստ աշխարհի համար:

Մենք բոլորս գիտենք, որ մարդկային դատողությունն ու տրամաբանությունը բավական չէ կյանքում կարևոր հարցերի պատասխանները ստանալու համար: Մենք Աստծուց եկող հայտնության կարիքն ունենք: Եվ մենք ոչ միայն մեկ հայտնության կարիք ունենք նեղության պահին, այլև կարիքն ունենք անընդհատ թարմացող հոսքի: Մենք ոչ թե լույսի և սփոփանքի մեկ առկայծման, այլև Աստծո հետ հաղորդակցվելու շարունակական օրհնության կարիքն ունենք:

Եկեղեցու գոյության սկիզբը հանդիսացավ մի պատանի, ով գիտեր, որ դա ճիշտ էր: Պատանի Ջոզեֆ Սմիթը գիտեր, որ ինքնուրույն չէր կարող իմանալ՝ որ եկեղեցուն պետք է միանար: Այնպես որ, նա խնդրեց Աստծուն, ինչպես Հակոբոսի գրքում է գրված: Հայր Աստվածը և Նրա Սիրելի Որդին հայտնվեցին ծառերի պուրակում: Նրանք պատասխանեցին այդ հարցին, որի լուծումը Ջոզեֆի ուժից վեր էր:

Այն ժամանակ ոչ միայն նա կանչվեց Աստծո կողմից հիմնելու Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին, այլև դրա հետ միասին վերականգնվեց Սուրբ Հոգին հրավիրելու զորությունը, որպեսզի Աստծուց եկող հայտնությունը շարունակական լինի:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերն այսպես է նկարագրել ճշմարիտ Եկեղեցու այս բնորոշ գիծը. «Հայտնությունը շարունակվում է Եկեղեցում. Մարգարեն ստանում է այն Եկեղեցու համար, նախագահն իր ցցի, իր միսիայի կամ իր քվորումի համար, եպիսկոպոսն իր ծխի համար, հայրն իր ընտանիքի համար, անհատն ինքն իրեն համար»:[1]

Հայտնության այդ հրաշալի գործընթացը սկսվում, ավարտվում և շարունակվում է, երբ անձնական հայտնություն ենք ստանում: Եկեք որպես օրինակ դիտարկենք մեծ Նեփիին՝ Լեքիի որդուն: Նրա հայրը երազ տեսավ: Նեփիի ընտանիքի մյուս անդամները Լեքիի երազը համարեցին որպես մտավոր խառնաշփոթության ապացույց: Երազում Աստված պատվիրեց, որ Լեքիի որդիները, վտանգելով իրենց կյանքը, վերադառնային



Երուսաղեմ և բերեին թիթեղները, որոնք պարունակում էին Աստծո խոսքը, որպեսզի դրանք իրենց հետ խոստացված երկիր տանեին:

Մենք հաճախ ենք մեջբերում Նեփիի խիզախ հայտարարությունը, երբ հայրը խնդրեց նրանց վերադառնալ Երուսաղեմ: Դուք գիտեք այդ խոսքերը. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:[2]

Երբ Լեքին լսեց Նեփիի այս խոսքերը, սուրբ գրություններն ասում են, որ «նա չափազանց ուրախացավ»:[3] Նա ուրախացավ, քանի որ գիտեր, որ Նեփին օրհնվել էր հաստատող հայտնությամբ, որ իր հոր երազը իրական հաղորդակցություն էր եղել Աստծո հետ: Նեփին չասաց. «Ես կգնամ ու կանեմ այն, ինչ իմ հայրն է ասում»: Այլ նա ասաց. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է»:

Ձեր ընտանիքների փորձից դուք ևս գիտեք, թե ինչու Լեքին «չափազանց ուրախացավ»: Նրա ուրախության պատճառն այն էր, որ Նեփին հաստատող հայտնություն էր ստացել:

Շատ ծնողներ ընտանեկան կանոններ են սահմանում, թե երեկոյան որ ժամին պետք է դեռահաս երեխան տուն վերադառնա: Բայց պատկերացրեք ծնողի ուրախությունը, երբ իմանում է, ինչպես շաբաթներ առաջ մի ծնող իմացավ, որ իր երեխան, որը տնից հեռու էր ապրում, ոչ միայն երեկոյան տուն վերադառնալու ժամ էր սահմանել, այլև կիրակին էր պահում, ինչպես իրեն տանն էին սովորեցրել: Ծնողի հայտնությունն իր տևական ազդեցությունն է թողնում երեխայի մեջ շարունակվող անձնական հայտնության վրա:

Մայրս պետք է որ հասկացած լիներ հայտնության այդ սկզբունքը: Երբ երիտասարդ էի և երեկոյան ուշ էի վերադառնում, ես կամաց փակում էի տան դուռը: Իմ սենյակ գնալու համար պետք է անցնեի մորս ննջասենյակի կողքով: Որքան էլ կամաց ոտքի ծայրերի վրա քայլեի, երբ մոտենում էի նրա կիսաբաց դռանը, միշտ կամացուկ լսում էի իմ անունը. «Հալ, ներս արի մի վայրկյանով»:

Ես ներս էի մտնում և նստում նրա անկողնու եզրին: Սենյակում մութ էր: Եթե կողքից լսեիք, կկարծեիք դա ընդամենը կյանքի մասին ընկերական զրույց էր: Բայց առ այսօր միտքս են գալիս նրա խոսքերն այն նույն զորությամբ, ինչը զգացել եմ իմ հայրապետական օրհնությունը կարդալիս:

Ես չգիտեմ, ինչ էր նա խնդրում իր աղոթքներում, երբ սպասում էր ինձ այդ գիշերներին: Կարող եմ ենթադրել, որ դրանք մասնավորապես իմ ապահովության համար են եղել: Բայց վստահ եմ, որ նա աղոթել է այնպես, ինչպես հայրապետն է աղոթում նախքան օրհնություն տալը: Նա աղոթում է, որ իր խոսքերը հասնեն օրհնություն ստացողին ոչ թե որպես իր, այլ որպես Աստծո խոսքեր: Մորս աղոթքներն այդ օրհնության համար իմ դեպքում պատասխանվեցին: Նա հոգևոր աշխարհում է ավելի քան 40 տարի: Վստահ եմ, նա անչափ ուրախ է, որ ես օրհնվել եմ, ինչպես ինքն էր խնդրել, որպեսզի իր խորհրդի մեջ լսեի

Աստծո հրամանները: Եվ ես փորձել եմ գնալ և անել այնպես, ինչպես նա կցանկանար:

Ես շարունակվող հայտնության այդ նույն հրաշքը տեսել եմ Եկեղեցու ցցի նախագահների և եպիսկոպոսների մոտ: Եվ, ինչպես ընտանիքի ղեկավարների հայտնություն ստանալու դեպքում է, հայտնությունն արժեքավոր է միայն այն դեպքում, երբ ղեկավարման ներքո գտնվող մարդիկ ստանում են հաստատող հայտնություն:

Ես հայտնության այդ հրաշքի ականատեսն եմ եղել 1976թ. Այդահոյում՝ Տետոն ամբարտակի փլուզումից հետո: Զեզանից շատերը լսել են տեղի ունեցածի մասին: Բայց հետագա օրերին ցցի նախագահի ստացած շարունակական հայտնություններն օրհնեցին մեզ բոլորիս:

Հազարավոր մարդիկ տեղափոխվեցին, քանի որ նրանց տները քանդվել էին: Փրկարար ջանքերը ղեկավարում էր տեղի ցցի նախագահը, ով ագարակատեր էր: Ես աղետից մի քանի օր հետո Ռիքս քոլեջի դասարաններից մեկում էի: Դաշնային աղետների գործակալության մի ղեկավար էր ժամանել: Նա և իր գլխավոր օգնականները ներս մտան այն մեծ լսարանը, որտեղ ցցի նախագահը հավաքել էր եպիսկոպոսներին և նույնիսկ տեղի մի քանի այլ կրոնական ծառայողների: Ես այնտեղ էի, քանի որ փրկվածներից շատերին օգնություն էր ցուցաբերվել և ապաստան էր տրվել այն քոլեջի հանրակացարանում, որի նախագահը ես էի:

Երբ ժողովը սկսվեց, դաշնային աղետների գործակալության ներկայացուցիչը կանգնեց և սկսեց պաշտոնական ձայնով ասել, թե ինչ պետք է արվեր: Հինգ թե վեց առաջադրանքներից յուրաքանչյուրը նշելուց հետո, որոնք նա շատ կարևորում էր, ամեն անգամ ցցի նախագահը հանգիստ պատասխանում էր. «Մենք արդեն դա արել ենք»:

Մի քանի րոպեից, կառավարության այդ ներկայացուցիչն ասաց. «Լավ, կարծում եմ, ուղղակի մի փոքր կնստեմ և կդիտեմ»: Այնուհետև նա և իր տեղակալները լսում էին, թե ինչպես էին եպիսկոպոսներն ու երեցների քվորումների նախագահները զեկուցում իրենց կատարած գործերի մասին: Նրանք նկարագրում էին՝ իրենց ղեկավարներից ինչ հրահանգներ էին ստացել և կատարել: Նրանք նաև պատմեցին՝ ինչ ոգեշնչումներ են ստացել ընտանիքներին գտնելու և նրանց օգնելու հրահանգներն իրագործելիս: Այդ օրն արդեն ուշ էր: Նրանք բոլորը շատ հոգնած էին, չէին կարողանում շատ զգացմունքներ արտահայտել, բացի մարդկանց հանդեպ սերը:

Ցցի նախագահը մի քանի վերջին հրահանգներ տվեց եպիսկոպոսներին, և ապա հայտնեց, որ հաշվետվությունների մյուս ժողովը տեղի կունենա հաջորդ օրը վաղ առավոտյան:

Հաջորդ օրը դաշնային թիմի ղեկավարը առավոտյան հաշվետվության և առաջադրանքների ժողովից 20 րոպե շուտ եկավ: Ես կանգնած էի այնտեղ: Եվ լսեցի, ինչպես նա հանգիստ ասաց ցցի նախագահին. «Նախագահ, ի՞նչ կարող ենք ես և իմ թիմի անդամներն անել»:

Այն, ինչ տեսավ այդ մարդը, ես տեսել եմ ամբողջ աշխարհում՝ աղետների և փորձությունների ժամանակ: Նախագահ Փաքերը ճիշտ էր: Շարունակվող հայտնությունը գալիս է ցցերի նախագահներին՝ բարձրացնելով նրանց իրենց իմաստությունից և ունակություններից վեր: Եվ բացի այդ, նրանց, ում նախագահն առաջնորդում է, Տերը տալիս է հաստատող վկայություն, որ նրա հրահանգները գալիս են Աստծո կողմից Սուրբ Հոգու միջոցով՝ անկատար մարդկային էակին:

Իմ կյանքում ես օրհնվել եմ, երբ կանչվել եմ հետևելու ոգեշնչված ղեկավարներին: Լինելով շատ երիտասարդ ես կանչվել եմ լինելու երեցների քվորումի նախագահի խորհրդական: Այնուհետև եղել եմ երկու շրջանների նախագահների խորհրդական, Եկեղեցու Նախագահող Եպիսկոպոսի խորհրդական, Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ և Եկեղեցու երկու Նախագահների խորհրդական: Ես տեսել եմ հայտնություններ, որ տրվել են նրանց, և այնուհետև հաստատվել իրենց հետևորդների համար:

Հավանության արժանացնող այդ անձնական հայտնությունը, որը մենք բոլորս փափագում ենք, հեշտ չի գալիս, կամ չի գալիս պարզապես խնդրելով: Տերը տվել է հետևյալ ուղեցույցը՝ օգնելու համար մեզ, որ ստանանք այդ վկայությունն Աստծուց: Դա ուղեցույց է բոլորիս համար, ովքեր անձնական հայտնություն են փնտրում:

«Թող քո որովայնը գթությամբ լցված լինի բոլոր մարդկանց հանդեպ և հավատքի ընտանիքի հանդեպ, և թող առաքինությունը զարդարի քո մտքերն անդադար. այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից:

Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը»:[4]

Դրանից ես խորհուրդ եմ քաղել բոլորիս համար: Թեթևամտորեն մի վերաբերվեք, երբ սեր եք զգում Աստծո մարգարեի հանդեպ: Որտեղ էլ որ ես գնացել եմ Եկեղեցում, ով էլ որ եղել է մարգարեն այդ ժամանակ, անդամները միշտ խնդրել են. «Երբ վերադառնաք Եկեղեցու գլխավոր վարչություն, խնդրում ենք, ասեք մարգարեին, թե որքան շատ ենք սիրում իրեն»:

Դա շատ ավելին է, քան հերոսին երկրպագելը կամ այն զգացմունքները, որ երբեմն ունենում ենք հերոսական կերպարներով հիանալիս: Դա պարգև է Աստծուց: Դրանով դուք ավելի հեշտ կստանաք հաստատող հայտնության պարգևը, երբ նա, որպես Տիրոջ մարգարե, խոսում է իր պաշտոնում: Սերը, որ դուք զգում եք, այն սերն է, որ Տերը տածում է Իր խոսնակի հանդեպ:

Հեշտ չէ մշտապես այդ զգացումն ունենալը, որովհետև Տերը հաճախ խնդրում է Իր մարգարեներին տալ խորհուրդ, որը մարդկանց համար դժվար ընդունելի է: Մեր հոգիների թշնամին փորձում է այնպես անել, որ մենք վիրավորվենք և կասկածենք մարգարեի Աստվածային կոչման մեջ:

Ես տեսել եմ ինչպես կարող

է Սուրբ Հոգին դիպչել փափկած սրտով մի մարդու՝ Հիսուս Քրիստոսի խոնարհ աշակերտին պաշտպանելով հաստատող հայտնությամբ:

Մարգարեն ուղարկեց ինձ, որ կնքման սուրբ զորությունը շնորհեի հեռավոր փոքր քաղաքում ապրող մի մարդու: Միայն Աստծո մարգարեն ունի բանալիները՝ որոշելու, թե ով պետք է ստանա այդ սուրբ զորությունը, որը Տերը շնորհել է Պետրոսին, ավագ Առաքյալին: Ես այդ նույն կնքման զորությունը ստացել եմ, բայց միայն Եկեղեցու Նախագահի հրահանգով կարող էի շնորհել այն մեկ ուրիշին:

Սոլթ Լեյքից հեռու մի աղոթատան սենյակում ես ձեռքերս դրեցի մարգարեի կողմից ընտրված մի մարդու գլխին՝ շնորհելով կնքման զորությունը: Նրա ձեռքերից երևում էր, որ ողջ կյանքում հող մշակելով էր հայթհայթել իր համեստ ապրուստը: Նրա փոքրամարմին կինը նստած էր իր կողքին: Ակնհայտ էր, որ նա էլ էր ամուսնու հետ միասին տքնաջան աշխատել:

Ես արտասանեցի մարգարեի կողմից տրված խոսքերը. «Ունենալով ինձ տրված իշխանություն և պատասխանատվություն մարգարեից», այնուհետև նշելով մարգարեի անունը, «ով երկրի վրա այս ժամանակաշրջանում կրում է քահանայության բոլոր բանալիները, ես շնորհում եմ կնքման զորությունը» և նշեցի այդ մարդու անունը և ապա տաճարի անունը, որտեղ նա պետք է ծառայեր որպես կնքող:

Արցունքները հոսեցին նրա այտերով: Ես տեսա, որ նրա կինն էլ էր արտասվում: Ես սպասեցի, որ նրանք հանգստանային: Կինը կանգնեց և մոտեցավ ինձ: Նա նայեց ինձ և ապա երկչոտ ասաց, որ և ուրախ էր, և տխուր: Նա ասաց, որ այնքան մեծ հաճույքով է գնացել տաճար իր ամուսնու հետ, բայց այժմ զգում էր, որ չէր կարող միանալ ամուսնուն, քանի որ Աստված նրան էր ընտրել շնորհելու այդքան փառահեղ և սուրբ վստահությունը: Այնուհետև նա ասաց, որ իր կողակցի հետ տաճար գնալու համար անհամապատասխանության զգացումը պայմանավորված էր նրանով, որ ինքը չգիտեր ոչ գրել, ոչ էլ կարդալ:

Ես նրան վստահեցրի, որ ամուսնու համար պատիվ կլիներ կնոջ ընկերակցությունը տաճարում՝ իր կնոջ մեծ հոգևոր ուժի շնորհիվ: Նաև նրա լեզվի իմ քիչ գիտելիքով ես ասացի, որ Աստված իրեն հայտնել էր այն, ինչը վեր էր երկրային ամեն կրթությունից:

Նա Հոգու պարգևով գիտեր, որ Աստված Իր մարգարեի միջոցով երկնային վստահություն էր շնորհել իր սիրելի ամուսնուն: Նա գիտեր, որ կնքող զորությունը շնորհող բանալիները կրում էր մի մարդ, որին նա երբեք չէր տեսել և սակայն գիտեր, որ նա Աստծո կենդանի մարգարեն էր: Նա գիտեր, և իրեն ոչ մի կենդանի վկա չէր ասել, որ մարգարեն աղոթել էր իր ամուսնու անվան վրա: Նա գիտեր, որ այդ կանչը եկել էր Աստծուց:

Նա նաև գիտեր, որ ծեսերը, որոնք իր ամուսինը պետք է կատարեր, կապելու էին մարդկանց հավերժության համար սելեստիալ արքայությունում: Նրա սրտում և մտքում հաստատվեց, որ Պետրոսին տրված Տիրոջ խոստումը դեռևս շարունակվում է Եկեղեցում. «Այն որ կապես երկրի վրա, կապուած կլինի երկնքումը»:[5] Նա գիտեր դա՝ Աստծուց եկած հայտնությամբ:

Եկեք վերադառնանք իմ ելույթի սկզբին: «Հայտնությունը շարունակվում է Եկեղեցում. Մարգարեն ստանում է այն Եկեղեցու համար, նախագահն իր ցցի, իր միսիայի կամ իր քվորումի համար, եպիսկոպոսն իր ծխի համար, հայրն իր ընտանիքի համար, անհատն ինքն իրեն համար»:[6]

Ես բերում եմ իմ վկայությունը, որը ճշմարիտ է: Երկնային Հայրը լսում է ձեր աղոթքները, Նա սիրում է ձեզ: Նա գիտի ձեր անունը: Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդին և մեր Քավիչը: Նա ձեզ սիրում է այնքան շատ, որ դա ձեր ընկալելու ունակությունից վեր է:

Աստված Սուրբ Հոգու միջոցով հայտնություն է թափում Իր զավակների վրա: Նա խոսում է Իր մարգարեի հետ երկրի վրա, ով այսօր Թոմաս Ս. Մոնսոնն է: Ես վկայում եմ, որ նա կրում և գործադրում է քահանայության բոլոր բանալիները երկրի վրա:

Երբ այս համաժողովին լսեք նրանց խոսքերը, ում Աստված կանչել է խոսելու Իր անունից, ես աղոթում եմ, որ դուք ստանաք ձեզ անհրաժեշտ հաստատող հայտնությունը՝ կրկին տուն տանող ձեր ուղին գտնելու և կնքված ընտանիքով Նրա հետ հավերժ ապրելու համար: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Boyd K. Packer, "We Believe All That God Has Revealed," *Ensign,* May 1974, 95.
2. 1 Նեփի 3.7
3. 1 Նեփի 3.8
4. Վարդապետություն և Ուխտեր 121.45–46
5. Մատթեոս ԺԶ.19
6. Boyd K. Packer, *Ensign,* May 1974, 95.



Երեց Ռասսել Մ. Նելսոն
Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ

Հաստատել մարգարեներին

Մարգարեներին հաստատելը անձնական հանձնառություն է, որ մենք կանենք մեր լավագույնը, որպեսզի սատար կանգնենք մարգարեական առաջնահերթություններին:

Նախագահ Այրինգ, շնորհակալ ենք ձեր ուսանելի և ոգեշնչող ուղերձի համար: Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, մենք ձեզ երախտապարտ ենք ձեր հավատքի ու նվիրվածության համար: Երեկ մեզ բոլորիս հրավիրեցին հաստատել Թոմաս Ս. Մոնսոնին որպես Տիրոջ մարգարե ու Տիրոջ Եկեղեցու Նախագահ: Մենք հաճախ ենք երգում. «Փառք քեզ Տեր, մարգարեի համար» երգը:[1] Արդյոք ես և դուք հասկանո՞ւմ ենք, թե ինչ է դա նշանակում: Միայն պատկերացրեք, թե ինչ արտոնություն է տվել մեզ Տերը, որ աջակցենք իր մարգարեին, ում խորհուրդը կլինի անաղարտ, անսքող, անփառատենչ և ամբողջովին ճշմարիտ:

Ինչպե՞ս ենք իրականում հաստատում մարգարեին: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը, Եկեղեցու Նախագահ դառնալուց շատ տարիներ առաջ, բացատրել է. «Սրբերի համար, ովքեր . . . հաստատում են Եկեղեցու իշխանություններին, կարևոր պարտականություն է դրված՝ աջակցել նրանց ոչ միայն զուտ ձեռք բարձրացնելով, այլ *գործով* ու ճշմարտությամբ[2]:

Ո՞րն է եղել մարգարեին աջակցելու ի՛մ ամենաեզակի «գործը»: Որպես բժիշկ և սրտի վիրաբույժ, ես պատասխանատվություն եմ ունեցել կատարելու բաց սրտի վիրահատություն Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին 1972 թվականին, երբ նա Տասներկու Առաքյալների Քվորումի գործող նախագահն էր: Նա շատ բարդ վիրահատության կարիք ուներ: Բայց ես նման փորձ չէի ունեցել 77-ամյա հիվանդի հետ, որի սիրտը լավ չէր աշխատում: Ես տեղեկացրեցի Նախագահ Քիմբալին ու Առաջին Նախագահությանը, որ վիրահատությունը հակացուցված է: Սակայն, հավատքով, Նախագահ Քիմբալը ընտրեց վիրահատությունը, միայն որովհետև Առաջին Նախագահությունը խորհուրդ էր տալիս: Դա ցույց է տալիս, թե ինչպես էր նա աջակցում իր ղեկավարներին: Եվ նրա որոշումն ինձ վախեցրեց:

Փառք Տիրոջը, վիրահատությունը հաջող անցավ: Երբ Նախագահ Քիմբալի սիրտը կրկին սկսեց գործել, այն աշխատեց մեծ զորությամբ: Հենց այդ պահին, ես Հոգուց հստակ վկայություն ստացա, որ այս մարդը մի օր դառնալո՛ւ է Եկեղեցու Նախագահը:[3]

Եվ դուք գիտեք արդյունքը: 20 ամիս անց Նախագահ Քիմբալը դարձավ Եկեղեցու Նախագահը: Եվ նա համարձակ և խիզախ ղեկավար եղավ երկար տարիներ:

Այդ ժամանակից ի վեր մենք որպես Եկեղեցու Նախագահ հաստատել ենք նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնին, Հովարդ Վ. Հանթերին, Գորդոն Բ. Հինքլիին, և այժմ Թոմաս Ս. Մոնսոնին, բոլորն էլ մարգարե՝ բառի ամեն իմաստով:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, Վերականգնման ամենաարժեքավոր գործերից մեկը հին առասպելին վերջ տալն է, որ Աստված այլևս չի խոսում Իր զավակների հետ: Ճշմարտությունից այդքան հեռու ուրիշ բան չի կարող լինել: Ադամից ի վեր մինչև այսօր Աստծո եկեղեցու գլխին միշտ մարգարե է կանգնած եղել բոլոր տնտեսությունների ժամանակ:[4] Մարգարեները վկայում են Հիսուս Քրիստոսի մասին՝ Նրա աստվածության և Նրա երկրային առաքելության ու ծառայության մասին:[5] Մենք պատվում ենք մարգարե Ջոզեֆ Սմիթին որպես այս վերջին տնտեսության մարգարե: Եվ մենք պատվում ենք յուրաքանչյուր մարդու, ով հաջորդել է նրան որպես Եկեղեցու Նախագահ:

Երբ հաստատում ենք մարգարեներին ու մյուս ղեկավարներին,[6] մենք վար ենք բերում ընդհանուր համաձայնության օրենքը, քանի որ Տերն ասել է. «Ոչ ոքի չպետք է տրվի առաջ գնալ՝ քարոզելու իմ ավետարանը կամ կառուցելու իմ եկեղեցին, մինչև որ նա չկարգվի մեկի կողմից, որն ունի իշխանություն, և եկեղեցուն հայտնի չլինի, որ նա ունի իշխանություն և կանոնավոր կերպով կարգված է եկեղեցու ղեկավարների կողմից»:[7]

Սա մեզ՝ որպես Տիրոջ Եկեղեցու անդամներ, վստահություն և հավատք է ներշնչում, մինչ մենք ձգտում ենք պահպանել Տիրոջ ձայնին ականջ դնելու սուրբ գրությունների պատվերը [8], ինչպես որ այն գալիս է Իր ծառաների՝ մարգարեների ձայնով:[9] Տիրոջ Եկեղեցու

բոլոր առաջնորդները կանչվում են պատշաճ իշխանությամբ: Ոչ մի մարգարէ կամ որևէ այլ առաջնորդ այս եկեղեցում երբևէ իրեն կոչում չի պարգևել: Ոչ մի մարգարէ երբևէ ընտրություններով չի ընտրվել: Տերը հստակ ցույց տվեց դա, երբ ասաց. «Ոչ թէ դուք ինձ ընտրեցիք. Այլ ես ընտրեցի ձեզ, և կարգեցի ձեզ»[10]: Ո՛չ ես, ո՛չ էլ դուք ոչ մի պաշտոնի համար չենք «քվեարկել» Եկեղեցու որևէ ղեկավարին ընտրելիս: Սակայն մենք արտոնություն ունենք նրանց հաստատելու:

Տիրոջ ուղիները տարբերվում են մարդու ուղիներից: Ըստ մարդկանց ուղու՝ երբ մարդիկ մեծանում ու անաշխատունակ են դառնում, նրանց հեռացնում են իրենց պաշտոնից կամ գործից: Սակայն մարդու ուղիները երբեք չեն եղել և չեն լինի Տիրոջ ուղիները: Մարգարեներին հաստատելը անձնական հանձնառություն է, որ մենք կանենք մեր լավագույնը, որպեսզի սատար կանգնենք մարգարեական առաջնահերթություններին: Մեր հաստատումը երդման պես վկայություն է, որ մենք ընդունում ենք իրենց կոչումը որպես մարգարե և այն համարում ենք օրինական և պարտավորեցնող մեզ համար:

Իր նախագահ դառնալուց քսանվեց տարի առաջ, այն ժամանակ՝ Երեց Ջորջ Ալբերտ Սմիթն ասել է. «Պարտականությունը, որ մենք վերցնում ենք, երբ բարձրացնում ենք մեր ձեռքը. . . . շատ սրբազան է: Դա *չի* նշանակում, որ մենք անաղմուկ պիտի քայլենք մեր ճանապարհով և հոժար լինենք, որ Տիրոջ մարգարեն առաջնորդի այս աշխատանքը, այլ նշանակում է. . . . որ մենք կկանգնենք նրա թիկունքին. մենք կաղոթենք նրա համար, մենք կպաշտպանենք նրա բարի անունը և մենք կձգտենք կատարել նրա հրահանգները, երբ Տերն ուղղություն տա նրան»:[11]

Ապրող Տերը ղեկավարում է Իր կենդանի՛ Եկեղեցին:[12] Իր կամքը Եկեղեցու համար Տերը հայտնում է Իր մարգարեի միջոցով: Երեկ, նրանից հետո, երբ մեզ հրավիրեցին հաստատել Թոմաս Ս. Մոնսոնին որպես Եկեղեցու Նախագահ, մենք արտոնություն ունեցանք նաև հաստատելու նրան, Առաջին Նախագահության խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Ի՜նչ հրաշալի բան: Մենք հաստատում ենք 15 հոգու որպես Աստծո մարգարեներ: Նրանք կրում են քահանայության բոլոր բանալիները, որ շնորհվել է մարդուն այս տնտեսության ժամանակ:

15 տղամարդկանց սուրբ առաքելության կանչելը մեծ պաշտպանություն է ապահովում մեզ համար, որպես Եկեղեցու անդամներ: Ինչո՞ւ: Որովհետև այդ առաջնորդների որոշումները պետք է միաձայն լինեն:[13] Կարող եք պատկերացնել, թե ինչպես պետք է Հոգին աշխատի այդ մարդկանց հետ, որպեսզի 15 տղամարդ միաձայն լինեն: Այդ 15 տղամարդիկ բազմազան կրթական և մասնագիտական փորձ ունեն՝ տարբեր կարծիքներ ունենալով շատ բաների մասին: Կարող եք վստահ լինել: Այս 15 տղամարդիկ՝ մարգարեները, տեսանողները և հայտնողները, գիտեն, թե որն է Տիրոջ կամքը, երբ հասնում են միության: Նրանք պարտավորված են համոզվել, որ իսկապես Տիրոջ կամքն է կատարվում: Տերունական աղոթքն օրինակ է այդ 15 մարդկանցից յուրաքանչյուրի համար, երբ նրանք աղոթում են. «Քո կամքը թող կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»:[14]

Նա, ով ամենաերկարն է Առաքյալի պաշտոնում, կանչված է նախագահելու:[15] Ավագության այդ համակարգը, սովորաբար, բերում է նրան, որ տարեցներն են կանչվում Եկեղեցու Նախագահի պաշտոնին:[16] Դա ապահովում է շարունակականություն, կուտված հասունություն, փորձ և երկարաժամկետ նախապատրաստություն, մինչ նրանք առաջնորդվում են Տիրոջ կողմից:

Եկեղեցին այսօր կազմավորվել է անձամբ Տիրոջ կողմից: Նա սահմանել է կառավարման մի ուշագրավ համակարգ, որն ապահովում է պահեստային կազմ ու փոխարինելիություն: Այդ համակարգը նախատեսում է մարգարեական առաջնորդություն, նույնիսկ այն ժամանակ, երբ տարիքի հետ կարող է գալ անխուսափելի հիվանդություններ ու անաշխատունակություն:[17] Հակակշիռներն ու պաշտպանություններն այնքան առատ են, որ ոչ ոք չի կարող երբևէ տանել Եկեղեցին սխալ ուղով: Ավագ

ղեկավարները մշտապես կրթվում են, այնպես որ մի օր իրենք ևս պատրաստ լինեն նստել ամենաբարձր խորհուրդներում: Նրանք սովորում են, թե ինչպես կարելի է լսել Տիրոջ ձայնը Հոգու հուշումների միջոցով:

Նախագահ Էզրա Թավթ Բենսոնի հետ որպես Առաջին Խորհրդական ծառայելու ժամանակ, երբ նախագահի մահկանացու կյանքը մոտենում էր ավարտին, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է.

«Սկզբունքներն ու ընթացակարգերը, որոնք Տերը սահմանել է իր եկեղեցու կառավարման համար, նախատեսված են. . . . բոլոր հանգամանքների համար: Կարևոր է. . . . որ չլինի որևէ կասկած կամ մտահոգություն եկեղեցու կառավարման և մարգարեական պարգևների գործածության վերաբերյալ, այդ թվում այն իրավունքի, որ տրված է ոգեշնչմամբ և հայտնությամբ Եկեղեցու գործերն ու ծրագրերը ղեկավարելու համար այն իրավիճակում, երբ նախագահը հիվանդ է կամ ի վիճակի չէ լիարժեք գործել:

«Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների խորհուրդը կանչված և կարգված են՝ կրելու քահանայության բանալիները, ունենալու իշխանություն և պատասխանատվություն կառավարելու Եկեղեցին, սպասավորելու եկեղեցական արարողությունները, ինչպես նաև մեկնաբանելու եկեղեցու վարդապետությունը և սահմանել ու վարել նրա գործերը»:

Նախագահ Հինքլին շարունակել է.

«Երբ նախագահը հիվանդ է կամ չի կարողանում լիարժեք գործել իր պաշտոնի բոլոր պարտականություններում, նրա երկու խորհրդականները միասին կազմում են Առաջին Նախագահության քվորումը: Նրանք շարունակում են Նախագահության ամենօրյա աշխատանքը. . . .

«. . . Իսկ եթե քաղաքականության, ընթացակարգերի, ծրագրերի կամ վարդապետության վերաբերյալ լուրջ հարց է առաջանում, ապա այն միասնաբար խորաքննվում է ու այդ մասին աղոթում են



և՛ Առաջին Նախագահությունը, և՛ Տասներկուսի քվորումը»:[18]

Անցյալ տարի, երբ լրացավ Նախագահ Մոնսոնի Եկեղեցու նախագահի ծառայության 5-րդ տարին, անդրադառնալով առաքելական ծառայության իր 50 տարիներին, նա ասաց. «Տարիքն ի վերջո իր գործն անում է բոլորիս հետ: Սակայն, մենք արձագանքում ենք Բենիամին թագավորի խոսքերին, ով ասել է. «. . . ես ձեզ պես ենթակա եմ ամեն ձևի թուլությունների՝ ի մարմնո և ի մտոք. սակայն ես ընտրվել. . . . և նվիրաբերվել եմ իմ հոր կողմից . . . . և պահվել ու պահպանվել եմ նրա անզուգական զորությամբ՝ ծառայելու ձեզ ողջ զորությամբ, մտքով և ուժով, որը Տերը շնորհել է ինձ» (Մոսիա 2.11):

Նախագահ Մոնսոնը շարունակել է. «Չնայած առողջական խնդիրներին, որ կարող է առաջանալ մեզ մոտ, չնայած մարմնի կամ մտքի թուլությանը, մենք ծառայում ենք մեր կարողությունների լավագույն սահմաններում: Ես ձեզ վստահեցնում եմ, որ եկեղեցին լավ ձեռքերում է: Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի համակարգը [մեզ] հավաստիացնում է, որ այն միշտ լավ ձեռքերում կլինի, և ինչ էլ որ լինի, անհանգստանալու կամ մտավախության կարիք չկա: Մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը, ում մենք հետևում ենք, ում մենք երկրպագում և ում մենք ծառայում ենք, միշտ ղեկի մոտ է»:[19]

Նախագահ Մոնսոն, մենք շնորհակալ ենք Ձեզ այդ ճշմարտությունների համար: Եվ մենք շնորհակալ ենք Ձեր օրինակելի կյանքի և նվիրված ծառայության համար: Թույլ տվեք խոսել ամբողջ աշխարհի Եկեղեցու անդամների անունից և մեր միասնական ու անկեղծ երախտագիտությունը հայտնել Ձեզ: Մենք հարգո՛ւմ ենք Ձեզ: Մենք սիրո՛ւմ ենք Ձեզ: Մենք հաստատում ենք Ձեզ՝ ոչ միայն ձեռքի բարձրացումով, այլ մեր նվիրված սրտով ու նվիրաբերված ջանքերով: Խոնարհաբար և ջերմեռանդորեն, «մենք միշտ աղոթում ենք Ձեզ համար, մեր սիրելի մարգարե»:[20] Հիսուս Քրիստոսի անունով. ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Փառք քեզ Տեր, մարգարեի համար» *Հիմներ և մանկական երգեր»,* էջ 36:
2. *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ*(1998), 211, շեշտադրումն ավելացված է: Այս հայտարարությունն արվել է 1898 թվականին, երբ Նախագահ Սմիթն Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական էր:
3. Լրացուցիչ տեղեկությունների համար, տես Spencer J. Condie, *Russell M. Nelson: Father—Surgeon—Apostle* (2003), 153–56:
4. Տես Սուրբ գրությունների ուղեցույց. «Տնտեսություններ»:
5. Բազմաթիվ մարգարեներ կանխատեսել են Տիրոջ գալուստը, որոնց թվում են Լեքին (տես 1 Նեփի 1.19), Նեփին (տես 1 Նեփի 11.31–33, 19.7–8), Հակոբը (տես Հակոբ 4.4–6), Բենիամինը (տես Մոսիա 3.5–11, 15), Աբինադին (տես Մոսիա 15.1–9), Ալման (տես Ալմա 40.2) և Սամուել Լամանացին (տես Հելաման 14.12): Նախքան Բեթլեհեմում Տիրոջ ծնվելը նրանք կանխատեսել էին Փրկչի քավիչ զոհաբերությունը և Նրա հետագա Հարությունը:
6. Ղեկավարներին հաստատելու սկզբունքը հիմնարար է Տիրոջ ողջ Եկեղեցում: Անձը հաստատվում է նախքան կոչմանն ի սպաս դրվելը կամ քահանա-

Քերոլ Ֆ. Մակքոնկի
Երիտասարդ կանանց գերագույն նախագահության առաջին խորհրդական

Ապրենք Մարգարեների խոսքերին համաձայն

Երկնքի աստվածային նպատակների հետ ներդաշնակ լինելու համար մենք հաստատում ենք մարգարեին և ընտրում ապրել նրա խոսքերի համաձայն:

Մեր Երկնային Հայրը սիրում է Իր բոլոր զավակներին և ցանկանում է, որ նրանք իմանան և հասկանան Իր երջանկության ծրագիրը: Ուստի, նա կանչում է մարգարեներ, ովքեր կարգվում են զորությամբ և իշխանությամբ՝ գործելու Աստծո անունով՝ Իր զավակների փրկության համար: Նրանք արդարակեցության սուրհանդակներ են, Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության անսահման զորության վկաները: Նրանք կրում են Աստվածային արքայության բանալիները երկրի վրա և լիազորում փրկող ծեսերի կատարումը:

Տիրոջ ճշմարիտ Եկեղեցում «միշտ երկրի վրա տվյալ պահին կա միայն մեկը, որին շնորհված է այս զորությունը և այս քահանայության բանալիները»:[1] Մենք հաստատում ենք Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնին որպես մեր մարգարե, տեսանող և հայտնող: Նա հայտնում է Տիրոջ խոսքերը՝ առաջնորդելով և ղեկավարելով մեր *ամբողջ* Եկեղեցին: Ինչպես Նախագահ Ջ. Ռուբեն Քլարկ Կրտսերն է բացատրել. «Եկեղեցու Նախագահը . . . միայն իրավունք ունի հայտնություններ ստանալ Եկեղեցու համար»:[2]

Կենդանի մարգարեի վերաբերյալ Տերը պատվիրում է Իր Եկեղեցու մարդկանց.

«Դու պիտի ուշք դարձնես նրա *բոլոր* խոսքերին ու պատվիրաններին, որոնք նա կտա քեզ, երբ նա ստանա դրանք՝ ողջ սրբությամբ քայլելով իմ առաջ.

Քանզի նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով:

Քանզի այդ բաները կատարելով, դժոխքի դռները չեն հաղթի ձեզ»:[3]

Երկնքի աստվածային նպատակների հետ ներդաշնակ լինելու համար մենք հաստատում ենք մարգարեին և ընտրում ապրել նրա խոսքերի համաձայն:

Մենք նաև հաստատում ենք Նախագահ Մոնսոնի խորհրդականներին և Տասներկու Առաքյալների Քվորումներին որպես մարգարեներ,

---

յության պաշտոնում կարգվելը:

7. Վարդապետություն և Ուխտեր 42.11: Առաջնորդներին հաստատելու գործառույթը սկսել է կիրառվել 1830թ. ապրիլի 6-ին, երբ կազմավորվում էր Եկեղեցին և 1836թ. մարտին, երբ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները հաստատվեցին որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ (տես *History of the Church,* 1.74–77, 2.417):
8. Մորմոնի Գիրքը զգուշացնում է մարգարեական ուսմունքները անտեսելու վտանգի մասին: Այնտեղ մենք կարդում ենք, որ «մեծ ու ընդարձակ շենքն աշխարհի հպարտությունն էր. և այն ընկավ և նրա անկումը չափազանց մեծ էր: Եվ Տիրոջ հրեշտակը. . . . խոսեց ինձ հետ՝ ասելով. Այսպիսին կլինի բոլոր ազգերի, ցեղերի, լեզուների ու ժողովուրդների կործանումը» (1 Նեփի 11.36):
9. Տես Դանիել Թ.10, Ամովս Գ.7, Վարդապետություն և Ուխտեր 21.1, 4–5, 124.45–46:
10. Հովհաննես 15.16: Հավատո հինգերորդ հանգանակը պարզաբանում է. «Մենք հավատում ենք, որ Ավետարանը քարոզելու և նրա արարողությունները սպասավորելու համար, մարդ պետք է կանչված լինի Աստծո կողմից՝ մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրմամբ»:
11. *Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջորջ Ալբերտ Սմիթ* (2011), 71. շեշտադրումն ավելացված է: Այս մեջբերումը 1919թ. համաժողովի երեց Ջորջ Ալբերտ Սմիթի ելույթից է: Նա Եկեղեցու նախագահ դարձավ 1945 թվականին:
12. Տես Վարդապետություն և Ուխտեր 1.30, 38:
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.27:
14. 3 Նեփի 13.10, տես նաև Մատթեոս 6.10, Ղուկաս 11.2:
15. Երբ Եկեղեցու Նախագահը մահանում է, Առաջին Նախագահությունը լուծարվում է և խորհրդականներն իրենց տեղն են գրավում Տասներկու Առաքյալների Քվորումում: Ապա Տասներկուսի Քվորումը նախագահում է Եկեղեցում մինչև Առաջին Նախագահությունը վերակազմավորվելը: Այդ ժամանակահատվածը հայտնի է որպես առաքելական միջնիշխանություն: Պատմականորեն, այդ ընդմիջումը տարբեր է եղել՝ չորս օրից մինչև երեք ու կես տարի տևողությամբ:
16. Իհարկե, իրավահաջորդության այդ օրինաչափությունը չի վերաբերել Ջոզեֆ Սմիթին, որը նախակարգվել էր լինել Վերականգնման մարգարեն ու Եկեղեցու առաջին նախագահը (տես 2 Նեփի 3.6–22, տես նաև Աբրահամ 3.22–23):
17. Մենք գիտենք, որ Տերն Իր ընտրությամբ կարող է տուն կանչել մեզանից ցանկացածին՝ ցանկացած ժամանակ:
18. Գորդոն Բ. Հինքլի, «God Is at the Helm», *Ensign,* May 1994, 54. տես նաև Գորդոն Բ. Հինքլի, «He Slumbers Not, nor Sleeps», *Ensign,* May 1983, 6:

տեսանողներ և հայտնողներ: Նրանք ունեն իրավունք, զորություն և իշխանություն՝ հայտարարելու Տիրոջ միտքն ու կամքը, որ հասու է Եկեղեցու Նախագահին:[4] Նրանք խոսում են Քրիստոսի անունով: Նրանք մարգարեանում են Քրիստոսի անունով: Նրանք բոլոր բաներն անում են Հիսուս Քրիստոսի անունով: Նրանց խոսքում մենք լսում ենք Տիրոջ ձայնը և զգում ենք Փրկչի սերը: «Եվ ինչ որ նրանք խոսեն, երբ շարժվում են Սուրբ Հոգով, պիտի լինի սուրբ գրություն, . . . և Աստծո զորությունը ի փրկություն»:[5] Տերն Ինքն է ասել. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[6]

Մենք երախտապարտ ենք եկեղեցու համար, «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է»:[7] Տիրոջ տունը կարգուկանոնի տուն է, և մենք միշտ պետք է իմանանք, թե որտեղ պետք է փնտրենք մեր հարցերի պատասխանները և վստահ լինենք, թե ինչ ձայնի պետք է հետևենք: Մենք չպետք է լինենք «երերուած ու տատանուած վարդապետության ամեն քամուցը»:[8] Աստված հայտնում է Իր խոսքը Իր կարգված ծառաների միջոցով, «սուրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար. Մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդին ճանաչելու միությանը»:[9] Երբ մենք ընտրում ենք ապրել մարգարեների խոսքերի համաձայն, մենք քայլում ենք դեպի հավերժական կատարելություն տանող ուխտյալ ճանապարհով:

Սովի շրջանում գոյատևելու համար մաքառող միայնակ մոր օրինակով մենք սովորում ենք, թե ինչ է նշանակում հաստատել մարգարեին: Տերը պատվիրեց Եղիա մարգարեին գնալ Սարեփթա, որտեղ կգտներ մի այրի կին, որին Աստված հրամայել էր օգնել իրեն: Երբ Եղիան մոտեցավ քաղաքին, նա տեսավ ցախ հավաքող կնոջը: Նա կանչեց նրան. «Խնդրեմ ինձ համար մի քիչ ջուր բեր մի ամանում, որ խմեմ»:[10]

«Եվ երբոր նա գնաց բերելու, նրան կանչեց [կրկին] և ասեց. Խնդրեմ ինձ համար մի պատառ էլ հաց բեր ձեռքիդ:

Եվ նա ասեց. Կենդանի է քո Տեր Աստուածը, որ ես մի նկանակ չունեմ, բացի մի բուռ ալյուր սափորումը և մի քիչ յուղ կուժումը, և ահա մի երկու փայտ եմ ժողովում, որ գնամ և պատրաստեմ այն ինձ համար և իմ որդիի համար, որ ուտենք և մեռնենք»:

Եղիան պատասխանեց. «Մի վախենար, գնա արա քո խոսքի պես, միայն թե *առաջ* ինձ համար մի փոքր շոթ շինիր նրանից և բեր ինձ համար, և հետո քեզ և քո որդիի համար կշինես»:[11]

Մի պահ պատկերացրեք, թե ինչ դժվար բան էր խնդրում մարգարեն սովահար կնոջից: Անշուշտ, Աստված Ինքը կարող էր սնունդ ապահովել Իր հավատարիմ ծառայի համար: Սակայն գործելով Տիրոջ անունով, Եղիան վարվեց ըստ ցուցումի, այսինքն՝ խնդրեց Աստծո սիրելի դստերից զոհաբերել այն, ինչ ուներ, մարգարեին նեցուկ լինելու համար:

Բայց Եղիան նաև հնազանդության դիմաց օրհնություն խոստացավ. «Որովհետև այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. Սափորումը ալյուրը պիտի չվերջանա և կուժիցը յուղը չպակասե»:[12] Տերն այրուն հնարավորություն տվեց ընտրել՝ հավատալ և հնազանդվել մարգարեի խոսքերին:

Աշխարհում, որը արդարակեցության սովի և հոգևոր քաղցի վտանգի տակ է, մեզ պատվիրվել է աջակցել մարգարեին: Երբ հնազանդվում, պաշտպանում և հաստատում ենք մարգարեական խոսքը, մենք տեսնում ենք, որ ունենք բավականաչափ հավատք՝ խոնարհ ընդունելու Տիրոջ կամքը, իմաստությունն *ու* ժամանակացույցը:

Մենք ականջ ենք դնում մարգարեական խոսքին, անգամ երբ այն թվում է ոչ այնքան ողջամիտ և հարմար: Ըստ աշխարհի չափանիշների՝ մարգարեին հետևելը կարող է համարվել համբավ չվայելող, քաղաքականապես սխալ և սոցիալապես անընդունելի: Սակայն մարգարեին հետևելը միշտ ճիշտ է: «Որովհետև ինչպես որ բարձր է

երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, և իմ խորհուրդները ձեր խորհուրդներից»:[13] «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտով, և քո հասկացողությանը մի վստահիր»:[14]

Տերը պատվում է և բարեհաճ է նրանց հանդեպ, ովքեր ականջ են դնում մարգարեական ուղղորդող խոսքին: Սարեփթացի այրին հնազանդվելով Եղիային փրկեց իր կյանքը և, ի վերջո, իր որդու կյանքը: Ինչպես մարգարեն էր խոստացել, «նա և կինը և իր տունը կերան բավական ժամանակ . . . Տիրոջ այն խոսքի պես, որ ասեց Եղիայի ձեռով»:[15]

Տերը «կկերակրի նրանց, ովքեր վստահում են Իրեն»:[16] Մարգարեների խոսքերը մանանայի պես են մեր հոգու համար: Երբ ճաշակում ենք դրանից, մենք օրհնվում, պաշտպանվում և պահպանվում ենք՝ թե նյութական և թե հոգևոր առումով: Երբ սնուցվում ենք նրանց խոսքերով, մենք սովորում ենք ինչպես գալ Քրիստոսի մոտ և ապրել:

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին գրել է, որ մարգարեների միջոցով «Տերը հայտնում է փրկության մասին ճշմարտությունները, . . . փրկություն, որը Քրիստոսի մեջ է, և նա գծում է . . . դեպի հավերժական կյանք տանող ուղին: . . . Ամեն ժամանակաշրջանում՝ Տերն իր ժողովրդին տալիս է ուղղություն, որն իրենց հարկավոր է վտանգի պահին: Եվ իհարկե, գալիք օրերում կլինեն պահեր, երբ միայն Աստծո իմաստությունը իջնելով երկնքից և դուրս գալով մարգարեի շուրթերից, կկարողանա փրկել իր ժողովրդին»:[17]

Ինձ համար, իմ Դափնու ուսուցչի կողմից ուսուցանված մարգարեների խոսքերի շնորհիվ ես պատկերացում կազմեցի ուխտյալ ամուսնական կապի մասին: Մարգարեների խոսքերը ինձ հավատք և հույս ներշնչեցին, որ ես կարողանայի պատրաստվել և ձեռք բերել երջանիկ տուն: Թե հին և թե մեր օրերի մարգարեների ուսմունքները պարբերաբար ուսումնասիրելն օգնեց ինձ յոթ երեխա ունենալ, ուսուցանել և դաստիարակել լարված և հաճախ հյուծող տարիներին: Սուրբ

գրություններում տրված և այս ամբիոնից ուսուցանված մարգարեների խոսքերը սփոփանք, սեր, ուժ և ուրախ տրամադրություն պարգևող խոսքեր են, որոնք կիրառելի են բոլորիս համար:

Երբ ականջ ենք դնում մարգարեների խոսքերին, մենք կառուցում ենք մեր տները և կյանքը հավերժական ամուր հիմքի՝ «մեր Քավիչի վեմի վրա, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, . . . որ, երբ դևն առաջ ուղարկի իր զորեղ քամիները, այո, իր նետերը պտտահողմում, այո, երբ նրա ողջ կարկուտը և նրա զորեղ փոթորիկը հարվածի ձեզ, այն չի ունենա զորություն ձեր վրա՝ քաշելու ձեզ վար՝ դեպի թշվառության ու անվերջ վայի անդունդը»:[18]

Մենք ունենք ընտրություն: Մենք կարող ենք ընտրել անտեսել, կատակաբանել կամ ըմբոստանալ Քրիստոսի խոսքերի դեմ, որոնք կինչեն Իր կարգված ծառաների կողմից: Բայց Փրկիչն ուսուցանել է, որ ովքեր այդպես կվարվեն, կկտրվեն Իր ուխտյալ ժողովրդից:[19]

Երբ առ Քրիստոս հավատքով, անկեղծ միտումով և աղոթքով կարդանք և ուսումնասիրենք սուրբ մարգարեական խոսքերը, Սուրբ Հոգին ճշմարտությունը կխոսի մեր մտքում և սրտում: Թող որ մենք բացենք մեր ականջները լսելու համար, մեր սրտերը հասկանալու համար, և մեր մտքերը, որպեսզի Աստծո խորհուրդները բացվեն մեզ համար:[20]

Ես բերում եմ իմ վկայությունը, որ Ջոզեֆ Սմիթը Աստծո կողմից կանչված մարգարե է եղել և կա՝ երկրի վրա Հիսուս Քրիստոսի ավետարանը և Նրա քահանայությունը վերականգնելու համար: Եվ ես վկայում եմ, որ Նախագահ Մոնսոնը, ով առաջնորդում է մեզ այսօր, Աստծո ճշմարիտ մարգարե է: Թող մենք ընտրենք կանգնել մարգարեների հետ և ապրել նրանց խոսքերի համաձայն, մինչև որ կմիավորվենք հավատքով, կմաքրագործվենք Քրիստոսում և կլցվենք Աստծո Որդու գիտելիքով: Հիսուս Քրիստոսի սուրբ անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 132.7, տես նաև *Handbook 2: Administering the Church* (2010), 2.1.1. «Հիսուս Քրիստոսը կրում է Իր Եկեղեցուն պատկանող քահանայության բոլոր բանալիները: Նա Իր Առաքյալներին շնորհեց բոլոր բանալիները, որոնք պատկանում են երկրի վրա Աստծո արքայությանը: Ապրող ավագ Առաքյալը՝ Եկեղեցու Նախագահը, միակ մարդն է երկրի վրա, որ լիազորված է գործադրել քահանայության բոլոր բանալիները»:
2. J. Reuben Clark Jr., "When Are the Writings and Sermons of Church Leaders Entitled to the Claim of Scripture?" (address to seminary and institute personnel, Brigham Young University, July 7, 1954).
3. Վարդապետություն և Ուխտեր 21.4–6, շեշտադրումն ավելացված է:
4. J. Reuben Clark Jr., "When Are the Writings and Sermons of Church Leaders Entitled to the Claim of Scripture?"
5. Վարդապետություն և Ուխտեր 68.4:
6. Վարդապետություն և Ուխտեր 1.38:
7. Եփեսացիս Բ.20:
8. Եփեսացիս Դ.14:
9. Եփեսացիս Դ.12–13
10. Գ Թագավորաց ԺԷ.10:
11. Գ Թագավորաց ԺԷ.11–13, շեշտադրումն ավելացված է:
12. Գ Թագավորաց ԺԷ.14:
13. Եսայիա ԾԵ.9:
14. Առակաց Գ.5:
15. Գ Թագավորաց ԺԷ.15–16:
16. Roger Hoffman, "Consider the Lilies."
17. Bruce R. McConkie, *A New Witness for the Articles of Faith* (Deseret Book Company, 1985), 478; punctuation modified; used by permission.
18. Հելաման 5.12:
19. Տես 3 Նեփի 20.23:
20. Տես Մոսիա 2.9:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավիտենական կյանք. իմանալ մեր Երկնային Հորը և Նրա Որդի Հիսուս Քրիստոսին

Աստված և Քրիստոսը բառացիորեն Հայր ու Որդի են՝ առանձին, տարբեր, անհատական էակներ, ովքեր ամբողջությամբ միավորված են իրենց նպատակով:

Շատ տարիներ առաջ ես հնարավորություն ունեցա ուսումնասիրել յուրաքանչյուր տնտեսության մարգարեների վերջին վկայությունները: Նրանցից յուրաքանչյուրն իր զորեղ վկայությունը բերեց Հայր Աստծու և Նրա Որդի՝ Հիսուս Քրիստոսի վերաբերյալ:

Տարիների ընթացքում այդ և շատ այլ նմանատիպ վկայություններ կարդալով, այն մշտապես հուզում էր ինձ, թե որքան շատ էր Երկնային Հայրը սիրում Իր ավագ Որդուն, և թե ինչպես էր Հիսուսը Իր հնազանդության միջոցով իր սերը ցույց տալիս Իր Հոր կամքին: Ես վկայում եմ, որ եթե մենք անենք հնարավորինս, որպեսզի իմանանք նրանց և իմանանք միմյանց հանդեպ նրանց սերը, մենք ձեռք կբերենք «պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից», նույնիսկ հավերժական կյանքը:[1] Քանի որ «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. Եվ նորան, որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին»:[2]

Ինչպե՞ս կարող է այդ պարգևը մերը լինել: Այն գալիս է անձնական հայտնության շնորհիվ, որի մասին այս առավոտ խոսվել ու ուսուցանվել է:

Արդյոք հիշո՞ւմ եք, երբ առաջին անգամ իմացաք, որ կա Աստված և կարողացաք զգալ Նրա սերը: Պատանի հասակում ես սևեռուն հայացքով նայում էի աստղազարդ երկնքին և խորհում ու զգում Նրա ներկայությունը: Ես ոգևորվում էի, երբ ուսումնասիրում էի Աստծո ստեղծագործությունների, փոքրիկ միջատներից մինչև սլացիկ ծառերի հրաշագեղ գեղեցկությունը: Երբ ես ճանաչեցի այս երկրի գեղեցկությունը, ես իմացա, որ Երկնային Հայրը սիրում է ինձ: Ես գիտեի, որ բառացիորեն ես հոգևոր զավակ էի, որ մենք բոլորս էլ Աստծո որդիներն ու դուստրերն ենք:

Դուք միգուցե հարցնեք, թե ինչպե՞ս ես իմացա դա: Սուրբ գրություններն ուսուցանում են. «Ոմանց տրված է, Սուրբ Հոգուց, իմանալ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, և . . . Մյուսներին տրված է հավատալ նրանց խոսքերին, որ նրանք նույնպես կարողանան հավերժական կյանք ունենալ, եթե հավատարմորեն շարունակեն»[3] Իմ կարծիքով, դա չի նշանակում, որ որոշ մարդիկ պետք է հավերժ կախված լինեն ուրիշների վկայություններից:

Իմ անձնական վկայությունն աճեց, երբ ես Երկնային Հոր և Փրկչի մասին իմացա իմ ծնողների, ուսուցիչների, սուրբ գրությունների, որոնք ես ջանասիրորեն կարդում էի, և հատկապես Սուրբ Հոգու ուսմունքներից և վկայությունից: Հավատք գործադրելով և պատվիրաններին հնազանդվելով, Սուրբ Հոգին վկայեց, որ այն ինչ ես սովորում էի, ճշմարիտ էր: Ահա այդպես ես ինքս իմացա այդ բաները:

Այդ գործընթացում անձնական հայտնության փնտրումը բանալին է: Նեփին հրավիրում է մեզանից յուրաքանչյուրին՝ «սնվե՛ք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք»:[4]

Նախքան ութ տարեկանս կլրանար, ես ձգտեցի ավելի շատ բան իմանալ մկրտության վերաբերյալ: Ես կարդացի սուրբ գրություններն ու աղոթեցի: Ես իմացա, որ ես կստանամ Սուրբ Հոգու պարգև, երբ մկրտվեմ: Ես նույնպես սկսեցի հասկանալ, որ Աստվածը և Քրիստոսը բառացիորեն Հայր ու Որդի են՝ առանձին, տարբեր, անհատական էակներ, ովքեր ամբողջությամբ միավորված են իրենց նպատակով: «Մենք սիրում ենք [Նրանց], որովհետև սկզբում [Նրանք] սիրեցին մեզ»:[5] Եվ կրկին ու կրկին անգամ ես նկատեցի, թե ինչպես են Նրանք սիրում միմյանց և միասին գործում մեր բարիքի համար: Լսեք սուրբ գրություններից մի քանիսը, որոնք ուսուցանում են այդ ճշմարտությունը.

Մեր նախամահկանացու կյանքի մասին ուսուցանելիս, Երկնային Հայրը Հիսուս Քրիստոսին դիմեց, որպես «իմ Սիրելի Որդին, որն իմ Սիրելին ու Ընտրյալն էր ի սկզբանե»:[6] Երբ Հայրը ստեղծեց երկիրը, նա դա արեց «[Իր] Միածին» Որդով:[7]

Հիսուսի Մայր՝ Մարիամին, ասեցին, որ նա կծնի «Բարձրեալի Որդուն»:[8] Եվ երբ Հիսուսը պատանի էր, Նա Իր մորն ասաց, որ Նա «պետք է» [Իր] Հօր տանը լիներ»:[9] Տարիներ անց, երբ Փրկիչը մկրտվեց, Երկնային Հայրը երկինքներից խոսեց, ասելով. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հաւանեցի»:[10]

Իր աշակերտներին աղոթք սովորեցնելիս, Հիսուսն ասաց հետևյալ խոսքերը.

«Մեր Հայր, որ երկնքումն ես. Սուրբ լինի քո անունը:

Գայ քո արքայութիւնը, լինի քո կամքը, ինչպէս երկնքումն՝ այնպէս էլ երկրի վերա»:[11]

Նա Նիկոդեմոսին ուսուցանեց. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ»:[12] Եվ Նա բացատրեց Իր հրաշքներն ասելով. «Որդին իրանից կարող չէ ոչինչ անել, թէ որ չ'տեսնէ Հօրն անելիս. որովհետեւ ինչ որ նա անում է, հէնց Որդին էլ այն բանը նորա նման է անում»:[13]

Քավության ժամը մոտենալիս, Հիսուսն աղոթեց ասելով. «Հայր, ժամը հասել է, . . . Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ. այն գործը կատարեցի, որ տուիր ինձ՝ որ անեմ»:[14] Այնուհետև, երբ մեր մեղքերի բեռն ընկավ Նրա վրա, Նա աղաչեց՝ «Իմ Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի. Սակայն ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու»:[15] Խաչի վրա իր վերջին րոպեներին, Հիսուսն աղոթեց. «Հայր, թողիր դորանց. որովհետեւ չ'գիտեն թէ ի՞նչ են անում», հետո լաց եղավ «Հայր, հոգիս քո ձեռն եմ աւանդում»:[16]

Հետո Նա հոգիների աշխարհում այցելեց այն հոգիներին, որոնք մահացել էին, որպեսզի նրանց տար. «զորություն, որ առաջ գան, մեռելներից իր հարությունից հետո, և մտնեն իր Հոր արքայությունը»:[17] Փրկչի հարությունից հետո, Նա հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն, ասելով՝ «Ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ եւ ձեր Հօր մօտ»:[18]

Երբ Նա այցելեց Ամերիկյան մայրցամաքի ժողովրդին, Նրա Հայրը ներկայացրեց Նրան ասելով. «Սիա իմ Սիրելի Որդին, որից ես շատ գոհ եմ, որով ես փառավորեցի իմ անունը»:[19] Երբ Հիսուսը տաճարի մոտ իջավ մարդկանց մեջ, Նա Իրեն ներկայացրեց, ասելով. «Սիա, ես եմ Հիսուս Քրիստոսը . . . ես . . . փառավորեցի Հորը՝ վերցնելով ինձ վրա աշխարհի մեղքերը»:[20] Երբ Նա ուսուցանեց Իր վարդապետությունը, Նա բացատրեց.

«Եվ այս է իմ վարդապետությունը, և դա այն վարդապետությունն է, որը Հայրը տվել է ինձ. և ես վկայում եմ Հոր մասին, և Հայրը վկայում է իմ մասին»:[21]

«Ճշմարիտ . . . և Հայրը և ես մեկ ենք»:[22]

Կարո՞ղ ենք այս սուրբ գրություններում տեսնել օրինակներ, որոնք վկայում են, որ Հայրը և Որդին առանձին մարդիկ ու էակներ են: Ապա, ինչպե՞ս են «նրանք *մեկ*»: Ոչ թե, որ նրանք միևնույն անձնավորությունն են, այլ Նրանք միավորված են նպատակով, երկուսն էլ հավատարիմ, որպեսզի «իրականացն[են] մարդու անմահությունն ու հավերժական կյանքը»:[23]

Հիսուսն Աստված է, այդուհանդերձ նա շարունակաբար Իրեն զատում է, որպես առանձին, անհատ էակ՝ աղոթելով Իր Հորը և ասելով, որ Նա կատարում է Իր Հոր կամքը: Նեփիացիների մեջ Իր ծառայության ժամանակ, Նա աղոթեց. «Հա՛յր, ես չեմ աղոթում աշխարհի համար, այլ նրանց համար, ում դու տվել ես ինձ աշխարհից . . . որպեսզի ես կարողանամ լինել նրանցում, ինչպես դու, Հայր, ինձանում ես, որպեսզի մենք մեկ լինենք, որ ես կարողանամ փառավորվել նրանցով»:[24]

Ի նկատի ունենալով դա, մենք չենք զարմանա նրանից, որ ավետարանի վերականգնումը սկսվում է ոչ թե մեկ, այլ երկու փառավորված էակների հայտնվելով: Իր առաջին տեսիլքում, Մարգարե Ջոզեֆ Սմիթը վկայում է. «Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. *Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան:*»[25]

Երիտասարդ մարգարեն, ով անսասան հավատքով այդ պուրակ

զնաց իմանալու համար, թե որ եկեղեցուն պետք է միանար, դուրս եկավ այդտեղից գիտելիքով և վկայությամբ՝ միակ ճշմարիտ Աստծո և Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, ում Աստված ուղարկել էր: Ջոզեֆն ինչպես իրեն նախորդող մարգարեները, գործիք դարձավ աշխարհի համար վերականգնելու այն գիտելիքը, որն առաջնորդում է դեպի հավերժական կյանք:

Դուք նույնպես կարող եք փնտրել մեր Երկնային Հորը և «այս Հիսուսին, որի մասին [վկայել] են մարգարեներն ու առաքյալները»[26] սուրբ գրություններում և այս գերագույն համաժողովի ժամանակ: Երբ փնտրեք անձնական վկայություն, անձնական հայտնություն, դուք կբացահայտեք, որ Երկնային Հայրը հատուկ ուղի է պատրաստել ձեզ համար, որպեսզի դուք ինքներդ իմանաք ճշմարտությունը՝ Աստվածազլխի երրորդ անդամի, հոգեղեն մի անձնավորության միջոցով, որին մենք ճանաչում ենք որպես Սուրբ Հոգի:

«Եվ երբ դուք ստանաք այս բաները», այդ թվում և այն, ինչով ես կիսվեցի ձեզ հետ, «ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:

«Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ [անշուշտ] ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:[27]

Եղբայրներ և քույրեր, ես վկայում եմ, որ մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք այս գիտելիքը փնտրենք հիմա: Մարգարե Հելամանի խոսքերը փոշու միջից աղաղակում են. «Հիշեք, հիշեք, որ դա մեր Քավչի վեմի վրա է, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին, որ դուք պիտի կառուցեք ձեր հիմքը . . . , հիմք, որի վրա, եթե մարդիկ կառուցեն, նրանք չեն ընկնի»:[28] Անշուշտ, մենք չենք ընկնի:

Այդ հաստատուն հիմքը Հիսուս Քրիստոսն է: Նա է «Երկնքի Վեմը»:[29] Երբ մենք մեր տունը կառուցում ենք Նրա վրա, վերջին օրերի անձրևները կթափվեն, ջրհեղեղներ կլինեն և քամիներ կփչեն, սակայն մենք չենք ընկնի: Մենք չենք ընկնի, քանի որ մեր տունն ու մեր ընտանիքները հիմնված են Քրիստոսի վրա:[30]

Ես վկայում եմ, որ այդպիսի տունը «փառքի տուն» է:[31] Այդտեղ ենք մենք միասին հավաքվում աղոթելու մեր Երկնային Հորը, Հիսուս Քրիստոսի՝ Իր սիրելի Որդու անունով: Այդտեղ ենք մենք փառավորում և մեր երախտիքը հայտնում Նրանց: Այդտեղ ենք մենք ստանում Սուրբ Հոգին և «խոստումը, որը [նա] տալիս [է մեզ], որը հավերժական կյանքն է, այսինքն՝ սելեստիալ արքայության փառքը»:[32]

Ես իմ հատուկ վկայությունն եմ բերում, որ մեր Փրկիչը Հիսուս Քրիստոսն է, որ Նա ապրում է, որ մեր հավերժական Երկնային Հայրը սիրում է մեզ և հոգ է տանում մեզ համար, որ մենք ունենք մարգարե, Թոմաս Ս. Մոնսոնը, ով առաջնորդում և ցուցումներ է տալիս մեզ: Սուրբ Հոգին վկայում է բոլոր նրանց, ովքեր փնտրում են այդ իմացությունը, որ դա ճշմարիտ է: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 14.7:
2. Հովհաննես 17.3:
3. Վարդապետություն և Ուխտեր 46.13–14:
4. 2 Նեփի 32.3:
5. 1 Հովհաննես 4.19.
6. Մովսես 4.2:
7. Մովսես 2.1:
8. Ղուկաս 1.32:
9. Ղուկաս 2.49:
10. Մատթեոս 3.17:
11. Մատթեոս 6.9–10:
12. Հովհաննես 3.16:
13. Հովհաննես 5.19; տես նաև 17 հատվածը.
14. Հովհաննես 17.1, 4:
15. Մատթեոս 26.39:
16. Ղուկաս 23.34, 46:
17. Վարդապետություն և Ուխտեր 138.51:
18. Հովհաննես 20.17:
19. 3 Նեփի 11.7:
20. 3 Նեփի 11.10–11:
21. 3 Նեփի 11.32:
22. 3 Նեփի 11.27:
23. Մովսես 1.39:
24. 3 Նեփի 19.29:
25. Ջոզեֆ Սմիթ Պատմություն 1.17:
26. Եթեր 12.41:
27. Մորոնի 10.4–5:
28. Հելաման 5.12:
29. Մովսես 7.53:
30. Տես 3 Նեփի 14.24–25:
31. Վարդապետություն և Ուխտեր 88.119; 109.8, 16:
32. Վարդապետություն և Ուխտեր 88.4:

Երեց Ջեյմս Ջ. Համուլա
Յոթանասունից

Հաղորդությունը և Քավությունը

Հաղորդության արարողությունը պետք է դառնա առավել սուրբ և սրբազան մեզանից յուրաքանչյուրի համար:

Գեթսեմանիի և Գագաթի նախօրեին Հիսուսը հավաքեց միասին Իր Առաքյալներին մի վերջին երկրպագության համար: Նրանք հավաքվեցին Երուսաղեմում աշակերտներից մեկի տան վերնահարկում: Այդ ժամանակ Զատկի օրեր էին:[1]

Նրանց առաջ ավանդական զատկական կերակուր էր՝ զոհաբերված գառ, գինի և բաղարջ, որոնք խորհրդանիշներն էին՝ Իսրայելի գերությունից և մահից փրկության[2] և գալիք փրկագնման, որը դեռ պետք է իրագործվեր:[3] Ճաշի ավարտին Հիսուսը վերցրեց հացը, օրհնեց և կտրեց այն,[4] և տվեց Իր Առաքյալներին՝ ասելով. «Առեք կերեք»:[5] «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի համար»:[6] Նույն ձևով Նա վերցրեց գինու բաժակը, օրհնեց այն և փոխանցեց Իր շուրջը գտնվողներին՝ ասելով. «Այս բաժակը նոր ուխտն է իմ արյունովը»,[7] «որ թափվում է . . . ի թողություն մեղաց»:[8] «Այս արեք իմ հիշատակի համար»:[9]

Այդքան պարզ, սակայն խորիմաստ ձևով Հիսուսը նոր արարողություն հիմնեց Աստծո ուխտյալ ժողովրդի համար: Այլևս կենդանու արյուն չպետք է թափվեր, ոչ էլ կենդանու մարմին պետք է այրվեր ի սպասումն Քրիստոսի փրկագնող զոհաբերության, ով դեռևս պետք է գար:[10] Փոխարենը, արդեն իսկ եկած Քրիստոսի կոտրված մարմնի և հեղված արյան խորհրդանիշները պետք է ճաշակվեին ի հիշատակ Նրա քավող զոհաբերության:[11] Մասնակցել այդ նոր արարողությանը կնշանակեր հանդիսավոր կերպով ընդունել Հիսուսին որպես

Քրիստոս և ողջ սրտով ցանկանալ հետևել Նրան և պահել Նրա պատվիրանները: Ովքեր կկարևորեն դա և այդպես կվարեն իրենց կյանքը, հոգևոր մահը կանցնի նրանց կողքով և նրանք կունենան հավերժական կյանք:

Հաջորդող ժամերին և օրերին Հիսուսն անցավ Գեթսեմանիով, Գագաթով և հաղթականորեն դուրս եկավ Արիմաթացու գերեզմանից: Հիսուսի հեռանալուց հետո Երուսաղեմում և շրջակայքում ապրող Նրա հավատարիմ աշակերտները հավաքվեցին միասին միաշաբաթի օրը, որ «կտրեն հացը»,[12] և նրանք անում էին դա «մշտապես»:[13] Հիրավի, նրանք դա անում էին ոչ միայն հիշելու իրենցից հեռացած Տիրոջը, այլև հայտնելու իրենց երախտագիտությունը և ցույց տալու իրենց հավատքը առ իրենց համար կատարված Նրա զարմանահրաշ Փրկագնումը:

Հատկանշականն այն է, որ երբ Հիսուսն այցելեց Իր աշակերտներին Ամերիկաներում, Նա նաև նրանց մեջ հիմնեց հաղորդությունը:[14] Դա անելիս Նա ասաց. «Այս պիտի դուք միշտ հետևեք, որ կատարեք»[15] և «դա կլինի մի վկայություն Հորը, որ դուք միշտ հիշում եք ինձ»:[16] Կրկին, Վերականգնման արշալույսին, Տերը հիմնեց հաղորդության արարողությունը, տալով մեզ նույն հրահանգները, որոնք տվել էր Իր վաղեմի աշակերտներին:[17]

Հաղորդության արարողությունը կոչվեց «Եկեղեցու ամենասուրբ և սրբազան արարողություններից մեկը»:[18] Այն պետք է դառնա առավել սուրբ և սրբազան մեզանից յուրաքանչյուրի համար: Հիսուս Քրիստոսն Ինքը հիմնեց այդ արարողությունը, որ հիշեցնի մեզ, թե ինչ է արել մեզ փրկագնելու համար և ուսուցանեց, թե ինչպես կարող ենք օգուտ քաղել Նրա Փրկագնումից և այդպիսով կրկին ապրել Աստծո հետ:

Մի փոքր հացի կտոր ճաշակելով մենք ցույց ենք տալիս, որ հիշում ենք Հիսուս Քրիստոսի ֆիզիկական մարմինը, մարմին, որը կրեց ամեն տեսակի ցավեր, չարչարանքներ և գայթակղություններ,[19] մարմին, որը

այնպես կրեց չարչարանքի բեռը, որ արյունահոսեց ամեն ծակոտիից,[20] տառապեց և մահացավ խաչի վրա:[21] Մենք ցույց ենք տալիս մեր հավատքը, որ չնայած այդ մահացած մարմինը ննջում էր, այն դուրս եկավ գերեզմանից կրկին ի կյանք, որպեսզի այլևս չտեսնի հիվանդություն, քայքայում կամ մահ:[22] Եվ ճաշակելով հացը մենք ընդունում ենք, որ Քրիստոսի մահկանացու մարմնի պես մեր մարմինները կազատվեն մահվան կապանքներից, հաղթականորեն կբարձրանան գերեզմանից և կմիավորվեն մեր հավերժական հոգիների հետ:[23]

Մի փոքր բաժակ ջրով մենք ցույց ենք տալիս, որ հիշում ենք Հիսուսի հեղված արյունը և հոգևոր տառապանքը, որ Նա կրեց ողջ մարդկության համար: Մենք հիշում ենք հոգևարքը, երբ արյունը մեծ կաթիլներով թափվեց Գեթսեմանիում:[24] Մենք հիշում ենք, որ Նա ծեծվեց և մտրակահարվեց Իրեն ձերբակալողների կողմից:[25] Մենք հիշում ենք արյունը, որ Գագաթում թափվեց Նրա ձեռքերից, ոտքերից և կողերից:[26] Եվ մենք հիշում ենք Իր տառապանքի մասին ասված Նրա իսկ խոսքերը. «Որքա՜ն դառը, դու չգիտես, որքա՜ն սուր, դու չգիտես, այո՛, որքա՜ն ծանր՝ տանելու, դու չգիտես»:[27] Վերցնելով ջուրը մենք ընդունում ենք, որ Նրա արյունը և տառապանքը քավեց մեր մեղքերը և որ Նա կվճարի մեր մեղքերի համար, երբ մենք ընդունենք և ստանանք Նրա ավետարանի սկզբունքները և ծեսերը:

Այսպիսով, հացով և ջրով մենք հիշում ենք մեզ մահից և մեղքից ազատող Քրիստոսի Փրկագնումը: Սկզբում հացը և հետո ջուրը ընդունելու հերթականությունն աննպատակ չէ: Հացը ճաշակելը մեզ համար հիշեցնում է մեր անձնական հարության անխուսափելիությունը, որը միայն մարմնի և հոգու վերականգնման մեջ չի կայանում: Հարության զորությամբ մենք բոլորս կվերականգնվենք Աստծո ներկայության մեջ:[28] Այդ իրականությունը մեզ համար կյանքի հիմնարար հարց է: Հիմնարար հարցը, որին առերեսվում ենք մենք բոլորս, կայանում է ոչ թե նրանում, թե արդյոք կապրենք մենք, այլ ում հետ կապրենք մահանալուց հետո: Չնայած որ մեզանից յուրաքանչյուրը վերադառնալու է Աստծո ներկայություն, մեզանից ոչ բոլորը կմնան Նրա հետ:

Մահկանացու կյանքում մեզանից յուրաքանչյուրն ապականվում է մեղքով և զանցանքով:[29] Մենք կունենանք ոչ այնքան առաքինի մտքեր, խոսքեր և գործեր:[30] Մի խոսքով, մենք մաքուր չենք լինի: Եվ Աստծո ներկայության մեջ անմաքուր լինելու հետևանքների մասին Հիսուսը լիովին հստակ է ներկայացրել. «Ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել . . . նրա ներկայության մեջ»:[31] Այդ իրականությունը պարզ դարձավ Ալմա Կրտսերի համար, ով երբ տեսավ սուրբ հրեշտակին, պրկվեց, հոգին տակնուվրա եղավ և տանջվեց իր անմաքրության պատճառով, այնպես որ նա ցանկացավ դառնալ «բնաջինջ թե հոգով, թե մարմնով, որ [նա] չբերվեր կանգնելու Աստծո ներկայության մեջ»:[32]

Հաղորդության ջուրը ճաշակելիս, մեզ ուսուցանվել է ինչպես ենք մաքրվում մեղքից և զանցանքից, և այսպիսով՝ կանգնում Աստծո ներկայության մեջ: Իր անմեղ արյունը հեղելով Հիսուս Քրիստոսը բավարարեց արդարադատության պահանջները ամեն մեղքի և զանցանքի համար: Այնուհետև Նա առաջարկեց մաքրել մեզ, եթե մենք բավարար հավատք ունենանք առ Նա ապաշխարելու համար, ընդունենք փրկող բոլոր ծեսերն ու ուխտերը, սկսած մկրտությունից, և ստանանք Սուրբ Հոգին: Սուրբ Հոգին ստանալուն պես մենք մաքրագործվում և սրբագործվում ենք: Հիսուսը շատ հստակ է ներկայացրել այդ վարդապետությունը.

«Ոչ մի անմաքուր բան չի կարող մտնել [Աստծո] արքայությունը. . . . ոչինչ չի մտնում նրա հանգստի մեջ, բացի նրանցից, ովքեր լվացել են իրենց հագուստներն իմ արյունով: . . .

Արդ այս է պատվիրանը. Ապաշխարեք, դուք, աշխարհի բոլոր ծայրեր, և եկեք ինձ մոտ ու մկրտվեք իմ անունով, որպեսզի դուք կարողանաք սրբագործվել՝ ընդունելով Սուրբ Հոգին, որպեսզի դուք կարողանաք կանգնել անբիծ իմ առջև վերջին օրը»:[33]

Սա է Քրիստոսի վարդապետությունը:[34] Երբ մենք ստանում ենք այդ վարդապետությունը և համապատասխանաբար ապրում մեր կյանքը, արդյունքում մենք լվացվում ենք Քրիստոսի արյունով և մաքրվում:[35]

Հաղորդության աղոթքներով մենք ցույց ենք տալիս, որ ընդունում ենք Քրիստոսի այդ վարդապետությունը և պարտավորվում ապրել համապատասխանաբար: Առ Աստված՝ մեր Հավերժական Հայրը մեր աղոթքում մենք հայտարարում ենք, որ «միշտ կհիշենք» Նրա թանկագին Որդուն: Նախ, մենք վկայում ենք հիշելու մեր «պատրաստակամությունը», իսկ այնուհետև վկայում, որ մենք «իրոք» հիշում ենք: Այդպիսով, մենք հանդիսավոր կերպով պարտավորվում ենք հավատք գործադրել առ Հիսուս Քրիստոս և մահից ու մեղքից մեզ ազատող Նրա Փրկագնումը:

Այնուհետև մենք հայտարարում ենք, որ «կպահենք նրա պատվիրանները»: Դա հանդիսավոր պարտավորվածություն է ապաշխարելու համար: Եթե մեր մտքերը, խոսքերը կամ գործերը նախկինում չեն եղել այնպիսին, ինչպիսին պետք է լինեին, մենք կրկին պարտավորվում ենք այսուհետ մեր կյանքն առավել

համահունչ դարձնել Նրա կամքի հետ:

Հաջորդը մենք հայտարարում ենք, որ «կամենում ենք մեզ վրա վերցնել Որդու անունը»:[36] Դա հանդիսավոր պարտավորվածություն է՝ հնազանդվել Նրա իշխանությանը և կատարել Նրա աշխատանքը, որը ներառում է բոլոր փրկող արարողություններն ու ուխտերը ստանալը:[37]

Երբ պահում ենք այդ սկզբունքները, հաղորդության աղոթքներում մեզ խոստացվում է, որ մենք «Նրա Հոգին մեզ հետ կունենանք»:[38] Հոգին կրկին ստանալը բարձրագույն օրհնություն է, քանի որ Հոգին մաքրագործում և սրբագործում է մեզ մեղքից և զանցանքից:[39]

Եղբայրներ և քույրեր, ժամանակի և հավերժության մեջ ամենակարևոր իրադարձությունը Հիսուս Քրիստոսի Քավությունն է: Նա, ով իրագործեց Քավությունը, մեզ տվեց հաղորդության արարողությունը, որպեսզի ոչ միայն հիշենք, այլև հայցենք օրհնությունները՝ ողորմածության այդ զերագույն արարքի: Այս սուրբ արարողությանը պարբերաբար և պատշաճ մասնակցելը օգնում է մկրտությունից հետո շարունակել պատրաստակամ ընդունել Քրիստոսի վարդապետությունը և ապրել դրանով, և դրանով իսկ հետամուտ լինել և ավարտել սրբագործման գործընթացը: Իսկապես, հաղորդության արարողությունը օգնում է մեզ հավատարմորեն տոկալ մինչև վերջ և ստանալ Հոր լիությունիցը, նույն կերպ ինչպես Հիսուսը, շնորհք շնորհքի տեղ:[40]

Ես բերում եմ իմ վկայությունը մեզ բոլորիս մահից և մեղքից փրկագնելու Հիսուս Քրիստոսի զորության և Նրա քահանայության ծեսերի զորության մասին, այդ թվում՝ հաղորդության, որը պատրաստում է մեզ «տեսնել Աստծո, այսինքն Հոր երեսը և ապրել»:[41] Թող որ մենք ընդունենք հաղորդությունը հաջորդ շաբաթ և հաջորդող յուրաքանչյուր շաբաթ, ավելի խորը փափագով և առավել լուրջ նպատակով, ես աղոթում եմ Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մատթեոս ԻԶ.17–20, Մարկոս ԺԴ.12–17, Ղուկաս ԻԲ.7–18:
2. Տես Ելից ԺԲ, Թուոց ԺԸ.16–25, Bible Dictionary, “Feasts.”
3. Տես Ելից ԺԳ.12–13, Մոսիա 2.3–4, Մովսես 5.5–8:
4. Տես Մատթեոս ԺԶ.26, Մարկոս ԺԴ.22, Ղուկաս ԻԴ.19, Ա Կորնթացիս ԺԱ.24: Ի տարբերություն դրա, երբ Հիսուսն Իր Հարությունից հետո հիմնում է հաղորդությունը նեփիացիների մեջ, Նա կտրում է հացը, այնուհետև օրհնում այն (տես 3 Նեփի 18.3):
5. Մատթեոս ԻԶ.26, Մարկոս ԺԴ.22, Ա Կորնթացիս ԺԱ.24:
6. Ղուկաս ԻԶ.19, տես նաև Ա Կորնթացիս ԺԱ.24:
7. Ղուկաս ԻԲ.20, տես նաև Մատթեոս ԻԶ.28, Մարկոս ԺԴ.24, Ա Կորնթացիս ԺԱ.25:
8. Մատթեոս ԻԶ.28
9. Ղուկաս ԻԲ.19, տես նաև 3 Նեփի 18.11:
10. Տես 2 Նեփի 11.4, 25.24–25, Հակոբ 4.5, Ալմա 34.14, 3 Նեփի 9.17, 19–20, Մովսես 5.5–8:
11. Տես Հովհաննես Զ.51–57, Ա Կորնթացիս ԺԱ.24–26, Վարդապետություն և Ուխտեր 20.40:
12. Գործք Ի.7:
13. Գործք Բ.42:
14. Տես 3 Նեփի 9.19–20, 18.1–11, 20.3–9, 26.13:
15. 3 Նեփի 18.6:
16. 3 Նեփի 18.7:
17. Տես Վարդապետություն և Ուխտեր 20.75, 27.2, 59.9–12:
18. *Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ* (2013), 96: «Ըստ իս, Եկեղեցու բոլոր ժողովներից հաղորդության ժողովն առավել սրբազան, սուրբ ժողովն է» (*Teachings: Joseph Fielding Smith,* 95):
19. Տես Ալմա 7.11:
20. Տես Ղուկաս ԻԲ.44, Մոսիա 3.7, Վարդապետություն և Ուխտեր 19.18:
21. Տես Մաղմոս ԻԲ.16, Հովհաննես ԺԹ.33–34, 20.25–27, 3 Նեփի 11.14, Վարդապետություն և Ուխտեր 6.37, James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd. ed. (1916), 669:
22. Տես Մատթեոս ԻԸ.6, Ղուկաս ԻԴ.6, 39, Հովհաննես Ի.20, Վարդապետություն և Ուխտեր 76.22–24:
23. Տես Հովհաննես 6.51–59, Ալմա 11.42–44, 40.23; 3 Նեփի 27.13–15:
24. Տես Ղուկաս ԻԲ.44, Մոսիա 3.7, Վարդապետություն և Ուխտեր 19.18:
25. Տես Եսայիա ԾԳ.5, Մատթեոս ԻԶ.67, ԻԷ.26, 29–30, Մարկոս ԺԴ.65, ԺԵ.15, 19, Ղուկաս ԻԲ.63–65, Հովհաննես ԺԹ.1, Մոսիա 15.5:
26. Տես Մատթեոս ԻԷ.35, Մարկոս ԺԵ.15, Ղուկաս ԻԳ.33, Հովհաննես ԺԹ.16, 33–34:
27. Վարդապետություն և Ուխտեր 19.15:
28. Տես Ալմա 11.42–45, 3 Նեփի 27.13–15:
29. Տես Մովսես 6.55:
30. Տես Մատթեոս Ե.27–28, ԺԲ.36, Հակոբոս Գ.1–13, Մոսիա 4.29–30, Ալմա 12.14:
31. Մովսես 6.57, տես նաև Ա Կորնթացիս Զ.9, Եփեսացիս Ե.5, 1 Նեփի 10.21, 15.33–34, Ալմա 7.21, 11.37; 40.26; 3 Նեփի 27.19; Վարդապետություն և Ուխտեր 1.31–32:
32. Ալմա 36.15, տես նաև հատված 14, Հայտնություն Զ.15–17, Ալմա 12.14:
33. 3 Նեփի 27.19–20:
34. Տես 2 Նեփի 31.2–21, 3 Նեփի 11.31–41, 27.13–22, Վարդապետություն և Ուխտեր 76.40–42, 50–54, 69–70:
35. Տես 3 Նեփի 27.19, տես նաև Հայտնություն Ա.5–6, Է.14–15, Ալմա 5.21, 13.11–12, Եթեր 13.10–11, Մովսես 6.59–60:
36. Վարդապետություն և Ուխտեր 20.77, Մորոնի 4.3:
37. Տես Dallin H. Oaks, *His Holy Name* (1998); Dallin H. Oaks, “Taking upon Us the Name of Jesus Christ,” *Ensign,* May 1985, 80–83:
38. Վարդապետություն և Ուխտեր 20.77, 79, Մորոնի 4.3, 5.2:
39. Տես Հռովմայեցիս ԺԵ.16, Ա Կորնթացիս Զ.11, 2 Նեփի 31.17, Ալմա 5.54, 13.12, 3 Նեփի 27.20, Մորոնի 6.4:
40. Տես Վարդապետություն և Ուխտեր 93.6–20:
41. Վարդապետություն և Ուխտեր 84.22

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Ճիտակ արա քո ոտների շափիղը

Եթե մենք Հիսուսին նայենք որպես մեր օրինակի և հետևենք Նրա քայլերին, մենք կարող ենք ապահով վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ, որպեսզի հավերժ ապրենք Նրա հետ:

Իմ սիրելի եղբայրներ ու քույրեր, ես այս առավոտ խոնարհ կանգնած եմ ձեր առջև: Մինչ ես կիսվում եմ ձեզ հետ իմ ուղերձով ես ձեր հավատքն ու աղոթքներն եմ խնդրում ինձ համար:

Մենք բոլորս սկսեցինք մի հրաշալի ու կարևոր ճանապարհորդություն, երբ մենք դուրս եկանք հոգևոր աշխարհից և մտանք այս հաճախ դժվարին փուլը, որը կոչվում է մահկանացու կյանք: Երկրի վրա մեր գոյության հիմնական նպատակը մսից ու ոսկորից մարմին ձեռք բերելն է, փորձություն ստանալն է, որը կարող էր միայն պատահել մեր երկնային ծնողներից բաժանման շնորհիվ և տեսնել, թե արդյոք կպահեինք պատվիրանները: Աբրահամի գրքի, 3 գլխում մենք կարդում ենք. «Եվ դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց»:[1]

Երբ մենք եկանք երկիր, մենք մեր հետ բերեցինք Աստծո այն մեծ պարգևը՝ մեր ազատ կամքը: Հազարավոր ձևերով մենք արտոնված ենք ինքնուրույն ընտրություն անել: Այստեղ մենք ընտրություն ենք անում մեր դժվարին անձնական փորձից: Մենք տարբերում ենք բարին ու չարը: Մենք դառը տարբերում ենք քաղցրից: Մենք իմանում ենք, որ որոշումները կանխորոշում են ճակատագիրը:

Համոզված եմ, որ մենք հեռացել ենք մեր Հորից դեպի Նա վերադառնալու ճնշող ցանկությամբ, որ մենք կարողանանք ստանալ վեհացում, որը Նա պլանավորել էր մեզ համար և որը մենք ինքներս այդքան ցանկանում էինք: Չնայած մենք հեռացել ենք, որպեսզի գտնենք և հետևենք այն ճանապարհը, որը մեզ հետ կվերադարձնի դեպի մեր Երկնային Հայրը, Նա մեզ չի ուղարկել այստեղ առանց ուղղության և առաջնորդության: Այլ, Նա մեզ տվել է անհրաժեշտ գործիքներ, և Նա կաջակցի մեզ, եթե մենք Նրա օգնության կարիքը ունենանք և ձգտենք մեր ուժերի սահմանում անել ամեն ինչ, որպեսզի համբերենք մինչև վերջ և ստանանք հավերժական կյանք:

Մեզ առաջնորդելու համար մենք ունենք սուրբ գրություններում գտնվող Աստծո և Նրա Որդու խոսքերը: Մենք ունենք Աստծո մարգարեների խորհուրդն ու ուսմունքները: Ամենակարևորը մեզ էր տրամադրվել մի կատարյալ օրինակ, որին մենք կարող էինք հետևել, նույնիսկ Մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի օրինակը, և մեզ հրահանգված էր հետևել այդ օրինակին: Փրկիչն ինքն է ասել. «Եկ հետեւիր ինձ»:[2] «Այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դո՛ւք անեք»:[3] Նա հարցադրում արեց. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել»: Այնուհետև Նա պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ ճիշտ ինչպես ես եմ»:[4] «Նա նշեց ուղին և ցույց տվեց ճանապարհը»:[5]

Եթե մենք Հիսուսին նայենք որպես մեր օրինակի և հետևենք Նրա քայլերին, մենք կարող ենք ապահով վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ, որպեսզի հավերժ ապրենք Նրա հետ: Մարգարե Նեփին ասել է. «Մինչև մարդ չհամբերի մինչև վերջ, հետևելով կենդանի Աստծո Որդու օրինակին, նա չի կարող փրկվել»:[6]

Մի կին սուրբ Երկիր այցելելիս ամեն անգամ իր զգացումն էր արտահայտում, բացականչելով. «Ես քայլեցի այնտեղով, որտեղ Հիսուսն էր քայլել»:

Նա շրջել էր այն վայրերում, որտեղ Հիսուսը ապրել և ուսուցանել էր: Միգուցե նա կանգնել է այն քարի վրա, որտեղ մի անգամ Հիսուսն էր կանգնել կամ նայել այն լեռնաշղթային, որին մի անգամ Նա էր նայել: Փորձառություններն ինքնին տպավորիչ էին նրա համար, սակայն ֆիզիկապես քայլել *այնտեղով, որտեղ* Հիսուսն է քայլել ավելի քիչ կարևոր է, քան քայլել *այնպես, ինչպես* Նա է քայլել: Նրա գործողությունները մարմնավորելը և Նրա օրինակին հետևելը շատ ավելի կարևոր է, քան փորձել հետազոտել այն արահետները, որով Նա գնացել է իր մահկանացու կյանքում:

Երբ Հիսուսը մի հարուստ մարդու հղեց իր հրավերը. «Եկ, հետևիր ինձ»,[7] Նա պարզապես նկատի չուներ, որ այդ հարուստ մարդը պետք է հետևեր Իրեն՝ բլուրներով և ձորերով վեր ու վար անելով:

Մենք չպետք է քայլենք Գալիլեայի ափերով կամ Հուդայի լեռներով, որտեղով Հիսուսն է քայլել: Մենք բոլորս էլ կարող ենք քայլել այն ուղով, որով ինքն է քայլել, եթե Նրա խոսքերը հնչեն մեր ականջներում, Նրա Հոգին լցնի մեր սրտերը և Նրա ուսմունքներն առաջնորդեն մեր կյանքը, մենք կհետևենք Նրան՝ ճանապարհորդելով մահկանացու կյանքի միջով: Նրա օրինակը լուսավորում է ճանապարհը: Նա ասել է. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:[8]

Եթե մենք ուսումնասիրենք այն ուղին, որով Հիսուսն է քայլել, մենք կտեսնենք, որ Նա անցել է այն նույն դժվարություններից շատերի միջով, որոնց մենք կհանդիպենք կյանքում:

Օրինակ, Հիսուսն անցել է հիասթափության ուղով: Չնայած որ նա ունեցավ շատ հիասթափություններ, ամենահուզումնալիներից մեկը պատկերված է Երուսաղեմի մասին իր ողբում, երբ նա վերջացրեց ժողովրդին իր ծառայությունը: Իսրայելի զավակները մերժեցին այն պաշտպանիչ թևերի ապահովությունը, որը Նա նրանց առաջարկեց: Երբ նա նայեց քաղաքին, որը շուտով պետք է կործանվեր, Նա խորը վիշտ ապրեց: Տառապանքով նա աղաղակեց. «Երուսաղէմ, Երուսաղէմ, մարգարէները կոտորող, եւ քեզ մօտ ուղարկուածները քարկոծող. Քանի՞ անգամ կամեցայ քո որդիները ժողովել ինչպէս հաւն իր ձագերը թեւերի տակն է ժողովում. Եւ չ'կամեցաք»:[9]

Հիսուսն անցել է գայթակղության ուղով: Սատանան, որը չարն է, ժողովեց իր մեծագույն ուժը, իր ձգող սուտը, գայթակղեց Նրան, ով ծոմ էր պահել 40 օր ու 40 գիշեր: Հիսուսը չհանձնվեց, այլ Նա դիմադրեց ամեն գայթակղության: Նրա վերջին բառերը. «Դէն գնա, սատանայ»:[10]

Հիսուսն անցել է ցավի ուղով: Հիշեք Գեթսեմանը, որտեղ նա

«տագնապի մէջ լինելով . . . Եւ նորա քրտինքն էր ինչպէս արիւնի կաթիլներ, որ թափվում են երկրի վերայ»:[11] Եվ ոչ ոք չի կարող մոռանալ Նրա տանջանքները դաժան խաչի վրա:

Ամենքս էլ կքայլենք հիասթափության ուղով, հավանաբար՝ կորած հնարավորության, ուժի սխալ կիրառման, սիրած մարդկանց որոշումների, կամ մեր կայացրած որոշումների պատճառով: Գայթակղության ուղին նույնպես կլինի յուրաքանչյուրիս ուղին: Վարդապետություն և ուխտեր 29-րդ բաժնում կարդում ենք. «Եվ անպայման պետք է որ դևը գայթակղեր մարդկանց զավակներին, այլապես նրանք չէին կարող գործակալը լինել իրենց անձի»:[12]

Նմանապես մենք կքայլենք ցավի ուղով: Մենք որպես ծառաներ, չենք կարող ակնկալել ավելին, քան Տերը, ով հեռացել է մահկանացու կյանքից միայն մեծ ցավից ու տառապանքից հետո:

Չնայած մեր ճանապարհին կգտնենք դառը վիշտ, մենք նաև կգտնենք մեծ երջանկություն:

Հիսուսի հետ միասին մենք կարող ենք քայլել հնազանդության ուղով: Այն միշտ չէ, որ հեշտ կլինի, սակայն թող մեր կարգախոսը լինի այն ժառանգությունը, որը կտակել է մեզ Սամուելը. «Ահա հնազանդութիւնը՝ զոհից լաւ է, և ականջ դնելը՝ խոյերի ճարպիցը»:[13] Եկեք հիշենք, որ անհնազանդության վերջնական արդյունքը գերեվարությունն ու մահն է, իսկ հնազանդության պարգևը՝ ազատությունը և հավերժական կյանքը:

Հիսուսի նման մենք կարող ենք քայլել ծառայության ուղով: Որպես բարության վառ լուսարձակ է հանդիսանում Հիսուսի կյանքը, երբ Նա ծառայում էր մարդկանց մեջ: Նա ուժ տվեց հաշմանդամի ոտքերին, կույրերի աչքերին՝ տեսողություն, խուլերի ականջներին լսողություն տվեց:

Հիսուսն անցել է աղոթքի ուղով: Նա մեզ ուսուցանել է, թե ինչպես աղոթել՝ տալով մեզ այն գեղեցիկ աղոթքը, որը մենք ճանաչում ենք որպես Տերունական Աղոթք: Եվ ով կարող է մոռանալ Նրա աղոթքը Գեթսեմանիում. «Ոչ թէ իմ կամքը՝ բայց քո կամքը լինի»:[14]

Փրկչի կողմից այլ ցուցումներ էլ են տրվել մեզ, որոնք մեր ձեռքի տակ են, որոնք գտնվում են սուրբ գրություններում: Լեռան վրայի իր քարոզում Նա մեզ պատվիրում է՝ լինել գթասիրտ, լինել խոնարհ, լինել արդար, լինել սրտով մաքուր, լինել խաղաղարար: Նա մեզ ցուցում է տալիս, որպեսզի ամուր կանգնենք մեր հավատքում, նույնիսկ, երբ մեզ ծաղրում են կամ հալածում: Նա մեզ ասում է, որ թույլ տանք մեր լույսերը փայլեն, որպեսզի մյուսները

տեսնեն և ցանկանան փառաբանել մեր Երկնային Հորը: Նա մեզ ուսուցանում է լինել բարոյապես մաքուր, թե մեր մտքում, թե մեր արարքներում: Նա մեզ ասում է, որ ավելի կարևոր է հավաքել գանձեր երկնքում, քան հավաքել դրանք երկրի վրա:[15]

Նրա առակներն ուսուցանում են զորությամբ ու իշխանությամբ: Բարի սամարացու պատմությամբ Նա մեզ ուսուցանում է, որ սիրենք ու ծառայենք մեր մերձավորներին:[16] Տաղանդների իր առակում Նա մեզ ուսուցանում է, որ կատարելագործվենք ու ձգտենք կատարելության:[17] Կորած ոչխարի առակով Նա մեզ հրահանգում է, որ գնանք փրկենք նրանց, ովքեր հեռացել են ուղուց և կորցրել ճանապարհը:[18]

Եթե ձգտենք Հիսուսին պահել մեր կյանքի կենտրոնում՝ սովորելով Նրա խոսքերը, հետևելով Նրա ուսմունքներին և քայլելով Նրա ուղով, Նա խոստացել է մեզ հետ կիսվել հավերժական կյանքով, որի համար Նա մահացել է: Չկա ավելի մեծ նպատակ, քան այն, որ մենք պետք է ընդունենք Նրա ուսուցումը և դառնանք Նրա աշակերտները և մեր կյանքի ընթացքում կատարենք Նրա աշխատանքը: Ոչինչ և ոչ մի այլ որոշում չի կարող մեզ դարձնել այն, ինչ Նա կարող է դարձնել:

Երբ մտածում եմ նրանց մասին, ովքեր իսկապես փորձել են հետևել Փրկչի օրինակին և ովքեր քայլել են Նրա ուղով, անմիջապես իմ միտքն են գալիս Գուստավ և Մարգարեթ Վաքերների անունները՝ երկուսն այն Քրիստոսանման մարդկանցից, որոնց ես երբևէ ճանաչել եմ: Նրանք բնիկ գերմանացի էին, ովքեր ներգաղթել էին արևելյան Կանադա, և ես նրանց հետ ծանոթացա, երբ այնտեղ ծառայում էի որպես միսիայի նախագահ: Եղբայր Վաքերն աշխատում էր որպես վարսավիր: Չնայած նրանց միջոցները սահմանափակ էին, նրանք կիսվում էին այն ամենով, ինչ ունեին: Նրանք օրհնված չէին զավակներով, սակայն նրանք հոգ էին տանում բոլոր նրանց մասին, ովքեր մտնում էին իրենց տուն: Շատ ուսյալ և իմաստուն տղամարդիկ ու կանայք ձգտում էին հանդիպել այդ խոնարհ, կրթություն չունեցող Աստծո ծառաներին և իրենց բախտավոր համարում, եթե բախտ էր վիճակվում նրանց ներկայությամբ գեթ մեկ ժամ անցկացնել:

Նրանց տեսքը սովորական էր, նրանց անգլերենը ոչ կատարյալ և երբեմն դժվար հասկանալի, նրանց տունը՝ հասարակ: Նրանք չունեին ավտոմեքենա կամ հեռուստացույց, ոչ էլ նրանք անում էի բաներ, որոնց աշխարհը սովորաբար ուշադրություն է դարձնում: Այդուհանդերձ, նրանց հաճախ էին այցելում, որպեսզի ճաշակեին այնտեղ տիրող հոգուց: Նրանց տունը դրախտ էր երկրի վրա և հոգին, որը նրանք ճառագում էին, մաքուր խաղաղություն ու բարություն էր:

Մենք նույնպես կարող ենք ունենալ այդ հոգին և դրանով կիսվել աշխարհի հետ, մինչ քայլում ենք մեր Փրկչի ուղով և հետևում Նրա կատարյալ օրինակին:

Առակացում մենք կարդում ենք Նրա հորդորը. «Շիտակ արա քո ոտների շաւիղը»:[19] Եթե անենք դա մենք կունենանք հավատք, նույնիսկ ցանկություն՝ քայլելու այն ուղով, որով Հիսուսն է քայլել: Մենք կասկած չենք ունենա, որ մենք այն ուղու վրա ենք, որը մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ հետևենք: Փրկչի օրինակը մեզ համար հիմք է հանդիսանում այն ամենի համար, որ մենք անում ենք և Նրա խոսքերը հանդիսանում են անխափան ուղեցույց: Նրա ուղին ապահով մեզ տուն կհասցնի: Թող դա լինի մեր օրհնությունը, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ում ես սիրում, ծառայում և ում մասին ես վկայում եմ, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Աբրահամ 3.25:
2. Ղուկաս 18.22:
3. 3 Նեփի 27.21:
4. 3 Նեփի 27.27:
5. Eliza R. Snow, “How Great the Wisdom and the Love,” *Hymns,* no. 195.
6. 2 Նեփի 31.16:
7. Ղուկաս 18.22:
8. Հովհաննես 14.6:
9. Ղուկաս 13.34:
10. Մատթեոս 4.10:
11. Ղուկաս 22.44:
12. Վարդապետություն և Ուխտեր 29.39:
13. Ա Թագավորաց 15.22:
14. Ղուկաս 22.42:
15. Տես Մատթեոս 5; 6:
16. Տես Ղուկաս 10.30–37:
17. Տես Մատթեոս 25.14–30:
18. Տես Ղուկաս 15.4–7:
19. Առակաց 4.26:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Մնացեք նավակի մեջ և ամուր բռնած պահեք

Եթե մենք պահում ենք մեր կիզակետը Տիրոջ վրա, մեզ խոստացված է համեմատությունից վեր մի օրհնություն:

Վերջերս իմ ընկերներից մեկը իր որդուն տարավ ուղևորության Կոլորադո գետով վար Կատարակտի կիրճով, որը գտնվում է հարավարևելյան Յուտայում: Կիրճը հայտնի է իր 14 մղոն (23 կմ) փրփրադեզ կատաղի ջրերի սահանքներով, որոնք կարող են առանձնապես վտանգավոր լինել:

Ի նախապատրաստություն իրենց արկածի նրանք ուշադիր նայել էին National Park Service կայքէջը, որը պարունակում է կարևոր տեղեկություն անձնական նախապատրաստության և սովորական, ծածուկ վտանգների մասին:

Ուղևորության սկզբում փորձառու գետային ուղեկցորդներից մեկը վերանայեց անվտանգության կարևոր հրահանգները՝ շեշտելով երեք կանոններ, որոնք կապահովեին խմբին անվտանգ ճանապարհորդություն սահանքների միջով: «Կանոն թիվ մեկ. Մնացեք նավակում, Կանոն թիվ երկու. Միշտ կրեք փրկագոտի: Կանոն թիվ երեք. Միշտ երկու ձեռքով ամուր բռնվեք»: Այնուհետև նա կրկին ասաց, նույնիսկ ավելի շեշտադրելով. «Բացի ամեն ինչից, հիշեք կանոն թիվ մեկը. Մնացեք նավակում»:

Այս արկածը հիշեցնում է ինձ մեր մահկանացու ճամփորդությունը: Մեզանից շատերը մեր կյանքում անցնում են ժամանակահատվածներով, երբ կյանքի հանդարտ ջրերն են նախընտրելի: Այլ պահերի մենք հանդիպում ենք փրփրադեզ կատաղի ջրերի սահանքների, որոնք այլաբանորեն կարող ենք համեմատվել Կատարակտի կիրճի ջրերի հետ, որոնք գտնվում են 14 մղոնանոց հատվածում մարտահրավերների հետ, որոնք կարող են ներառել ֆիզիկական և մտավոր առողջության հարցեր, սիրելիի մահ, կործանված երազանքներ և հույսերի և ոմանց համար, նույնիսկ, հավատքի ճգնաժամի հետ, երբ դիմակայում ենք կյանքի խնդիրների, հարցերի և կասկածների:

Տերն Իր բարությամբ ապահովել է օգնություն, ներառյալ նավ, կարևոր պարագաներ, ինչպես օրինակ՝ փրկագոտիներ և փորձառու գետային ուղեկցորդներ և անվտանգության հրահանգներ՝ օգնելու մեզ անցնելու մեր ուղին կյանքի գետով վար դեպի մեր վերջնական նպատակատեղը:

Եկեք մտածենք համար մեկ. «Մնացեք նավակում» կանոնի մասին:

Նախագահ Բրիգամ Յանգը սովորաբար օգտագործում էր «Սիոնի հնամյա նավը» որպես այլաբանություն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համար:

Նա մի առիթով ասել է. «Մենք օվկիանոսի մեջտեղում ենք: Փոթորիկը մոտենում է և ինչպես

նավաստիներն են ասում, նա շատ դժվարությամբ է աշխատում: «Ես չեմ պատրաստվում մնալ այստեղ, - ասում է ինչ որ մեկը,- Ես չեմ հավատում, որ սա «Սիոն նավն» է: «Բայց մենք օվկիանոսի մեջտեղում ենք»: «Ինձ ինչ, ես չեմ պատրաստվում մնալ այստեղ»: Հանում է վերարկուն և թռչում նավի տախտակամածից: Մի՞թե նա չի խեղդվի: Այո: Այդպես կլինեն նաև նրանք, ովքեր կթողնեն այս Եկեղեցին: Սա «Սիոնի հնամյա նավն է», եկեք մնանք դրա վրա:[1]

Մեկ այլ առիթով Նախագահ Յանգն ասել է, որ նա անհանգստանում է այն մարդկանց համար, ովքեր կորցնում են իրենց ճանապարհը, երբ նրանք օրհնվում են, երբ կյանքը լավ է. «Դա հանգիստ եղանակին է, երբ Սիոնի հնամյա նավը նավարկում է մեղմ քամիով, [և] երբ ամեն ինչ խաղաղ է տախտակամածին, որ որոշ եղբայրներ ուզում են դուրս գալ նավակներով . . . լողալու, և ոմանք խեղդվում են, մյուսները քշվում հեռու, իսկ մյուսները կրկին նավ են վերադառնում: Եկեք կառչենք հին նավին և այն մեզ «ապահով» կտանի նավահանգիստ, դուք չպետք է անհանգստանաք»:[2]

Եվ ի վերջո, Նախագահ Յանգը հիշեցրեց Սրբերին. «Մենք հնամյա Սիոն նավի վրա ենք: . . . [Աստված] է ղեկի մոտ և կմնա այնտեղ: . . . Ամեն ինչ լավ է, երգեք Ալելուա, քանզի Տերն այստեղ է: Նա թելադրում է, առաջնորդում և ուղղորդում: Եթե մարդիկ ունենան անսասան վստահություն իրենց Աստծո հանդեպ, երբեք չլքեն իրենց ուխտերը, ոչ էլ իրենց Աստծուն, Նա մեզ ճիշտ կառաջնորդի»:[3]

Այսօր մեզ բոլորիս տրված մարտահրավերներով, որոնց դիմակայում ենք, ինչպե՞ս ենք մնում հնամյա Սիոն նավի վրա:

Ահա թե ինչպես: Մենք պետք է զգանք շարունակական դարձ մեծացնելով մեր հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ և հավատարմություն Նրա ավետարանի հանդեպ մեր ողջ կյանքի ընթացքում, ոչ թե ուղղակի մեկ անգամ, բայց կանոնավորապես: Ալման հարցրեց. «Եվ արդ, ահա ես ասում եմ ձեզ, իմ եղբայրներ, եթե դուք զգացել եք սրտի մի փոփոխություն, և եթե դուք տրամադրված եք եղել երգելու քավիչ սիրո երգը, ես կկամենայի հարցնել, այժմ դուք ունե՞ք այդպիսի զգացում»:[4]

Գետի փորձառու ուղեկցորդներին կարելի է նմանեցնել Եկեղեցու առաքյալներին, մարգարեներին և ոգեշնչված տեղական քահանայության և օժանդակ ղեկավարներին: Նրանք օգնում են մեզ ապահով ժամանել մեր վերջնական նպատակատեղը:

Վերջերս ես խոսեցի նոր միսիաների նախագահների սեմինարին և խորհուրդ տվեցի այդ ղեկավարներին.

«Միսիոներների աչքերը ուղղված պահեք Եկեղեցու ղեկավարների վրա: . . . Մենք չենք կամենա և չենք կարող [ձեզ] շեղել:

Եվ երբ դուք ուսուցանեք ձեր միսիոներներին ուղղված պահել իրենց աչքերը մեզ վրա, ուսուցանեք նրանց երբեք չհետևել նրանց, ովքեր կարծում են, թե գիտեն ավելին այն մասին, թե ինչպես կառավարեն Եկեղեցու գործերը, քան . . . Երկնային Հայրը և Տեր Հիսուս Քրիստոսը» քահանայության ղեկավարների միջոցով, ովքեր ունեն նախագահելու բանալիները:

Ես հայտնաբերել եմ իմ ծառայության ընթացքում, որ նրանք ովքեր դառնում են կորած [և] շփոթված սովորաբար նրանք են, ովքեր ամենահաճախն են . . . մոռանում, որ երբ Առաջին Նախագահությունը և Տասներկուսի Քվորումը խոսում են միասնական ձայնով, դա Տիրոջ ձայնն է՝ այդ ժամանակի համար: Տերը հիշեցնում է մեզ՝ «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով միևնույն է» [ՎԿՈ 1.38]:[5]

Այլ խոսքով ասած, նրանք թողնում են Սիոն հնամյա նավը, նրանք շեղվում են, ուրանում են: Դժբախտաբար նրանք հաճախ տանում են կարճաժամկետ և ի վերջո երկարաժամկետ չկանխատեսված հետևանքներ, ոչ միայն իրենց համար, այլ նաև իրենց ընտանիքների համար:

Մեր տեղական Եկեղեցու ղեկավարները, գետային փորձառու ուղեկցորդների պես, ուսուցանվել են կյանքի փորձառություններով, վարժեցվել են և խորհուրդ ստացել առաքյալներից, մարգարեներից և Եկեղեցու այլ պաշտոնյաներից, և ամենակարևորը, ուսուցանվել են անձնապես Իր՝ Տիրոջ կողմից:

Մեկ այլ առիթով այս տարի ես խոսեցի Եկեղեցու երիտասարդ չափահասների համար մայիսին ԵԿՀ-ի հոգևոր հեռարձակման ժամանակ: Ես ասացի.

«Ես լսել եմ, որ որոշ մարդիկ կարծում են Եկեղեցու ղեկավարներն ապրում են «վերացական աշխարհում»: Նրանք մոռանում են մի բան, որ մենք փորձառու տղամարդիկ և կանայք ենք, և մենք ապրել ենք մեր կյանքը այնքան շատ վայրերում և աշխատել տարբեր ծագում ունեցող այնքան շատ մարդկանց հետ: Մեր ներկա հանձնարարությունները տառացիորեն տանում են մեզ ողջ երկրագնդով մեկ, որտեղ

մենք հանդիպում ենք աշխարհի քաղաքական, կրոնական, գործարար և մարդասիրական [ոլորտի] ղեկավարների հետ: Չնայած մենք այցելել ենք Սպիտակ տան [ղեկավարներին] Վաշինգտոնում, և ազգերի [ու կրոնների] ղեկավարներին ողջ աշխարհում, մենք այցելել ենք նաև երկրագնդի համեստագույն [ընտանիքներին և մարդկանց]: . . .

Երբ դուք ուշադիր մտածեք մեր կյանքի և ծառայության մասին, դուք ամենայն հավանականությամբ կհամաձայնվեք, որ մենք տեսնում ենք և զգում աշխարհը այնպիսի ուղիներով, որ շատ քչերն են կարողանում: Դուք կհասկանաք, որ մենք ավելի քիչ ենք ապրում «վերացական աշխարհում», քան մարդկանց մեծ մասը: . . .

. . . Կա մի բան [Եկեղեցու ղեկավարների] անձնական և միասնական իմաստության մեջ, որը պետք է տա որոշ մխիթարություն: Մենք տարել ենք այդ բոլորը, ներառյալ հասարակական օրենքների և քաղաքականության տարբերության հետևանքները, հիասթափություններ, ողբերգություններ և մահեր մեր սեփական ընտանիքներում: Մենք մեկուսացած չենք ձեր կյանքից»:[6]

Համար մեկ կանոնի հետ համընթաց, երբ ես կիրառել եմ այն, հիշեք երկրորդ և երրորդ կանոնները, միշտ կրեք փրկագոտի և ամուր բռնած մնացեք երկու ձեռքով: Տիրոջ խոսքերը գտնվում են սուրբ գրություններում և առաքյալների և մարգարեների ուսմունքներում: Դրանք մեզ ապահովում են խորհրդով և ուղղությամբ, որոնց եթե հետևենք, կգործեն հոգևոր փրկագոտու նման և կօգնեն մեզ իմանալ, թե ինչպես ամուր բռնած պահենք երկու ձեռքով:

Մենք պետք է դառնանք Մոսիայի որդիների նման, ովքեր «դարձել էին ուժեղ ճշմարտության իմացության մեջ»: Մենք կարող ենք դառնալ «առողջ դատողությամբ տղամարդիկ և կանայք»: Սա կարող է իրականանալ միայն «ջանասիրաբար քննել[ով] սուրբ գրությունները, որ կարողանանք իմանալ Աստծո խոսքը»:[7]

Քննելով սուրբ գրությունները և անցյալ և ներկա առաքյալների ու մարգարեների խոսքերը, մենք պետք է կենտրոնանանք ուսումնասիրելու, ապրելու և Քրիստոսի վարդապետությունը սիրելու վրա:

Բացի անձնական սուրբ գրությունների ընթերցանության սովորույթ զարգացնելուց, մենք պետք է Մոսիայի որդիների նման լինենք և մեզ նվիրենք «շատ աղոթքի ու ծոմի»:[8]

Թվում է այս բաները, որոնք հեշտորեն չեն չափվում, մեծ կարևորություն ունեն: Կենտրոնացած մնացեք այս պարզ բաների վրա, և խուսափեք ցրված դառնալուց:

Քանի որ ես ճանաչել եմ մարդկանց, ովքեր չեն մնացել նավում և ամուր չեն բռնվել երկու ձեռքով փորձությունների և դժբախտությունների ժամանակ կամ չեն մնացել նավում համեմատաբար խաղաղ ժամանակաընթացքում, ես նկատել եմ, որ նրանցից շատերը կորցրել են իրենց կիզակետը ավետարանի կենտրոնական ճշմարտություններից՝ առաջին հերթին, թե ինչ պատճառներով են միացել Եկեղեցուն, թե ինչ պատճառներով են մնացել լիովին նվիրված և ակտիվ կենդանի ավետարանի չափանիշներին և օրինել ուրիշներին նվիրված և սրբագործված ծառայությամբ և այն ուղիները, որոնցով Եկեղեցին եղել է նրանց կյանքում «հոգևոր սնուցման և աճի վայր»:[9]

Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է այս կենտրոնական ճշմարտությունը. «Մեր կրոնի հիմնական սկզբունքներն են՝ առաքյալների և մարգարեների վկայությունները Հիսուս Քրիստոսի մասին, «որ նա

մահացավ և թաղվեց և կրկին հարություն առավ երրորդ օրը և համբարձվեց երկինք», և բոլոր մյուս բաները ընդամենը հավելումներն են սրանց, որոնք վերաբերվում են մեր կրոնին»:[10]

Եթե մենք մեր կիզակետը պահենք Տիրոջ վրա, մեզ խոստացված է մի անզուգական օրհնություն. «Ուստի, դուք պետք է առաջ մղվեք Քրիստոսի հանդեպ հաստատամտությամբ, ունենալով հույսի կատարյալ պայծառություն, և սեր Աստծո հանդեպ և բոլոր մարդկանց հանդեպ: Ուստի, եթե դուք առաջ մղվեք, սնվելով Քրիստոսի խոսքով, և համբերեք մինչև վերջ, ահա, այսպես է ասում Հայրը. Դուք կունենաք հավերժական կյանք»:[11]

Երբեմն Վերջին Օրերի Սրբերը և անկեղծ ունկնդիրները սկսում են կենտրոնանալ «հավելումների» վրա, փոխարենը կենտրոնանալու հիմնական սկզբունքների վրա: Այսինքն, սատանան գայթակղում է մեզ շեղվվել վերկանգված ավետարանի պարզ և հստակ ուղերձից: Նրանք, ովքեր այսպես շեղվում են, հաճախ դադարում են հաղորդությունը ճաշակել, որովհետև նրանք դառնում են կենտրոնացած, նույնիսկ գերզբաղված ավելի քիչ կարևոր գործերով կամ ուսմունքներով:

Մյուսները զուցե կենտրոնանում են այն հարցերի և կասկածների վրա, որ իրենք են զգում: Իհարկե, հարցեր ունենալը և կասկածներ զգալը համատեղելի են նվիրված աշակերտության հետ: Վերջերս, Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի Քվորումը նշեց. «Մենք հասկանում ենք, որ ժամանակ առ ժամանակ Եկեղեցու անդամները կունենան հարցեր Եկեղեցու վարդապետության, պատմության կամ գործունեության վերաբերյալ: Անդամները միշտ ազատ են տալու այդպիսի հարցեր և լրջորեն որոնելու ավելի մեծ հասկացողություն»:[12]

Հիշեք, որ Ջոզեֆ Սմիթը ինքն էլ ուներ հարցեր, որից սկսվեց Վերականգնումը: Նա որոնող էր և Աբրահամի նման, գտավ պատասխաններ կյանքի ամենակարևոր հարցերին:

Կարևոր հարցերը կենտրոնանում են ամենաշատ նշանակություն ունեցող բաների վրա՝ Երկնային Հոր ծրագրի և Փրկչի Քավության վրա: Մեր հետազոտությունը պետք է առաջնորդի մեզ դառնալ բարի, մեղմ, սիրալիր, ներող, համբերատար և նվիրված աշակերտներ: Մենք պետք է հոժար լինենք ինչպես Պողոսն է ուսուցանել.«իրար բեռը վեր առնել, եւ այսպէս Քրիստոսի օրենքը կատարել»:[13]

Ուրիշների բեռը վեր առնելը ներառում է ամենքին օգնելը, աջակցելը և հասկանալը, ներառյալ հիվանդներին, տկարներին, հոգով և մարմնով աղքատներին, որոնողին և դժբախտին և նաև մյուս անդամ աշակերտներին՝ ներառյալ Եկեղեցու ղեկավարներին, ովքեր Տիրոջ կողմից որոշ ժամանակով կանչվել են ծառայելու:

Եղբայրներ և քույրեր, մնացեք նավում, օգտագործեք ձեր փրկագոտիները, ամուր բռնած պահեք երկու ձեռքով: Խուսափեք ցրվածությունից: Եվ եթե ձեզանից որևէ մեկը նավից դուրս է ընկել, մենք կորոնենք ձեզ, կգտնենք ձեզ, կսպասավորենք ձեզ և ապահով ետ կքաշենք Սիոն հնամյա նավը, որտեղ մեր Հայր Աստված և Տեր Հիսուս Քրիստոսը ղեկի մոտ են և մեզ ճիշտ կառաջնորդեն, որի մասին ես խոնարհաբար վկայում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. *Teachings of Presidents of the Church: Brigham Young* (1997), 82–83.
2. Brigham Young, “Discourse,” *Deseret News,* Jan. 27, 1858, 373.
3. Brigham Young, “Remarks,” *Deseret News,* Nov. 18, 1857, 291.
4. Ալմա 5.26:
5. M. Russell Ballard, “Mission Leadership” (address given at the seminar for new mission presidents, June 25, 2014) 8.
6. M. Russell Ballard, “Be Still, and Know That I Am God” (Church Educational System devotional, May 4, 2014); lds.org./broadcasts.
7. Ալմա 17.2:
8. Ալմա 17.3:
9. First Presidency and Quorum of the Twelve Apostles letter, June 28, 2014.
10. Joseph Smith, *Elders’ Journal,* July 1838, 44.
11. 2 Նեփի 31.20:
12. First Presidency and Quorum of the Twelve Apostles letter, June 28, 2014.
13. Գաղատացիս 6.2:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ
Տասներկու Առաքյալների Քվորումից

Հավատքի գործադրումը դարձրեք ձեր առաջնահերթությունը

Չնայած կյանքում ունեցած մեր բազմաթիվ բացասական մարտահրավերներին, մենք պետք է ժամանակ տրամադրենք ակտիվորեն գործադրելու մեր հավատքը:

Երբ Ադամն ու Եվան Եդեմի պարտեզում էին, այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրանց գոյատևման համար, առատորեն տրված էր նրանց: Նրանք չունեին դժվարություններ, խնդիրներ կամ ցավեր: Քանի որ նրանք երբեք չէին ունեցել դժվարին ժամանակներ, նրանք չգիտեին, որ կարող են երջանիկ լինել: Նրանք երբեք խառնաշփոթ իրավիճակում չէին հայտնվել, այնպես որ նրանք չէին կարող զգալ խաղաղություն:

Ի վերջո, Ադամն ու Եվան խախտեցին բարու և չարի իմաստության ծառից պտուղը չուտելու հրամանը. Այդ անելով նրանք այլևս անմեղության վիճակում չէին: Նրանք սկսեցին զգալ ընդդիմության սկզբունքները: Նրանք բախվեցին հիվանդությունների, որոնք թուլացրեցին նրանց առողջությունը: Նրանք սկսեցին զգալ տխրություն, ինչպես նաև ուրախություն:

Ադամի ու Եվայի արգելված պտուղն ուտելու շնորհիվ, բարու և չարի իմացությունը ներկայացվեց աշխարհին: Նրանց ընտրությունը մեզանից յուրաքանչյուրին հնարավորություն տվեց գալ այս աշխարհ և փորձվել:[1] Մենք օրհված են ազատ կամքի ընտրությամբ, որը հանդիսանում է որոշում կայացնելու և այդ որոշումների համար հաշվետու լինելու մեր ունակությունը: Անկումը մեր կյանքում հնարավոր դարձրեց զգալ երջանկություն և տխրություն: Մենք կարող ենք հասկանալ խաղաղությունը, քանի որ մենք զգում ենք խառնաշփոթությունը:[2]

Մեր Երկնային Հայրը գիտեր, որ դա տեղի կունենար մեզ հետ: Այդ բոլորը Նրա երջանկության կատարյալ ծրագրի մի մասն է: Նա ուղի պատրաստեց՝ Իր կատարյալ

հնազանդ Որդի, Հիսուս Քրիստոսի, մեր Փրկչի կյանքի շնորհիվ, Նրա քավության միջոցով հաղթահարելու բոլոր դժվարությունները, որոնք մենք կարող ենք ունենալ մահկանացու կյանքում:

Մենք ապրում ենք դժվարին ժամանակներում: Կարիք չկա, որ ես թվեմ երկրի վրա գոյություն ունեցող չարի բոլոր աղբյուրները: Անհրաժեշտություն չկա նկարագրելու բոլոր հնարավոր մարտահրավերներն ու տառապանքները, որոնք մահկանացու կյանքի մասն են կազմում: Մեզանից յուրաքանչյուրը քաջատեղյակ է մեր իսկ մաքառումներին՝ գայթակղություններով, ցավերով և տխրություններով հանդերձ:

Նախամահկանացու կյանքում մենք ուսուցանվել ենք, որ այստեղ գալու մեր նպատակը՝ ստուգվել, փորձվել և աճելն է:[3] Մենք գիտեինք, որ կհանդիպենք հակառակորդի չարիքին: Երբեմն մենք ավելի շատ տեղյակ ենք մահկանացու կյանքի բացասական բաներից, քան տեղյակ ենք դրական բաներից: Մարգարե Լեքին ուսուցանել է. «Քանզի, անպայման պետք է, որ հակադրություն լինի բոլոր բաներում»[4] Չնայած կյանքում ունեցած մեր բազմաթիվ բացասական մարտահրավերներին, մենք պետք է ժամանակ տրամադրենք ակտիվորեն գործադրելու մեր հավատքը: Նման գործադրումը մեր կյանք է բերում Հիսուս Քրիստոսի Քավության հավատքով լեցուն զորությունը:

Մեր Երկնային Հայրը գործիքներ է տվել մեզ, որպեսզի օգնի մեզ գալու դեպի Քրիստոսը և գործադրելու հավատք Նրա Քավության հանդեպ: Երբ այդ գործիքները դառնում են հիմնական սովորույթներ, նրանք դյուրին ճանապարհ են տրամադրում՝ գտնելու խաղաղություն մահկանացու կյանքի դժվարությունների մեջ: Այսօր ես ընտրել եմ չորս այդպիսի գործիքներ ձեզ հետ քննարկելու համար: Մինչ խոսում եմ, կարող եք գնահատել յուրաքանչյուր գործիքի ձեր անձնական կիրառման չափը, այնուհետև փնտրել Տիրոջ ցուցումները՝ որոշելու համար, թե ինչպես կարող

եք ավելի լավ ձևով օգտագործել դրանցից ամեն մեկը:

Աղոթք

Առաջին գործիքը աղոթքն է: Ընտրեք ձեր Երկնային Հոր հետ ավելի հաճախակի զրուցելը: Ամեն օր ժամանակ գտեք Նրա հետ ձեր մտքերով և զգացումներով կիսվելու համար: Պատմեք Նրան այն ամենն, ինչ մտահոգում է ձեզ: Նա հետաքրքրված է ձեր կյանքի ամենակարևոր և ամենահասարակ բաներով: Նրա հետ կիսվեք ձեր ողջ զգացմունքներով և փորձառություններով:

Քանի որ նա հարգում է ձեր ազատ կամքը, Հայրը որ Երկնքում է երբեք ձեզ չի ստիպի, որպեսզի աղոթեք Նրան: Սակայն եթե դուք ձեր այդ ազատ կամքը գործադրեք, և Նրան ներգրավվեք ձեր առօրյա կյանքի ամեն մի փուլում, ձեր կյանքը կլցվի խաղաղությամբ, զվարթ խաղաղությամբ: Այդ խաղաղությունը կօգնի ձեր մաքառումներին նայել հավերժական տեսանկյունից: Այն կօգնի ձեզ այդ դժվարությունները կառավարել հավերժական տեսանկյունից:

Ծնողներ, պաշտպանեք ձեր զավակներին ամեն առավոտյան և երեկոյան զինելով նրանց ընտանեկան աղոթքի զորությամբ: Ամեն օր երեխաները ռմբակոծվում են՝ տենչանքների, ագահության, հպարտության և այլ մեղսավոր վարքագծի չարիքներով: Պաշտպանեք ձեր զավակներին աշխարհիկ ամենօրյա ազդեցություններից՝ ամրացնելով նրանց զորեղ օրհնություններով, որն արդյունք է ընտանեկան աղոթքի: Ընտանեկան աղոթքը պետք է լինի ձեր առօրյա կյանքի անսակարկելի առաջնահերթությունը:

Սուրբ գրքերի ուսումնասիրություն

Երկրորդ գործիքը դա սուրբ գրություններում Աստծո խոսքի և կենդանի մարգարեների ուսումնասիրությունն է: Մենք Աստծո հետ զրուցում ենք աղոթքի միջոցով: Նա շատ հաճախ մեզ հետ շփվում է Իր գրված խոսքի միջոցով: Որպեսզի իմանաք, թե ինչպիսին է Նրա ձայնը, ուսումնասիրեք սուրբ գրությունները և խորհեք այն:[5] Այն դարձրեք առօրյա կյանքի կարևորագույն մասը: Եթե ցանկանում եք, որ ձեր երեխաները ճանաչեն, հասկանան և գործեն Հոգու հուշումներին համաձայն, դուք պետք է սուրբ գրություններն ուսումնասիրեք նրանց հետ:

Տեղի մի տվեք Սատանայի ստին, որ դուք ժամանակ չունեք ուսումնասիրելու սուրբ գրությունները: Որոշեք ժամանակ գտնել դրանց ուսումնասիրության համար: Ամեն օր Աստծո խոսքով սնվելն ավելի կարևոր է, քան քունը, դպրոցը, աշխատանքը, հեռուստատեսային շոուները, վիդեո խաղերը կամ սոցիալական մեդիան: Դուք պետք է ճանաչեք ձեր առաջնահերթությունները՝ ժամանակ գտնելով ուսումնասիրելու Աստծո խոսքը: Եթե դա այդպես է, ապա արեք այդպես:

Կան սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության օրհնությունների բազմաթիվ մարգարեական խոստումներ:[6]

Ես իմ ձայնն եմ ավելացնում այս խոստումին. Եթե դուք ամեն օր ժամանակ տրամադրեք անհատապես և ձեր ընտանիքի հետ Աստծո խոսքերի ուսումնասիրությանը, խաղաղություն կտիրի ձեր կյանքում: Այդ խաղաղությունը դրսի աշխարհից չի գա: Այն կգա ձեր տան ներսից, ձեր ընտանիքի կողմից, ձեր սրտի մեջից: Դա կլինի Հոգու պարգև: Այն կճառագի ձեզանից՝ ներազդելու աշխարհում ձեզ շրջապատողների վրա: Դուք ինչ-որ կարևոր բան կանեք, որպեսզի ձեր ներդրումն ունենաք աշխարհի հավաքական խաղաղության մեջ:

Ես չեմ հայտարարում, որ ձեր կյանքում դժվարությունները

կվերանան: Հիշեք, որ երբ Ադամն ու Եվան եդեմի պարտեզում էին, նրանք չունեին դժվարություններ, այդուհանդերձ նրանք երջանկություն, ուրախություն և խաղաղություն չէին զգում:[7] Դժվարությունները մահկանացու կյանքի կարևորագույն մասն են կազմում: Ամենօրյա, անդադար սուրբ գրությունների ուսումնասիրության շնորհիվ դուք կգտնեք խաղաղություն ձեզ շրջապատող խառնաշփոթի մեջ և ուժ դիմակայելու գայթակղություններին: Դուք զորեղ հավատք կձևավորեք առ Աստծո շնորհը և կիմանաք, որ Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ ամեն ինչ արդար կդառնա՝ Աստծո ժամանակին համապատասխան:

Ընտանեկան երեկո

Մինչ դուք փորձում եք ամրապնդել ձեր ընտանիքն ու զարգացնել խաղաղություն, հիշեք այս երրորդ գործիքը. շաբաթական ընտանեկան երեկո: Զգույշ եղեք, որպեսզի ձեր ընտանեկան երեկոն չդարձնեք պարզապես զբաղված օրվա լրացուցիչ մաս: Որոշեք, որ երկուշաբթի երեկոյան ձեր ընտանիքը կհավաքվի տանը երեկոյի համար: Թույլ մի տվեք որպեսզի զբաղվածության պահանջները, սպորտը, արտադպրոցական գործունեությունը, տնային առաջադրանքը կամ որևէ այլ բան ավելի կարևոր լինի, քան այն ժամանակը, որը դուք միասին անց եք կացնում տանը ձեր ընտանիքի հետ:

Ձեր երեկոյի կառուցվածքն այնքան կարևոր չէ, որքան ձեր ներդրած ժամանակը: Ավետարանը պետք է ուսուցանվի և պաշտոնապես և ոչ պաշտոնապես: Ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար այն դարձրեք իմաստալից փորձառություն: Ընտանեկան երեկոն թանկարժեք պահ է՝ ապահով միջավայրում ձեր վկայությունները բերելու համար, սովորել՝ ուսուցանման, պլանավորման և կազմակերպչական հմտություններ, ամրապնդել ընտանեկան կապերը, զարգացնել ընտանեկան ավանդույթներ, զրուցել իրար հետ, և ավելի կարևոր է իրար հետ լավ ժամանակ անցկացնել:

Վերջին Ապրիլ ամսվա համաժողովի ժամանակ, Քույր Լինդա Ս. Ռիվսն համարձակ հայտարարեց. «Եղբայրներ և քույրեր, ես պետք է վկայեմ ամեն օր սուրբ գրությունները կարդալու, աղոթելու և ընտանեկան երեկոների օրհնությունների մասին: Սրանք հենց այն փորձառություններն են, որոնք օգնում են հեռացնել լարվածությունը, մեր կյանքին ուղղվածություն են տալիս և ավելացնում են մեր տների պաշտպանվածությունը»:[8] Քույր Ռիվսը շատ իմաստուն կին է: Ես վճռականորեն կոչ եմ անում ստանալ ձեր անձնական վկայությունն այս երեք կարևոր սովորույթների վերաբերյալ:

Տաճարային այցելություն

Չորրորդ գործիքը տաճար գնալն է: Մենք բոլորս էլ գիտենք, որ ավելի խաղաղ վայր չկա երկրի վրա, քան Աստծո տաճարներն են: Եթե չունեք տաճարային երաշխավորագիր, արժանի եղեք այն ստանալու համար: Եթե ունեք երաշխավորագիր, հաճախ օգտագործեք այն:[9] Գրանցվեք հերթական անգամ տաճարում լինելու համար: Թույլ մի տվեք ինչ-որ մեկին կամ ինչ-որ բանի խոչընդոտ հանդիսանալ ձեր այնտեղ լինելու համար:

Տաճարում եղած ժամանակ լսեք արարողությունների խոսքերը, խորհեք դրանց մասին, աղոթեք դրանց վերաբերյալ և փորձեք հասկանալ դրանց նշանակությունը: Տաճարը ամենալավ վայրերից մեկն է, որտեղ մենք սկսում ենք հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունը: Փնտրեք *Նրան* այնտեղ: Հիշեք, որ շատ ավելի օրհնություններ եք ստանում տաճարում ձեր ընտանիքի անունները ներկայացնելուց:

Կուաթեմոք, Մեքսիկա

Այս չորս գործիքները հիմնական սովորույթներն են, որոնք ձեր կյանքն ապահով են դարձնում Հիսուս Քրիստոսի Քավության զորությամբ: Հիշեք, որ մեր Փրկիչը խաղաղության իշխանն է: Այս մահկանացու կյանքում խաղաղությունը գալիս է Նրա Քավիչ զոհաբերությունից: Երբ մենք շարունակաբար գիշեր ու ցերեկ աղոթում ենք, ուսումնասիրում մեր սուրբ գրություններն ամեն օր, անց կացնում շաբաթական ընտանեկան երեկոներ և կանոնավոր կերպով տաճար հաճախում, մենք ակտիվորեն պատասխանում ենք Նրա հրավերքին՝ «Ինձ մոտ եկեք»: Որքան շատ ենք զարգացնում այդ սովորույթներն, այնքան Սատանան մտահոգ է դառնում մեզ վնասելու հարցում, սակայն այդ անելու նրա ունակությունն ավելի է պակասում: Այդ գործիքների կիրառման շնորհիվ, մենք գործադրում ենք մեր ազատ կամքը՝ ընդունելու Նրա Քավիչ զոհաբերության ողջ ընծաները:

Ես չեմ առաջարկում, որ կյանքի բոլոր դժվարությունները կվերանան, եթե անեք այս բաները: Մենք մահկանացու կյանք ենք եկել հատկապես փորձություններից ու փորձվելուց աճելու համար: Դժվարությունները մեզ օգնում են ավելի նմանվել մեր Երկնային Հորը, և Հիսուս Քրիստոսի Քավությունը այդ դժվարությունները տանելի է դարձնում:[10] Ես վկայում եմ, որ եթե մենք ակտիվորեն գանք դեպի Նա, մենք կդիմանանք ամեն գայթակղության, ամեն կսկիծի, ամեն մեր հանդիպած դժվարության, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես Մովսես 5.11:
2. Տես Մովսես 4–5:
3. Տես Աբրահամ 3.25:
4. 2 Նեփի 2.11:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 18.36; տես նաև 34–35 հատվածները:
6. Որոշ օրինակներ՝
   Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է. «Երբ մենք կարդանք ու մեկնաբանենք սուրբ գրությունները, մենք կզգանք

Հոգու քաղցր հուշումները մեր հոգում: Մենք կարող ենք գտնել մեր հարցերի պատասխանները: Մենք իմանում ենք այն օրհնությունների մասին, որոնք գալիս են Աստծո պատվիրանները պահելուց: Մենք ձեռք ենք բերում հաստատուն վկայություն մեր Երկնային Հոր և մեր Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսի և մեր հանդեպ Նրանց սիրո մասին: Երբ սուրբ գրությունների ուսումնասիրությունը և մեր աղոթքները զուգորդվում են, մենք կարող ենք հաստատ իմանալ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: . . . Երբ մենք աղոթենք ու ժամանակ գտնենք սուրբ գրությունները կարդալու համար, մեր կյանքը անսահման կօրհնվի և մեր բեռը կդարձվի թեթև» («Մենք երբեք միայնակ չենք քայլում» *Լիահոնա,* նոյ. 2013, 122):

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Առանց վերապահման ես ձեզ խոստանում եմ, որ եթե ձեզանից յուրաքանչյուրը դիտարկի այս պարզ ծրագիրն անկախ այն բանից, թե նախկինում քանի անգամ եք կարդացել Մորմոնի Գիրքը, ձեր կյանքում և ձեր սրտերում կավելանա՝ Տիրոջ Հոգու չափաբաժինը, Նրա պատվիրաններին հնազանդորեն քայլելու աննկուն վճռականությունը և ավելի զորեղ վկայություն Աստծո Որդու կենդանի իրականության վերաբերյալ» (“A Testimony Vibrant and True,” *Liahona,* Aug. 2005, 6):

Նախագահ Հովարդ Վ. Հանտերն ասել է. «Ընտանիքները մեծապես օրհնվում են, երբ իմաստուն հայրերն ու մայրերն իրենց երեխաներին միավորում են իրար, կարդում միասին սուրբ գրությունների գրադարանից և ըստ բոլորի հասկացողության անկաշկանդ քննարկում սքանչելի պատմություններն ու մտքերը: Հաճախ երիտասարդներն ու երեխաները զարմանալի ներըմբռնում ու երախտագիտություն են ունենում կրոնի հիմնական գրականության վերաբերյալ» (“Reading the Scriptures,” *Ensign,* Nov. 1979, 64):

Նախագահ Էզրա Թավտ Բենսոնն ասել է. «Հաճախ մենք մեծ ջանքեր ենք գործադրում մեր ցցերում ակտիվությունը բարձրացնելու համար: Մենք ջանասիրաբար աշխատում ենք բարձրացնել հաղորդության ժողովների մասնակիցների թիվը: Մենք աշխատում ենք բարձրացնել միսիա գնացող երիտասարդ տղաների տոկոսը: Մենք ձգտում ենք բարելավվել տաճարում ամուսնացողների թիվը: Դրանք բոլորն էլ գովելի ջանքեր են և կարևոր են արքայության աճի համար: Սակայն, երբ անհատ անդամներն ու ընտանիքները կանոնավոր կերպով և շարունակաբար ընկղմվեն սուրբ գրությունների մեջ, այդ մյուս ոլորտներում ակտիվությունն ինքնաբերաբար կերևա: Վկայությունները կավելանան: Նվիրվածությունը կամրանա: Ընտանիքները կամրացվեն: Անձնական հայտնությունը կհորդի» (“The Power of the Word,” *Ensign,* May 1986, 81):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Ես նկատել եմ, որ երբ ես Աստծո հետ իմ հարաբերություններում անկանոն եմ, երբ թվում է, թե ոչ մի աստվածային ականջ չի լսում և ոչ մի աստվածային ձայն չի խոսում ինձ հետ, ես շատ հեռու եմ գտնվում: Երբ ես խորասուզվում եմ սուրբ գրությունների մեջ, հեռավորությունը կրճատվում է և հոգևորը վերադառնում է: Ես ավելի շատ եմ սկսում սիրել նրանց, ում ես պետք է ողջ սրտով, մտքով և ուժով սիրեմ և նրանց ավելի շատ սիրելով ավելի հեշտ է լինում հնազանդվել նրանց խորհրդին» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 67):

Նախագահ Մարիոն Ջ. Ռոմնին ասել է. «Ես համոզված եմ, որ եթե մեր տներում ծնողներն անձամբ և իրենց երեխաների հետ աղոթքով և կանոնավոր կերպով կարդան Մորմոնի Գրքից, այդ հրաշալի գրքի ոգին կթափանցի մեր տներն ու այնտեղ ապրողների սիրտը: Ակնածանքի ոգին կաճի, միմյանց հանդեպ փոխադարձ հարգանքն ու ուշադրությունը կաճի: Հակառակության ոգին կհեռանա: Ծնողներն իրենց երեխաներին խորհուրդ կտան ավելի մեծ սիրով ու իմաստությամբ: Երեխաներն ավելի արձագանքող և ենթարկվող կդառնան իրենց ծնողների խոչհրդի հանդեպ: Արդարությունը կավելանա: Հավատքը, հույսը և գթությունը, որը Քրիստոսի մաքուր սերն է, կլցնի մեր տներն ու կյանքը, իրենց հետ բերելով խաղաղություն, ուրախություն և երջանկություն» (“The Book of Mormon,” *Ensign,* May 1980, 67):

Նախագահ Բոյդ Կ. Փաքերն ասել է. «Ճշմարիտ վարդապետությունը, եթե հասկացվում է, փոխում է վերաբերմունքը և վարքագիծը: Ավետարանի վարդապետությունների ուսումնասիրությունն ավելի արագ կբարելավվի վարքագիծը, քան վարքագծի ուսումնասիրությունը կբարելավվի վարքագիծը» (“Do Not Fear,” *Liahona,* May 2004, 79):

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ասել է. «Յուրաքանչյուր ընտանեկան աղոթք, սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրության յուրաքանչյուր դրվագ հանդիսանում է վրձնի մի հպում՝ մեր հոգիների կտավի վրա: Ոչ մի երևույթ ավելի տպավորիչ կամ հիշարժան չէ: Այլ, ինչպես դեղին, ոսկեգույն և դարչնագույն ներկի վրձնահարվածներն են լրացնում միմյանց և կազմում տպավորիչ մի գլուխգործոց, այնպես էլ թվացյալ փոքր բաների մեր հետևողական արարքները կարող են բերել նշանակալից հոգևոր արդյունքներ» (“More Diligent and Concerned at Home,” *Liahona,* Nov. 2009, 19–20):

7. Տես 2 Նեփի 2.13:
8. Լինդա Ս. Ռիվս, «Պաշտպանություն պոռնոգրաֆիայից՝ Քրիստոսակենտրոն ընտանիք», *Լիահոնա,* մայ 2014, 16–17:
9. Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է. «Այդ նույն ոգով, ես Վերջին Օրերի Սրբերին հրավիրում եմ նայել Տիրոջ տաճարին, որպես մեր անդամության մեծ խորհրդանիշ: Իմ սրտի խորին ցանկությունն է, որ Եկեղեցու ամեն մի անդամ արժանապատվորեն մուտք գործի տաճար: Տիրոջը հաճելի կլինի, որ յուրաքանչյուր չափահաս անդամ լինի արժանի և կրի ընթացիկ տաճարային երաշխավորագիր: Բաները, որոնք մենք պետք է անենք կամ չանենք տաճարային երաշխավորագրին արժանի լինելու համար, տարբեր բաներ են, որոնք երաշխավորում են, որ մենք երջանիկ կլինենք որպես անհատներ և ընտանիքներ: Եկեք լինենք տաճար այցելող ժողովուրդ: Այցելենք տաճար այնքան հաճախակի, որքան անձնական հանգամանքներն են թույլ տալիս: Տաճարի նկարը պահեք ձեր տանը, որպեսզի ձեր երեխաները տեսնեն այն: Ուսուցանեք նրանց Տիրոջ տան նպատակների մասին: Թող իրենց ամենավաղ տարիքից պլանավորեն գնալու այնտեղ և մնան արժանի այդ օրհնությանը» (“Exceeding Great and Precious Promises,” *Ensign,* Nov. 1994, 8):
10. Տես 2 Նեփի 2.2:

Երեց Կառլոս Ա. Գոդոյ
Յոթանասունից

Տերը Ծրագիր ունի մեզ համար

Եթե մենք շարունակենք ապրել այնպես, ինչպես ապրում ենք, արդյո՞ք մեր խոստացված օրհնությունները կիրականանան:

Ինչպիսի՜ արտոնություն է ներկա լինել այս պատմական պահին, երբ գերագույն համաժողովի խոսնակները կարող են խոսել իրենց մայրենի լեզվով: Երբ վերջին անգամ խոսեցի այս ամբիոնից, անհանգստանում էի իմ անգլերեն արտասանության համար: Այժմ անհանգստանում եմ իմ պորտուգալերենի արագության համար: Չեմ ուզում ենթագրերից առաջ ընկնել:

Բոլորս էլ մեր կյանքում ունեցել ենք կամ կունենանք մեծ որոշում կայացնելու պահեր: Պե՞տք է արդյոք հետամուտ լինեմ այս կարիերային, թե ոչ: Պե՞տք է արդյոք միսիա ծառայեմ, թե ոչ: Արդյո՞ք սա այն մարդն է, ում հետ ես պետք է ամուսնանամ:

Սրանք իրավիճակներ են մեր կյանքի տարբեր ոլորտներից, որտեղ ուղղության մի փոքր շեղումը կարող է մեծ հետևանքներ ունենալ ապագայում: Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի խոսքերով. «Տիրոջը ծառայելու տարիների ընթացքում . . . , ես սովորել եմ, որ անհատների, ամուսնությունների և ընտանիքների երջանկության և թշվառության միջև տարբերությունը լինում է լոկ մի քանի աստիճանի սխալը» («Մի քանի աստիճանի տարբերությունը», *Լիահոնա,* մայիս 2008, 58):

Ինչպե՞ս կարող ենք հաշվարկի մեջ խույս տալ այդ փոքր սխալներից:

Իմ ուղերձը բացատրելու համար կօգտվեմ իմ անձնական փորձից:

1980-ականների վերջում, մեր երիտասարդ ընտանիքի կազմում ես էի, կինս՝ Մոնիկան և մեր չորս երեխաներից երկուսը: Մենք ապրում էինք Սան Պաուլոյում, Բրազիլիա: Ես աշխատում էի մի լավ ընկերությունում, ավարտել էի համալսարանը, և վերջերս էի ազատվել մեր ծխի եպիսկոպոսի պաշտոնից: Կյանքը լավ էր, և ամեն ինչ կարծես իր հունով էր ընթանում, մինչև մի օր վաղեմի ընկերս այցելեց մեզ:

Երբ պատրաստվում էր գնալ, նա դիտողություն արեց և հարց տվեց, որը փոխեց իմ մտածելակերպը: Նա ասաց. «Կառլոս, կարծես թե ամեն ինչ լավ է քո կյանքում՝ ընտանիք, կարիերա և Եկեղեցու ծառայություն, բայց—», - և ապա տվեց հարցը,- «Եթե դու շարունակես ապրել ինչպես այժմ ես ապրում, արդյո՞ք քո հայրապետական օրհնության մեջ խոստացված օրհնությունները կիրականանան»:

Ես երբեք այդպես չէի մտածել իմ հայրապետական օրհնության մասին: Ժամանակ առ ժամանակ ես կարդում էի այն, բայց երբեք չնայելով ապագայում խոստացված օրհնությունների ուղղությամբ և չգնահատելով ներկայիս ապրելակերպը:

Նրա գնալուց հետո ուշադրությունս ուղղեցի իմ հայրապետական օրհնությանը, հարցնելով. «Եթե մենք շարունակենք ապրել ինչպես ապրում ենք, արդյո՞ք խոստացված օրհնությունները կիրականանան»: Մի փոքր խորհելուց հետո ես զգացի, որ հարկավոր էր որոշ փոփոխություններ կատարել՝ հատկապես կրթության և մասնագիտության ոլորտում:

Դա ոչ թե որոշում էր լավի կամ վատի միջև, այլ լավի և ավելի լավի միջև, ինչպես Երեց Դալլին Հ. Օուքսն է ուսուցանել մեզ ասելով. «Երբ դիտարկում ենք որոշ ընտրություններ, մենք պետք է հիշենք, որ բավական չէ, երբ ինչ-որ բան լավ է: Այլ ընտրություններ ավելի լավ են, և դեռ կան ընտրություններ, որ ամենալավն են» («Լավ, ավելի լավ, ամենալավ», *Լիահոնա,* նոյ. 2007, 104–5):

Ուրեմն, ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ մենք լավագույն որոշումն ենք կայացնում:

Սահա մի քանի սկզբունքներ, որոնք ես եմ սովորել։

Սկզբունք համար առաջին. Մենք պետք է քննենք մեր տարբերակները՝ մտքում ունենալով վերջնական նպատակը

Վտանգ կարող են պարունակել այն որոշումները, որոնք կարող են ազդել մեր և նրանց կյանքի վրա, ում մենք սիրում ենք, եթե խորապես չենք հասկանում դրանց հետևանքները։ Ինչևէ, եթե մենք պատկերացնենք ապագայում այդ որոշումների հետևանքները, ավելի հստակ կտեսնենք լավագույն ուղին, որը պետք է ընտրենք ներկայում։

Հասկանալով ով ենք մենք, ինչու ենք այստեղ և ինչ է Տերն ակնկալում մեզանից այս կյանքում, կօգնի ունենալ մեզ համար անհրաժեշտ ավելի մեծ տեսլական։

Մենք կարող ենք սուրբ գրություններում օրինակներ գտնել, որտեղ ավելի մեծ կանխատեսություն ունենալը հստակություն է բերել ճիշտ ուղին ընտրելու հարցում։

Մովսեսը դեմառդեմ խոսեց Տիրոջ հետ, սովորեց փրկության ծրագրի մասին և այդպիսով ավելի լավ հասկացավ իր դերը որպես Իսրայելի հավաքման մարգարե։

«Եվ Աստված խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. Ահա, ես եմ Ամենազոր Տեր Աստվածը։ . . .

Եվ ահա, դու իմ որդին ես. ուստի տես, և ես քեզ ցույց կտամ իմ ձեռքերի ստեղծագործությունը . . .

. . . Եվ ես աշխատանք ունեմ քեզ համար, Մովսե՛ս, որդի՛ս» (Մովսես 1.3–4, 6)։

Այս հասկացողությամբ Մովսեսը կարողացավ երկար տարիների ընթացքում դիմանալ փորձություններին անապատում և Իսրայելին առաջնորդել ետ՝ դեպի տուն։

Մորմոնի Գրքի մեծ մարգարե Լեքին մի երազ տեսավ, և իր տեսիլքներում սովորեց դեպի խոստացված երկիր իր ընտանիքին առաջնորդելու առաքելության մասին։

«Եվ եղավ այնպես, որ Տերը պատվիրեց հորս, ուղղակի երազում, որ նա պետք է վերցներ իր ընտանիքը և հեռանար անապատ։

Եվ նա թողեց իր տունը և իր ժառանգության հողը և իր ոսկին և իր արծաթը և իր թանկարժեք իրերը» (1 Նեփի 2.2–4)։

Չնայած ճամփորդության և Երուսաղեմում հարմարավետ կյանքը թողնելու դժվարություններին, Լեքին հավատարիմ մնաց այդ տեսիլքին։

Մարգարե Ջոզեֆ Սմիթը ևս մեծ օրինակ է։ Սկսած Առաջին Տեսիլքից բազմաթիվ հայտնությունների միջոցով նա կարողացավ ավարտել բոլոր բաները վերականգնելու իր առաքելությունը (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.1–26)։

Իսկ մե՞նք։ Ի՞նչ է Տերն ակնկալում մեզանից։

Հասկացողություն ձեռք բերելու համար մենք հրեշտակ տեսնելու կարիք չունենք։ Մենք ունենք սուրբ գրություններ, տաճար, ապրող մարգարեներ, մեր հայրապետական օրհնությունները, ոգեշնչված ղեկավարներ և, որ ամենակարևորն է, մեր որոշումներն ուղղորդող անձնական հայտնություն ստանալու իրավունք։

Սկզբունք համար երկու. Մենք պետք է պատրաստվենք գալիք դժվարություններին

Կյանքի լավագույն ուղիները հազվադեպ են հեշտ լինում։ Հաճախ, ճիշտ հակառակն է։ Մենք կարող ենք նայել իմ հիշատակած մարգարեների օրինակներին։

Մովսեսը, Լեքին և Ջոզեֆ Սմիթը հեշտ ճանապարհ չեն անցել, չնայած որ նրանց որոշումները ճիշտ էին։

Արդյո՞ք մենք ցանկանում ենք վճարել մեր որոշումների գինը։ Արդյո՞ք մենք պատրաստ ենք թողնել մեր հարմարավետ միջավայրը՝ ավելի լավ վայր հասնելու համար։

Վերադառնալով իմ հայրապետական օրհնությանը ես այդ ժամանակ եզրահանգման եկա, որ պետք է լրացուցիչ կրթություն ստանամ և դիմեմ Ամերիկյան

համալսարանի կրթաթոշակի համար: Ինձ ընտրելու դեպքում ես պետք է թողնեի իմ աշխատանքը, վաճառեի մեր ողջ ունեցվածքը և երկու տարով տեղափոխվեի Միացյալ Նահանգներ, որպես կրթաթոշակ ունեցող ուսանող:

TOEFL և GMAT քննություններ հանձնելն առաջին դժվարությունն էր, որ պետք է հաղթահարեի: Պատրաստվելու համար երեք երկար տարի պահանջվեց, եղան շատ «ոչ» -եր և մի քանի «գուցե»- ներ, մինչև որ համալսարան ընդունվեցի: Ես դեռևս հիշում եմ երրորդ տարվա վերջին կրթաթոշակների համար պատասխանատու անձի հետ իմ հեռախոսազրույցը:

Նա ասաց. «Կառլոս, ես լավ և վատ նորություններ ունեմ քեզ համար: Լավ նորությունն այն է, որ դու այս տարվա երեք լավագույնների թվում ես: Այդ ժամանակ միայն մեկ տեղ էր հատկացված: «Վատ նորությունն այն է, որ թեկնածուներից երկուսը կարևոր մարդկանց որդիներ են, և մյուսը դու ես»:

Ես արագ պատասխանեցի. «Իսկ ես . . . ես Աստծո որդի եմ»:

Բարեբախտաբար, երկրային ծնողները որոշիչ գործոն չհանդիսացան, և ես այդ տարի ընդունվեցի, դա 1992 թիվն էր:

Մենք Ամենազոր Աստծո զավակներն ենք: Նա մեր Հայրն է, Նա սիրում է մեզ, և Նա ծրագիր ունի մեզ համար: Մենք այս կյանք ենք եկել ոչ թե այստեղ մեր ժամանակը վատնելու, ծերանալու և մահանալու համար, այլ Աստված ցանկանում է, որ մենք աճենք և հասնենք մեր ներուժին:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքերով. «Ձեզանից յուրաքանչյուրը, ամուրի թե ամուսնացած, անկախ տարիքից, սովորելու և աճելու հնարավորություն ունի: Հարստացրեք ձեր գիտելիքը, ինտելեկտուալ և հոգևոր, ձեր աստվածային ներուժի լիարժեք չափով» (“The Mighty Strength of the Relief Society,” *Ensign,* Nov. 1997, 95):

Սկզբունք համար երեք. Մենք պետք է կիսվենք այս տեսիլքով մարդկանց հետ, ում սիրում ենք

Լեքին մի քանի անգամ փորձեց օգնել Լամանին և Լեմուելին հասկանալ իրենց ընտանիքի ձեռնարկած փոփոխության կարևորությունը: Այն, որ նրանք չկիսեցին իրենց հոր տեսիլքը, պատճառ դարձավ, որ ճամփորդության ընթացքում տրտնջային: Մյուս կողմից Նեփին փնտրեց Տիրոջը, որպեսզի հասկանար ինչ էր տեսել իր հայրը:

«Եվ եղավ այնպես, որ ես՝ Նեփիս լսած լինելով իմ հոր բոլոր խոսքերն այն բաների մասին, որոնք նա տեսել էր տեսիլքում, . . . ես . . . նույնպես փափագեցի, որ տեսնեի և լսեի և իմանայի այս բաների մասին Սուրբ Հոգու զորությամբ» (1 Նեփի 10.17):

Այդ տեսիլքով Նեփին կարողացավ ոչ միայն հաղթահարել ճամփորդության դժվարությունները, այլև անհրաժեշտության պահին առաջնորդել իր ընտանիքը:

Շատ հավանական է, որ երբ մենք որոշում ենք որոշակի ուղի ընտրել, դա իր ազդեցությունը կունենա մարդկանց վրա, ում մենք սիրում ենք, և ոմանք անգամ մեզ հետ կկիսեն այդ ընտրության արդյունքները: Լավագույն դեպքում, նրանք պետք է կարողանան տեսնել այն, ինչ մենք ենք տեսնում, և կիսել մեր համոզմունքները: Դա ոչ միշտ է հնարավոր, սակայն այդ դեպքում ճամփորդությունն ավելի դյուրին է դառնում:

Իմ անձնական փորձառության մեջ, որը ես որպես լուսաբանում օգտագործեցի, անկասկած կնոջս աջակցության կարիքն ունեի: Երեխաները դեռ փոքր էին և չէին կարող իրենց կարծիքը հայտնել, բայց կնոջս աջակցությունը կարևոր էր: Հիշում եմ, որ նախ Մոնիկան և ես մանրակրկիտ քննարկեցինք ծրագրերի փոփոխությունը, մինչև որ նա հանգստացավ և նաև իրեն պարտավորված զգաց: Այդ համատեղ տեսլականն օգնեց, որ նա ոչ միայն աջակցի փոփոխությանը, այլև դառնա դրա հաջողության գրավականներից մեկը:

Ես գիտեմ, որ Տերը ծրագիր ունի մեզ համար այս կյանքում: Նա ճանաչում է մեզ: Նա գիտի, որն է մեզ համար լավագույնը: Պարզապես եթե գործերը լավ են ընթանում, չի նշանակում, որ մենք չպետք է ժամանակ առ ժամանակ դիտարկենք, արդյոք կա ավելի լավ տարբերակ: Եթե մենք շարունակենք ապրել այնպես, ինչպես ապրում ենք, արդյո՞ք խոստացված օրհնությունները կիրականանան:

Աստված ապրում է: Նա մեր Հայրն է: Փրկիչ Հիսուս Քրիստոսն ապրում է, և ես գիտեմ, որ Նրա քավող զոհաբերության շնորհիվ մենք կարող ենք ուժ գտնել հաղթահարելու մեր առօրյա դժվարությունները: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Երեց Ալլան Ֆ. Փաքեր
Յոթանասունից

Գիրքը

Ընտանեկան պատմությունն ու տաճարային աշխատանքը պետք է դառնան մեր անձնական երկրպագության հերթական մասը:

Որպես 12-ամյա պատանի սքաութ, ես նվեր ստացա իմ սքաութական սարքավորումների ամենացանկալի հավելումը: Դա մի փոքր կացին էր իր կաշվե պատյանով: Հաջորդ գիշերակաց արշավի ժամանակ, մենք ժամանեցինք ճամբար մութն ընկնելուց հետո՝ մրսած ու թաց ճանապարհին առատ ձյան պատճառով: Այն ինչի մասին միայն մտածում էի մի մեծ խարույկ վառելն էր: Անմիջապես գնացի իմ նոր կացնով ընկած ծառերը կտրելու: Մինչ կտրում էի ես նյարդայնանում էի, քանի որ այն կարծես լավ չէր կտրում: Նյարդայնացած լինելով ես ավելի ջանասիրաբար աշխատեցի: Հիասթափված, ես ճամբար վերադարձա միայն մի քանի կտոր փայտով: Ինչ-որ մեկի կրակի ներքո ես հայտնաբերեցի խնդիրը: Ես կացնի պատյանը չէի հեռացրել: Համենայն դեպս կարող եմ ասել, որ կաշվե պատյանը կտոր-կտոր էր եղել: Դասը, որ քաղեցի՝ ես շեղվեցի այլ բաներով տարված:

Մեր վեհացման ուղղությամբ աշխատելիս, մենք պետք է կատարենք բոլոր պահանջները և չկենտրոնանանք միայն մեկ կամ երկու կամ այլ կապ չունեցող բաների վրա: Աստծո թագավորության ձգտումը բերում է ուրախություն և երջանկություն:[1] Անհրաժեշտության դեպքում մենք պետք է ցանկություն ունենանք *փոփոխել:* Հաճախակի փոքր ուղղումները քիչ ցավոտ են, քան խոշոր ուղղվածության ուղղումները:

Ոչ շատ վաղուց, Քույր Փաքերը և ես ճանապարհորդում էինք մի շարք օտար երկրներով: Մենք նախապատրաստել էինք մեր անձնագրերն ու այլ փաստաթղթերը: Մենք ստացանք ներարկումները, բժշկական հետազոտությունները, վիզան և կնիքները: Երբ ժամանեցինք մեր փաստաթղթերը ստուգեցին և երբ բոլոր պահանջները բավարարվեցին մեզ թույլ տվեցին մուտք գործել:

Վեհացման որակավորումը կարծես նման լինի մեկ այլ երկիր մուտք գործելուն: Մեզանից յուրաքանչյուրը պետք է ստանա իր հոգևոր անձնագիրը: Մենք չենք *սահմանում* պահանջները, այլ անհատապես մենք պետք է բավարարենք նրանց բոլորին: Փրկության ծրագիրը պարունակում է բոլոր վարդապետությունները, օրենքները, պատվիրանները և արարողությունները, որոնք անհրաժեշտ են *բոլորին,* որպեսզի որակավորվեն վեհացման համար:[2] Ապա. «[Հիսուս] Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր մարդիկ կփրկվեն»:[3] Եկեղեցին օգնում է, սակայն մեր փոխարեն չի կարող անել դա: Վեհացման համար որակավորումը դառնում է կյանքի նպատակ:

Քրիստոսը Իր Եկեղեցին կազմավորել է, որպեսզի օգնի մեզ: Նա կանչել է 15 տղամարդու, որոնց մենք հաստատել ենք որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ, որպեսզի առաջնորդեն Եկեղեցին և ուսուցանեն մարդկանց: Առաջին Նախագահությունը[4] և Տասներկու Առաքյալների Քվորումը[5] ունեն հավասար զորություն և իշխանություն,[6] որտեղ ավագ Առաքյալը նշանակված է, որպես Եկեղեցու Նախագահ: Յոթանասունները կանչված են աջակցելու համար:[7] Ղեկավարները չեն սահմանում վեհացման պահանջները: Աստված է սահմանում: Այս ղեկավարները կանչված են ուսուցանելու,

մեկնաբանելու, հորդորելու և նույնիսկ *զգուշացնելու,* որպեսզի մենք մնանք ուղու վրա:[8]

Ինչպես գրված է հրահանգների ձեռնարկում. «Իրագործելով իր նպատակը՝ օգնելով անհատներին և ընտանիքներին որակավորվելու վեհացման համար, Եկեղեցին կենտրոնանում է աստվածայնորեն նշված պարտականությունների վրա: Դա իր մեջ ներառում է՝ օգնել անդամներին ապրել Հիսուս Քրիստոսի ավետարանով, հավաքել Իսրայելը միսիոներական աշխատանքի միջոցով, հոգ տանել աղքատների և կարիքավորների մասին, և հնարավորություն տալ մահացածներին փրկվել՝ տաճարների կառուցման և զանազան արարողությունների միջոցով»:[9] Այս չորս կետերը և այլ օրենքները, պատվիրաններն ու արարողությունները պարտադիր են, այլ ոչ թե երկրորդական: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ և այս բաներն անելով, մենք պահանջվող կնիքն ենք ավելացնում մեր հոգևոր անձնագրի մեջ:

Այս համաժողովի ընթացքում մենք ուսուցանվում ենք այն փոփոխությունների վերաբերյալ, որոնք կոգնեն մեզ բոլորին ավելի լավ պատրաստվել:

Ընտանիքը գտնվում է փրկության ծրագրի կենտրոնում և հավանաբար դրա համար է այն նաև կոչվում «երջանկության մեծ ծրագիր»:[10] Նախագահ Բոյդ Կ, Փաքերն ասել է. «Եկեղեցու ողջ գործունեության վերջնական նպատակն այն է, որ տղամարդը, կինը և նրանց զավակները երջանիկ լինեն տանը»:[11]

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Մեր հաջողությունը որպես անհատ և որպես Եկեղեցի մեծապես կորոշվի, թե որքան հավատարմորեն ենք մենք կենտրոնանում՝ տանը ապրելու ավետարանով»:[12] Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը տանը ավետարանով ապրելու մասն են կազմում: Այն ավելի շատ պետք է լինի ընտանեկան միջոցառում, քան Եկեղեցու միջոցառում:

Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի կողմից նոր շեշտ է դրվել ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքի վրա:[13] Այդ շեշտադրմանն ուղղված ձեր պատասխանը կավելացնի ձեր անձնական և ընտանեկան ուրախությունն ու երջանկությունը:

Վարդապետություն և Ուխտերից մենք կարդում ենք. «Տիրոջ մեծ օրը մոտ է. . . . Եկեք, ուրեմն, որպես եկեղեցի և ժողովուրդ, և որպես Վերջին Օրերի Սրբեր, արդարությամբ ընծա մատուցենք Տիրոջը. և եկեք նրա սուրբ տաճարում, . . . ներկայացնենք մի գիրք, որը կպարունակի մեր մահացածների գրանցումները, որն արժանի կլինի ամեն ընդունելության»:[14]

Այդ «գիրքը» կպատրաստվի կիրառելով Եկեղեցու Ընտանեկան ծառի անունների և արարողությունների տվյալների բազայի գրանցումները:

Ես ստուգում և ավելացնում եմ գրանցումներ այդ տվյալների բազային, քանի որ ես ցանկանում եմ բոլոր իմ սիրելիների անունները լինեն այդ գրքում: Դուք չե՞ք ցանկանում:

Վարդապետություն և Ուխտերի 128-րդ բաժինն ասում է. «Քանզի առանց մեր նախնիների, մենք չենք կարող կատարյալ դառնալ. ոչ էլ նրանք կարող են առանց մեզ կատարյալ դառնալ»:[15]

Ընտանեկան պատմությունն ավելի քան ծագումնաբանություն, կանոններ, անուններ, ամսաթվեր և վայրեր է: Այն ավելին է, քան անցյալի վրա կենտրոնացում: Ընտանեկան պատմությունը նաև պարունակում է ներկան, մինչ մենք կերտում ենք մեր պատմությունը: Այն պարունակում է ապագան, մինչ մենք կերտում ենք գալիք պատմությունը մեր սերունդների միջոցով: Օրինակ, երիտասարդ մայրը իր ընտանեկան պատմություններն ու նկարները իր երեխաների հետ կիսվելով կատարում է ընտանեկան պատմության աշխատանք:

Հաղորդություն ընդունելու, ժողովներին մասնակցելու, սուրբ գրությունները կարդալու և անհատական աղոթք անելու նման, ընտանեկան պատմությունն ու տաճարային աշխատանքը պետք է դառնան մեր անձնական երկրպագության հերթական մասը: Մեր երիտասարդների և այլոց

պատասխանն այս մարգարեական հրավերքին ոգևորիչ է և հաստատում է, որ այդ աշխատանքը *կարող է և պետք է* արվի *բոլոր* անդամների կողմից *ցանկացած* տարիքում:

Ինչպես Երեց Քվենթին Լ. Քուքն է պարզաբանել. «Մենք [այժմ] ունենք վարդապետություն, տաճարներ և տեխնոլոգիա»:[16] Աշխատանքն անելն այժմ շատ ավելի հեշտ է և սահմանափակված է միայն անդամների քանակով, ովքեր դարձրել են դա առաջնահերթություն: Աշխատանքը դեռ ժամանակ ու զոհաբերություն է պահանջում, սակայն *բոլորը* կարող են դա անել և համեմատաբար ավելի հեշտ, քան մի քանի տարի առաջ կարելի էր անել:

Անդամներին օգնելու համար Եկեղեցին հավաքել է գրանցումներ և տրամադրում է գործիքներ, որպեսզի աշխատանքի մեծ մասը հնարավոր լինի անել մեր տներում կամ մեր ծխերի շինություններում և տաճարներում: Խոչընդոտների մեծ մասը վերացվել է: *Ինչպիսին էլ որ լինեն* ձեր անցած ընկալումները, այն տարբեր է այժմ:

Այնուամենայնիվ, կա մի խոչընդոտ, որը չի կարող վերացվել: Դա այս աշխատանքը կատարելու անհատի երկմտանքն է: Այն պահանջում է որոշում և մի փոքր ջանք: Այն չի պահանջում շատ ժամանակ: Պարզապես շարունակական բնույթ կրող մի փոքր ժամանակը կառաջացնի այս աշխատանքի հետ կապված ուրախություն: Քայլ անելու որոշում կայացրեք, որպեսզի սովորեք և խնդրեք ուրիշներին օգնել ձեզ: Նրանք կօգնեն: Այն անունները, որոնք կգտնեք և կտանեք տաճար, կդառնան «գրքի» գրանցումները:[17]

Նույնիսկ անդամների մասնակցության կտրուկ աճի դեպքում, մենք համեմատաբար քիչ թվով Եկեղեցու անդամներ ենք տեսնում, ովքեր կանոնավոր կերպով ներգրավված են փնտրելու և իրենց ընտանիքների համար տաճարային արարողություններ կատարելու գործում:[18] *Այդ իրավիճակը պահանջում է փոփոխություն ձեր առաջնահերթություններում:* Մի կողմք փոփոխության հետ, ընդունեք այն: Փոփոխությունը երջանկության մեծ ծրագրի մի մասն է:

Այս աշխատանքը պետք է արվի ոչ միայն Եկեղեցու օգտի համար, այլ մեր մահացածների և մեր համար: Մենք և մեր մահացած նախնիները մեր հոգևոր անձնագրերում կարիք ունենք կնիքների:

Մերունդների մեջ մեր ընտանիքների «փոխկապակցումը»[19] կարող է միայն տեղի ունենալ տաճարներում՝ կնքող արարողությունների միջոցով: Քայլերը պարզ են. *ուղղակի գտեք անուն և տարեք այն տաճար:* Ժամանակի ընթացքում դուք կկարողանաք օգնել ուրիշներին նույնպես անել դա:

Մի քանի բացառություններով, բոլորը, *բոլորը*, կարող են անել դա:

Կան շոշափելի օրհնություններ, որոնք կապված են այս աշխատանքի հետ: Շատ ծնողներ ու ղեկավարներ անհանգստացած են ներկայիս երկրի պայմաններից և ընտանիքների ու երիտասարդների վրա դրա ազդեցությունից:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը խոստացել է. «Ես հրավիրում եմ Եկեղեցու երիտասարդներին սովորել Եղիայի Ոգու մասին և զգալ այն: . . . Եվ ես խոստանում եմ, [որ] դուք պաշտպանված կլինեք թշնամու սաստկացող ազդեցությունից: Մինչ դուք մասնակցեք այս սուրբ աշխատանքին և սիրեք այն, դուք պաշտպանված կլինեք ձեր երիտասարդության տարիներին և ձեր ողջ կյանքի ընթացքում»:[20]

Եղբայրներ և քույրեր, ժամանակն է, որպեսզի ձեր կացինների պատյանները հանեք և գնաք աշխատելու: Մենք չպետք է մեր վեհացումը կամ մեր ընտանիքները զոհաբերենք ոչ շատ կարևոր հետաքրքրությունների համար:

Սա Աստծո աշխատանքն է, որը պետք է արվի անդամների և ոչ անդամների, երիտասարդների և ծերերի, տղամարդկանց և կանանց կողմից հավասարապես:

Ես ավարտում եմ անգլերեն երգարանների 324 օրհներգի առաջին տունը մեջբերելով, փոխելով մեկ բառ.

«Ելեք, Օ՜, Աստծո [արքեր],
Հրաժարվեք անարժեք բաներից:
Ձեր սիրտն ու հոգին, և միտքն
ու ուժը տվեք
Թագավորների Թագավորին
ծառայելուն»:[21]

Հիսուս Քրիստոսը թագավորն է: Ես վկայում եմ Նրա մասին, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես 2 Նեփի 2.22–25; 9.18; Մոսիա 2.41:
2. Տես սուրբ գրքերի ուղեցույց, «Փրկագնման ծրագիր»; scriptures.lds.org:
3. Հավատո Հանգանակ 1.3:
4. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.22:
5. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.23:
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.24:
7. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.25–26:
8. Տես սուրբ գրքերի ուղեցույց, «Առաջին Նախագահություն,» «Առաքյալ,» «Յոթանասունական»; scriptures.lds.org:
9. *Handbook 2: Administering the Church* (2010), 2.2.
10. Ալմա 42.8:
11. Բոյդ Ք. Փաքեր, «Վկայություն» *Լիահոնա,* մայիս 2014, 95:
12. Spencer W. Kimball, “Living the Gospel in the Home,” *Ensign,* May 1978, 101.
13. See Thomas S. Monson, “Hastening the Work,” *Liahona,* June 2014, 4–5; Henry B. Eyring, “The Promise of Hearts Turning,” *Liahona,* July 2014, 4–5; Russell M. Nelson, “It All Starts with Love” (video), lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/it-all-starts-with-love; Russell M. Nelson, “Adding ‘Family’ to Family History Work” (video), lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/adding-family-to-family-history-work; Russell M. Nelson, “Generations Linked in Love,” *Liahona,* May 2010, 91–94; Richard G. Scott, “The Joy of Redeeming the Dead,” *Liahona,* Nov. 2012, 93–95; Quentin L. Cook, “Roots and Branches,” *Liahona,* May 2014, 44–48; David A. Bednar, “The Hearts of the Children Shall Turn,” *Liahona,* Nov. 2011, 24–27; Neil L. Andersen, “A Classroom of Faith, Hope, and Charity” (address to Church Educational System religious educators), lds.org/broadcasts; Neil L. Andersen, “Find Our Cousins!” (address at RootsTech Family History Conference, Feb. 8, 2014), lds.org/prophets-and-apostles/unto-all-the-world/find-our-cousins.
14. Վարդապետություն և Ուխտեր 128.24:
15. Վարդապետություն և Ուխտեր 128.18:
16. Քվենթին Լ. Քուք, *Լիահոնա,* մայիս 2014, 47:
17. Վարդապետություն և Ուխտեր 128.24:
18. Տես Քվենտին Լ. Քուք, *Լիահոնա,* մայիս 2014, 47:
19. Վարդապետություն և Ուխտեր 128.18:
20. Դեյվիդ Ա. Բեդնար, «Զավակների սրտերը կդառնան» *Լիահոնա,* նոյեմբեր. 2011, 26, 27:
21. “Rise Up, O Men of God,” *Hymns,* no. 324.

Երեց Հյուգո Ի. Մարտինեզ
Յոթանասունից

Մեր անձնական ծառայությունները

Մեր ուղեցույցը պետք է լինի Հիսուս Քրիստոսի սերը, եթե մենք պիտի տեղեկանանք նրանց կարիքների մասին, ում ինչ որ ձևով կարող ենք օգնել:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում մեզ տրվում է հնարավորություն և անձնական օրհնություն՝ ծառայելու համար: Որքան ժամանակի ընթացքում, որ անդամ եմ, ես ծառայել եմ բազմաթիվ ուղիներով: Եղբայր Յուդին Ֆալաբելլայի նման՝ Երեց Էնրիկե Ռ. Ֆալաբելլայի հայրը, սովորություն ուներ ասելու.«Նա, ով ինչ որ մի բանում ծառայում է, ինչ որ բանի պետք է, նա ով չի ծառայում ոչ մի բանի, ոչ մի բանի պետք չէ»: Սրանք խոսքեր են, որ մենք պետք է պահենք մեր մտքերում և մեր սրտերում:

Որոնելով առաջնորդություն և ուղղություն իմ ծառայության ընթացքում, ես հանգստ եմ գտել հիշելով, որ Փրկիչը կենտրոնանում է անհատների և ընտանիքների վրա: Նրա սերն ու նրբանկատ ուշադրությունը անձնավորության հանդեպ սովորեցրեցին ինձ, որ Նա ընդունում է Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրի մեծ արժեքը և որ դա մեզ համար կարևոր է՝ հավաստիանալու, որ յուրաքանչյուր անձնավորություն սպասավորվի և զորացվի Հիսուս Քրիստոսի ավետարանով:

Սուրբ գրություններում մենք կարդում ենք.

«Հիշեք, հոգիների արժեքը մեծ է Աստծո աչքում: . . .

Եվ, եթե լինի այնպես, որ դուք տքնեք *բոլոր* ձեր օրերում . . . և ինձ մոտ բերեք, *գեթ մեկ* հոգի, որքան մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում»:[1]

Յուրաքանչյուր հոգի մեծ արժեք ունի Աստծո համար, քանի որ մենք Նրա զավակներն ենք և մենք ունենք ներուժ դառնալու ինչպես Նա է:[2]

Հիսուս Քրիստոսի սերը պետք է լինի մեր ուղեցույցը, եթե մենք պիտի տեղեկանանք նրանց կարիքների մասին, որոնց մենք կարող ենք օգնել ինչ որ ձևով: Եվ ահա թե ինչպես է սկսվում մեր անձնական ծառայությունը, հայտնաբերելով կարիքները, ապա հոգ տանելով նրանց համար: Ինչպես Սփոփող Միության գերագույն նախագահ Լինդա Ք. Բըրթընն է ասել. «Առաջինը զննեք, ապա ծառայեք»:[3]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը հիանալի օրինակ է այս սկզբունքի: 2005 թվականի հունվարին, նա նախագահում էր մի քահանայության ղեկավարության համաժողովում Պուերտո Ռիկոյում, երբ նա ցույց տվեց, թե ինչպես էր Փրկիչը և Նրա ծառաները ծառայություն մատուցում անձնական սպասավորման միջոցով: Այդ հրաշալի ժողովի վերջում Նախագահ Մոնսոնը սկսեց ողջունել քահանայության բոլոր մասնակից անդամներին: Հանկարծ նա նկատեց, որ նրանցից մեկը դիտում էր հեռվից այդ ամենին, առանձին, մենակ կանգնած:

Նախագահ Մոնսոնը հեռացավ խմբից՝ քայլելով դեպի այդ եղբայրը և խոսեց նրա հետ: Ջոզե Ռ. Զայասը հուզված ասաց նրան, որ սա հրաշք էր, որ նա մոտեցավ իրեն և պատասխանն էր այն աղոթքների, որ նա և նրա կինը՝ Յոլանդան հղել էին ժողովից առաջ: Նա ասաց Նախագահ Մոնսոնին, որ իր աղջիկը առողջական շատ վատ վիճակում էր և որ նա մի նամակ ուներ իր հետ իր կնոջից, որը նա կամեցել էր, որ

հանձնվեր Նախագահ Մոնսոնին: Եղբայր Զայասն ասել էր իր կնոջը, որ իր համար անհնարին կլիներ դա անել, քանի որ Նախագահ Մոնսոնը խիստ զբաղված էր լինելու: Նախագահ Մոնսոնը լսեց պատմությունը և խնդրեց տալ նամակը, որը նա լուռ կարդաց: Ապա նա դրեց այն իր կոստյումի գրպանը և ասաց Եղբայր Զայասին, որ նա հոգ կտաներ նրանց խնդրանքի մասին:

Այս ձևով այդ ընտանիքին հպվեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ Իր ծառայի միջոցով: Ես հավատում եմ բարի Սամարացու առակում Փրկչի խոսքերը վերաբերում են մեզ. «Գնա, դու էլ այնպես արա»:[4]

1998 թվականի սեպտեմբերի 21-ին, Ջորջես պտտահողմը հարվածեց Պուերտո Ռիկոյին, վիթխարի վնաս հասցնելով: Քույր Մարտինեզը, մեր հինգ երեխաները և ես հասցրեցինք փրկվել այդ մեծ փոթորիկից և դրա պտտահողմով ուժեղ քամիներից՝ մնալով մեր տանը: Սակայն մենք երկու շաբաթ մնացինք առանց հոսող ջրի և առանց էլեկտրականության:

Երբ մեր ջրի պաշարը վերջացավ, ջուր դժվար էր ձեռք բերել: Ես երբեք չեմ մոռանա եղբայրներին, ովքեր ծառայեցին մեզ՝ ապահովելով այդ թանկարժեք հեղուկով, ոչ էլ կմոռանամ նաև սիրալիր ձևով մեզ ցույց տրված քույրերի ծառայությունը:

Գերման Կոլոնը եկավ մեր տուն բերելով պիկապ բեռնատարով մեծ պլաստմասայից պահեստատարայով ջուր: Նա մեզ ասաց, որ նա անում էր դա, որովհետև, ինչպես նա ասաց.«Ես գիտեմ, որ դուք փոքր երեխաներ ունեք, ովքեր ջրի կարիք ունեն»: Մի քանի օր անց, եղբայրներ Նոել Մունոզ և Հերմինիո Գոմեզը երեք մեծ բաքով ջուր բեռնեցին հարթահատակ բեռնատարը: Նրանք մեր տուն հայտնվեցին անսպասելիորեն և լցրեցին ամեն հնարավոր ջրի շիշ խմելու ջրով, հրավիրելով նաև մեր հարևաններին լցնել իրենցը:

Մեր աղոթքները պատասխանվեցին նրանց անձնական ծառայություններով: Այդ երեք եղբայրների դեմքերն արտացոլում

էին Հիսուս Քրստոսի սերը, որ Նա ունի մեր հանդեպ, և նրանց ծառայությունը, այլ խոսքով ասած նրանց անձնական ծառայությունը, բերեց ավելին, քան խմելու ջուրը մեր կյանք: Աստծո յուրաքանչյուր որդու կամ դստեր համար իմանալը, որ մարդիկ հետաքրքրվում են և հոգում իրենց բարօրության համար, կարևոր է:

Ես վկայում եմ ձեզ, որ Երկնային Հայրը և մեր Տեր Հիսուս Քրիստոսը գիտեն մեզ անձնապես և անհատապես: Այդ պատճառով, Նրանք տալիս են այն, ինչի կարիքն ունենք, որպեսզի մենք ունենանք հնարավորություն հասնելու մեր աստվածային ներուժին: Ճանապարհի երկայնքով Նրանք դնում են մարդկանց, ովքեր կօգնեն մեզ: Ապա, երբ մենք դառնում ենք գործիքներ Նրանց ձեռքում, մենք կարողանում ենք ծառայել և օգնել նրանց, որոնց Նրանք ցույց կտան մեզ հայտնությամբ:

Այս ձևով Տեր Հիսուս Քրիստոսը կհասնի բոլոր Երկնային Հոր զավակներին: Բարի Հովիվը կհավաքի բոլոր Իր ոչխարներին: Նա այդ կանի մեկ առ մեկ, երբ նրանք լավ կօգտագործեն իրենց բարոյական ազատությունը՝ Իր ծառաների ձայնը լսելուց և նրանց սպասավորումները ստանալուց հետո: Այդ ժամանակ նրանք կճանաչեն Նրա ձայնը, և նրանք կհետևեն Նրան: Այդպիսի անձնական ծառայությունը մեր մկրտության ուխտերը պահելուց անբաժանելի է:

Նմանապես, Հիսուս Քրիստոսի աշակերտի լավ օրինակ լինելը մեր լավագույն ծանոթության նամակն է նրանց, որոնց հետ մենք կարող ենք կիսվել Նրա ավետարանով: Երբ մենք բացում ենք մեր բերանը Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով, մենք դառնում ենք «Նրա ենթահովիվները, որոնց հանձնարարված է արածացնել Նրա արոտի ոչխարներին և Նրա հոտի գառներին».[5] մենք դառնում ենք «թույլեր և պարզամիտներ»[6] «մարդկանց որսորդներ»:[7]

Մեր ծառայությունը և անձնական սպասավորումը չի սահմանափակվում այս աշխարհում ապրողներով: Մենք կարող ենք նաև աշխատանք կատարել մահացածների համար, նրանց համար, ովքեր ապրում են հոգևոր աշխարհում և ովքեր իրենց մահկանացու կյանքի ընթացքում, չեն ունեցել հնարավորություն ստանալ Հիսուս Քրիստոսի ավետարանի փրկարար արարողությունները: Մենք կարող ենք նաև օրագիր պահել և գրել մեր ընտանիքի պատմությունները՝ դարձնելու ապրողների սրտերը դեպի ապրողները, ինչպես նաև ապրողների սրտերը դեպի իրենց նախնիները: Այդ բոլորը մեր ընտանիքը սերունդ առ սերունդ միակցում է հավերժական կապերով: Երբ սա անենք, մենք դառնում ենք

«փրկիչներ . . . Սիոն սարի վրա»:[8]

Մենք ունենք հատուկ հնարավորություն գործիքներ լինելու Նրա ձեռքում: Մենք կարող ենք լինել այդպես մեր ամուսնություններում, մեր ընտանիքներում, մեր ընկերների հետ և մեր մերձավորների հետ: Դա մեր անձնական ծառայությունն է, որպես Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներ:

«Եւ ամեն ազգերը կժողովուին նորա առաջը, եւ նա նորանց կբաժանէ իրարից ինչպէս հովիւը բաժանում է ոչխարներն այծերիցը.

Եւ ոչխարներն իր աջ կողմին կկանգնեցնէ, իսկ այծերը՝ ձախ կողմին:

Այն ժամանակ թագավորը կասէ իր աջ կողմիններին, Եկեք, ով իմ Հօր օրհնածները, ժառանգեցէք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստուած թագավորութիւնը:

Որովհետեւ՝ սովեցի, եւ դուք տուիք ինձ ուտել. Ծարաւեցի եւ խմեցրիք ինձ, օտար էի, եւ ինձ ձեզ մօտ առաք.

Մերկ էի, եւ հագցրիք ինձ. Հիւանդ էի, եւ ինձ այցելեցիք. Բանտի մէջ էի, եւ ինձ մօտ եկաք:

Այն ժամանակ արդարները կպատասխանեն նորան ու կասեն. Տէր, երբ տեսանք քեզ սոված, եւ կերակրեցինք, կամ ծարաւ, եւ խմեցրինք:

Ե՞րբ տեսանք քեզ օտար, եւ մեզ մօտ առանք, կամ մերկ, եւ հագցրինք:

Կամ ե՞րբ տեսանք քեզ հիվանդ, կամ բանտի մէջ, եւ եկանք քեզ մօտ:

Թագաւորն էլ կպատասխանէ եւ կասէ նորանց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»:[9]

Որպեսզի մենք կարողանանք այդպես անել իմ աղոթքն է Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 18.10, 15, շեշտադրումն ավելացված է:
2. Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց, «Հոգի», scriptures.lds.org:
3. Linda K. Burton, "First Observe, Then Serve," *Liahona,* Nov. 2012, 78.
4. Ղուկաս Ժ.37:
5. Alexander B. Morrison, "Nourish the Flock of Christ," *Ensign,* May 1992, 13.
6. Վարդապետություն և Ուխտեր 1.23:
7. Մատթեոս Դ.19:
8. Աբդիա Ա.21:
9. Մատթեոս ԻԵ.32–40:

Երեց Լարի Ս. Քաչեր
Յոթանասունից

Թեթևամտորեն մի կարվեք սրբազան բաների հետ

Քննեք ձեր ընտրությունները՝ ձեզ ուղղելով հետևյալ հարցը. «Արդյոք իմ ընտրություններն ամուր են սերմնավորված Հիսուս Քրիստոսի ավետարանի հարուստ հողում»:

Եղբայրներ և քույրեր, որոշումները, որ կայացնում ենք այս կյանքում, մեծապես ազդում են մեր հավերժական կյանքի ընթացքի վրա: Կան ինչպես տեսանելի, այնպես էլ անտեսանելի ուժեր, որոնք ազդում են մեր ընտրությունների վրա: Այս սկզբունքը ես սովորեցի իմ անձնական փորձով մոտ հինգ տարի առաջ մի ձևով, որն ինձ վրա կարող էր թանկ նստել:

Մենք ճանապարհորդում էինք ընտանիքի և ընկերների հետ Օմանի հարավային մասում: Մենք որոշեցինք հանգստանալ Հնդկական օվկիանոսի ծովածոցի ափին: Մեր ժամանումից քիչ հետո, մեր 16 տարեկան աղջիկը՝ Նելլին, հարցրեց, թե կարո՞ղ էր լողալ մինչև այն տեղը, որը նրան ավազե կղզյակ էր թվում: Նկատելով ալեկոծվող ջուրը, ես ասացի, որ ես առաջինը կգնամ, մտածելով, որ կարող էին լինել վտանգավոր հոսանքներ:

Մի փոքր լողալուց հետո, ես ձայն տվեցի կնոջս հարցնելով, թե արդյոք մոտ էի ավազե կղզյակին: Նրա պատասխանն էր. «Դու անցել ես դրա կողքով»: Առանց նկատելու ես թակարդվել էի հակընթաց հոսանքի մեջ և ուժգնորեն քշվում[1] էի դեպի բաց ծով:

Չգիտեի ինչ անել: Միակ բանը, որի մասին կարող էի մտածել ետ շրջվելն էր և հետ լողալը դեպի ափ: Այդ դեպքում դա անդառնալի սխալ կլիներ: Ես անօգնական էի զգում: Ուժերը, որոնք իմ վերահսկողությունից դուրս էին, քշում էին ինձ ավելի հեռու դեպի ծովի խորքը: Գործն ավելի էր բարդանում նրանով, որ կինս, վստահելով իմ որոշմանը, հետևել էր ինձ:

Եղբայրներ և քույրեր, կարծում եմ հավանականությունը մեծ էր, որ ես կենդանի չմնայի և իմ որոշման պատճառով, կնոջս մահվան պատճառը դառնայի: Մեծ ջանքերից հետո և ինչը հավատում

եմ աստվածային միջամտության արդյունք էր, մեր ոտքը ինչ որ կերպ հասավ ավազե հատակին, և մենք կարողացանք ապահով վերադառնալ մեր ընկերների և դստեր մոտ:

Կան շատ հոսանքներ մեր այս երկրային կյանքում, մի քանիսը ապահով, իսկ մյուսները ոչ: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է, որ կան հզոր ուժեր մեր իսկ կյանքում, որոնք նման են[2] օվկիանոսի անտեսանելի հոսանքներին: Այդ ուժերն իրական են: Մենք երբեք չպետք է անտեսենք դրանք:

Թույլ տվեք պատմել ձեզ մեկ այլ հոսանքի մասին, մի աստվածային հոսանքի մասին, որը մեծ օրհնություն է դարձել իմ կյանքում: Ես նորադարձ եմ Եկեղեցում: Իմ դարձից առաջ իմ կյանքի ձգտումը դահուկավազքն էր և հետևաբար ես ավագ դպրոցից հետո տեղափոխվեցի Եվրոպա՝ իրականացնելու այդ ցանկությունը: Մի քանի ամիս անց, որը կատարյալ կյանք էր թվում, ես զգացի, որ պետք է մեկնեմ: Այդ ժամանակ ես չէի հասկանում այդ զգացման սկզբնաղբյուրը, բայց ընտրեցի հետևել դրան: Ես հայտնվեցի Պրովոյում, Յուտա մի քանի լավ ընկերների հետ, ովքեր ինձ նման տարբեր հավատքի մարդիկ էին:

Երբ Պրովոյում էի, ես հանդիպեցի մարդկանց, ովքեր ապրում էին շատ տարբեր կյանքով, քան ես: Ես զգում էի, որ նրանք ձգում էին ինձ, չնայած չգիտեի, թե ինչու: Սկզբում ես դիմադրում էի այդ զգացումներին, բայց շուտով ես խաղաղություն և հանգստություն գտա, որը երբեք չէի զգացել: Ես սկսեցի շարժվել այլ հոսանքով, որը ինձ բերեց Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի սիրո ըմբռնմանը:

Ես մկրտվեցի իմ ընկերների հետ 1972թվականին: Այդ նոր հոսանքը, որին ընտրեցի հետևել՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը, տվեց ուղղություն և իմաստ իմ կյանքին: Սակայն այն առանց մարտահրավերների չէր: Ամեն ինչ նոր էր ինձ համար: Երբեմն ինձ զգում էի կորած և շփոթված: Հարցեր և մարտակոչեր էին ուղղվում ինչպես ընկերների այնպես էլ ընտանիքի կողմից:

Ես ստիպված էի ընտրություն կատարել: Նրանց հարցերից մի քանիսը ստեղծում էին կասկած և անվստահություն: Այդ ընտրությունը կարևոր էր: Ո՞ւր դիմեի պատասխանների համար: Շատերն էին ձգտում համոզել ինձ սխալ ուղով ընթանալու մեջ, «հակընթաց հոսանքները» վճռել էին հեռու վանել ինձ խաղաղ հոսանքից, որը դարձել էր երջանկության հրաշալի աղբյուր: Ես շատ հստակորեն հասկացա, որ «բոլոր բաներում հակադրություն» լինելու սկզբունքը, ինքնուրույն գործելու և իմ ազատ կամքը ուրիշներին չթողնելու կարևորությունը:[3]

Ես հարցրեցի ինքս ինձ. «Ինչո՞ւ պետք է հեռանամ նրանից, ինչը բերեց ինձ այդպիսի մեծ մխիթարություն»: Ինչպես Տերը հիշեցրեց Օլիվեր Քաուդերիին. «Խաղաղություն չխոսեցի՞ ես քո մտքին այդ հարցի վերաբերյալ»:[4] Իմ փորձառությունը նմանատիպ էր: Այդ պատճառով ես նույնիսկ ավելի մեծ պատրաստակամությամբ դիմեցի սիրող Երկնային Հորը, սուրբ գրություններին և վստահելի ընկերներին:

Այնուամենայնիվ կային շատ հարցեր, որոնց ես չէի կարող պատասխանել: Թույլ չտալով, որ դրանք կործանեին այն խաղաղությունն ու երջանկությունը, որ եկել էր իմ կյանք, ես ընտրեցի որոշ ժամանակով դրանք մի կողմ դնել, վստահելով, որ Իր ուրույն ժամանակինՏերը կբացահայտեր բոլոր բաները: Ես մխիթարություն գտա Նրա հայտարարության մեջ, որն ուղղված էր Մարգարե Ջոզեֆին. «Ահա, դուք փոքր երեխաներ եք և չեք կարող տանել բոլոր բաներն այժմ. Դուք պետք է աճեք շնորհի մեջ և ճշմարտության գիտության մեջ»:[5] Ես որոշեցի չլքել այն, ինչ գիտեի, որ ճշմարիտ էր, հետևելով անհայտ և կասկածելի մի հոսանքի՝ -հավանաբար հակընթաց մի հոսանքի»: Ինչպես Նախագահ Ն. Էլդոն Թաններն է ուսուցանել, ես իմացա, թե «որքան ավելի իմաստուն և ավելի լավ է մարդու համար ընդունել ավետարանի պարզ ճշմարտությունները . . . և հավատքով ընդունել այն բաները, որոնք նա . . . չի կարողանում հասկանալ»:[6]

Սա արդյո՞ք նշանակում է, որ տեղ չկա ազնվորեն հարցնելու համար: Հարցրեք այն պատանուց, ով ապաստան որոնեց սրբազան պուրակում, ցանկանալով իմանալ, թե բոլոր եկեղեցիներից որ մեկն ընտրեր: Վարդապետություն և Ուխտերը վերցրեք ձեր ձեռքը և իմացեք, որ մեծ մասը, ինչ հայտնի է դարձվել այս ոգեշնչված հիշատակարանում, եղել է ճշմարտության համար խոնարհ որոնման արդյունքում: Ինչպես Ջոզեֆը պարզեց. «Եթե մէկը ձեզանից իմաստութեան պակասութիւն ունի թող խնդէ Աստուածանից, [ով] ամենին տալիս է առատութեամբ, . . . եւ կտրուի նորան»:[7] Տալով անկեղծ հարցեր և որոնելով աստվածային պատասխաններ, մենք սովորում ենք «տող առ տող, ցուցում առ ցուցում»,[8] երբ մենք աճում ենք գիտությամբ և իմաստությամբ:

Հարցը նրանում չէ. «Կա՞ արդյոք տեղ ազնիվ, անկեղծ հարցերի համար», այլ ավելի շուտ՝ «Ո՞ւր ես դիմեմ ճշմարտության համար, երբ ես հարցեր եմ ունենում: Արդյոք կլինե՞մ բավականաչափ իմաստուն ամուր կառչելու նրանից, ինչը գիտեմ, որ ճշմարիտ է, չնայած մի քանի հարցերին, որ գուցե ունենամ ես»: Ես վկայում եմ, որ կա աստվածային աղբյուր՝ Մեկը ով գիտի բոլոր բաները՝ վերջը ի սկզբանե: Բոլոր բաները ներկա են Նրա առաջ:[9] Սուրբ գրությունները վկայում են, որ Նա «չի քայլում ծուռ շավիղներով . . . , ոչ էլ շեղվում է այն բանից, ինչ ասել է»:[10]

Այս մահկանացու ճանապարհորդությունում մենք երբեք չպետք է մտածենք, որ մեր ընտրությունները միայն մեզ վրա են ազդում: Վերջերս մի երիտասարդ այցելեց մեր տուն: Նա բարեհոգի էր, բայց ես զգացի, որ նա լիարժեք ակտիվ չէր Եկեղեցում: Նա պատմեց ինձ, որ մեծացել է ավետարանակենտրոն տանը, մինչև նրա հայրը դավաճանեց իր մորը, որի արդյունքում նրանք բաժանվեցին և դա ազդեց իր բոլոր եղբայրների և քույրերի վրա, ովքեր կասկածեցին Եկեղեցուն և հեռացան: Սիրտս ծանրացել էր, երբ խոսում էի այդ երիտասարդ հոր հետ, ով այժմ իր հոր ընտրություններից ազդված մեծացնում էր այդ թանկագին հոգիներին Հիսուս Քրիստոսի ավետարանի օրհնություններից դուրս:

Ես ճանաչում եմ մեկ այլ մարդու, ով մի ժամանակ Եկեղեցու հավատարիմ անդամ էր, նա հարցեր ուներ որոշ վարդապետությունների վերաբերյալ: Փոխարենը հարցնելու Երկնային Հորը պատասխանների համար, նա ընտրեց հենվել միայն աշխարհիկ աղբյուրների վրա առաջնորդության համար: Նրա սիրտը շրջվեց սխալ ուղղությամբ, երբ նա որոնեց այն, ինչը կարծես թե մարդկանց գովասանքներն էին: Նրա հպարտությունը կարող էր բավարարվել, բայց ժամանակավորապես, բայց նա կտրվեց երկնքի զորություններից:[11] Ճշմարտությունը գտնելու փոխարեն, նա կորցրեց իր վկայությունը և իր հետ տարավ ընտանիքի շատ անդամների:

Այդ երկու տղամարդիկ ընկան անտեսանելի հակընթաց հոսանքների թակարդը և իրենց հետ տարան շատերին:

Մյուս կողմից, ես մտածում եմ ԼաՌու և Լյուի Միլլերների՝ կնոջս ծնողների մասին, ովքեր երբեք շատ աշխարհիկ ունեցվածք չեն ունեցել, բայց ընտրել են սովորեցնել վերականգնված ավետարանի մաքուր վարդապետություններն իրենց զավակներին, և ապրել դրանցով իրենց կյանքի յուրաքանչյուր օրը: Այդ անելով նրանք օրինել են իրենց սերնդին ավետարանի պտուղներով և հավերժական կյանքի հույսով:



Իրենց տանը նրանք հաստատեցին մի օրինակ, որտեղ քահանայությունը հարգվում էր, որտեղ սերն ու ներդաշնակությունն առատ էր, և որտեղ ավետարանի սկզբունքներն ուղղորդում էին նրանց կյանքը: Լյուին և ԼաՌուն կողք կողքի ցույց էին տալիս, թե ինչ էր նշանակում ապրել կյանքը՝ ընդօրինակելով Հիսուս Քրիստոսին: Նրանց երեխաները կարողանում էին հստակ տեսնել, թե կյանքի, որ հոսանքներն էին բերում խաղաղություն և երջանկություն: Եվ նրանք ընտրում էին համապատասխանաբար: Ինչպես Նախագահ Քիմբալն է ուսուցանել. «Եթե մենք կարող ենք ստեղծել . . . ուժեղ, հաստատուն հոսանք, որը հոսում է դեպի արդարակյաց կյանքի մեր նպատակը, մենք և մեր երեխաները կարող ենք առաջ շարժվել չնայած դժվարություններին, հուսախաբություններին, [և] գայթակղության հակադիր քամիներին»:[12]

Արդյոք մեր ընտրությունները նշանակություն ունեն: Մի՞թե դրանք ազդում են միայն մեր վրա: Արդյոք մենք հաստատուն ենք դրել մեր ուղղությունը վերականգնված ավետարանի հավերժական հոսանքում:

Ժամանակ առ ժամանակ ես մի պատկերացում եմ ունենում, որն իմ մեջ սոսկում է առաջացնում: Ի՞նչ կլիներ, եթե այդ սեպտեմբերյան օրը, երբ մենք հանգստանում էինք Հնդկական օվկիանոսի ափին, ես ասեի դստերս՝ Նելլիին.«Այո, առաջ անցիր:Լողա դեպի ավազաբլուրը»: Կամ եթե նա նույնպես հետևած լիներ իմ օրինակին և չկարողանար հետ լողալ: Ի՞նչ կլիներ, եթե ես ապրեի կյանքս՝ իմանալով, որ իմ օրինակի պատճառով էր նա քշվել հակընթաց հոսանքով դեպի ծովի խորքը, այլևս չվերադառնալով:

Արդյոք կարևո՞ր են այն հոսանքները, որ մենք ընտրում ենք: Արդյոք նշանակություն ո՞ւնի մեր օրինակը:

Երկնային Հայրն օրհնել է մեզ Սուրբ Հոգու գերագույն պարգևով՝ առաջնորդելու մեր ընտրությունները: Նա խոստացել է մեզ ոգեշնչում և հայտնություն, երբ մենք արժանի ապրենք դրանք ստանալու համար: Ես հրավիրում եմ ձեզ այս աստվածային պարգևի հնարավորությունից օգտվելու և քննելու ձեր ընտրությունները՝ ձեզ ուղղելով հետևյալ հարցը. «Արդյոք իմ ընտրություններն ամուր են սերմնավորված Հիսուս Քրիստոսի ավետարանի հարուստ հողում»: Ես կոչ եմ անում ձեզ կատարել անհրաժեշտ ճշգրտումները, լինեն դրանք փոքր թե մեծ, ապահովելու Երկնային Հոր ծրագրի հավերժական օրհնությունները ձեզ համար և նրանց համար, ում դուք սիրում եք:

Ես վկայում եմ, որ Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է և Քավիչը, ես վկայում եմ, որ այն ուխտերը, որոնք մենք կապում ենք Նրա հետ, սրբազան են և սուրբ: Մենք երբեք չպետք է թեթևամտորեն վարվենք սրբազան բաների հետ:[13] Թող որ մենք ընդմիշտ մնանք հավատարիմ, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Riptide: “a tide that opposes another or other tides, causing a violent disturbance in the sea” (Dictionary.com).
2. Տես Spencer W. Kimball, “Ocean Currents and Family Influences,” *Ensign,* Nov. 1974, 110–13:
3. Տես 2 Նեփի 2.11, 16:
4. Վարդապետություն և Ուխտեր 6.23:
5. Վարդապետություն և Ուխտեր 50.40:
6. N. Eldon Tanner, in Conference Report, Oct. 1968, 49.
7. Հակոբոս Ա.5:
8. Վարդապետություն և Ուխտեր 98.12:
9. Տես Մովսես 1.6:
10. Վարդապետություն և Ուխտեր 3.2:
11. Տես Վարդապետություն և Ուխտեր 121.35–37:
12. Spencer W. Kimball, *Ensign,* Nov. 1974, 110.
13. Տես Վարդապետություն և Ուխտեր 6.12:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Եկեք և տեսեք

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին միշտ եղել է և միշտ էլ կլինի միսիոներական եկեղեցի:

Իմ ուղերձն ուղղված է հատկապես այն անձանց, ովքեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ չեն: Ես կանդրադառնամ մի հիմնադրույթային հարցի, որը ձեզանից շատերն ունեն. «Ինչո՞ւ են Վերջին Օրերի Սրբերը այդպես ձգտում պատմել ինձ այն բանի մասին, ինչին նրանք հավատում են, և հրավիրում են ինձ սովորել իրենց Եկեղեցու մասին»:

Աղոթում եմ, որ Տիրոջ Հոգին օգնի ինձ արդյունավետորեն հաղորդակցվել և, որ դուք հստակորեն հասկանաք այս կարևոր հարցի իմ պատասխանը:

Աստվածային հանձնարարություն

Հիսուս Քրիստոսի նվիրված աշակերտները միշտ եղել են և կլինեն քաջարի միսիոներներ: Միսիոները Քրիստոսի հետևորդ է, որը վկայում է Նրա մասին որպես Քավիչ և հռչակում Նրա ավետարանի ճշմարտությունները:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին միշտ եղել է և միշտ կլինի միսիոներական եկեղեցի: Փրկչի Եկեղեցու անդամներն անհատապես ընդունել են լուրջ պարտավորությունն՝ օգնելու կատարել աստվածային հանձնարարությունը, որը տրվել է Տիրոջ կողմից Իր Առաքյալներին և արձանագրված է Նոր Կտակարանում.

«Ուրեմն գնացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը.

Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն. Եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր մինչեւ աշխարհքի վերջը: Ամեն»: (Մատթէոս ԻԸ.19–20):

Վերջին Օրերի Սրբերը լրջորեն են ստանձնում Տեր Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի մասին բոլոր մարդկանց բոլոր ազգերում ուսուցանելու

այս պարտավորությունը: Մենք հավատում ենք, որ նույն Եկեղեցին, որը հիմնադրվել էր Փրկչի կողմից հին դարերում, վերահաստատվել է երկրի վրա Նրա կողմից վերջին օրերում: Նրա ավետարանի վարդապետությունը, սկզբունքները, քահանայության իշխանությունը, արարողությունները և ուխտերը գտնվում են այսօր Նրա Եկեղեցում:

Երբ մենք հրավիրում ենք ձեզ հաճախել եկեղեցի մեզ հետ կամ սովորել լիաժամկետ միսիոներների հետ, մենք չենք փորձում ձեզ ապրանք վաճառել: Որպես Եկեղեցու անդամներ, մենք չենք ստանում մրցանակներ, դրամական պարգև և միավորներ երկնային մրցույթում: Մենք չենք ձգտում ուղղակի մեծացնել Եկեղեցու թվաքանակը: Եվ ամենակարևորը մենք չենք փորձում ստիպել ձեզ հավատալ, ինչպես մենք ենք հավատում: Մենք հրավիրում ենք ձեզ լսել Հիսուս Քրիստոսի ավետարանի վերականգնված ճշմարտությունները, որպեսզի դուք կարողանաք ուսումնասիրել, խորհել և ձեզ համար բացահայտել, թե այն բաները, որոնցով մենք կիսվում ենք ձեզ հետ, արդյոք ճշմարիտ են:

Ձեզանից ոմանք գուցե ասեն. «Բայց ես արդեն հավատում եմ Հիսուսին և հետևում եմ Նրա ուսմունքներին» կամ «Ես համոզված չեմ, որ Աստված իսկապես գոյություն ունի»: Ձեզ ուղղված մեր հրավերները ձեր կրոնական ավանդույթը կամ կյանքի փորձառությունը նվաստացնելու փորձ չէ: Բերեք բոլոր այն բաները, որոնք դուք գիտեք, որ ճշմարիտ է, բարի, և գովասանքի արժանի և ստուգեք մեր ուղերձը: Ճիշտ ինչպես Հիսուսը կանչեց Իր երկու աշակերտներին՝ «եկէք և տեսէք» (Հովհ. Ա.39), այնպես էլ մենք ենք հորդորում ձեզ գալ և տեսնել, թե Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը ինչպես է համալրում և հարստացնում այն, ինչը դուք արդեն հավատում եք, որ ճշմարիտ է:

Մենք իսկապես լուրջ պատասխանատվություն ենք զգում տանելու այս ուղերձը ամեն ազգի, ցեղի, լեզվի և ժողովրդի: Եվ դա ճիշտ հենց այն է, ինչ մենք անում ենք

88000 լիաժամկետ միսիոներների ուժով, ովքեր աշխատում են ավելի քան 150 անկախ պետություններում ողջ աշխարհով մեկ: Այս նշանավոր տղամարդիկ և կանայք օգնում են մեր Եկեղեցու անդամներին կատարել աստվածայնորեն հանձնարարված և մեզանից յուրաքանչյուրիս տրված Հիսուս Քրիստոսի հավիտենական ավետարանը հռչակելու անձնական պարտավորությունը (տես ՎԱՈՒ 68.1):

Ավելի քան հոգևոր պարտավորություն

Բայց այս ուղերձը հայտարարելու մեր ձգտումը պարզապես հոգևոր պարտավորվածության արդյունք չէ: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանով կիսվելու ցանկությունը ավելի շուտ արտացոլումն է այն բանի, թե որքան կարևոր են այս ճշմարտությունները մեզ համար: Կարծում եմ, ես կարող եմ լավագույն ձևով նկարագրել, թե ինչու ենք մենք այդքան վճռական՝ մեր հավատալիքները ձեզ բացատրելու ձգտումում, մի փորձառությամբ, որը ես և կինս ենք ունեցել շատ տարիներ առաջ մեր որդիներից երկուսի հետ:

Մի երեկո Սյուզանը և ես կանգնած էինք մեր տան պատուհանի մոտ և հետևում էինք մեր երկու փոքր տղաներին, որոնք խաղում էին դրսում: Իրենց արկածների ընթացքում, տղաներից փոքրը թեթևակի վնասվեց մի փոքրիկ պատահարից: Մենք արագ հասկացանք, որ նա լուրջ չէր վնասվել, և մենք որոշեցինք անմիջական օգնություն ցույց չտալ: Մենք ցանկանում էինք հետևել և տեսնել, թե արդյոք եղբայրական բարության մեր ընտանեկան քննարկումներից որևէ բան տեղ հասել էր, թե ոչ: Այն ինչ պատահեց հետո և հետաքրքիր էր և ուսուցողական:

Ավագ եղբայրը հանգստացրեց և հոգատարությամբ օգնեց փոքրին տուն վերադառնալ: Սյուզանը և ես դիրք էինք գրավել խոհանոցի կողքին, որպեսզի տեսնեինք, թե հետո ինչ պիտի լիներ, և մենք պատրաստ էինք անմիջապես միջամտել, եթե այլ մարմնական վնասվածք կամ լուրջ պատճառ լիներ:

Ավագ եղբայրը մի աթոռ քաշեց խոհանոցի լվացարանի մոտ: Նա բարձրացավ աթոռին, օգնեց եղբորը աթոռին բարձրանալ, միացրեց ջուրը և սկսեց մեծ քանակությամբ ասան լվանալու հեղուկ օճառ լցնել իր եղբոր քերծված թևին: Նա արեց ինչ կարող էր խնամքով կեղտը լվանալու համար: Այդ ժամանակ փոքր եղբոր արձագանքը կարելի է միայն ճշտորեն նկարագրել՝ օգտագործելով սուրբ գրությունների բառերը.«Եվ նրանք պատճառ կունենան ոռնալու և ողբալու և կաղկանձելու և կրճտացնելու իրենց ատամները» (Մոսիա 16.2): Եվ ինչպես էր այդ փոքրիկ տղան ոռնում:

Լվանալուց հետո նա թևը խնամքով չորացրեց: Ի վերջո, ճչոցը դադարեց: Ավագ եղբայրը հետո բարձրացավ խոհանոցի սեղանին, բացեց դարակը և գտավ դեղորայքային քսուքի մի նոր տուփ: Չնայած իր փոքր եղբոր քերծվածքները մեծ կամ խորը չէին, ավագ եղբայրն օգտագործեց գրեթե ողջ տուփը, ամբողջ վնասված թևի վրա: Ճչոցները չկրկնվեցին, քանի որ փոքր եղբորն ակնհայտորեն շատ ավելի դուր եկավ քսուքի հանգստացնող ազդեցությունը, քան ասան լվացող օճառի մաքրող ազդեցությունը:

Ավագ եղբայրը կրկին վերադարձավ այն դարակի մոտ, որից նա գտել էր քսուքը և վերցրեց ախտազերծված վիրակապերի մի արկղ: Ապա նա բացեց փաթեթը և վիրակապը փաթաթեց իր եղբոր ամբողջ թևի վրա, դաստակից մինչև արմունկը: Առաջին օգնությունը ցույց տալուց հետո, և օճառի պղպջակները, քսուքն ու վիրակապերը ողջ խոհանոցով մեկ թափված, երկու փոքրիկ տղաները վար ցատկեցին աթոռի վրայից պայծառ ժպիտներով և երջանիկ դեմքերով:

Այն ինչ պատահեց հետո, ամենակարևորն է: Վնասված եղբայրը հավաքեց բոլոր մնացած վիրակապերը և գրեթե դատարկ քսուքի տուփը և ետ գնաց դուրս: Նա արագ գտավ իր ընկերներին և սկսեց քսուք դնել և վիրակապել նրանց թևերը: Սյուզանը և ես ապշել էինք նրա արձագանքի անկեղծության, խանդավառության և արագության վրա:

Ինչո՞ւ այդ փոքրիկ տղան այդպես վարվեց: Խնդրում եմ ուշադրություն դարձրեք, որ նա անմիջապես և կանխազգացությամբ ցանկացավ տալ իր ընկերներին հենց այն, ինչն օգնել էր իրեն, երբ նա վնասվել էր: Այդ փոքրիկ տղային պետք չէր ստիպել, կոչ անել, հուշել կամ խթանել, որ գործի: Նրա ցանկությունը, առավել օգտակար և շահավետ անձնական փորձով կիսվելու բնական հետևանք էր:

Մեզանից շատերը որպես չափահասներ վարվում ենք ճիշտ նույն կերպ, երբ մենք գտնում ենք բուժում կամ դեղորայք, որը վերացնում է ցավը, որից մենք երկար տառապել ենք, կամ ստանում ենք խորհուրդ, որն օգնում է մեզ դիմակայել մարտահրավերներին խիզախությամբ, իսկ շփոթմունքները՝ համբերությամբ: Այլ մարդկանց հետ կիսվելով այն բաներով, որոնք ամենաիմաստալին են մեզ համար, կամ օգնել են մեզ, միանգամայն անսովոր մի բան չէ:

Այս նույն օրինակը հատկապես ակնառու է մեծ հոգևոր կարևորություն և հետևանք ունեցող հարցերում: Օրինակ, մի պատմություն սուրբ գրքի մի հատորում, որը հայտնի է որպես Մորմոնի Գիրք, պատկերվում է մի երազ, որը ստացել էր Լեքի անունով հնադարյան մի մարգարե առաջնորդ: Լեքիի երազի կենտրոնական առանձնահատկությունը կենաց ծառն է, որը ներկայացնում է «Աստծո սերը», որը «ամենաբաղձալին է բոլոր բաներից ավելի» և «հոգու համար ամենաբերկրալին» (1 Նեփի 11.22–23, տես նաև 1 Նեփի 8.12, 15):

Լեքին բացատրել է.

«Եվ եղավ այնպես, որ ես առաջ գնացի և ճաշակեցի դրա պտղից. և տեսա, որ այն ամենաքաղցրն էր բոլորից, որ ես նախկինում երբևիցե փորձել էի: Այո, և ես նկատեցի, որ դրա պտուղը ճերմակ է՝ գերազանցելով ամեն ճերմակություն, որ ես երբևէ տեսել էի:

Եվ, երբ ես ճաշակեցի դրա պտղից, այն լցրեց իմ հոգին չափազանց մեծ ուրախությամբ. ուստի ես սկսեցի փափագել, որ իմ ընտանիքն էլ ճաշակի դրանից, քանի

որ գիտեի, որ այն բաղձալի է բոլոր մյուս պտուղներից ավելի» (1 Նեփի 8.11–12, շեշտադրումն ավելացված է):

Իր զավակների հանդեպ Աստծո սիրո մեծագույն դրսևորումներից մեկը մահկանացու ծառայությունն է, քավող զոհաբերությունը և Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունը: Ծառի վրայի պտուղը կարող է համարվել Փրկչի Քավության օրհնությունների մի խորհրդանիշ:

Կենաց ծառի պտղից ճաշակելուց և մեծ ուրախություն զգալուց հետո Լեքիի վայրկենական արձագանքն էր՝ իր ընտանիքի հետ կիսվելու և նրանց ծառայելու աճող բաղձանքը: Այսպիսով, երբ նա դարձավ դեպի Քրիստոս, նա նաև դարձավ դեպի մյուսները՝ սիրով և ծառայությամբ:

Մեկ այլ կարևոր դրվագ Մորմոնի Գրքում նկարագրում է, թե ինչ պատահեց Ենովս անունով մի մարդու հետ, երբ նրա լուրջ և աղերսալի աղոթքը լսվեց և պատասխանվեց Աստծո կողմից:

Նա ասել է.

«Եվ իմ հոգին քաղցում էր. և ես ծնկի իջա իմ Արարչի առջև, և ես աղաղակեցի առ նա զորեղ աղոթքով և աղաչանքով իմ սեփական հոգու համար. և ողջ օրվա ընթացքում ես աղաղակեցի առ նա, այո, և երբ եկավ գիշերը, ես դեռ բարձրացնում էի իմ ձայնը վեր, այնպես որ այն հասավ երկինքներին:

Եվ մի ձայն եկավ ինձ ասելով. Ենովս քո մեղքերը ներված են քեզ, և դու պիտի օրհնվես:

Եվ ես Ենովսս, գիտեի, որ Աստված չէր կարող ստել, ուստի, իմ հանցանքը սրբվեց:

Եվ ես ասացի. Տեր, ինչպե՞ս եղավ դա:

Եվ նա ասաց ինձ. Քրիստոսի հանդեպ քո հավատքի շնորհիվ, որին դու երբեք նախկինում ոչ լսել ես, ոչ տեսել: . . . Ուստի գնա, քո հավատքը քեզ ողջ դարձրեց:

Արդ, եղավ այնպես, որ *երբ ես լսեցի այս խոսքերը, ես սկսեցի ցանկություն զգալ իմ եղբայրների՝ Նեփիացիների բարօրության համար. ուստի, ես դուրս թափեցի իմ ողջ հոգին առ Աստված, նրանց համար»* (Ենովս 1.4–9, շեշտադրումն ավելացված է):

Երբ Ենովսը դարձավ դեպի Տերը «սրտի ողջ նվիրվածությամբ» (2 Նեփի 31.13), նրա մտահոգությունը իր ընտանիքի, ընկերների և ծանոթների համար սկսեց միաժամանակ աճել:

Այս հարատև դասը, որից մենք սովորում ենք այս երկու դրվագներում, մեր անձնական կյանքում Հիսուս Քրիստոսի Քավության օրհնությունների կարևորությունը զգալն է, նախքան անկեղծ և իսկական ծառայություն մատուցելը, որը շատ ավելին է, քան պարզապես «որոշ գործողություններ կատարելը»: Ճիշտ Լեքիի, Ենովսի և իմ պատմած դեպքից մեր փոքրիկ տղայի նման, մենք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, զգացել ենք հոգևոր անորոշության և մեղքի հետ կապված տառապանքը: Մենք նաև զգացել ենք մաքրվելը, խղճի խաղաղությունը, հոգևոր ապաքինումը և վերածնունդը և առաջնորդությունը, որոնք ձեռք են բերվում միայն սովորելով և ապրելով Փրկչի ավետարանի սկզբունքներով:

Հիսուս Քրիստոսի Քավությունն ապահովում է ախտահանիչը, որն անհրաժեշտ է անբիծ և մաքուր դառնալու համար, հանգստացնող սպեղանին՝ ապաքինելու հոգևոր վերքերը և վերացնելու հանցանքը, և այն պաշտպանությունը, որը հնարավորություն է տալիս մեզ հավատարիմ լինել ինչպես լավ, այնպես էլ վատ ժամանակներում:

Գոյություն ունի բացարձակ ճշմարտություն

Ձեզ, ընտանիքի անդամներ և ընկերներ, ովքեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ չեք, ես փորձեցի բացատրել հիմնական պատճառները, թե ինչու ենք մենք միսիոներներ:

Բացարձակ ճշմարտությունը գոյություն ունի մի աշխարհում, որը գնալով ավելի է արհամարհում և հերքում բացարձակ ճշմարտությունները: Ապագայում մի օր «ամեն ծունկ [պիտի] խոնարհվի» և «ամեն լեզու [պիտի] դավանե, թե Հիսուս Քրիստոսը Տէր է Հոր Աստուծոյ փառքի համար» (Փիլիպպեցիս Բ.10–11): Հիսուս Քրիստոսը բացարձակապես Հավերժական Հոր Միածին Որդին է: Որպես Նրա Եկեղեցու անդամներ մենք վկայում ենք, որ Նա ապրում է, և Նրա Եկեղեցին վերականգնվել է իր լրիվությամբ այս վերջին օրերում:

Հրավերները, որոնք մենք հղում ենք ձեզ, մեր ուղերձն իմանալու և ստուգելու վերաբերյալ, գալիս են այն դրական ազդեցություններից, որոնք Հիսուս Քրիստոսի ավետարանը թողել է մեր կյանքում: Երբեմն մենք գուցե տարօրինակ կամ բուռն կամ նույնիսկ անդրդելի լինենք մեր փորձերում: Մեր պարզ ցանկությունն է կիսվել ձեզ հետ այն ճշմարտություններով, որոնք մեծագույն արժեք ունեն մեզ համար:

Լինելով Տիրոջ Առաքյալներից մեկը, իմ հոգու ողջ ավյունով, ես բերում եմ վկայություն Նրա աստվածայնության և իրականության մասին: Եվ ես հրավիրում եմ ձեզ «եկեք և տեսեք» (Հովհաննես Ա.39), Տեր Հիսուս Քրիստոսի սրբազան անունով, ամեն: ■

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն

Մինչև նոր հանդիպում

Եկեք բոլորս խորհենք այն ճշմարտությունների շուրջ, որ լսեցինք, և թող դրանք օգնեն մեզ դառնալ ավելի քաջարի աշակերտներ:

Իմ եղբայրներ և քույրեր, մենք վայելեցինք ոգեշնչված ուղերձների երկու փառավոր օր: Մեր սրտերը հուզվեցին և մեր հավատքն ամրացավ, մինչ մենք ճաշակեցինք այն հոգուց, որը ներկա էր այս համաժողովի նիստերին: Եզրափակելով մենք շնորհակալություն ենք հայտնում մեր Երկնային Հորը մեզ տված Իր բազմաթիվ օրհնությունների համար:

Մենք վեհացում և ոգեշնչում ապրեցինք ի շնորհիվ սքանչելի երաժշտության, որը մատուցվեց այս նիստերին: Աղոթքները, որ ասվեցին, մեզ ավելի մոտեցրին երկնքին:

Թույլ տվեք ամբողջ Եկեղեցու կողմից սրտանց շնորհակալություն հայտնել մեր Եղբայրներին, ովքեր ազատվեցին իրենց կոչումներից այս համաժողովին: Մենք կկարոտենք նրանց: Տիրոջ աշխատանքին նրանց ներդրումը ահռելի էր և իրեն զգացնել կտա սերունդներ ի վեր:

Եկեք վերադառնանք մեր տները, վճռականություն ունենալով մեր սրտերում լինելու մի փոքր ավելի լավը, քան անցյալում էինք: Թող որ մենք լինենք մի փոքր էլ ավելի բարի

և հոգատար: Եկեք օգնության ձեռք մեկնենք ոչ միայն մեր մերձավոր անդամներին, այլ նաև նրանց, ովքեր մեր հավատքից չեն: Շփվելով նրանց հետ, եկեք հարգանք ցուցաբերենք:

Ամեն օր ինչ-որ խնդիրների դեմ պայքարողներ կան: Եկեք նրանց առաջարկենք մեր մտահոգվածությունը, ինչպես նաև մեր օգնող ձեռքը: Հոգ տանելով մեկս մյուսի համար, մենք կօրհնվենք:

Եկեք հիշենք ծերերին և նրանց, ովքեր տնից չեն կարողանում դուրս գալ: Եթե մենք ժամանակ գտնենք նրանց այցելելու, նրանք կիմանան, որ սիրված են և արժեքավոր: Եկեք հետևենք այս պատգամին. «Սատարիր թույլերին, բարձրացրու ընկած ձեռքերը և ամրացրու տկար ծնկները»:[1]

Եկեք լինենք ազնվության և ամբողջականության տեր մարդիկ, փորձելով անել ճիշտը բոլոր ժամանակներում և բոլոր պայմաններում: Եկեք լինենք Քրիստոսի հավատարիմ հետևորդները, արդարակեցության օրինակներ, դառնալով «աշխարհի լույսեր»:[2]

Իմ եղբայրներ և քույրեր, ես շնորհակալություն եմ հայտնում ձեզ ինձ համար ասված ձեր աղոթքների համար: Դրանք ամրացնում և բարձրացնում են ինձ, մինչ ես ջանում եմ իմ ողջ սրտով և ուժով կատարել Աստծո կամքը և ծառայել Նրան և ձեզ:

Հեռանալով այս համաժողովից, ես խնդրում եմ, որ երկնքի օրհնությունները իջնեն յուրաքանչյուրիդ վրա: Թող որ դուք, որ հեռու եք ձեր տներից, վերադառնաք ապահով և գտնեք ամեն-ինչ կարգուկանոնի մեջ: Եկեք բոլորս խորհենք այն ճշմարտությունների շուրջ, որոնք լսեցինք, և թող դրանք օգնեն մեզ դառնալ ավելի քաջարի աշակերտներ, քան այս համաժողովից առաջ էինք:

Մինչև մենք կհանդիպենք վեց ամիս անց, ես խնդրում եմ, որ Տիրոջ օրհնությունները լինեն ձեզ հետ, և մեր բոլորի հետ, և ես ասում եմ սա Նրա՝ Հիսուս Քրիստոսի, մեր Տիրոջ և Փրկչի սուրբ անունով, ամեն. ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Վարդապետություն և Ուխտեր 81.5:
2. Փիլիպպեցիս 2.15:

ԿԱՆԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻՍՏ | *27 սեպտեմբերի, 2014թ.*

Լինդա Ք. Բըրթըն
Սփոփող Միության Գերագույն Նախագահ

Պատրաստված մի ձևով, որը երբեք հայտնի չէր եղել

Թող որ մենք արժանիորեն կաթիլ առ կաթիլ ստանանք փրկարար արարողությունները և ամբողջ սրտով պահենք հարակից ուխտերը:

Երբ մեր ամենափոքր աղջիկը վերադարձավ տուն դպրոցի առաջին օրվանից հետո, ես հարցրեցի. «Ինչպե՞ս այն ընթացավ»:

Նա պատասխանեց. «Լավ էր»:

Սակայն հաջորդ առավոտ, երբ ես նրան արթնացրեցի դպրոցի համար, նա ծալեց ձեռքերը և վճռականորեն ասաց. «Ես արդեն գնացել եմ դպրոց»: Ակնհայտորեն ես նրան չէի *նախապատրաստել* կամ բացատրել, որ դպրոց գնալը մեկ անգամյա իրադարձություն չէր, այլ որ ակնկալվում էր, որ նա դպրոց գնար շաբաթվա հինգ օրը շատ շատ տարիների ընթացքում:

Երբ խորհրդածենք նախապատրաստված լինելու սկզբունքի մասին, ինձ հետ պատկերացրեք հետևյալ տեսարանը: Դուք նստած եք տաճարի սելեստիալ սենյակում և նկատում եք մի քանի հարսնացուների և փեսացուների, ում ակնածալի ներս և դուրս են առաջնորդում, մինչ նրանք սպասում են, որ ամուսնանան ժամանակի և ողջ հավերժության համար: Մի հարսնացու է մտնում սելեստիալ սենյակ ձեռք ձեռքի տված իր սիրեցյալի հետ: Նա կրում է պարզ, բայց գեղեցիկ տաճարային զգեստ և հանգիստ, խաղաղ ժպիտ ունի իր դեմքին: Նա լավ հարդարված է, բայց ոչ վանող: Նա զբաղեցնում է իր տեղը, նայում է շուրջը և հանկարծ հուզվում է: Թվում է, թե նրա արցունքները գալիս են այն հարգանքի կամ ակնածանքի պատճառով, որ նա զգում է ինչպես այդ տեղի հանդեպ, որտեղ նա գտնվում է, այնպես էլ այն սրբազան արարողության հանդեպ, որը նրան է սպասում և նրա կյանքի սիրեցյալին: Նրա կեցվածքը թվում է, թե ասում է. «Որքան երախտապարտ եմ լինել Տիրոջ տանն այսօր, պատրաստ սկսելու հավերժական

ճանապարհորդությունը սիրեցյալ հավերժական զուգընկերոջ հետ»: Նա թվում է *պատրաստված է* ավելի շատ բանի համար, քան ուղղակի այդ իրադարձությունն է:

Մեր դեռահաս սիրունիկ թոռնուհին վերջերս մի երկտող էր թողել ինձ համար իմ բարձի վրա, որը մասնավորապես ասում էր. «Մի բան, որն ինձ ապշեցնում է, երբ տաճար եմ մտնում, խաղաղ սիրո հոգին է, որը բնակվում է այնտեղ: . . . Մարդիկ կարող են տաճար գնալ և այնտեղ ոգեշնչում ստանալ»:[1] Նա ճիշտ է: Մենք կարող ենք ստանալ ոգեշնչում և հայտնություն տաճարում և նաև ուժ՝ հաղթահարելու կյանքի դժվարությունները: Այն, ինչ նա սովորում է տաճարի մասին, երբ հետևողականորեն հաճախում է՝ տանելով իր սեփական ընտանիքի անունները՝ կատարելու տաճարային մկրտություններ և հաստատումներ, կնախապատրաստի նրան լրացուցիչ տաճարային արարողությունների՝ ուխտեր և օրհնություններ ստանալուն, ինչպես իր համար, այնպես էլ նրանց համար, ովքեր վարագույրի մյուս կողմում են:

Երեց Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Ինչպես տաճարները պատրաստված են մարդկանց համար, այնպես էլ մարդիկ պետք է պատրաստվեն տաճարների համար»:[2]

Երբ ես կրկին կարդում եմ Զորավար Մորոնիի մասին Մորմոնի Գրքում, ես հիշում եմ, որ Մորոնիի մեծագույն ձեռքբերումներից մեկը Նեփիացիներին խնամքով նախապատրաստելն էր՝ դիմադրելու լամանացիների սոսկալի բանակին «Նա այքնան լավ էր նախապատրաստել իր ժողովրդին, որ մենք կարդում ենք. «Ահա ի մեծագույն զարմանս [լամանացիների], [նեփիացիները] *պատրաստված էին իրենց համար, մի ձևով, որը երբեք հայտնի չէր եղել*»:[3]

Այդ արտահայտությունը, «Պատրաստված . . . մի ձևով, որը երբեք հայտնի չէր եղել», իսկապես գրավեց իմ ուշադրությունը:

Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ պատրաստվել տաճարային սրբազան օրհնությունների համար: Տերն ուսուցանել է. «Եվ բացի այդ, ես ձեզ կտամ մի օրինակ, բոլոր բաների համար»:[4] Եկեք մտածենք սուրբգրքյան մի օրինակ, որը կօգնի մեզ լավ նախապատրաստվել: Մորոնիի պատրաստվելը թշնամու դեմ պահանջեց հետևողական և հավատարիմ ջանասիրություն և այս օրինակը կպահանջի նույնը:

Թվում է, ես երբեք չեմ ձանձրանում այն գեղեցիկ առակից, որը Փրկիչը պատմեց հինգ իմաստուն կույսերի և հինգ հիմար կույսերի մասին: Չնայած այս առակը վերաբերվում է մեր Փրկչի Երկրորդ Գալստին նախապատարաստվելուն, մենք կարող ենք նմանեցնել այն նաև տաճարային օրհնություններին նախապատրաստվելուն, որը կարելի է նմանեցնել հոգևոր խրախճանքի նրանց համար, ովքեր լավ են պատրաստված:

Մատթեոսի ԻԵ գլխում մենք կարդում ենք.

«Այն ժամանակ կնմանի երկնքի արքայութիւնը տասը կոյսերի, որ իրանց լապտերները վեր առան եւ դուրս եկան փեսային դիմավորելու:

Նորանցից հինգը իմաստուն էին, եւ հինգը յիմար: . . .

[Նրանք, ովքեր] իմաստուն էին «իրենց ամաններումը ձէթ վեր առան իրանց լապտերների հետ մեկտեղ:

Եվ երբոր փեսան ուշացավ, ամենքը թմրեցան եւ քնեցին:

Եվ կէս գիշերին աղաղակ եղաւ՝ Ահա փեսան գալիս է. Դուրս եկէք նորան դիմավորելու:

Այն ժամանակ ամեն կոյսերը վերկացան՝ եւ իրանց լապտերները պատրաստեցին:

Բայց յիմարներն ասեցին իմաստուններին. Տուէք մեզ ձեր իւղիցը, որովհետեւ մեր լապտերները հանգչում են:

Իմաստուններն էլ պատասխանեցին եւ ասեցին. Մի գուցէ մեզ եւ ձեզ բաւական չլինի. Բայց ավելի լաւ՝ գնացէք ծախողների մոտ եւ գնեցէք ձեզ համար:

Եւ երբոր նորանք գնացին գնելու, փեսան եկավ. եւ պատրաստները նորա հետ հարսանիքը մտան և դուռն փակուեցաւ:

Եւ յետոյ այն միուս կոյսերն էլ եկան եւ ասեցին. Տէր, Տէր բաց մեզ:

Նա էլ պատասխանեց եւ ասեց. Ճշմարիտ ասում եմ ձեզ, [Դուք չեք ճանաչում ինձ]»:[5]

Չեմ կարծում, թե կա մեկը, հատկապես նրանց մեջ, ովքեր զգայուն սիրտ ունեն, ովքեր տխուր չեն զգում հիմար կույսերի համար: Իսկ մեզանից ոմանք ուզում են ասել մյուս կույսերին. «Չէի՞ք կարող հենց մի քիչ տալ, որպեսզի բոլորն

էլ կարողանային երջանիկ լինել»: Բայց մտածեք այդ մասին: Սա պատմություն է, որը Փրկիչն է պատմել, և Նա է այն մեկը, ով նրանցից հինգին կոչում է «իմաստուն» և նրանցից հինգին կոչում է «յիմար»:

Եթե համարենք այս առակը որպես տաճարային նախապատրաստության օրինակ, մտածեք վերջին օրերի մարգարեի խոսքերի մասին, ով ուսուցանել է, որ «հոգևոր պատրաստվածության յուղով հնարավոր չէ կիսվել»:[6] Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն օգնել է պարզաբանել, թե ինչու հինգ «իմաստուն» կույսերը չէին կարող կիսվել իրենց լամպերի միջի յուղով, նրանց հետ, ովքեր «հիմար» էին, երբ նա ասել է. «Հաղորդության ժողովներին հաճախելը յուղ է ավելացնում մեր լամպերին, կաթիլ առ կաթիլ տարիների ընթացքում: Ծոմապահությունը, ընտանեկան աղոթքը, տնային ուսուցումը, մարմնական ախորժակի վերահսկումը, ավետարանը քարոզելը, սուրբ գրությունների ուսումնասիրությունը, նվիրվածության և հնազանդության յուրաքանչյուր գործ մի կաթիլ է ավելացնում մեր պաշարի վրա: Բարության գործերը, նվիրատվությունների և տասանորդների վճարումը, մաքուր մտքերն ու գործերը . . . սրանք ևս կարևոր հավելում են յուղի վրա, որով մենք կարող ենք կեսգիշերին լցավորել մեր մարող լամպերը:»[7]

Տեսնո՞ւմ եք պատրաստվածության օրինակը՝ կաթիլ առ կաթիլ, որը կարող է օգնել մեզ, երբ մենք մտածում ենք, թե ինչպես կարող ենք ավելի ջանասեր լինել մեր նախապատրաստության մեջ՝ ստանալու սրբազան արարողություններ մեզ և ուրիշների համար: Էլ ի՞նչ փոքր և հասարակ բաներ կարող ենք մենք անել՝ ավելացնելու թանկարժեք յուղի հոգևոր կաթիլներ մեր պատրաստվածության լամպերին:

Մենք իմանում ենք Երեց Ռիչարդ Սքոթից, որ «անձնական արժանավորությունը կարևոր պահանջ է՝ տաճարային օրհնությունները վայելելու համար: . . . Արժանավոր բնավորությունը լավագույն ձևով է կոփվում Տիրոջ ուսմունքների վրա կենտրոնացած հետևողական կյանքի ճիշտ ընտրություններից»:[8] Ես սիրում եմ *հետևողական* բառը: Հետևողական լինել նշանակում է լինել կայուն, հաստատուն և վստահելի: Արժանավորության սկզբունքի ինչպիսի հիանալի նկարագրություն:

Աստվածաշնչյան բառարանը մեզ հիշեցնում է. «Միայն տունը կարող է համեմատվել Տաճարի հետ սրբազանության առումով»:[9] Արդյոք մեր տներն ու բնակարանները համապատասխանու՞մ են այդ նկարագրությանը: Մի սիրելի երիտասարդ կին մեր ծխից վերջերս եկավ մեր տուն: Իմանալով, որ նրա եղբայրը հենց նոր էր վերադարձել իր միսիայից, ես հարցրեցի, թե ինչպես էր նրա վերադարձը զգացվում տանը: Նա ասաց, որ դա հիանալի էր, բայց նա երբեմն խնդրում էր, որ երաժշտությունն անջատվի: Նա ասաց. «Բայց դա նույնիսկ *վատ* երաժշտություն չէր:» Կարող է մեզ համար կարևոր լինել այժմ մեզ ստուգել և ապա հավաստիանալ, թե արդյոք մեր տները այն վայրերն են, որտեղ մենք նախապատրաստված ենք զգալու Հոգին: Երբ մենք

պատարաստում ենք մեր տները լինելու վայրեր, որտեղ Հոգին ողջունելի է, մենք պատրաստված կլինենք ավելի շատ զգալ «տանը», երբ մենք մտնենք Տիրոջ տունը:

Երբ մենք պատրաստվում ենք արժանի մտնել տաճար և հավատարիմ ենք տաճարային ուխտերին, Տերը կշնորհի մեզ «օրհնությունների բազմազանությամբ»:[10] Իմ լավ ընկերուհի Բոննի Օսկարսոնը վերջերս հակադարձ ուղղությամբ շրջեց սուրբ գրության մի հատված, երբ նա ասաց. «Որտեղ շատ է պահանջվում, շատ ավելին կտրվի»:[11] Ես լիովին համաձայն եմ: Քանի որ մենք տաճար ենք գալիս ստանալու *հավերժական* օրհնություններ, դա չպետք է մեզ զարմացնի, որ ավելի բարձր չափանիշ է պահանջվում այդ օրհնություններին արժանանալու համար: Երեց Նելսոնն ուսուցանել է կրկին. «Քանի որ տաճարը Տիրոջ տունն է, ընդունման չափանիշները դրվում են Նրա կողմից: Մարդ մտնում է այնտեղ որպես Նրա հյուր: Տաճարային երաշխավորագիր կրելը անգին արտոնություն է և Աստծուն և Նրա մարգարեներին հնազանդվելու տեսանելի նշան»:[12]

Համաշխարհային կարգի մարզիկներն ու համալսարանի դոկտորական աստիճանի ուսանողներն անցկացնում են ժամեր և օրեր, և շաբաթներ ու ամիսներ և, նույնիսկ, նախապատրաստության տարիներ: Նրանցից պահանջվում է նախապատարաստության ամենօրյա կաթիլներ՝ զգաթին հասնելու համար: Նմանապես, նրանք, ովքեր կամենում են արժանանալ վեհացման սելեստիալ արքայությունում, ակնկալվում է, որ ապրեն հնազանդության ավելի բարձր չափանիշով, որը գալիս է հնազանդության արժանիքը օրեցօր և կաթիլ առ կաթիլ գործադրելուց:

Երբ մենք հետևողականորեն և ջանասիրաբար յուղ ենք ավելացնում կաթիլ առ կաթիլ մեր հոգևոր լամպերին, կատարելով այս փոքր և հասարակ բաները, մենք կարող ենք ապշեցուցիչ պատրաստությամբ մեր լամպերը «պատրաստ և վառ»[13] պահել: Իմ սիրելի ամուսինը,

ով ցցի նախագահ է, վերջերս նշեց, որ կարող է գրեթե միշտ ասել, երբ ինչ որ մեկը պատրաստված է և արժանի տաճար մտնելու, որովհետև «նրանք լուսավորում են սենյակը», երբ գալիս են տաճարային երաշխավորագիր ստանալու:

Կիրթլանդի Տաճարի նվիրաբերման աղոթքում Մարգարե Ջոզեֆ Սմիթը խնդրեց Տիրոջից. «որ բոլոր մարդիկ, ովքեր ոտք կդնեն Տիրոջ տան շեմքին, կարողանան զգալ քո զորությունը, . . . որ նրանք կարողանան աճել քեզանում և ստանան Սուրբ Հոգու լիությունը, . . . պատրաստվեն ստանալու ամեն անհրաժեշտ բան»:[14]

Իմ աղոթքն է, որ մեզ համար, տաճար գնալը լինի ավելի մեծ մի բան, քան մեկանգամյա իրադարձություն: Թող որ մենք արժանիորեն պատրաստվենք ստանալու փրկող արարողություններ կաթիլ առ կաթիլ և ամբողջ սրտով պահենք հարակից ուխտերը: Երբ անենք այդպես, ես գիտեմ մենք կորակառրվենք ստանալու Սուրբ Հոգու լիության և Տիրոջ զորության խոստացված օրհնությունները մեր տներում և անձնական կյանքում: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Անձնական հաղորդագրություն Այդա Քեյլի Մելոյից Լինդա Կ. Բըրթնին, 31 օգոստ., 2014:
2. Ռասսել Մ. Նելսոն, *կամ Լիահոնա,* հոկտ. 2010, 41:
3. Ալմա 49.8, շեշտադրումն ավելացված է, տես նաև հատվածներ 6–7:
4. Վարդապետություն և Ուխտեր 52.14:
5. Մատթեոս ԻԵ.1–2, 4–11, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս ԻԵ.12 (Մաթեոս ԻԵ.12, ծանոթություն *ա*):
6. Marvin J. Ashton, “A time of Urgency,” *Ensign*, May 1974, 36.
7. Spencer W. Kimball, *Faith Preceds the Miracle* (1972), 256.
8. Richard Scott, “Receive the Temple Blessings,” *Ensign*, May 1999, 25; *Liahona*, July 1999, 29.
9. Սուրբ Գրքերի Ուղեցույց «Տաճար»:
10. Վարդապետություն և Ուխտեր 104.2:
11. Բոննի Լ. Օսկարսոն, «Ավելի մեծ ակնկալիքներ», «(կրոնի սեմինարիաների և ինստիտուտների արբանյակային հեռարձակում, օգ. 5, 2014)», lds.org/broadcasts, տես նաև Ղուկաս ԺԲ.48, Վարդապետություն և Ուխտեր 82.3:
12. Ռասսել Մ. Նելսոն, *Լիահոնա,* հուլիս 2001, 38:
13 Վարդապետություն և Ուխտեր 33.17:
14. Վարդապետություն և Ուխտեր 109.13–15:

Ջին Ա. Սթիվենս
Երեխաների Խմբի Գերագույն Նախագահության Առաջին Խորհրդական

Աստծո ուխտյալ դուստրերը

Երբ Աստծո դուստրերը կենտրոնանում են տաճարի և իրենց սուրբ ուխտերի վրա, Աստված կարողանում է օրհնություններ ուղարկել անձնական և զորավոր միջոցներով:

Սիրելի քույրեր, ես մեծ սիրով ողջունում եմ ձեզ: Այժմ որտեղ էլ որ գտնվեք աշխարհում, հուսով եմ անձնապես զգում եք Տիրոջ սերը և Հոգին վկայում է ձեր սրտին այս հրաշալի երգչախմբի կողմից կատարված երգի ուղերձը: Ես իմ վկայության ձայնն եմ միացնում նրանց ասելով՝ Գիտեմ ապրում է Փրկիչն իմ և Նա սիրում է մեզանից յուրաքանչյուրին:

Այս երեկո մենք հավաքվել ենք որպես Աստծո ուխտյալ դուստրեր: Մեր տարիքը, հանգամանքները և անհատականությունը չեն կարող տարանջատել մեզ, որովհետև նախևառաջ մենք Նրանն ենք: Մենք ուխտ ենք կապել միշտ հիշել Նրա Որդուն:

Անհատական այդ ուխտի զորությունը տպավորվեց սրտիս մեջ երեք շաբաթ առաջ, երբ ես ներկա էի մի մկրտության ծառայության: Այնտեղ իմ առաջ նստած էին ութ հրաշալի երեխաներ, ովքեր ակնածալից կեցվածքով սպասում էին, քանի որ վերջապես իրենց հատուկ օրը եկել էր: Բայց երբ նայեցի նրանց պայծառ դեմքերին, տեսա ոչ թե պարզապես երեխաների խումբ, այլ տեսա նրանց, իմ կարծիքով, այնպես ինչպես Տերն անհատապես կտեսներ: Ես տեսա Էմմային, Սոֆիային, Իանին, Լոգանին, Աղենին, Վիլիամին, Սոֆիին և Միքիային: Յուրաքանչյուր մկրտության ուխտը կապվեց մեկ առ մեկ: Յուրաքանչյուրը ճերմակ հագուստով պատրաստ էր և իր ութամյա ողջ սրտով փափագում էր իր

առաջին ուխտը կապել Աստծո հետ:

Մտքով գնացեք ետ և հիշեք ձեր մկրտության օրը: Կարևոր չէ կհիշեք շատ բաներ, թե որոշ մանրամասներ միայն, փորձեք այժմ զգալ անհատապես կապած այդ ուխտի կարևորությունը: Տրվեց ձեր անունը, դուք ընկղմվեցիք ջրում և ջրից դուրս եկաք որպես Աստծո դուստր, ուխտյալ դուստր, պատրաստակամ կոչվելու Նրա Որդու անունով, խոստանալով հետևել Նրան և պահել Նրա պատվիրանները:

Աստծո հետ կապած ուխտերի օգնությամբ իմանում ենք՝ իրականում ով ենք մենք: Դրանք մեզ կապում են Նրա հետ անհատական ձևով, որի շնորհիվ մենք զգում ենք մեր արժեքը Նրա աչքում և մեր տեղը Նրա արքայությունում: Ճիշտ է, մենք լիովին չենք գիտակցում, թե ինչպես, բայց Նա ճանաչում և սիրում է մեզ անհատապես: Միայն մտածեք՝ մեզանից յուրաքանչյուրը նման տեղ է զբաղեցնում Նրա սրտում: Նրա ցանկությունն է, որ մենք ընտրենք այն ուղին, որը մեզ ետ կտանի տուն՝ Նրա մոտ:

Մկրտության ուխտը կարևոր և էական լինելով հանդերձ միայն սկիզբն է, դուռ, որը մեր առաջ բացում է հավերժական կյանքի ուղին: Այնուհետև մեր ճանապարհին պետք է կապենք տաճարային ուխտեր և ստանանք քահանայության ծեսեր: Ինչպես Երեց Դեյվիդ Ա. Բեղնարն է հիշեցնում մեզ. «Կանգնելով մկրտության ջրերում՝ մենք տաճարին ենք նայում»:[1]

Ոչ միայն ուխտեր կապելով, այլև դրանք հավատարմորեն պահելով ենք մենք պատրաստվում հավերժական կյանք ստանալուն: Դա է մեր հույսը, մեր նպատակը և մեր ուրախությունը:

Ես ուխտերի զորության ականատեսն եմ եղել՝ նայելով իմ արդար ծնողներին, ովքեր սիրում էին ավետարանը և ապրում դրանով: Ես արտոնված եմ եղել իմ սիրելի մայրիկի մեջ հստակ տեսնել Աստծո ուխտյալ դստեր ամենօրյա որոշումները: Անգամ լինելով աղջիկ, նրա որոշումներն արտացոլում էին իր առաջնահերթությունները և բնորոշում նրան որպես Հիսուս Քրիստոսի

ճշմարիտ աշակերտ: Ես տեսել եմ խաղաղություն, զորություն և պաշտպանություն, որ եկել են նրա կյանք՝ իր կյանքի ճանապարհին սուրբ ուխտեր կապելու և պահելու արդյունքում: Այս երկրի վրա նրա կյանքն արտացոլեց առ Փրկիչ նրա սերը և Նրան հետևելու իր ցանկությունը: Օ՜, որքան եմ ցանկանում հետևել նրա օրինակին:

Ծնողներս անսովոր ձևով են սկսել իրենց համատեղ կյանքը: 1936 թվականն էր: Նրանք հանդիպում էին և մտածում էին ամուսնանալու մասին, երբ հայրս նամակ ստացավ Հարավային Աֆրիկայում որպես լիաժամկետ միսիոներ ծառայելու մասին: Նամակում ասվում էր, որ եթե նա արժանի էր և ծառայելու ցանկություն ուներ, պետք է հանդիպեր իր եպիսկոպոսի հետ: Արդեն իսկ հասկացաք, որ այդ օրերին միսիոներ կանչվելու գործընթացը շատ տարբեր էր: Հայրս նամակը ցույց տվեց իր սիրելի Հելենին, և նրանք որոշեցին, որ անկասկած նա պետք է ծառայեր:

Նախքան նրա մեկնելը՝ երկու շաբաթ շարունակ մայրս և հայրս ամեն օր ճաշում էին Սոլթ Լեյք Սիթիի կենտրոնի մոտ գտնվող Հիշատակի պուրակում: Իրենց հանդիպումներից մեկի ժամանակ մայրս, ով ծոմի և աղոթքի միջոցով ուղղություն էր փնտրել, ասաց իր սիրելի Քլերոնին, որ եթե նա դեռ ցանկանում էր, կարող էին նախքան նրա մեկնելն ամուսնանալ: Եկեղեցու վաղ օրերին, միսիոներական ծառայության կանչված տղամարդիկ երբեմն տանն էին թողնում իրենց կանանց և ընտանիքը: Այդպես եղավ նաև մայրիկիս և հայրիկիս դեպքում: Իր քահանայության ղեկավարների թույլտվությամբ, նախքան հայրիկիս միսիա մեկնելը, ծնողներս որոշեցին ամուսնանալ:

Սոլթ Լեյքի Տաճարում մայրս ստացավ իր օժտումը և ապա նրանք ամուսնացան ժամանակի և հավերժության համար՝ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից: Ամեն ինչ անցավ շատ համեստ: Չկային այդ առիթը նշանավորող լուսանկարներ, գեղեցիկ հարսանեկան զգեստ, ծաղիկներ և հյուրասիրություն: Նրանց ուշադրությունը կենտրոնացած էր միայն տաճարի և իրենց ուխտերի վրա: Նրանց համար ուխտերն ամեն ինչ էին: Ամուսնությունից վեց օր անց, արտասավալից ցտեսություն հայտնելով, հայրս մեկնեց Հարավային Աֆրիկա:

Բայց նրանց ամուսնությունն ավելին էր, քան խորը սերը միմյանց հանդեպ: Նրանք նաև սիրում էին Տիրոջը և ցանկանում էին ծառայել Նրան: Իրենց կապած տաճարային սրբազան ուխտերը ուժ ու զորություն էին տալիս հաղթահարելու բաժանման երկու տարիները:

Լաս Պինաս, Ֆիլիպիններ

Նրանք ունեին կյանքի նպատակի հավերժական հեռանկար և խոստացված օրհնություններ, որոնք գալիս են նրանց, ովքեր հավատարիմ են իրենց ուխտերին: Այդ բոլոր օրհնությունները գերազանցեցին նրանց կարճատև զոհաբերությունն ու բաժանումը:

Ճիշտ է, այդ կերպ ամուսնական կյանք սկսելը հեշտ չէր, բայց կյանքը ցույց տվեց, որ դա հավերժական ընտանիք հիմնելու կատարյալ եղանակ էր: Երեխաներ ծնվեցին, և մենք գիտեինք, ինչն էր առավել կարևոր մեր ծնողների համար: Դա սերն էր առ Տերը և նրանց անսասան նվիրվածությունն իրենց կապած ուխտերին: Թեպետ ծնողներս մահացել են, նրանց արդարակյաց օրինակը մինչ օրս օրհնում է մեր ընտանիքը:

Նրանց կյանքի օրինակն արտացոլվում է Քույր Լինդա Կ. Բըրթընի խոսքերում. «Լինի ներկայում, թե ապագայում, տունն ամրացնելու լավագույն եղանակը ուխտերը պահելն է»:[2]

Նրանց դժվարությունների և փորձությունների օրերը չավարտվեցին: Հայրիկիս միսիայից վերադառնալուց երեք տարի անց, Երկրորդ Համաշխարհայինը մոլեգնեց, և շատերի պես նա զինվորագրվեց: Նա տնից հեռու զտնվեց ևս չորս տարի, ծառայելով նավատորմում՝ Խաղաղ օվկիանոսում տեղակայված ռազմանավերի վրա:

Ծնողներիս համար կրկին բաժանվելու դժվար ժամանակ էր: Բայց մայրիկիս համար այդ միայնակ, անհանգիստ և անորոշ օրերը նաև նշանավորվեցին Հոգու հուշումներով, որոնք փոթորկի պահին շշնջում էին հավերժական խոստումների, սփոփանքի և խաղաղության խոսքեր:

Չնայած իր կրած դժվարություններին, մայրս ապրում էր երջանիկ, ուրախ, սիրով ու ծառայությամբ լի հարուստ կյանք: Առ Փրկիչ նրա սերն արտացոլվում էր իր ապրելակերպում: Նա հրաշալի կերպով կապված էր երկնքի հետ և օժտված էր իր շրջապատում բոլորին սիրելու և օրհնելու պարգևով և ունակությամբ: Առ Աստված նրա հավատքը և Տիրոջ խոստումների հանդեպ նրա հույսն արտացոլվում են տաճարի վերաբերյալ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խոսքում, երբ նա ասել է. «Ոչ մի զոհաբերություն այդքան մեծ չէ, ոչ մի գին այդքան ծանր չէ, ոչ մի մաքառում այդքան դժվար չէ, այդ օրհնությունները ստանալու համար»:[3]

Իր կյանքի բոլոր օրերում, մայրս ամրացավ և օրհնվեց Տիրոջ հանդեպ ունեցած իր սիրով և հավատարմորեն կապած ու պահած ուխտերով:

Անկասկած ձեր պատմության մանրամասները կտարբերվեն նրա պատմությունից: Բայց նրա կյանքից վերցված սկզբունքները վերաբերում են մեզ բոլորիս: Երբ Աստծո դուստրերը կենտրոնանում են տաճարի և իրենց սուրբ ուխտերի վրա, Աստված կարողանում է օրհնություններ ուղարկել անձնական և զորավոր միջոցներով: Ինչպես մայրիկիս օրինակն է եղել ինձ համար, հավատալու և ուխտերը պահելու ձեր ընտրությունը հավատքի հարուստ ժառանգություն կթողնի ձեր հետնորդներին: Ուրեմն, սիրելի քույրեր, ինչպե՞ս կարող են տաճարային ուխտերի զորությունն ու օրհնությունները հասանելի լինել մեզ: Ի՞նչ կարող ենք անել այժմ այդ օրհնություններին պատրաստվելու համար:

Ճամփորդելիս ես հասկացա, որ կան տարբեր տարիքի և տարբեր պայմաններում ապրող քույրեր, որոնց կյանքը պատասխանում է այս հարցերին:

Ես հանդիպեցի Մերիին իր ծննդյան ութամյակից հետո: Շատերի պես նա ոգևորությամբ է կատարում ընտանիքի պատմությունը և տաճարային աշխատանքի համար նվիրաբերել է ավելի քան 1000 անուն: Մերին այժմ պատրաստվում է 12 տարեկանը լրանալուն պես տաճար գնալ:

Բրիաննան 13 տարեկան է և սիրում է կատարել ընտանիքի պատմության և տաճարային աշխատանք: Նա ընդունել է Երեց Նիլ Լ. Անդերսենի տաճարային մարտահրավերը:[4] Նա տաճարային աշխատանքի համար հարյուրավոր անուններ է պատրաստել և մկրտություններ կատարելու համար բացի իրենից ընդգրկել է իր ընտանիքի և ընկերների անունները: Այս սրբազան աշխատանքում Բրիաննայի սիրտը դարձել է ոչ միայն դեպի իր երկրային ծնողները, այլև՝ իր Երկնային Հայրը:

Թեպետ Անֆիսան մշտազբաղ երիտասարդ չափահաս է, ով աշխատում և միաժամանակ սովորում է, նա դեռևս ամեն շաբաթ տաճար այցելելու համար ժամանակ է գտնում: Տիրոջ տանը ծառայելով նա հայտնություն է փնտրում և խաղաղություն գտնում:

Կատյան, մի սիրելի քույր Ուկրաինայից, խորապես սիրում է տաճարը:

Նախքան Կիևի տաճարի կառուցումը, նա և իր ճյուղից շատերը զոհաբերում էին՝ տարին մեկ անգամ ավտոբուսով 36 ժամ ճամփորդելով դեպի Գերմանիայի տաճար: Այդ նվիրյալ Սրբերը ճամփորդության ընթացքում աղոթում էին, ուսումնասիրում էին սուրբ գրությունները, երգում էին օրհներգեր և քննարկում ավետարանը: Կատյան ինձ ասաց. «Երբ մենք վերջապես հասանք տաճար, մենք պատրաստ էինք ընդունել այն, ինչ Տերը կտար մեզ»:

Եթե ուզում ենք ստանալ բոլոր օրհնությունները, որ Աստված այնքան առատորեն առաջարկում է, մեր երկրային ճանապարհը պետք է տանի դեպի տաճար: Տաճարները Աստծո սիրո արտահայտությունն են: Նա բոլորիս հրավիրում է գալ, սովորել Իր մասին, զգալ Իր սերը, և ստանալ Իր հետ հավերժական կյանք ապրելու համար անհրաժեշտ քահանայության ծեսերը: Յուրաքանչյուր ուխտ կապվում է մեկ առ մեկ: Սրտի յուրաքանչյուր հզոր փոփոխություն կարևոր է Տիրոջ համար: Եվ այդ ամենը մեծ փոփոխություն կառաջացնի ձեր մեջ: Քանզի երբ գնում ենք Նրա սուրբ տուն, մենք կարող ենք լինել «[Նրա] զորությամբ զինված, . . . [Նրա] անունը մեզ վրա, . . . [Նրա] փառքը . . . [մեր] շուրջը, և [Նրա] հրեշտակները կպահպանեն [մեզ]»:[5]

Ես կիսվում եմ ձեզ հետ իմ հաստատուն վկայությամբ, որ մեր սիրելի Երկնային Հայրն ապրում է: Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ է, որ իրականանում է ամեն հույս, ամեն խոստում և տաճարային ամեն օրհնություն: Թող որ հավատք ունենանք վստահելու Նրան և Նրա ուխտերին, ես աղոթում եմ Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դեյվիդ Ա. Բեդնար, «Պատվավոր անուն և դիրք ունենալ», *Լիահոնա,* մայիս 2009, 98:
2. Լինդա Կ. Բըրթըն, «Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար», *Լիահոնա,* մայիս 2014, 123:
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ տաճար՝ փարոս աշխարհին», *Լիահոնա,* մայիս 2011, 92:
4. Տես templechallenge.lds.org.
5. Վարդապետություն և Ուխտեր 109.22:



Նիլ Ֆ. Մերիոթ
Երիտասարդ Կանանց գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

Կիսվելով ձեր լույսով

Մենք պետք է անսասան կանգնենք մեր հավատքում և բարձրացնենք մեր ձայները հոչակելու ճշմարիտ վարդապետություն:

Այս երեկո ես կկամենայի քննարկել երկու կարևոր պարտականություններ, որոնք մենք կրում ենք, առաջինը, հետևողականորեն ավելացնենք ավետարանական լույս և ճշմարտություն մեր կյանքում, և երկրորդը այդ լույսով կիսվենք ուրիշների հետ:

Արդյոք գիտե՞ք, թե որքան կարևոր եք դուք: Ձեզանից յուրաքանչյուրը, հենց հիմա, թանկարժեք է և կարևոր Երկնային Հոր փրկության ծրագրում: Մենք աշխատանք ունենք անելու: Մենք գիտենք վերականգնված ավետարանի ճշմարտությունը: Արդյո՞ք պատրաստ ենք պաշտպանել այդ ճշմարտությունը: Մենք պետք է ապրենք դրանով, մենք պետք է կիսվենք դրանով: Մենք պետք է ամուր կանգնենք մեր հավատքում և բարձրացնենք մեր ձայները՝ հոչակելու ճշմարիտ վարդապետություն:

2014 թվականի սեպտեմբերի *Լիահոնա* ամսագրում Երեց Մ. Ռասսել Բալլարդը գրել է. «Մենք ավելի շատ կանանց հստակ, ազդեցիկ ձայների և հավատքի կարիքն ունենք: Մենք նրանց կարիքն ունենք, որ սովորեն վարդապետություն և հասկանան այն, ինչին մենք ենք հավատում, որպեսզի նրանք կարողանան իրենց վկայությունները բերել՝ բոլոր բաների ճշմարտության մասին»:[1]

Քույրեր, դուք զորացնում եք իմ հավատքն առ Հիսուս Քրիստոս: Ես հետևել եմ ձեր օրինակներին, լսել ձեր վկայությունները և զգացել ձեր հավատքը Բրազիլիայից մինչև Բոթսվանա: Դուք կրում եք ազդեցության շրջանակ ձեզ հետ, ուր էլ որ գնաք: Դա զգացվում է ձեզ շրջապատող մարդկանցից, ձեր ընտանիքից, ձեր բջջային հեռախոսի համարներից և սոցիալական կայքերում ձեր ընկերներից, նրանցից, ովքեր նստած են ձեր կողքին այս երեկո: Ես համաձայն եմ Հարիեթ Ուխդորֆի հետ, ով գրել է. «Դուք . . . կենսախինդ և խանդավառ փարոսների պես եք անընդհատ խավարող

աշխարհում, երբ ցույց եք տալիս, այն ուղով, որ դուք ապրում եք ձեր կյանքը, որ ավետարանը ուրախալի ուղերձ է»:[2]

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը նշել է. «Եթե դուք ուզում եք լույս տալ ուրիշներին, դուք պետք է ինքներդ շողաք:[3] Ինչպե՞ս կարող ենք պահել մեր ներսում ճշմարտության այդ շողացող լույսը: Երբեմն ես խամրած լամպի պես եմ զգում: Ինչպե՞ս ենք ավելի պայծառանում:

Սուրբ գրքերն ուսուցանում են. «Այն, ինչ Աստծուց է, լույս է. և նա, ով ստանում է լույսը և շարունակում է Աստծո հետ, ստանում է ավելի շատ լույս»:[4] Մենք պետք է շարունակենք Աստծո հետ, ինչպես սուրբ գրությունն է ասում: Մենք պետքէ գնանք դեպի լույսի աղբյուրը՝ դեպի Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը և սուրբ գրությունները: Մենք կարող ենք նաև գնալ տաճար, իմանալով, որ բոլոր բաները նրա պատերի ներսում մատնանշում են Քրիստոսին և Նրա քավող մեծ զոհաբերությունը:

Մտածեք այն ազդեցության մասին, որ տաճարներն ունեն իրենց շրջապատի վրա: Դրանք գեղեցկացնում են քաղաքների ներսը, դրանք շողում են աչքի ընկնող բարձունքներից: Ինչո՞ւ են դրանք գեղեցկացնում և շողում: Որովհետև, ինչպես սուրբ գրություններն են ասում՝ «Ճշմարտությունը շողում է»[5] և տաճարները ճշմարտություն են պարունակում և հավերժական նպատակ, այդպես և դուք:

1877 թվականին Ջորջ Ք. Քենոնն ասել է. «Յուրաքանչյուր տաճար . . . նվազեցնում է սատանայի ուժը երկրի վրա»:[6] Ես հավատում եմ, որ որտեղ տաճար է կառուցվում երկրի վրա, այն ետ է հրում խավարը: Տաճարների նպատակն է ծառայել մարդկությանը և տալ բոլոր Երկնային Հոր զավակներին կարողություն վերադառնալու և ապրելու Նրա հետ: Միթե՞ մեր նպատակը նման չէ այս նվիրագործված շենքերին, Տիրոջ այս տներին: Ծառայել ուրիշներին և օգնել նրանց ետ մղել խավարը և վերադառնալ դեպի Երկնային Հոր լույսը:

Տաճարային սրբազան աշխատանքը կմեծացնի մեր հավատքն

առ Քրիստոս և այդ ժամանակ մենք ավելի լավ կարող ենք ազդել ուրիշների հավատքի վրա: Տաճարի սնուցող ոգու միջոցով մենք կարող ենք սովորել Փրկչի Քավության իրականությունը, զորությունը և հույսը մեր անձնական կյանքում:

Մի քանի տարի առաջ մեր ընտանիքը մի մեծ մարտահրավերի հանդիպեց: Ես գնացի տաճար և այնտեղ անկեղծորեն աղոթեցի օգնության համար: Ինձ տրվեց ճշմարտության մի պահ: Ես իմ թուլությունների մի հստակ տպավորություն ստացա և ես ցնցված էի: Հոգեպես ուսուցանող այդ պահին ես տեսա մի հպարտ կնոջ, որն իր ձևով էր անում գործերը, ոչ թե անպայմանորեն Տիրոջ ուղով և անձնապես իրեն վերագրելով ամեն այսպես կոչված ձեռքբերումները: Ես գիտեի, որ նայում էի ինքս ինձ վրա: Ես սրտումս աղաղակեցի դեպի Երկնային Հայրը և ասացի. «Ես չեմ ուզում լինել այդ կինը, բայց ինչպես փոխվեմ»:

Հայտնության մաքուր ոգով տաճարում ես ուսուցանվեցի ինձ համար Քավչի բացարձակ կարիքը: Ես անմիջապես դիմեցի Փրկիչ Հիսուս Քրիստոսին իմ մտքում և զգացի, որ տառապանքս վերացավ և մեծ հույս առաջացավ սրտումս: Նա իմ միակ հույսն էր և ես ձգտում էի կառչել միայն Նրանից: Ինձ համար պարզ էր, որ եսամոլ բնական կինը «Աստծո մի թշնամի է»[7] և մարդկանց, ովքեր նրա ազդեցության ոլորտում են: Տաճարում այդ օրը ես իմացա, որ միայն Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով կարող էր իմ հպարտ էությունը փոխվել և որ ես հնարավորություն կունենայի բարիք գործելու: Ես ուժեղ զգացի Նրա սերը և գիտեի, որ Նա կուսուցաներ ինձ Հոգու միջոցով և կփոխեր ինձ, եթե ես տայի իմ սիրտը Նրան և ոչինչ ետ չպահեի:

Ես դեռ մաքառում եմ իմ թուլությունների հետ, բայց ես վստահում եմ Քավության աստվածային օգնությանը: Այս մաքուր ուսուցումը եկավ, որովհետև ես մտա սուրբ տաճար, փնտրելով սփոփանք և պատասխաններ: Ես տաճար մտա բեռնված և ես հեռացա այնտեղից՝ իմանալով, որ ունեի ամենազոր և ամենասիրառատ Փրկիչ: Ես ավելի թեթևացած էի զգում և ուրախ, որովհետև ստացել էի Նրա լույսը և ընդունել Նրա ծրագիրն ինձ համար:

Տեղադրված լինելով ողջ աշխարհում, տաճարները դրսից ունեն իրենց իսկ առանձնահատուկ տեսքը և ձևը, բայց ներսից դրանք բոլորը պարունակում են նույն հավերժական լույսը, նպատակը և ճշմարտությունը: Ա Կորնթացիս Գ.16 հատվածում կարդում ենք. «Չգիտե՞ք, որ դուք Աստուծոյ տաճար էք և Աստուծոյ Հոգին բնակվում է ձեզանում»: Մենք ևս որպես Աստծո դուստրեր դրվել ենք ողջ աշխարհով մեկ, տաճարների նման և մենք յուրաքանչյուրս տաճարների նման ունենք մեր սեփական առանձնահատուկ տեսքը և արտաքին ձևը: Մենք ևս տաճարների նման հոգևոր լույս ունենք մեր ներսում: Այս հոգևոր լույսը Փրկչի լույսի արտացոլումն է: Ոմանց կգրավի այս պայծառությունը:

Մենք ունենք մեր սեփական դերը երկրի վրա՝ սկսած դուստրից, մորից, ղեկավարից և ուսուցչից մինչև քույր, աշխատավարձ

վաստակող, կին և այլն: Յուրաքանչյուրը ազդեցիկ է: Յուրաքանչյուր դեր կունենա բարոյական ուժ, երբ մենք արտացոլենք ավետարանական ճշմարտություններ և տաճարային ուխտեր մեր կյանքում:

Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնն ասել է. «Բոլոր իրավիճակներում մայրը կարող է մի ազդեցություն գործադրել, որին հավասարը չունի որևէ այլ մարդ, որևէ այլ փոխհարաբերության մեջ»:[8]

Երբ մեր երեխաները փոքր էին, ես ինձ զգում էի որպես նավի կապիտանի օգնական իմ ամուսնու՝ Դեյվիդի հետ և ես պատկերացնում էի մեր 11 երեխաներին որպես փոքրիկ նավակների նավատորմ, որոնք լողում էին մեր շուրջը նավահանգստում, պատրաստվելով դուրս գալու ծով աշխարհը: Դեյվիդը և ես անհրաժեշտություն էինք զգում խորհրդակցել Տիրոջ հետ ուղեցույցի վերաբերյալ ամեն օր՝ մեր փոքրիկ նավատորմի հետ լավագույն ուղղությամբ նավարկելու համար:

Իմ օրերը լցված էին մոռացվող բաներով, ինչպես օրինակ լվացքը ծալելը, երեխաներին գրքեր կարդալը և ճաշի համար ջեռոցում միասին քեսեռոլ դնելը: Երբեմն մեր տների նավահանգստում մենք չենք կարողանում տեսնել, որ այս փոքրիկ, կրկնվող գործերով, ներառյալ ընտանեկան աղոթքը, սուրբ գրքերի ուսումնասիրությունը և ընտանեկան երեկոները, այն փոքր բաներն են, որոնցով իրականանում են մեծ բաները: Բայց ես վկայում եմ, որ հենց այս գործերն են, որ ունեն հավերժական նշանակություն: Մեծ ուրախություն է գալիս, երբ այդ փոքրիկ նավակները՝ մեր երեխաները, աճում են՝ դառնալով նավագնացության հզոր նավեր՝ լցված ավետարանի լույսով և պատրաստ «մտնելու Աստծո ծառայության մեջ»:[9] Հավատքի և ծառայության մեր փոքր գործերից է, որ մեզանից շատերը կարողանում են շարունակել Աստծո հետ և ի վերջո բերում հավերժական լույս և փառք մեր ընտանիքին, մեր ընկերներին և մեր մերձավորներին: Դուք իսկապես ազդեցության շրջանակ ունեք ձեզ հետ:

Մտածեք այն ազդեցության մասին, որ կարող է ունենալ Երեխաների Միության տարիքի աղջիկը իր ընտանիքի վրա: Մեր դստեր հավատքն օրհնեց մեր ընտանիքը, երբ մենք կորցրեցինք մեր փոքրիկ տղային զբոսայգում: Ընտանիքը խելահեղորեն նետվեց նրան որոնելու: Ի վերջո մեր 10 տարեկան աղջիկը քաշեց թևիցս և ասաց. «Մամ, չաղոթե՞նք»: Նա ճիշտ էր: Ընտանիքը հավաքվեց դիտորդների ամբոխի մեջտեղում և աղոթեց՝ գտնելու մեր երեխային: Մենք գտանք նրան: Բոլոր Երեխաների Միության աղջիկներին ես ասում եմ. «Խնդրում եմ, շարունակեք հիշեցնել ձեր ծնողներին աղոթել»:

Այս ամառ ես պատիվ ունեցա մասնակցել 900 հոգուց բաղկացած երիտասարդ կանանց ճամբարին Ալյասկայում: Նրանք խորը ազդեցություն թողեցին ինձ վրա: Նրանք ճամբար էին եկել հոգեպես պատրաստված, Մորմոնի գիրքը կարդացած և «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը» անգիր սերտած: Ճամբարի երրորդ գիշերը բոլոր 900 երիտասարդ կանայք կանգնեցին միասին և արտասանեցին ողջ այդ փաստաթուղթը բառ առ բառ:

Հոգին լցրել էր լայնարձակ դահլիճը և ես տենչում էի մասնակցել: Բայց ես չկարողացա: Ես չէի վճարել անգիր սերտելու գինը:

Ես այժմ սկսել եմ անգիր սովորել «Կենդանի Քրիստոսը» փաստաթղթի բառերը, ինչպես այդ քույրերն էին արել, և նրանց ազդեցության շնորհիվ ես ավելի լիովին եմ զգում հաղորդության ուխտը՝ միշտ հիշելու Փրկչին, երբ ես կրկին ու կրկին կրկնում եմ Քրիստոսի մասին Առաքյալների վկայությունը: Հաղորդությունն ավելի խորն իմաստ է ձեռք բերում ինձ համար:

Իմ հույսն է Սուրբ ծննդյան նվեր մատուցել Փրկչին այս տարի «Կենդանի Քրիստոսը» անգիր սերտելով և իմ սրտում այն փայփայելով մինչև դեկտեմբերի 25-ը: Հուսով եմ, որ կարող եմ լինել բարու համար ազդեցություն, ինչպես Ալյասկայի քույրերը եղան ինձ համար:

Կարո՞ղ եք ինքներդ ձեզ գտնել. «Կենդանի Քրիստոսը» այս փաստաթղթի հետևյալ խոսքերում. «Նա կոչ արեց բոլորին հետևել Իր օրինակին: Նա քայլեց Պաղեստինի

ճանապարհներով, բուժելով հիվանդներին, տեսողություն շնորհելով կույրերին, կենդանացնելով մահացածներին»:[10]

Մենք, Եկեղեցու քույրերս չենք քայլում Պաղեստինի ճանապարհներով՝բուժելով հիվանդներին, բայց մենք կարող ենք աղոթել և Քավության ապաքինող սերը գործադրել որևէ թուլացած և լարված փոխհարաբերության ժամանակ:

Չնայած մենք չենք կարող կույրին տեսողություն շնորհել Փրկչի ձևով, մենք կարող ենք վկայել հոգեպես կույրերին փրկության ծրագրի մասին: Մենք կարող ենք բացել նրանց հասկացողության աչքերը՝ հավերժական ուխտերում քահանայության զորության անհրաժեշտության վերաբերյալ:

Մենք չենք կենդանացնի մահացածներին ինչպես Փրկիչն արեց, բայց մենք կարող ենք օրհնել մահացածներին՝ գտնելով նրանց անունները տաճարային աշխատանքի համար: Ապա մենք իսկապես կբարձրացնենք նրանց իրենց հոգևոր բանտից և կառաջարկենք նրանց հավերժական կյանքի ուղին:

Ես վկայում եմ, որ մենք ունենք կենդանի Փրկիչ՝ Հիսուս Քրիստոսին և Նրա զորությամբ և լույսով մենք կկարողանանք ետ հրել աշխարհի խավարը, բարձրաձայնել մեր իմացած ճշմարտությունը և ազդել ուրիշների վրա՝ գալու դեպի Նա: Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Մ. Ռասսել Բալլարդ, «Տղամարդիկ և կանայք և Քահանայության զորությունը» *Լիահոնա,* սեպ. 2014, 36:
2. Հարիեթ Ռ. Ուխդորֆ, *Լույսը, որով կիսվում ենք* (Deseret Book Company, 2014), 41, օգտագործվել է թույլտվությամբ:
3. Թոմաս Ս. Մոնսոն, «Ես կույր էի, բայց այժմ տեսնում եմ» *Լիահոնա,* հուլիս 1999, 69:
4. Վարդապետություն և Ուխտեր 50.24:
5. Վարդապետություն և Ուխտեր 88.7:
6. George Q. Cannon, in *Preparing to Enter the Holy Temple* (booklet, 2002), 36.
7. Մոսիա 3.19:
8. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Կանանց բարոյական ուժը» *Լիահոնա,* նոյ. 2013, 30:
9. Վարդապետություն և Ուխտեր 4.2:
10. «Կենդանի Քրիստոսը՝ Առաքյալների վկայությունը» *Լիահոնա,* ապր. 2000, 2:

Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական

Ուրախությամբ ապրել ավետարանով

Վստահեք Հիսուս Քրիստոսի փրկագնող զորությանը: Պահեք Նրա օրենքներն ու պատվիրանները: Այլ կերպ ասած՝ ուրախությամբ ապրեք ավետարանով:

Իմ սիրելի քույրեր, իմ սիրելի ընկերներ և Հիսուս Քրիստոսի օրհնված աշակերտներ, ինձ համար մեծ պատիվ է լինելու ձեզ հետ, մինչ մենք բացում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու մեկ այլ գերագույն համաժողով: Առաջիկա շաբաթվա ընթացքում Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալները կհանդիպեն բոլոր Բարձրագույն Իշխանավորների և գերագույն օժանդակ կազմակերպությունների ղեկավարների հետ, և մեր համաշխարհային համաժողովի մնացած նիստերը տեղի կունենան եկող շաբաթ և կիրակի օրերին: Ես հատկապես երախտապարտ եմ Թոմաս Ս. Մոնսոնի՝ մեր օրերի Աստծո մարգարեի համար, ով խնդրել է ինձ ներկայացնելու Առաջին Նախագահությանը Եկեղեցու քույրերին հղված իմ ելույթի ժամանակ:

Մինչ ես խորհում էի, թե ինչ պետք է ասեմ, իմ մտքերը հետ գնացին դեպի մի կնոջ շուրջ, ով կերտել է իմ կյանքը և օգնել ինձ անցնելու մահկանացու կյանքի դժվարությունների միջով: Ես երախտապարտ եմ իմ տատիկին, ով տասնամյակներ առաջ որոշեց իր ընտանիքին տանել մորմոնների հաղորդության ժողովին: Ես երախտապարտ եմ Քույր Էվիգին, մի ծեր գերմանացի տիկնոջ, ում անունը անգլերենով թարգմանած նշանակում է «Քույր Հավերժական»: Նա այն մեկն էր, ով այդ համարձակ և հրաշալի հրավերքը հղեց իմ տատիկին: Ես անչափ երախտապարտ եմ իմ մայրիկին, ով իր չորս զավակներին առաջնորդեց Երկրորդ Համաշխարհային Պատերազմի իրարանցումների միջով: Ես նաև շնորհակալ եմ իմ դստեր, թոռներիս և ապագա սերունդներիս հավատարիմ կանանց համար, ովքեր մի օր կհետևեն:

Եվ իհարկե, ես հավերժորեն երախտապարտ եմ իմ կնոջ՝ Հարիետի համար, ով հիացրեց ինձ իր երիտասարդության տարիներին, որպես մայր կրեց մեր երիտասարդ ընտանիքի ծանր բեռը, կանգնած է կողքիս որպես կին և սիրում ու փայփայում է մեր զավակներին, թոռներին և ծոռներին: Նա եղել է մեր տան ուժը թե՛ լավ, թե՛ վատ օրերին: Նա արևի շող է բերում բոլոր նրանց կյանք, ովքեր ճանաչում են նրան:

Ի վերջո, ես շատ շնորհակալ եմ ձեզ բոլորիդ, ողջ աշխարհի միլիոնավոր տարբեր տարիքի քույրերի համար, ովքեր այդքան շատ բան եք անում Աստծո արքայությունը կառուցելու համար: Ես երախտապարտ եմ ձեզանից այն անհամար եղանակների համար, որոնցով դուք ոգեշնչում, դաստիարակում և օրհնում եք ձեզ շրջապատողներին:

Աստծո դուստրեր

Ես ուրախ եմ լինելու Աստծո այսպիսի բազմաթիվ դուստրերի մեջ: Երբ մենք երգեցինք «Զավակն եմ ես Աստծո» օրհներգը, խոսքերը թափանցեցին մեր սրտերը: Մտորմունքը այն ճշմարտության վերաբերյալ, որ մենք երկնային ծնողների զավակներն ենք,[1] տալիս է մեզ հասկացողություն մեր ծագման, նպատակ և ապագայի վերաբերյալ:

Լավ է հիշել, որ դուք մշտապես կլինեք Աստծո զավակը: Այդ գիտելիքը ձեզ ուժ կտա ձեր կյանքի ամենադժվարին պահերին, և կոգեշնչի ձեզ իրագործելու զարմանահրաշ բաներ: Սակայն կարևոր է նաև հիշել, որ հավերժական ծնողների դուստր լինելը տարբերակում չէ, որը դուք վաստակել եք կամ երբևէ կկորցնեք: Դուք մշտապես և հավերժորեն կմնաք, որպես Աստծո դուստր: Ձեր Երկնային Հայրը բարձր նկրտումներ ունի ձեր նկատմամբ, սակայն ձեր աստվածային ծագումը, *ինքնուրույն*, չի երաշխավորում ձեզ աստվածային ժառանգություն: Աստված ձեզ այստեղ է ուղարկել նախապատրաստվելու ապագայի համար, որն ավելի մեծ է, քան որևէ այլ բան, որ դուք կարող եք պատկերացնել:

Աստծո խոստացված օրհնությունները հավատարիմներին փառահեղ և ոգևորիչ են: Դրանց թվում են՝ «գահեր, թագավորություններ, իշխանություններ, և զորություններ, տիրապետություններ, բոլոր բարձրությունները և խորությունները»:[2] Եվ այդ անըմբռնելի օրհնությունների համար որակավորվելը պահանջում է ավելին, քան հոգևոր ծննդական կամ «Աստծո զավակի անդամության քարտ»:

Սակայն, ինչպե՞ս ենք մենք հասնում դրանց:

Փրկիչը մեր օրերում պատասխանել է այդ հարցին.

«Եթե դուք չմնաք իմ օրենքում, դուք չեք կարող հասնել այդ փառքին:

Քանզի նեղ է դուռը և անձուկ է ճանապարհը, որը տանում է դեպի վեհացում: . . .

. . . Հետևաբար, ընդունեք իմ օրենքը»:[3]

Այդ իսկ պատճառով մենք խոսում ենք աշակերտ լինելու ճանապարհով քայլելու վերաբերյալ:

Մենք խոսում ենք Աստծո պատվիրաններին հնազանդվելու վերաբերյալ:

Մենք խոսում ենք ուրախությամբ ավետարանով ապրելու վերաբերյալ՝ քո ողջ սրտով, ուժով, մտքով և հոգով:

Աստված գիտե մի բան, որը մենք չգիտենք

Այնուհանդերձ, մեզանից ոմանք Աստծո պատվիրաններին հնազանդվելով միշտ չէ, որ այդքան ուրախ են զգում: Եկեք համաձայնեք, որ կան այնպիսիք, որոնք դժվարին են թվում կամ քիչ գրավիչ՝ պատվիրաններ, որոնց մենք մոտենում ենք երեխայի խանդավառությամբ, երբ նա նստած է առողջ, բայց չսիրած բանջարեղենի ափսեի առաջ: Մենք կրճտացնում ենք մեր ատամները և ստիպում մեզ հնազանդվել, որպեսզի մենք կարողանանք առաջ շարժվել դեպի ավելի ցանկալի գործունեության:

Հավանաբար այդպիսի պահերին մենք մեզ հարց ենք տալիս, «Արդյո՞ք մենք իսկապես պետք է հնազանդվենք Աստծո *բոլոր* պատվիրաններին»:

Այդ հարցին իմ պատասխանը պարզ է.

Իմ կարծիքով, Աստված մի բան գիտի, որը մենք չգիտենք՝ բաներ, որոնք մեր հասկացողությունից վեր են: Մեր Երկնային Հայրը հավերժական էակ է, ում փորձառությունը, իմաստությունը և խելքը անսահման մեծ են, քան մերը:[4] Ոչ միայն դա, այլ Նա նաև հավերժորեն սիրող է, կարեկցող և կենտրոնացած է մի օրհնյալ նպատակի շուրջ՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը:[5]

Այլ կերպ ասած, Նա ոչ միայն *գիտի*, թե ինչն է մեզ համար լավագույնը, Նա նաև անհամբերությամբ *ցանկանում է, որ մենք ընտրենք*, թե ինչն է մեզ համար լավագույնը:

Եթե դուք ձեր սրտում հավատում եք սրան, եթե դուք իսկապես հավատում եք մեր երկնային Հոր մեծ առաքելությանը, որն է վեհացնել և փառավորել Իր զավակներին և որ Նա ամենալավը գիտի, թե ինչպես դա անել, ապա արդյոք խելամիտ չէ ընդունել և հետևել Նրա պատվիրաններին, նույնիսկ նրանց, որոնք թվում են դժվարին: Արդյո՞ք մենք չպետք է փայփայենք այն կարճ գրառումները, որոնք Նա տվել է, որ ուղղորդեն մեզ մթության և մահկանացու կյանքի փորձությունների միջով: Նրանք նշում են դեպի երկնային տուն մեր ետդարձի ճամփան: Երկնային Հոր ուղին ընտրելով, դուք աստվածային հիմք եք դնում որպես Աստծո դուստր ձեր անձնական զարգացման համար, ով կօգնի ձեզ ձեր ողջ կյանքի ընթացքում:

Իմ կարծիքով, մեր մարտահրավերների մի մասն է կազմում այն, որ մենք մտածում ենք, որ Աստված բոլոր Իր օրհնությունները կողպել է երկնքի մի մեծ ամպի մեջ, չցանկանալով այն մեզ տալ, քանի դեռ մենք չենք ենթարկվել Նրա սահմանած որոշ խիստ, պատերնալիստական պահանջների հետ: Սակայն պատվիրաններն ինքնին այդպիսին չեն: Իրականում, Երկնային Հայրը անընդհատ օրհնություններ է անձրևի նման թափում մեզ վրա: Մեր վախի, կասկածամտության և մեղքի պատճառով, որը կարծես անձրևանոցի նման արգելափակում է այդ օրհնությունները մեզ հասնելուց:

Նրա պատվիրանները սիրալիր ցուցումներ և աստվածային օրհնություն են անձրևանոցը փակելու համար, որպեսզի մենք կարողանանք շարունակաբար ստանալ երկնային օրհնությունների անձրևի տարափը:

Մենք պետք է ընդունենք, որ Աստծո պատվիրանները չեն հանդիսանում լոկ լավ մտքերի ցուցակ: Դրանք «կյանքի վիրուսներ» չեն համացանցի բլոգից կամ ոգեշնչող մտքեր Pinterest էջից: Դրանք աստվածային խորհուրդներ են հիմնված հավերժական ճշմարտությունների վրա, տրված են բերելու «խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում»:[6]

,Այսպիսով, մենք ունենք ընտրություն: Մի կողմից աշխարհի կարծիքն է իր անընդհատ փոփոխվող տեսություններով և կասկածելի շարժառիթներով: Մյուս կողմից Աստծո խոսքերն են տրված Իր զավակներին՝ իր հավերժական իմաստությունը, Նրա հատուկ խոստումները, և Նրա սիրող ցուցումները՝ փառքով, սիրով և վեհությամբ վերադառնալու Նրա ներկայության մեջ:

Ընտրությունը ձերն է:

Ծովերի, ավազների և անվերջանալի աստղերի Արարիչը ձեզ է դիմում հենց այս օրը: Նա առաջարկում է մեծագույն բաղադրատոմս երջանկության, խաղաղության և հավերժական կյանքի համար:

Այս փառահեղ օրհնություններին որակավորվելու համար, դուք պետք է խոնարհեցնեք ձեզ, գործադրեք հավատք, ձեզ վրա վերցնեք Քրիստոսի անունը, հիշեք նրան ձեր խոսքերում և գործերում և վճռականորեն «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում, և բոլոր բաներում, և բոլոր տեղերում»:[7]

Հնազանդության *Ինչուն*

Երբ հասկանաք Աստծո և Նրա պատվիրանների իրական բնույթը, դուք նաև ավելի լավ կհասկանաք ինքներդ ձեզ՝ և ձեր գոյության աստվածային նպատակը: Դրանից, պատվիրաններին հետևելու շարժառիթը փոխվում է և ձեր սրտի ցանկությունն է դառնում ուրախությամբ ապրելու ավետարանով:

Օրինակ, նրանք, ովքեր Եկեղեցու ժողովներին հաճախելը դիտում են որպես՝ Աստծո հանդեպ իրենց սիրո, խաղաղություն գտնելու, ուրիշներին բարձրացնելու, Հոգին փնտրելու և նորացնելու, Հիսուս Քրիստոսին հետևելու իրենց նվիրվածությունը, կունենան ավելի հարուստ փորձառություն, քան նրանք, ովքեր այցելում են ժողովներին առանց ցանկության: Քույրեր, շատ *շատկարևոր է*, որ մենք հաճախենք մեր կիրակնօրյա ժողովներին, սակայն ես առավել քան համոզված եմ, որ մեր Երկնային Հայրը նույնիսկ ավելի շատ մտահոգված է մեր հավատքի և ապաշխարության վերաբերյալ, քան վիճակագրության համար հաճախելու վերաբերյալ:

Եվս մեկ օրինակ.

Երկու փոքր զավակների տեր միայնակ մայրը վերջերս հիվանդացավ ջրծաղիկով: Իհարկե, շատ չանցած նրա երեխաները նույնպես հիվանդացան: Իր և իր փոքր զավակների մասին հոգ տանելու առաջադրանքը չափազանց ծանր էր երիտասարդ մոր համար: Եվ, որպես հետևանք, սովորական անբասիր տունը դարձավ թափթփված և խառնաշփոթ: Կեղտոտ սպասքը կուտակվել էր լվացարանում և շորերը թափթփված էին ամենուր:

Մինչ նա տանջվում էր արտասվող երեխաների հետ և ցանկանում ինքն էլ արտասվել, դռան թակող լսվեց այդ պահին: Դա նրա այցելող քույրերն էին: Նրանք տեսան երիտասարդ մոր հյուծվածությունը: Նրանք տեսան նրա տունը, նրա խոհանոցը: Նրանք լսեցին երեխաների լացը:

Այժմ, երբ այս քույրերը միայն մտահոգված լինեին իրենց հանձնարարված ամսեկան այցելությունն ավարտելու վերաբերյալ, որպես կրկնվող առաջադրանք, հավանաբար նրանք մորը կտային մի ափսե կարկանդակ, նշելով, որ նրանք անցած շաբաթ կարոտել են նրան Սփոփող Միության դասին և կասեն սրա նման մի բան. «Մեզ տեղյակ պահիր, եթե որևէ օգնության կարիք ունենաս»: Այնուհետև նրանք ուրախությամբ կշարունակեին ճանապարհը, շնորհակալ լինելով, որ նրանք ևս մեկ ամսի 100 տոկոս են ապահովել:

Բարեբախտաբար, այդ քույրերը Քրիստոսի ճշմարիտ աշակերտներ էին: Նրանք նկատեցին իրենց քրոջ կարիքները և գործի դրեցին իրենց բազմաթիվ տաղանդներն ու փորձառությունը: Նրանք մաքրեցին քառսը, լույս ու մաքրություն հաստատեցին տանը և զանգեցին ընկերոջը՝ որոշ մթերք բերելու: Երբ նրանք վերջում ավարտեցին իրենց գործը և հաջողություն մաղթեցին, նրանք այդ երիտասարդ մորը թողեցին արցունքների մեջ՝ երախտագիտության և սիրո արցունքներ:

Այդ պահից սկսված երիտասարդ մոր կարծիքը այցելող քույրերի մասին փոխվեց: «Ես գիտեմ»,- նա ասաց,- «որ ես միայն ստուգման նշան չեմ ինչ-որ մեկի անելիքների ցանկի մեջ»:

Այո, այցելող քույրերը պետք է հավատարիմ լինեն իրենց ամսեկան այցելությունները կատարելիս, առանց մոռանալու այդ պատվիրանի հիմքում ընկած *«ինչու»*-ն՝ սիրել Աստծուն և մերձավորներին:

Երբ մենք Աստծո պատվիրաններին և Նրա արքայությունը կառուցելու մեր մասնաբաժնին վերաբերվում ենք որպես մի բանի, որը կարելի է ջնջել մեր անելիքների ցանկից, մենք կորցնում ենք աշակերտ լինելու սիրտը: Մենք կարոտում ենք այն վերելքը, որը գալիս է մեր Երկնային Հոր պատվիրաններով ուրախությամբ ապրելիս:

Աշակերտության ուղով քայլելը պարտադիր չէ, որ դառը փորձություն լինի: Այն «քաղցր է այն ամենից, ինչ քաղցր է»:[8] Այն բեռ չէ, որը մեզ ցած է քաշում: Աշակերտ լինելը բարձրացնում է մեր հոգին և լուսավորում մեր սրտերը: Այն մեզ ոգեշնչում է հավատքով, հույսով և գթասրտությամբ: Խավար պահերին այն մեր հոգին լցնում է լույսով, իսկ վշտի ժամանակ՝ հանդարտությամբ:

Այն մեզ աստվածային զորություն և տևական ուրախություն է պարգևում:

Ուրախությամբ ապրել ավետարանով:

Իմ սիրելի քույրեր, լինեք դուք 8, թե 108 տարեկան, կա մի բան, որը ես հույսով եմ դուք իսկապես հասկանում եք և գիտեք.

Դուք սիրված եք:

Դուք թանկ եք ձեր երկնային ծնողների համար:

Լույսի և կյանքի անսահման ու հավերժական Արարիչը ճանաչում է ձեզ: Նա մտածում է ձեր մասին:

Այո, Աստված ձեզ սիրում է այսօր և հավիտյան:

Նա չի սպասում, որ դուք հաղթահարեք ձեր թուլություններն ու վատ սովորությունները և նոր սիրի ձեզ: Նա սիրում է ձեզ այսօր, և ամբողջությամբ հասկանում ձեր մաքառումները: Նա տեղյակ է, որ դուք Նրան եք դիմել սրտաբեկ և հուսադրող աղոթքով: Նա գիտի այն պահերի մասին, երբ մթնշաղի պահին դուք հավատացել եք՝ նույնիսկ աճող խավարի ժամանակ: Նա գիտի ձեր տառապանքների մասին: Նա գիտի ձեր զղջումի վերաբերյալ, երբ դուք սխալվել եք կամ ձախողել: Եվ դեռ Նա սիրում է ձեզ:

Եվ Աստված գիտի ձեր հաջողության մասին, չնայած դրանք կարող են չնչին թվալ ձեզ համար, Նա հասկանում և գնահատում է դրանցից յուրաքանչյուրը: Նա սիրում է ձեզ, որ դուք հասնում եք ուրիշներին օգնության: Նա սիրում է ձեզ, որ գտնում և օգնում եք ուրիշներին կրելու իրենց բեռը՝ նույնիսկ, երբ դուք ինքներդ եք տառապում:

Նա ձեր մասին գիտի ամեն ինչ: Նա ձեզ հստակ է տեսնում՝ Նա ձեզ ճանաչում է այնպիսին, ինչպիսին դուք իսկապես հանդիսանում եք: Եվ Նա սիրում է ձեզ այսօր և ընդմիշտ:

Արդյո՞ք դուք կարծում եք, թե մեր Երկնային Հոր համար կարևոր է, թե ձեր դիմահարդարումը, հագուստը, սանրվածքը և եղունգները կատարյալ են: Արդյո՞ք դուք կարծում եք, թե ձեր արժեքը Նրա մոտ փոխվում է կախված Instagram-ում կամ Pinterest-ում ձեր հետևորդների քանակից: Արդյո՞ք դուք կարծում եք, որ Նա ցանկանում է անհանգստանաք կամ ճնշվեք, երբ ոչ-ընկերը կամ ոչ-հետևորդը հետևում է ձեզ Facebook-ում կամ Twitter-ում: Արդյո՞ք դուք կարծում եք, որ արտաքին գրավչությունը, ձեր զգեստի չափսը կամ ժողովրդականությունը փոքր ինչ տարբերություն է մտցնում ձեր արժանիքի մեջ Նրա համար, ով ստեղծել է ողջ տիեզերքը:

Նա ձեզ սիրում է, ոչ թե նրա համար, թե ով եք դուք ներկայումս, այլ նաև փառք և լույս լինելու ձեր ներուժի և ցանկության համար:

Ավելին, քան դուք կարող եք պատկերացնել, Նա ցանկանում է, որ դուք հասնեք ձեր ճակատագրին՝ փառքով վերադառնալ ձեր երկնային տուն:

Ես վկայում եմ, որ դա իրագործելու եղանակը՝ եսասիրական ցանկություններն ու անարժան հավակնությունները զոհաբերության և ծառայության զոհասեղանին վայր դնելն է: Քույրեր, վստահեք Հիսուս Քրիստոսի փրկող զորությանը, պահեք Նրա օրենքները և պատվիրանները: Այլ խոսքերով ասած՝ ուրախությամբ ապրեք ավետարանով:

Իմ աղոթքն է, որ դուք ձեր կյանքում զգաք նորացված և մեծացված Աստծո հիասքանչ սերը, որ դուք գտնեք հավատք, վճռականություն և նվիրվածություն, սովորելու Աստծո պատվիրանները, գնահատեք դրանք ձեր սրտերում և ուրախությամբ ապրեք ավետարանով:

Ես խոստանում եմ, որ եթե դուք անեք դա, դուք կբացահայտեք ձեր լավագույն եսը՝ ձեր *իրական* եսը: Դուք կբացահայտեք, թե իսկապես ինչ է նշանակում լինել հավիտենական Աստծո՝ բոլոր ճշմարտությունների Տիրոջ դուստրը: Այդ ամենի մասին ես վկայում եմ և թողնում որպես Տիրոջ Առաքյալի իմ օրհնությունը ձեզ, Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: ■

Սոբրալ, Բրազիլիա

ՀՂՈՒՄՆԵՐ

1. God is not only our Ruler and Creator; He is also our Heavenly Father. All men and women are literally the sons and daughters of God. President Joseph F. Smith taught that "man, as a spirit, was begotten and born of heavenly parents, and reared to maturity in the eternal mansions of the Father, prior to coming upon the earth in a temporal [physical] body" (*Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* [1998], 335).
2. Վարդապետություն և Ուխտեր 132.19:
3. Վարդապետություն և Ուխտեր 132.21–22, 24:
4. Տես Եսայիա ԾԵ.9:
5. Տես Մովսես 1.39:
6. Վարդապետություն և Ուխտեր 59.23:
7. Մոսիա 18.9:
8. Ալմա 32.42:

Համաժողովի պատմությունների ցուցիչ

Ստորև տրվում է գերագույն համաժողովի ելույթներից ընտրված փոքրաառությունների մի ցանկ, որը կարելի է օգտագործել անձնական ուսումնասիրության, ընտանեկան երեկոների և ուսուցանման այլ առիթների ժամանակ: Համարը ցույց է տալիս ելույթի առաջին էջը:

ԽՈՍՆԱԿ	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Նիլ Լ. Անդերսեն	(28) Նիլ Լ Անդերսենն ամրացնում է Ջոզեֆ Սմիթի մասին վերադարձած միսիոների վկայությունը:
Մ. Ռասսել Բալլարդ	(89) Ուղևարը գետով նավարկողներին նախազգուշացնում է նավակների մեջ մնալու կարևորության մասին, երբ նրանք պատրաստվում են անցնել արագ հոսող ջրերով:
Դեյվիդ Ա. Բեդնար	(107) Փոքր վնասվածքի համար բժշկական օգնություն ստանալուց հետո, Դեյվիդ Ա. Բեդնարի որդին նույն օգնությունն առաջարկում է իր ընկերներին:
Լինդա Ք. Բըրթն	(111) Լիաժամկետ միսիոները վեհացած ոգով ավարտում է իր միսիան, նվիրաբերելով իր սիրտը, միտքը և ուժերը Տիրոջը:
Թեդ Ռ. Քալիստեր	(32) Բեն Քարսոնի մայրը ամբողջովին փոխում է նրա կյանքը: Լիբանացի մի աղջիկ սովորում է ավետարանը իր մորից: Թեդ Ռ. Քալիստերի ծնողները սովորեցնում են նրան ավետարանը:
Քրեյգ Ս. Քրիսչենսեն	(50) Մի քանի սարկավագներ պատմում են, թե ինչու են հիանում Նախագահ Մոնսոնով: Քրեյգ Ս. Քրիսչենսենը վկայություն է ստանում, ուսումնասիրելով Մորմոնի Գիրքը:
Դ. Թոդ Քրիստոֆերսոն	(16) Հենրի V թագավորը իր մարդկանց ասում է, որ յուրաքանչյուրը իր հոգու տերն է: Իր համար հոգ տանելուց հրաժարվող տղամարդը համաձայնվում է, որ իրեն տանեն գերեզմանոց:
Քվենթին Լ. Քուք	(46) Լյուսին, *Փինաթս* երգիծական շարքից, արդարացումներ է փնտրում գնդակները բաց թողնելու համար: Երիտասարդ տղամարդը ընտրություններ է կատարում, որոնք հակասում են միսիայում ծառայելու և տաճարում ամուսնանալու նրա նպատակներին: Քոլեջի մարզիչի այցը հաստատում է իր հոր խորհրդին հետևելու Քվենթին Լ. Քուքի որոշումը:
Դին Մ. Դեյվիս	(53) Ֆիլիպիներում Եկեղեցին և անդամները փրկում են անդամներին և ոչ անդամներին կործանարար թայֆունից հետո:
Շերիլ Ա. Էսփլին	(12) Երիտասարդ Կանանց ղեկավարը սովորում է հաղորդության զորության մասին: 96-ամյա տղամարդն այցելում է եկեղեցի, որպեսզի ճաշակի հաղորդությունից:
Հենրի Բ. Այրինգ	(59) Նորադարձն օգնում է երիտասարդ Հենրի Բ. Այրինգին և նրա եղբորը պատրաստվել քահանայության ծառայությանը: Հենրի Բ. Այրինգի հայրը և եպիսկոպոսը վստահություն են ցուցաբերում նրա հանդեպ՝ խնդրելով օգնել: Տնային ուսուցման ավագ զուգընկերը վստահություն է ցույց տալիս Հենրի Բ. Այրինգի որդու հանդեպ: (70) Հենրի Բ. Այրինգի մայրն աղոթում է, որ Հենրին լսի Աստծո խոսքը իր խորհրդի մեջ: Եկեղեցու ղեկավարները Այդահոյում, ԱՄՆ, հայտնություն են ստանում ջրհեղեղից տուժածներին օգնելու վերաբերյալ: Կնքման զորություն ստացող տղամարդու կինը գիտի հայտնությամբ, որ իր ամուսինը կանչվել է Աստծո կողմից:
Էդուարդո Գավարետ	(37) Որպես լիաժամկետ միսիոներ Էդուարդո Գավարետը սովորում է դաս Փրկչի ձայնին հետևելու մասին: Ուրուգվայում 14-ամյա աղջնակի ծնողները և քույրերն ու եղբայրները հետևում են նրա օրինակին և միանում Եկեղեցուն: Էդուարդո Գավարետի ծնողները ընդունում են միսիոներներին և նրանց ուղերձը:
Կառլոս Ա. Գոդոյ	(96) Իր հայրապետական օրհնության մեջ խոստացված օրհնությունները ստանալու համար Կառլոս Ա. Գոդոյը՝ իր կնոջ աջակցությամբ լրացուցիչ կրթություն է ստանում:
Ռոբերտ Դ. Հեյլս	(80) Երիտասարդ Ռոբերտ Դ. Հեյլսը վկայություն է ստանում, երբ սովորում է Աստվածության մասին իր ծնողներից, ուսուցիչներից, սուրբ գրություններից և Սուրբ Հոգուց:
Ջեֆրի Ռ. Հոլլանդ	(40) Թոմաս Ս. Մոնսոնը վերադառնում է Գերմանիայից իր հողաթափերով նրանից հետո, երբ նվիրաբերում է իր կոշիկները և լրացուցիչ կոստյումն ու վերնաշապիկները:
Լարի Ս. Քաչեր	(104) Լա Ս. Քաչերը և նրա կինը ընկան ջրային հոսանքի մեջ, սակայն կարողացան հասնել ափ ի շնորհիվ աստվածային միջամտության: Երկու տղամարդ կատարում են ընտրություններ, որոնք հեռացնում են նրանց ընտանիքները Եկեղեցուց: Լարի Ս. Քաչերի կնոջ ծնողները օրհնում են իրենց սերունդներին՝ ապրելով ավետարանով և ուսուցանելով այն իրենց զավակներին:
Յորգ Քլեբինգաթ	(34) Յորգ Քլեբինգաթը խորհուրդ է տալիս Ուկրաինա Կիև միսիայից մի քրոջ չտրվել իր թուլություններին:
Նեյլ Ֆ. Մերիոթ	(117) Նիլ Ֆ. Մերիոթը հեռանում է տաճարից, իմանալով, որ կարող է վստահել Փրկչին: Նիլ Ֆ. Մերիոթի դուստրը խրախուսում է իր ընտանիքին աղոթել, երբ ընտանիքը կորցնում է իրենց փոքր տղային: Ալյասկայում ինը հարյուր երիտասարդ կանայք անգիր արտասանում են «Կենդանի Քրիստոս»-ից:
Հյուգո Ի. Մարտինեզ	(102) Նախագահ Մոնսոնը սպասավորում է մի հոր, ում դուստրը հիվանդ է: Եղբայրները փոթորկից հետո ջուր են բերում Մարտինեզի ընտանիքին:
Թոմաս Ս. Մոնսոն	(67) Ականակիրը վնասում է *Բիսմարկ* ռազմանավի ղեկը, ինչի հետևանքով այն չի կարողանում հետևել նախատեսված ուղով: (86) Եկեղեցու անդամները Կանադայում հաճախակի ացելում են Գերմանիայից գաղթաց զույգերի տուն, որպեսզի ճաշակեն այնտեղ տիրող խաղաղ ոգին:
Ռասսել Մ. Նելսոն	(74) Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալին վիրահատելուց հետո Ռասսել Մ. Նելսոնը վկայություն ունեցավ, որ Նախագահ Քիմբալը պետք է մարգարե դառնար:
Դալլին Հ. Օուքս	(25) Կնոջ համբերատարության և բարության շնորհիվ ոչ անդամի ամուսինը որոշում է մկրտվել:
Ալլան Ֆ. Փաքեր	(99) Կենտրոնանալով փայտ կոտրելու վրա, երիտասարդ Ալլան Ֆ. Փաքերը մոռանում է հանել իր կացնի պատյանը:
Բոյդ Ք. Փաքեր	(6) Կինը հասկանում է, որ Փրկիչն արդեն վճարել է այն սարսափելի սխալի համար, որն արվել է իր հանդեպ:
Լ. Թոմ Փերի	(43) Նախագահ Հարոլդ Բ. Լիի թոռը հիշեցնում է իր մորը քնելուց առաջ աղոթքի կարևորության մասին:
Լին Գ. Ռոբինս	(9) Նախագահ Բոյդ Ք. Փաքերը հարցնում է Լին Գ. Ռոբբինսին, թե որ կողմ է նա նայում, հիշեցնելով նրան, որ նա ներկայացնում է մարդկանց մարգարեին:
Ջին Ա. Սթիվենս	(114) Ջին Ա. Սթիվենսի ծնողները ամուր պահում են իրենց ուխտերը և Տիրոջ հանդեպ սերը: Երիտասարդ կանայք պատրաստվում են տաճարային ուխտերին:
Դիտեր Ֆ. Ուխդորֆ	(56) Տղամարդը տարված է իր հարևանի բակի խտուտիկներով: Բանկի կողոպտիչը կիտրոնի հյութը քսում իր դեմքին, մտածելով, որ այդպես անտեսանելի կդառնա: Ամուր թվացյալ ծխում 11 ամուսնություններ ավարտվել են ամուսնալուծությամբ: (120) Այցելող ուսուցիչները գալիս են օգնելու երկու հիվանդ երեխաներով միայնակ մորը:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը խոսում է գերագույն համաժողովի կիրակնօրյա նիստին:

«Ոգեշնչված ուղերձների երկու փառավոր օր»

«Ունենք վայելեցինք ոգեշնչված ուղերձների երկու փառավոր օր», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 184-րդ կիսամյա գերագույն համաժողովի փակմանը, կիրակի օրը, հոկտեմբերի 5-ին, 2014թ.:

Այդ ուղերձները պարունակում են վկայությունը զարգացնելու կարևորությունը, ինչը թույլ կտա մեզ դիմանալ ցանկացած իրավիճակներում, հետևել Փրկչի ուղով և դառնալ նվիրված աշակերտ, հետևել և սատարել մարգարեներին, իմաստությամբ օգտագործել ընտրության ազատությունը և դարձնել տունը սիրո, ապահովության, օրինակի և ավետարանի ուսուցման վայր:

Շաբաթ օրը իր բացման խոսքում Նախագահ Մոնսոնը նշեց, որ Եկեղեցին շարունակում է աճել: «Այժմ մենք 15 միլիոնը գերազանցող ուժ ենք և շարունակում ենք աճել մեր թվով», - ասաց Նախագահ Մոնսոնը: «Մեր միսիոներական ջանքերը առանց խոչընդոտների առաջ են ընթանում: Մենք ունենք ավելի քան 88000 ծառայող միսիոներ, որոնք տարածում են ավետարանը աշխարհով մեկ»:

Շաբաթ ցերեկային նիստին Յոթանասունի Առաջին Քվորումից Երեց Կառլոս Հ. Ամադոն և Երեց Վիլիամ Ռ. Վոքերը ազատվեցին իրենց ծառայություններից և ստացան պատվավոր պաշտոնյաների կարգավիճակ: Երեց Արայիկ Վ. Մինասյանը և Երեց Գվիդո Մենկանսը ազատվեցին Տարածքային Յոթանասունականների իրենց ծառայություններից:

Առաջին անգամ գերագույն համաժողովին մի քանի խոսնակ, որոնց մայրենի լեզուն անգլերենը չէ, հղեցին իրենց ուղերձները իրենց մայրենի լեզուներով: Երեց Չի Հոնգ (Սեմ) Վոնգը խոսեց կանտոներեն, Երեց Էդուարդո Գավարետը և Երեց Հյուգո Ե. Մարտինեզը՝ իսպաներեն, իսկ Երեց Կարլոս Ա. Գոդոյը՝ պորտուգալերեն:

21000 նստատեղ պարունակող Համաժողովների Կենտրոնը և Տաճարային Հրապարակի տարածքը Սոլթ Լեյք Սիթիում, Յուտա, լեփ-լեցուն էր համաժողովի բոլոր նիստերի ընթացքում, որոնք թարգմանվում էին ավելի քան 90 լեզուներով և հեռարձակվում ավելի քան 170 երկրներ և տարածքներ: Բացի դա, նիստերի հեռարձակումները մատչելի էին հեռուստատեսությամբ, ռադիոյով, կաբելային, արբանյակային և համացանցային միջոցներով, ներառյալ՝ շարժական կապի սարքերով: Այս համաժողովին լրանում է գերագույն համաժողովի ռադիոհեռարձակման 90-ամյակը և հեռուստահեռարձակման 65-ամյակը: ■

Ջոզեֆ Սմիթի մասին տեսաֆիլմը Հուլու-ով

Միլիոնավոր մարդիկ այժմ կարող են դիտել Եկեղեցու կողմից նկարահանված տեսաֆիլմը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: *Ջոզեֆ Սմիթ՝ Վերականգնման Մարգարե* ֆիլմը, որը պատկերում է Մարգարեի կյանքը և ժառանգությունը, այժմ մատչելի է անվճար դիտման համար տեսանյութեր հաղորդող Հուլու կայքով:

Սա Եկեղեցու առաջին ֆիլմն է, որը ներթափանցել է բացառիկ և խոշոր հեռարձակման ալիք, ինչպիսին է Հուլուն, որի միջոցով մոտ 4 միլիոն բաժանորդ կարող են ըստ պահանջի դիտել տեսանյութեր Roku, Apple TV, Xbox, PlayStation սարքերի, նաև սմարթֆոնների և պլանշետների միջոցով, որոնք միացված են համացանցին: Հուլու ալիքով ֆիլմերը ոչ միայն ավելի մատչելի են Եկեղեցու անդամներին, այլ նաև հնարավորություն են տալիս ավելի շատ մարդկանց, ովքեր ՎՕՍ չեն, դիտել և ավելին իմանալ Եկեղեցու մասին:

Անդամները, ովքեր դիտում են, մեկնաբանություններ են կատարում և գնահատում ֆիլմը, օգնում են մյուսներին ավելի հեշտ գտնել այն: ■

Տաճարների առաջընթացը շարունակվում է

«Երբ արդեն հայտարարված բոլոր տաճարները կառուցվեն և նվիրագործվեն, ամբողջ աշխարհում մենք կունենանք 170 գործող տաճար», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը 2014թ. հոկտեմբերի գերագույն համաժողովին: «Քանի որ մենք կենտրոնացնում ենք մեր ջանքերը արդեն հայտարարված տաճարների ավարտման վրա, այս պահին մենք չենք հայտարարում նոր տաճարների մասին: Սակայն ապագայում, երբ մենք գնահատենք կարիքները և որոշենք տարածքները, կարվեն հայտարարություններ լրացուցիչ տաճարների մասին»:

Նրանից հետո, երբ Նախագահ Մոնսոնը 2014թ. սեպտեմբերին վերանվիրագործեց Օգդեն Յուտա Տաճարը, ամբողջ աշխարհում Եկեղեցու գործող տաճարների թիվը հասավ 143-ի:

Ֆորտ Լոդերդեյլ Ֆլորիդա տաճարը նվիրագործվեց 2014թ. մայիսին Առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդական՝ Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆի կողմից: Ֆենիքս Արիզոնա տաճարը կնվիրագործվի 2014թ. նոյեմբերի 16-ին և առնվազն հինգ այլ տաճարներ կնվիրագործվեն կամ կվերանվիրագործվեն 2015թ.: ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ ՍԱՄՈՒԷԼ ՋԵՅՆ, ՎԻԴԵՈՅԻ ԿԱՐՈՒՄԻՑ, CHURCH NEWS

Օգդեն Յուտա տաճարը վերանվիրագործվեց 2014թ. սեպտեմբերի 21-ին:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ՍՊԱՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ցցերի և ծխերի խորհուրդների անդամները այժմ կարող են օգտվել Եկեղեցու նոր վեբ կայքից, որը կոչվում է Սպասավորման Միջոցներ՝ ministering.lds.org հասցեով, օգնելու համար անհատներին և ընտանիքներին հոգալ իրենց նյութական և հոգևոր կարիքները, ներառյալ բարդ և զգայուն խնդիրները: Իրենց ՎՕՍ հաշիվներով մուտք կարող են գործել նրանք, ովքեր ունեն ներկայիս կոչումներ ցցերի և ծխերի խորհուրդներում:

Նախկինում միայն եպիսկոպոսներին և ցցերի նախագահներին մատչելի ռեսուրսները այժմ թարմացվել են և լրացվել հատուկ հրահանգներով այն մասին, թե ինչպես օգնել բռնության զոհերին, կախվածությունից տառապողներին, ապագա միայնակ ծնողներին, մերկագրություն օգտագործողներին, նույն սեռի հանդեպ հակվածություն ունեցողներին և ֆինանսական ու զբաղվածության հետ կապված խնդիրներ ունեցողներին:

Եպիսկոպոսի ղեկավարությամբ ծխերի խորհուրդները կարող են օգտագործել Սպասավորման Միջոցները միասին խորհրդակցելիս՝ ի օգուտ իրենց ծխերի անհատների և ընտանիքների: ■

Մեր ժամանակների ուսմունքները

2014թ. նոյեմբերից մինչև 2015թ. մարտ ամիսը Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության չորրորդ կիրակի օրվա դասերը պետք է պատրաստվեն 2014թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ելույթների հիման վրա: 2015թ. ապրիլին ելույթներ կարող են ընտրվել կամ 2014թ. հոկտեմբերի, կամ 2015թ. ապրիլի համաժողովից: Ցցերի և շրջանների նախագահները պետք է ընտրեն այն ելույթները, որոնք կօգտագործվեն իրենց տարածքներում, կամ նրանք կարող են հանձնարարել այդ պարտականությունը եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին:

Նրանք, ովքեր մասնակցում են չորրորդ կիրակի օրվա դասերին, խրախուսվում են նախօրոք ուսումնասիրել ընտրված ելույթները: Համաժողովի ելույթները տարբեր լեզուներով մատչելի են conference.lds.org: կայքում: ■

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՐԱՆՑ, ՈՒՄ ՄՏԵՐԻՄՆԵՐԸ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Կախվածությունից տառապող անձանց ամուսինները և ընտանիքները կարող են օգտվել նոր առցանց ուղեցույցից, եթե փնտրում են օգնություն, հույս և ապաքինում:

Ամուսինների և ընտանիքների աջակցության ուղեցույցը, որը գտնվում է AddictionRecovery.lds.org-ում, միտված է օգնելու ամուսիններին և ընտանիքների անդամներին ապաքինվել այն խնդիրներից հետո, որոնք կապված են նրանց հարազատների կախվածության հետ թմրանյութերից, ալկոհոլից, մերկագրությունից և այլ վնասակար նյութերից և սովորույթներից: Ի լրումն անգլերենի, այն շուտով մատչելի կլինի իսպաներեն, պորտուգալերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, ռուսերեն, չինարեն, ճապոներեն և կորերեն:

Ուղեցույցը բաղկացած է 12 բաժիններից, որոնք կենտրոնացած են Հիսուս Քրիստոսի միջոցով ապաքինման, հույսը մեծացնելու և ուժ գտնելու վրա:

Տրվում են բազմաթիվ գործնական առաջարկություններ, օրինակ՝ ինչպես սահմանել սահմանափակումներ և կանոններ, ինչպես քննարկել կախվածության և վերականգնման թեման հարազատի հետ և ինչպես պատշաճ արձագանքել ռեցիդիվին:

Ուղեցույցն օգտագործվում է ամուսինների և ընտանիքների աջակցման խմբերի փակ հավաքների ժամանակ քննարկումների համար, որոնք առաջարկվում են ՎՕՍ Ընտանիքի Ծառայությունների կողմից: Այն կարող է օգտագործվել նաև անհատական ուսումնասիրության նպատակով կամ Եկեղեցու ղեկավարների կողմից՝ հարցազրույց անցկացնելիս և խորհրդատվություն տրամադրելիս: ■

Հունվարից փոփոխություններ են տեղի ունենալու Երիտասարդ Չափահասների հոգևոր հավաքներում

Առաջին Նախագահությունը և Եկեղեցու Կրթական Խորհուրդը հայտարարել են երիտասարդ չափահասների հոգևոր հավաքներ հաճախականության, վայրերի և հրատարակությունների փոփոխությունների մասին, որոնք ուժի մեջ կմտնեն 2015թ. հունվարից: Փոփոխությունները ներառում են.

Անվանում. Համաշխարհային հոգևոր հավաք երիտասարդ չափահասների համար. Երեկո (խոսնակի անունը) հետ:

Հաճախականություն. Տարին երեք անգամ, հունվարի երկրորդ կիրակին, մայիսի առաջին կիրակին և սեպտեմբերի երկրորդ կիրակին:

Լսարան. Հրավիրվում են ամուսնացած և ամուրի բոլոր երիտասարդ չափահասները: Ավագ դպրոցը կամ համարժեք կրթական հաստատություն ավարտող ուսանողները նույնպես հրավիրված են մասնակցելու:

Վայրեր. Հունվարի հոգևոր երեկոները կանցկացվեն Բրիգամ Յանգ Համալսարանում Պրովոյում, Յուտա, ԲՅՀ-Այդահոյում կամ ԲՅՀ-Հավայյան կղզիներում: Մայիսի հոգևոր երեկոները կանցկացվեն Սոլթ Լեյք Սիթիում Համաժողովների Կենտրոնում կամ Եկեղեցու գլխավոր վարչության այլ վայրերում: Սեպտեմբերի հոգևոր երեկոները կանցկացվեն Միացյալ Նահանգների այլ վայրերում:

Հրապարակում. Յուրաքանչյուր հոգևոր երեկոյից հետո մի քանի օրերի ընթացքում ելույթները տեքստային, առդիո և վիդեո ձևաչափերով մատչելի կլինեն անգլերեն լեզվով LDS.org-ում և Gospel Library app-ում, Երիտասարդ չափահասների նոր հավաքածուի կազմում: Լեզուների տարբերակները կհաջորդեն: Ելույթների ամփոփումները կներառվեն *Լիահոնայում,* և տարբեր տեքստային, լուսանկարային մեջբերումներ (memes) և տեսանյութեր նույնպես կհրապարակվեն ուղիղ հաղորդմամբ հոգևոր հավաքի ընթացքում և դրանից հետո՝ Եկեղեցու հասարակական մեդիայի ալիքներով, ներառյալ խոսնակների հասարակական էջերի միջոցով:

Խոսնակները կշարունակեն ընտրվել Առաջին Նախագահության կողմից Բարձրագույն Իշխանությունների և Եկեղեցու գերագույն պաշտոնյաների կազմից:

Փոփոխությունները հայտարարվել են երիտասարդ չափահասներին 2014թ. նոյեմբերի 2-ի ԵԿՀ հավաքին, իսկ քահանայության ղեկավարներին՝ 2014թ. օգոստոսի 28-ի Առաջին Նախագահության նամակում, որին կից տրվել է 2015թ. հեռարձակման ժամացուցակը: ■

Եկեղեցու Բարեգործությունները օգնություն են տրամադրում

Վերականգնման վաղ օրերից սկսած Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները հայտնի են դարձել օգնության հասնելու և տառապյալներին ձեռք մեկնելու իրենց վճռականությամբ:

Վերջին տարիներին Եկեղեցու անդամները և այլոք առատաձեռն նվիրատվությունների միջոցով միջոցներ են տրամադրել Եկեղեցու մարդասիրական ծառայություններին, օրհնելով մարդկանց կյանքեր ամբողջ աշխարհով մեկ: Միայն 2013թ. սեպտեմբերին Եկեղեցու մարդասիրական ծրագրերն օգնել են ավելի քան 10.5 միլիոն մարդու 130 երկրներում:

Այս ջանքերը մխիթարություն և կյանքի անհրաժեշտ պարագաներ տրամադրելուց բացի իրականացնում են մինչև մաքուր ջրի ապահովում, բժիշկներին և քույրերին նորածինների կյանքը փրկելու հմտությունների ուսուցում, անվասայլակների տրամադրում: Բացի դա Եկեղեցին օգնություն է տրամադրում տեսողության խնդիրներ ունեցողներին տրամադրում է ուսուցումներ, պատվաստումներ և օգնում համայնքներին աճեցնել սննդարար մթերքներ:

Օգնություն փախստականներին

Եկեղեցին շարունակական և էական ջանքեր է գործադրում օգնելու համար փախստականներին, ինչպես նաև նրանց, ովքեր տառապում են կոնֆլիկտային շրջաններում և սննդի պակասորդ ունեն: Վերջերս.

- Եկեղեցին նվիրաբերեց հազարավոր վրաններ և հիմնական սննդամթերք ընտանիքներին Չադում և կառուցեց ձեռքով աշխատող ջրհորներ, արտաքնոցներ և ցնցուղներ փախստականների ճամբարներում Բուրկինա Ֆասոյում:
- Հորդանանում, Սիրիայում, Լիբանանում, Իրաքում և քրդական տարածքում ՎՕՍ Բարեգործությունները բաժանում է սննդի փաթեթներ, բժշկական պարագաներ, հիգիենայի փաթեթներ, անկողնային պարագաներ և ձմեռային հագուստ: Իրաքում և քրդական տարածքներում կոնֆլիկտից տուժած մարդկանց տրամադրվել են անվասայլակներ և շարժական այլ սարքավորում:
- Գազայում, դեղորայք, բժշկական պարագաներ և կաթի փոշի է նվիրաբերվել կենտրոնական հիվանդանոցին:
- Իսրայելում ուլտրաձայնային սարքավորում է նվիրաբերվել բժշկական հաստատությանը:
- Ուկրաինայում և Ռուսաստանում Միացյալ Ազգերի Զարգացման Ծրագրի հետ համագործակցելով, Եկեղեցին տրամադրեց սնունդ, անկողնային պարագաներ, հագուստ և անձնական հիգիենայի պարագաներ քաղաքացիական անհանգստությունների հետևանքով տեղահանված 30000 մարդկանց:

ՎՕՍ Բարեգործությունները աշխատում է մնալ քաղաքականապես չեզոք կարգավիճակում և օգնել բոլոր հավատքի մարդկանց:

Փրկարար ջանքեր

Եկեղեցին արձագանքում է նաև բնական աղետներին:

- Սիեռա Լեոնեյում և Լիբերիայում Եկեղեցին ներգրավել 1600 տեղական կամավորների՝ տրամադրելով ուսուցում Էբոլայից խուսափելու վերաբերյալ և նվիրաբերելով սննդամթերք, հիգիենայի և բժշկական պարագաներ:
- Պակիստանում և Հնդկաստանում ջրհեղեղից հետո Եկեղեցին տրամադրեց օգնություն սննդի, հիգիենայի և բժշկական պարագաների տեսքով:
- Թոնգայում փոթորիկը ոչնչացրել է հարյուրավոր տներ, ներառյալ 116 անդամների տներ: Անդամները կօգնեն վերականգնել իրենց տները: Նրանք ստանում են ուսուցում իրենց սեփական ապաստարանը կառուցելու համար, այնուհետև օգնում են առնվազն չորս այլ մարդկանց կառուցել իրենցը: Եկեղեցին նաև վերականգնում է հացահատիկի բերքը և ուսուցում տրամադրում այգեգործության վերաբերյալ:
- Մեքսիկայում, երբ փոթորիկը վնասեց կամ ոչնչացրեց հազարավոր տներ, Եկեղեցու տեղական ղեկավարները սնունդ և ջուր հասցրեցին տուժած անդամներին, իսկ Եկեղեցին կառավարության հետ աշխատելով տրամադրեց սննդի փաթեթներ:

Ի՞նչ դուք կարող եք անել

Մարդասիրական օգնության հիմնադրամին կատարվող նվիրատվությունները օգնում են Եկեղեցուն անմիջապես արձագանքել ճգնաժամին: Բացի դա, անդամները կարող են դրսևորել Քրիստոսանման սեր, ծառայություն մատուցել և հարգանք կառուցել բոլոր մարկդկանց հանդեպ, որտեղ որ ապրում են: Մեր սեփական համայնքներում փախստականներին և գաղթականներին նկատելը, կամ նրանց, ովքեր անձնական աղետ են ապրում, և նրանց ընկերություն, հոգատարություն և բարեհամբյուր ողջունող միջավայր առաջարկելը Քրիստոսանման արարք է, որն երբեք ապարդյուն չի անցնի:

Մարդասիրական ջանքերի շնորհիվ Եկեղեցին աշխատում է իրականացնել Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի խորհուրդը. «Մենք կարող ենք ամրացնել միմյանց, մենք ունակ ենք նկատելու աննկատը: Երբ մենք աչքեր ունենք տեսնելու, ականջներ՝ լսելու և սրտեր, որոնք գիտեն և զգում են, մենք կարող ենք հասնել օգնության և փրկել» (“The Call to Serve,” *Liahona,* Jan. 2001, 58): ■

Սուրբ աղոթք, Լինդա Քըրլի Քրիսթենսեն

Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել է 14 տարեկանում Սուրբ Պուրակում ունեցած իր փորձառության մասին. «Ես առանձնացա անտառում . . . հազար ութ հարյուր և քսան թվականի վաղ գարնան մի գեղեցիկ ու պարզ օրվա առավոտ: . . . Իմ բոլոր անհանգստություններով հանդերձ, ես երբեք դեռ չէի փորձել բարձրաձայն աղոթել: . . . Նայելով շուրջս և հավատոհանալով, որ մենակ եմ, ես ծնկի իջա և սկսեցի սրտիս ցանկությունները հայտնել Աստծուն» (Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.14–15):

© ԼԻՆԴԱ ՔԸՐԼԻ ՔՐԻՍԹԵՆՍԵՆ, ԱԶԳՄԱՑՈՒՄՆ ՄՐՑԵԼԱՎՈՒՄ Է



«Եթե մենք Հիսուսին կենտրոնական դեր տանք մեր կյանքում՝ սովորելով Նրա խոսքերը, հետևելով Նրա ուսմունքներին և քայլելով Նրա ուղով, Նա խոստացել է մեզ հետ կիսվել հավերժական կյանքով, որի համար Նա մահացել է», - ասաց Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը Եկեղեցու 184-րդ կիսամյա գերագույն համաժողովին: «Չկա ավելի մեծ վերջաբան, քան այն, որ մենք պետք է ընդունենք Նրա կարգապահությունը և դառնանք Նրա աշակերտները և մեր կյանքի ընթացքում կատարենք Նրա աշխատանքը: Ոչինչ և ոչ մի այլ որոշում չի կարող մեզ դարձնել նա, ում Նա կարող է դարձնել»:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 021091201 5